

ԱՆԱԿԻՏ

ՀԱՆԴԷՍ ՄՏԱԾՄԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ
ՆՈՐ ՇՐՋԱՆ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 6 1930 ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ANAHIT

Revue Littéraire, Artistique et Scientifique

Փ Ո Ր Ի Չ


Handwritten signature or mark at the bottom right corner of the page.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Երուանդ Մանուէլեան	Ա. 2070 ԱՆԵԱՆ	12
Երուանդ Մանուէլեան	ՏՕԲԹ. ՓԻԷՐ ՍԵԿԷՆ	1
Մանուէլեան	ՏՕԲԹ. ԱՐՆՕԼՏ ՆԵԹԹԷՐ	4
Մանուէլեանի գործը	ՏՕԲԹ. Ա. ՊՐԵՆՏՕ	7
Թրեփոնէմի գոյուծիւնը ուղեղային կեղեւին խորշանիւթին մէջ		8
Ինչէ՞ն յառաջ կուգայ լորձունքին ժահրոտու- ծիւնը կատաղութենէ բռնուած անասուն- ներուն մօտ	ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ	10
Վերջաբան կատաղութեան միջազգային հա- մաժողովին մէջ արտասանուած ճառին		12
Երուանդ Մանուէլեանի գլխաւոր աշխատու- ծիւնները		13
Ոսկեհոս աղբիւրը (Կաղանդի գիշերուան հէ- քեամ)	ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ	14
Նա ապրել է...	ԳԷՈՐԳ ԶՈՒԲԱՐ	16
Ի՞նչ է կամքը (Շար. ԿԼ ՎԵՐԶ)	ՏՕԲԹ. Մ. ՔԷՇԻՇԵԱՆ	22
Խորհուրդը	ԱՍԱՏՈՒՐ ՍՈՓՈԿԿԼԵԱՆ	24
Կ. Պոլսոյ Հայ ոսկերչ ուծիւնը (Շար Կ ՎԵՐԶ)	ԱՐՄԵՆԱԿ ՍԱԳՂԶԵԱՆ	33
Հին Աստուածուհին	ԿԻՒՐԵՂ ԽՐԱՅԵԱՆ	39
Յովսէփ փոշման	ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ	52
Բանաստեղծութիւններ՝ Միհայիլ Էմինեսքուի բանաստեղծ վահան Միրաքեան	ԹԱՐԳՄ. Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ	57
Անտիպ կտորներ «Լալուարի Որսը» քեր- թուածէն	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ	64
Հատուած «Եղնիկի փերի» անտիպ քերթուածէն	ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ	66
Տիկին Գանլէռի դժբախտութիւնները		69
Յոյս, բանաստեղծութիւն	ԷԼԻԶ ՄԷՀՏԷՐԵԱՆ	71
Մենուծիւն	ՆԱԶԵՆԻ	72
Քայլեր մուծին մէջ, վէպ	Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ	75
Էտովայաներ ծաղկեցան, հէքեամ	ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆ	76
Հայ վրձինը եւ «Ամենալի բուրաստանը»	ՅԱՐՈՒԹԻԻՆ ԳՈՒՄՐՈՒԵԱՆ	79
Քրոնիկ (Ակնարկ մը այժմեան հայ մտաւոր կեանքին վրայ, Բ. Արտասահմանի մէջ)	ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՏՐԱՊԻԶՈՆԻ	92
Ի վե՛ր, ի վե՛ր, Նոճիներու անտառը	Ա. 2070 ԱՆԵԱՆ	95
Մեր մտաւորականներն ու արուեստագէտները արտասահմանի մէջ	ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԹԵԱՆ	100
Լրատու գրականութեան եւ արուեստի՝ Հա- յաստանից եւ Կովկասից	ԹՂԹԱԿԻՅ	116
		117
		120

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

Կենդանագիրներ՝ Երուանդ Մանուէլեանի, Վահան Միրաքեանի, Յովհաննէս Սեթեանի: Վերասա-
դրուքիւններ՝ Պոլսոյ Հայ ոսկերչութեան հասրնիսր գործերու. բնագրէն դուրս՝ սախակ մը Ե. Մա-
նուէլեանի աշխատութիւններէն ոմանց վերաբերեալ երկու պատկեր պարունակող:



ՀԱՆԴԷՍ ՄՏԱԾՄԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 6

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 1930

ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Մեր ցեղը բաւական հարուստ եղած է անցեալին մէջ եւ այժմ ալ է՝ արուեստագէտներով, որոնք իրենց հայրենիքին մէջ ազգային գեղեցկագիտութիւն մը մարմնացնող գործերով կամ օտար երկրի մէջ բարձր տաղանգ մը շողացնող արտադրութիւններով գնահատուած են իբր մարդկային քաղաքակրթութեան որոշ արժէք մը աւելցնող ուժեր: Նոյնը դժուար է ըսել հայ գիտուններու համար: Անցեալին մէջ մենք քանի մը անուն միայն ունինք հայ գիտուններու (Անանիա Շիրակացի, Մխիթար Հերացի, են.), եւ անոնք ալ հմուտ հաւաքողներ, օտար մշակութիւններէ սորվածներն ընդլայնողներ, կիրարկողներ, ժողովըրդականացնողներ եղած են լոկ: Հայ գիտական ստեղծագործ մտքի մը զոյտութիւնը՝ անցեալին մէջ՝ ծանօթ չէ մեզի: Նոր ժամանակներու մէջ է, մասնաւորապէս ժ.թ. զարէն սկըսեալ, որ Երեւան եկան հայեր, — ինչպէս քի-

միագէտ Չամչեան մը Իտալիոյ մէջ — որոնք արդի գիտութեան նուաճումներուն մէջ՝ անձնագրոշմ ու նշանակալից բաժին մը կարողացան ունենալ: Ատոնցմէ մին է Երուանդ Մանուէլեան:

Ահա՛ կեանք մը, որ ամենէն գեղեցիկներէն, ամենէն ներգաշնակներէն, ամենէն երջանիկներէն մին է որ դիտեմ, կեանք մը միմիայն զազափարական գործի մը կապուած, ամբողջապէս Չուտ Գիտութեան նուիրուած:

Պոլսոյ Կեդրոնական վարժարանին նրստարաններուն վրայէն, Մանուէլեան արդէն զբաւուած էր Գիտութեան բուռն, տարամերժ, անշահախնդիր, տարփագին սիրովը: Իր երազն էր կատարել աշխատանքներ, ընել

գիւտեր, որ զինք իրապէս արժանի դարձրնէին «գիտուն» մեծ անունին, որ իրեն տեղ մը տային բնութեան գաղտնիքներէն մաս մը կորզել յաջողող մտքերու շարքին մէջ: Շնորհիւ իր բնածին տաղանդին, եւ շնորհիւ իր չարաչար, անվերջ, անվհաս դատանքին եւ իր յամառ ինքնավստահութեան, ան իր երազն իրականացուց: Այսօր անիկա հեղինակութիւն մըն է գիտական աշխարհին մէջ:

Մոսկիէլիէի Համալսարանին մէջ իր սկըսած բժշկական ուսումը ան եկած էր 1895ին Փարիզի Համալսարանին մէջ աւարտել: Իր իտէալը, սակայն, բժիշկ մը դառնալ չէր. ծանօթութիւնները զոր կ'իւրացնէր այդ ուսանողական շրջանին մէջ, իրեն համար միջոցներ պիտի ըլլային իր բուն փափաքին հասնելու. կ'ուզէր կարենալ քօղարկեալ անհուն ճշմարտութենէն խլել մասնիկներ որ դեռ անծանօթ մնացած են, մարդկային մարմնոյն բազմաբարդ բաւզային խորհուրդէն երեւան հանել կէտեր որ դեռ չեն նկատուած կամ բացատրուած: Իր ուսումը աւարտելէ յետոյ, բոլոր մ'իսկ գաղափարը չունեցաւ իբր բժիշկ հաստատուելու, մինչեւ անգամ թէզն անցընելու համար ժամանակ չուզեց կորսնցնել, եւ փութաց մեծանուն գիտնական փրոֆէսէօր Մաթիաս Տիւվալի աշխատանոցը մտնել՝ Բժշկական Ֆաքիւլթէին մէջ, հոն՝ վարպետին հովանաւորութեան տակ հիւսուածաբանական հետախուզութեանց շարքի մը նուիրուելու համար:

Այդ մարդին մէջ, քիչ տեսնէն իր որոնումներն ու փորձարկութիւնները պսակուեցան այնպիսի ուշագրաւ արդիւնքներով, որ Մաթիաս Տիւվալ, բժշկական Համալսարանի իր հռչակաւոր դասընթացքին մէջ՝ օր մը ամբողջ դաս մը յատկացուց իր Հայ աշակերտին գիւտերուն, որոնք հզօրապէս կը հաստատէին իր իսկ մէջտեղ դրած ամիպօզմի վարկածը եւ կը յանգէին ներվի-ներվորմի (Ջիդեբու Ջիդեբ) նոր վարկածին զոր Մանուէլեան ինքն իսկ երեւան կը բերէր: Մանուէլեանի այդ շրջանի աշխատանքնորը յիշատակուած են Մաթիաս Տիւվալի «Տարերջ Հիւսուածաբանութեան», մեծ գասագրքին մէջ, ինչպէս եւ միջազգային գիտութեան բազմաթիւ հրատարակութեանց մէջ: Ինչ որ Մաթիաս Տիւվալ գրած է բանաձեւելու եւ գնահատելու համար Մանուէլեանի գիտական

գործունէութեան այդ առաջին փուլին արտադրութիւնները, տարիներ առաջ թարգմանաբար հրատարակած եմ Անահիտի հին թիւերէն մէկուն մէջ:

1902ին, Մանուէլեան մտաւ Փասթէօրեան Հաստատութիւնը, ուր անկից ի վեր հիւսուածա-մանրէաբանական եւ զուտ մանրէաբանական աշխատութեանց ստուար շարք մը արտադրած է:

Իր գործունէութեան այդ երկրորդ ու կարեւորագոյն շրջանին վրայ Հայերը — բաց ի սակաւաթիւ իրադեկներէ — տարտամ գաղափար մը միայն ունին: Հայ բժիշկներ, կամ բժշկական ուսմանց հետեւող Հայ երիտասարդներ, ծանօթ են իր անունին, որ դասական դարձած կարգ մը աշխատութեանց կապուած է. գիտեն նաեւ որ մասնաւորապէս յարգուած է ան իր սքանչելի թեքնիքին, կըտրածքներ պատրաստելու եւ զանոնք ծայրապոյն յստակութեամբ գունաւորելու իր անծնական մեթոտներուն համար. բայց իր գործին ամբողջութեան վրայ շատ քիչեր լիակատար ծանօթութիւն ունին: Մեր հասարակութեան լայն խաւերը անոր անուան յեղ-յեղուիլը լսեցին՝ երբ նոյն իսկ ոչ-մասնագիտական մեծ օրաթերթեր անոր վրայ խօսեցան՝ կատաղութեան միքրոպը առաջին անգամ երեւան հանող իր նշանաւոր աշխատութեան Գիտութեանց Ակադեմիային ներկայացուելուն առթիւ: Բայց ի՛նչ է բուն արժէքը Մանուէլեանի գիտական գործին, ի՛նչ նշանակութիւն ունի նոյն ինքն կատաղութեան միքրոպին գիւտը՝ ինքն իր մէջ եւ այդ մարդին մէջ իր կարելի կիրարկումներով եւ ընդհանրացումներով, անիկա ուրիշ գեոի՛նչ աշխատութիւններ ունի կատարած որոնք — ինչպէս ժողովական սիֆիլիսի վերայ իր հետախուզութիւնները — նոյնքան կարեւոր կը նկատուին մասնագէտներու կողմէ որքան կատաղութեան միքրոպին գիւտը, այս բոլորը դեռ ո եւ է համացուցական՝ նոյն իսկ հակիրճ՝ ուսումնասիրութեամբ մը պարզուած չէ մեր հասարակութեան (տարօրինակ է նոյն իսկ որ գիտութեանց հետեւող մեր ուսանողներէն եւ ոչ մէկը, այսքան տարիներէ ի վեր, լսած ըլլալով հանդերձ այս Հայ գիտունին անունը, հետաքրքրութիւնն ունեցած չըլլայ անոր գործին մօտէն. ծանօթանալու եւ

անոր վրայ Հայ հասարակութեան համար աշխատութիւն մը յօրինելու):

Ո եւ է ձեռնհասութիւն չունենալով այդ աշխատութիւնը եւ ինչս կատարելու եւ փափաքելով որ Անահիտը իր երկրորդ շրջանին մէջ այս մեծարժէք Հայ գիտունին գործունէութեան երկրորդ եւ ընդարձակագոյն փուլին վրայ որոշ գաղափար մը տայ իր ընթեր-

կական Ակադեմիայի անդամ փրոֆէսէօր Նեթթերին, որ տղոց հիւանդութեանց մեծ մասնագէտ մըն է եւ ի միջի շատ մը մանրէարանական կարեւոր աշխատութեանց «մանկական անդամալուծութեան» բուժիչ սէրովը գտած է, Բժշկական Համալսարանի մէջ կնախտաբանութեան (gynécologie) եւ մանկաբարձութեան (accouchement) մեծահռչակ



ԵՐՈՒԱՆԻ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ցողներուն, դիմեցի երեք ֆրանսացի մեծանուն գիտական անձնաւորութեանց որոնք զիտէի թէ շատ մօտէն կը ճանչնան եւ խորապէս կը յարգեն Մանուէլեանի գործը, Տօքթ. Փիէր Սեկէնին, որ ինքն ալ Փասթէօրեան Հաստատութեան կապուած է տարիներէ ի վեր եւ արտադրած է կարեւոր աշխատութիւններ «Կանկրէն Կազէօզի» ծագման, «պատերազմի խոցերու», բերնի հիւանդութեանց վրայ, որ ամբողջ աշխարհի մէջ ընդունուած «հակականկրէնական սէրովը» հնարած է, որ գտած է բերնի հիւանդութեանց մակաբոյժներ եւ անոնց դարմանումը, եւն., եւն., Բժշ-

ուսուցչապետ Տօքթ. Օկիլսթ Պրենտօին, եւ խնդրեցի որ հաճին իրենց դատումը բանաձեւել իրենց Հայ պաշտօնակցին աշխատութեանց վրայ:

Երեք գիտունները սիրայօժար պատասխանեցին իմ կոչիս, եւ տուին ինծի իրենց կարծիքն արտայայտող գրութիւններ, որոնց մէջ իւրաքանչիւրը կը գնահատէ Մանուէլեանի գործը՝ իր մասնագիտական տեսակէտէն նկատելով զայն: Անահիտի ներկայ թիւին մէջ թարգմանաբար կը հրատարակեմ այդ երեք գրութիւնները:

Ատոնց կը կցեմ ցուցակ մը Մանուէլեա-

նի գլխաւոր աշխատութեանց տիտղոսներուն, — ցուցակ զոր իր գիտական որոնմանց մէջ ընկղմած բարեկամէս խլել կարենալու համար հերոսական յամառութեան ու համբերատար պնդումի երկար ճիգեր թափելու ստիպուեցայ, — ինչպէս եւ թարգմանութիւնը Գիտութեանց Ակադեմիային ներկայացուած իր կարեւորագոյն աշխատութիւններէն երկուքին հաղորդագրութեանց, որ տպուած են այդ կաճառին Ատենագրութեանց հատորներուն մէջ (Comptes-rendus de l'Académie des Sciences) ու վերջաբանին այն ճառին զոր Մանուէլեան արտասանած է կատաղութեան միջազգային Համագումարին մէջ որ տեղի ունեցաւ 1827ին Փարիզի Փասթէօրեան Հաստատութեան մէջ եւ ուր մեր հայրենակիցը Փայֆէրի պէս հսկայ գիտուններու հիացական արտայայտութեանց առարկայ դարձաւ:

Այս բոլոր աշխատանքը կատարելէ յետոյ, կրցայ նաեւ համոզել Մանուէլեանը — ինչ որ դիւրին գործ մը չէ — որ Անահիտի մէջ հրատարակելու համար տար ինծի մէկ քանին այն գծագրութիւններէն որ իր գիւտերէն ոմանց ապացուցուած կը կազմեն. այդ գծագրութիւնները անտիպ են եւ առաջին անգամ Անահիտի մէջ է որ լոյս կը տեսնեն:

Գիտութեանց իրագեկ ընթերցողներուն համար, կը կարծեմ թէ այս բոլորը մասնաւոր շահեկանութիւն մը պիտի ներկայացնէ. իսկ անիրազեկները ազգասիրական խոր հաճոյք մը պիտի զգան անշուշտ՝ որոշ գաղափար մը կազմելով կարեւորութեանը վրայ այն տեղին զոր գիտական աշխարհին մէջ կը գրաւէ մեր վաստակաւոր հայրենակիցը:

Ա. ԶՊՊԱՆԵԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Տասը տարիէն աւելի է որ բաղդն ունիմ Փասթէօրեան Հաստատութեան մէջ աշխատիլ Մանուէլեան բարեկամիս հետ նոյն սենեակին մէջ: Ամենօրեայ յարաբերութիւն մը, այդ միջավայրին միանգամայն խաղաղ ու գրգռիչ միջոցառումն մէջ, փոխադարձ վստահութիւն մը՝ սրտազին մտերմութենէ մը ծնած, առ ի չգոյժ ուրիշ տիտղոսներու՝ ինծի ապահով ձեռնհասութիւն մը կուտան հայ գիտունի գեղեցիկ դէմք մը Անահիտի ընթերցողներուն ներկայացնելու:

Երբ առաջին անգամ մտայ այն սենեակին ուր Մանուէլեան արդէն տասնհինգ տարիէ ի վեր իր նշանաւոր աշխատութիւնները կը հետաանդէր, իր բազմաթիւ հետախուզութեանց վրայ իսկապէս քիչ բան գիտէի: Շատ խորհրդապաշ նկարագիր մը ունենալով ու բացառիկ գիտական համեստութիւն մը, մեր բարեկամը անոնց

միայն կը բացուի որոնց վրայ լիակատար վստահութիւն ունի... Լեզուն չեն անոնք: Գիտէի սակայն Մաթիաս Տիւվալի Հիւսուածաբանութեան գեղեցիկ բարձն թէ Մանուէլեան վերջնական նպատակ մը բերած էր ջղային դրութեան նուրբ կազմածքին մէկէ աւելի վիճելի կէտերուն ուսումնասիրութեան: Ծանօթ էի այն աշխատութեանց զոր անկից ի վեր Փասթէօրեան Հաստատութեան մէջ կատարած էր մայր-երակին (aorte) խոցերուն (lésion), րեքանոսի եւ կատաղութեան, մարդկային այդ սոսկալի հիւանդութեանց մէջ ջղային բջիջներու ախտաբանական մասնաշառուկ երեւոյթներուն վրայ, մարդկային եւ անասնական սփրոֆթոզներուն վրայ: Լսած էի նաեւ թէ Մանուէլեան անզուգական թեքնիկագէտ մըն էր: Մեծ մասամբ իր ճիգերուն է որ մանրէաբանները կը պարտին սիֆիլիսի սիրոքէթը հիւսուածներուն մէջ երեւան հանած ըլլալնին: Այդ նիւթին մէջ մասնագէտ եղողներէն ոչ մէկը կ'անպիտանայ թէ օրկաններուն մէջ սփի-

բօքէթը գունաւորելու լաւագոյն մեթօտը Մանուէլեանին թեքնիքն է:

Այս բոլորը գիտէի իր աշխատանոցը մտած առեւնա: Եւ սակայն պէտք է հոս խոստովանիմ որ «այս բոլորը» ոչինչ էր հոն իմանալիքիս քով:

Պէտք է այդ սատանորդի մարդուն աշխատիլը տեսած ըլլալ՝ գիտնալու համար թէ ի՞նչ է կատարելագործեալ թեքնիքը ամենէն անհաւատալի մանրակրկտութեան վերջին աստիճանին հասցուած: Մանուէլեան ամէն ինչ իր ձեռքով կ'ընէ: Ինքն իսկ կը լուսայ իր սրուակները, կը պատրաստէ իր հակազդիչները, կ'անջատէ եւ ի՞նչ խնամքով՝ այն օրգաններու հատուածները զոր կ'ուզէ ստուամասիրել: Յետոյ, ճարտար ձեռնագործութիւններէ (manipulation) ետքը՝ որոնց ճէսը անճնական բազմամեայ փորձարկութիւններով կարգաւորուած է, կը գունաւորէ՝ վարպետի պէս՝ այն կտրածքները (coupes) զոր հմտօրէն իրականացուցած է: Այդպիսի մեթօտով մը, որ ա՛յնքան հազուադէպօրէն կը գործագրուի այլուր, կարելի՛ էր որ արգիւնքներն արտասովոր չըլլային:

Այն բոլոր գեղեցիկ հեռախուզութեանց մէջէն, որոնց ակնհաստես ու տրոփուն վկան եղած եմ, հոս պիտի նկատի առնեմ՝ միայն անոնք որ կատաղութեան հետ կապ ունին:

Պէտք է նախ, նիւթը յստակօրէն պարզելու համար, ըսել որ, եթէ Փաթէթօր հաստատած է թէ կատաղութեան միքրոպը հիւանդ մարդուն եւ անասուններուն ջղային գրութեան մէջ կը գտնուի, եթէ՛ հանճարեղ ներհայեցութեամբ մը (intuition), վարպետը կարողացած է նախագգուշական պատուաստումը իրագործել անոնց վրայ զոր կատաղի անասուն մը խածած է՝ անոնց մորթին տակ ներարկելով նախ անգոյ (nulle) յետոյ մեղմացեալ ժահրայնութեամբ (virulence) ճագարի ջղային հիւսուածներու ջրախառնումներ (émulsion), սակայն՝ հակառակ Փաթէթօրի եւ իր յաջորդներու բոլոր ջանքերուն, երբեք կա-

րելի չէր եղած կատաղութեան միքրոպը որոշ ցոյց տալ: Գիտէին՝ օրինակի համար՝ թէ կատաղութեան միքրոպը Փաթէթօրեան պատուաստին պատրաստութեան ծառայող կատաղած ճագարներու օրնածուծին մէջ կը գտնուէր, բայց ոչ մէկը այդ միքրոպը տեսած էր:

Քսան տարուան յարատեւ ու յամառ ջանքերէ յետոյ, Մանուէլեան կարողացաւ խնդիրը լուծել: Կատաղութեան միքրոպը այլ եւս անտեսանելի չէ: Օրկանիզմ մըն է, զոր ցարգ չէին գիտեր գունաւորել:

Այդ միքրոպը միշտ ջղային բջիջներուն մէջ կը բնակի: Իր յատկանշական ձեւին տակ, ան կը ներկայանայ իբր ճուլկաձեւ (ovulaire) կամ կիոցաձեւ ամենամանր մարմնիկ մը: Չայն միշտ կը գտնենք կատաղութեան բոլոր ձեւերուն մէջ. եւ կատաղութենէ բնուած անասնոյն մօտ, ամէն ուր որ ջղային բջիջներ կը գտնուին, հոն այդ միքրոպը ներկայ է:

Աւելին կայ. իր ձեւով իր կազմաքով եւ իր գունաւորուելու մամնայտակութիւններով ան բացարձակապէս անբաժանելի է միքրոպէ մը որ անվիճելիօրէն ընդունուած է. թէեւ դեռ անբաւականօրէն ճանչցուած, եւ զոր երկու ամերիկացի գիտուններ քանի մը տարի առաջ ճագարին ու մկնիկին ջղային հիւսուածին մէջ աեսան ու նկարագրեցին:

Բայց, պիտի ըսեն թերեւս մշտապարտունջ կամ բծախնդիր քանի մը մտքեր, մեզի համար քիչ կարեւորութիւն ունի որ անտեսանելին գունաւորել կարողացած ըլլան. ո՞րն է գործնական արգիւնքն այս գիւտին: Պարզապէս ասող մը աւելի է երկնքի ցուցակին մէջ, եւ նոր ասօդեր ամէն օր կը գտնեն մեր աստղաբաշխները... Չափազանց գործնական մտքերու այս առարկութեան, Մանուէլեանի հեռախուզութիւնները արդէն կը պատասխանեն:

Մեծ կարեւորութիւն ունեցող իրողութիւն մը խորհրդաւոր կը մնար ցարգ: Գիտէինք թէ անոնք զոր լւածած է կատաղութենէ բնուած անասուն մը (սովորա-

բար՝ շուն մը), ամենքն ալ այդ հիւանդութեանն չեն վարակուիր... Եւ այն իսկ եթէ Փասթէօրեան պատուատուովը չէ կատարուած: Այսպէս, հինգ հոգիի վրայ՝ զոր միեւնոյն անատուեր խածած է եւ որ չեն դարմանուած, չորսը կրնան անվնաս մնալ եւ հինգերորդը կը բռնուի ահաւոր հիւանդութեանն:

Այդ տարօրինակութիւնները չէին վրիպած Փասթէօրի լուրջ ուշադրութեանն, որովհետեւ կրցած էին իբր բացառիկ գէպը՝ նկատել որ երկու հոգիէն՝ զոր միեւնոյն շունը խածած էր եւ որոնց մին ուշ դարմանուած էր եւ միւրը բնաւ չէր դարմանուած, առաջինը կատարութեանէ բռնուած էր եւ երկրորդը բոլորովին անվնաս մնացած: Այս տեսակի իրողութիւններ, գէշ մեկնաբանուած, կրնային արդարացնել այն զրպարութիւնը թէ Փասթէօրի պատուատը կատարութեան ախտը կը փոխանցէր:

Եւ սակայն այդ երեւոյթի մասին առաջարկուած բոլոր բացատրութիւնները մեծապէս սխալ կամ անբաւական էին, եւ Մանուէլեանին վերադարձուած էր այդ խնդիրը լուծել:

Մեր բարեկամը ցոյց տուաւ արդարեւ թէ բերնին ու լեզուին «միւքէօզ»ներուն անմիջական մակերեսին տակ՝ տեղ տեղ կը գտնուէին ջրային բջիջներու փոքրիկ գէպեր: Կորճնաթաղանթային շրջապատին ամենափոքր մէկ ճաթառուքը կամ ճեղքը բոլորովին կը բաւէ որպէս զի այդ ջրային բջիջները՝ մերկացած՝ շփման մէջ մանեն բերանային միջավայրին հետ: Արդ, կատարած շուներուն մօտ՝ այդ ջրային բջիջները միշտ կը պարունակեն՝ եւ առատօրէն՝ կատարութեան միքրոպը:

Եւ ահա ամէն ինչ յոտակ կը դառնայ:

Մակերեսային սկրզուքներէն է,—կատարած անատուներու բերնին մէջ ա՛յնքան յաճախապէս, — որ թուքը (լորճուքը) միքրոպալից կը գտնայ: Ըստ այդ կեղտաւորմանց (ulcerations) թաւոյն ու տեղին, լորճուքին ժահրայնութիւնը աւելի կամ

պակաս կ'ըլլայ. անպո՛յ՝ այն անատուներուն մօտ որոնց բերանային վերնամաշկը անեղծ է, կամ ընդհատակն շատ շեշտուած՝ երբ կեղտաւորումները միքրոպալից ջրային բջիջները կը մերկացնեն: Ու մարդ գիւրաւ կ'ըմբռնէ թէ միեւնոյն անատուեր, մէկէ աւելի անձեր յաջորդաբար խածնելով, ժահրը ներարկէ այն վիճակին համեմատ զոր «միւքէօզ»ը կ'ունենայ խածուածքը տեղի ունեցած պահուն, ու նաեւ այն շատ փոփոխական շխտներուն համեմատ զոր խածուած անձին վէրքին հիւսուածները կ'ունենան խածնող շան բերանային խոցերուն հետ:

Այս արդիւնքները Մանուէլեան պարզեց կատարութեան միջազգային Համագումարին, որ Փասթէօրեան Հաստատութեան մէջ տեղի ունեցաւ 1927ին:

Ես ներկայ եղայ այն անմոտանալի ցոյցին որով Եւրոպայի ամենէն մեծարժէք գիտուններն ընդունեցան այդ գեղեցիկ եւ անտարկելի գիւտը: Եւ պէտք է աւելցնեմ, Եւրոպայի Մանուէլեանի համեմատութիւնն ստիկից նեղուի, թէ մեծ Ֆայֆերը, գերման մանրէաբանութեան անվիճելի վարպետը, այդ օրը չննայեց ոչ իր «վունտըր շեմ»երը ոչ իր «բօլօտայ»ները:

Տեսանելի դարձած Եւրոպայի մը գիւտը արդարեւ փոքր գիւտ մը չէ իրագեղներուն համար: Մանուէլեան իրապէս Եւրոպայի մը բացած է մանրէաբանութեան մէջ: Ամէն ինչ թոյլ կուտայ հաւատաւ թէ ոչ միայն կատարութիւնը, այլ բազմաթիւ հիւանդութիւններ որոնց միքրոպն անձանօթ է, ինչպէս շան ճագերու հիւանդութիւնը, հերպէսը, փոլիօմիլիթը, հեռեւանքն եւ միքրոպներու որ իր գտած միքրոպին խումբին կը պատկանին:

Մանուէլեան ասիկա արդէն սպացուցած է շան ճագերու հիւանդութեան համար, ախտ որ յուսահատութիւնն է ազնուացեղ շաներ մեծցնողներուն... Եւ որի աշխատութիւններ սխալ հետեւին անց:

Ու եթէ, հիմա, եզրափակելու համար Մանուէլեանի գործը ներկայացնել նպատակ ունեցող այս գրութիւնս, փնտռեմ մերօրեայ մանրէաբաններուն մէջէն գիտուն մը որուն գործը մեր բարեկամին գործին հետ կարենայ բաղդատուիլ, անուն մը անմիջապէս գրչիս տակ պիտի գայ. անունը մեծ Շօտինին, որ ան ալ մէջտեղ հանեց անձանօթ միքրոպ մը, սիֆիլիսին սփիրօքէթը. եւ որուն գիւտը մեկնակէտք եղաւ անձանօթ մնացած հիւանդութեանց ամբողջ շարքի մը, — սփիրօքէթօզներու — ուսումնասիրութեան: Մանուէլեանի արժանիքը նուազ չէ մեծ Գերմանին արժանիքէն, եւ իր գիւտին կարեւորութիւնը առնուազն հաւասար է:

Սրտագին, ու հիացումով, կ'ողջունեմ Մանուէլեանի պաշտօնակիցս, Հայ Շօտինը:

Dr. PIERRE SEGUIN



Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն

Մանուէլեանի հայրենակիցները կրնան հպարտանալ այն նպատակը զոր այս վերջինը բերած է՝ եւ կը յուսամ գեռ երկարատեն պիտի բերէ՝ բնականոն ու ախտաբանական անգամաբանութեան եւ բժշկական գիտութեան յառաջգիւնութեանց:

Իրեն հետ ասոր տարիէ ի վեր է միայն որ անձնական յարաբերութիւններ ունիմ, և առաջին օրէն մինչեւ ցարգ մեր բարեկամութիւնը հետզհետէ աւելի սերտ դարձած է: Բայց երեսուն տարիէն աւելի է որ Գիտութեանց Ակադեմիայի, կենսաբանական Ընկերութեանց եւ Հիւանդանոցներու հարգաւարտութեանց ու պաշտօնաթերթերուն և Փասթէօրեան Հաստատութեան Տարեգրութեանց մէջ կը հետեւիմ իր նշանաւոր աշխատութիւններուն, զոր սկսաւ Փրօֆ.

Մաթիաս Տիւլալի աշխատանոցին մէջ՝ Բժշկական Համալսարանը, եւ զոր շարունակեց Փասթէօրեան Հաստատութեան մէջ: Չլային գրութեան բնականոն հիւսուածքանութեան ուսումնասիրութիւնը որ իր առաջին հետազոտութեանց նիւթը՝ կազմեց, զինքը կարող դարձուց ամենաբարձր շահեկանութիւն ունեցող նպատակներ բերել ախտաբանութեան՝ ու մասնաւորապէս սիֆիլիսի եւ կատաղութեան խոչնդուն մէջ կատարուած կիրարկումներուն:

Այդ կիրարկումներէն պիտի շատանամ յիշատակելով 1914ին հրատարակուած փոքրիկ յուշագիր մը, ուր կատաղութենէ բուժում շուներուն ու մարդուն լորձնային գեղձերուն եղծումները կը ծանօթացնէ: Հին ցոյց կուտայ թէ այդ խոցերը չեն գտնուիր այն գեղձերուն մէջ որ թուքը կ'արտադրեն, այլ գեղձային անեղներն իրարմէ գատու միջոցներուն մէջ, թէ նեկրիի մարմնիկները որոնց ներկայութիւնը սերտօրէն կապուած է կատաղական ժահրին (virus) հետ՝ միջգեղձային միջոցներուն մէջ մեծ թուով գոյութիւն ունեցող Չլային բջիջներու մէջ կը գտնուին(1):

Շատոնց ի վեր ընդունուած է թէ կատաղութենէ բուժում շուներու թուքը միշտ կատաղական ժահր չի պարունակեր եւ այսպէսով կը բացատրուի որ կատաղութիւնը միշտ այդ անատուններուն լածուածքին հետեւանքով չէ որ ի յայտ կուգայ: Կը թուի նոյն իսկ թէ ան բացառաբար է որ կը նկատուի այն անձերուն մօտ զոր կատաղութենէ բուժում մարդիկ խաճած են: Այս մասնաշատուի իրողութիւնները շատ լաւ կը բացատրուին եթէ հաստատուի թէ լորձնային գեղձերուն մէջ երեւցող կատաղական ժահրը ի սկզբան Չլային բջիջներուն մէջ է միայն որ կը գտնուի: Ասյն պարագային՝ այդ Չլային

(1) 1927 Ապրիլին, կաւալուրեան միջազգային Համագումարին, Մանուէլեան՝ կասաղուրեան միբրոպն իսկ երեւան հանած է Չլային բջիջներուն մէջ ընդհանրապէս:

բջիջներուն շուրջը զարգացող բորբոքումը կրնայ ժաճրին աւելի կամ նուազ մինչեւ գեղձային արտահոսման արտադրութիւնները հասնելուն յանդիլ:

Եթէ Մանուէլեանի այս հետախուզութեանց վրայ կը ծանրանամ, պատճառն այն է որ անոնք թանկագին լուսարանում մը կարելի դարձուցին ինչ ինչ հաստատումներու զոր ես ինքս Հանրի Տիւրան աշակերտիս հետ ըրած էի լորճնային գեղձերու եղծումներուն վրայ՝ լեթարգիական անսեփալիթին մէջ, որուն ախտածին ազդակը գեռ կարելի չէ եղած մեկուսացնել: Լորճնային գեղձերու այդ եղծումները մեզի թոյլ տուին շատ մը պարագաներու մէջ այդ հիւանդութեան ախտածանաչումն ընել: Անոնք կը թուին բացատրել այդ հիւանդութեան անվիճելի բայց քիչ անգամ յայտնի ցոյց տրուած վարակչականութիւնը:

Նոյն կարգի եղծումներ կը տեսնուին նաեւ «փօլիումէլիթ»ին, հերփէսին, խոյլականջքին (oreillons) մէջ. հիւանդութիւններ որ իրենց ազդեցութիւնը կը գործեն ջղային կեդրոններուն վրայ, եւ կապ մը եւս կը կարմեն ուրեմն այդ այլազան հիւանդութեանց միջեւ որոնց ժաճրը խնամութիւն ցոյց կուտայ ջղային կեդրոններուն հանդէպ:

Արդէն, ինչպէս 1913ին գիտել տուած եմ, Փասթէօրի եւ իր աշխատակիցներուն կատաղութեան վրայ կատարած աշխատութիւններէն է որ ներշնչուած են փորձարկելիքներն ու անդամաբան-ախտաբաններն ու «բլինիտիէն»ները՝ «փօլիումէլիթ»ի, «անսեփալիթ»ի, «հերփէս»ի վրայ իրենց հետախուզութեանց մէջ: Այդ հետախուզութիւններն են որ գիտ առաջնորդեցին նախկին հիւանդներու շիճուկը (sérum) գործածել «փօլիումէլիթ»է բնուած անձեր դարմանելու համար, եւ ինձի թոյլ տուին ձեռք ձգել շատ յաջող արդիւնքներ որ յետոյ հաստատուեցան Միացեալ Նահանգներու, Քանատայի, Աւստրալիոյ եւ Նոր

Զելանտայի մէջ կատարուած փորձարկութիւններով:

Կը մտածեմ թէ լաւագոյն կերպով չէի կրնար ցոյց տալ այն անճշտական պատճառները զոր ունիմ բարձրարժէք Հայու մը մեծարանքի այս հարկը հոս մատուցանելու:

Dr. ARNOLD NETTER

* * *

ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԸ

Նախընտրելի՛ է որ մանրէաբան մը միանգամայն «բլինիտիէն» մը ըլլայ: Եթէ մարդ Փասթէօրի օրինակն աչքի առջեւ ունենայ, բլինիքը անուագն անօգուտ պիտի ըլլար. բայց Փասթէօր հանճար մըն էր որ կրնար գուշակել այն բաները որ իրեն ամենէն աւելի օտար կը թուէին: Լապարաթուարի մարդու մը համար որ ախտածին միքրոօններով կը զբաղի, լաւ է որ ան կարենայ, հիւանդներու ծանօթութեան վրայ կրթընելով, լայնարձակել իր գաղափարները որ յաճախ խողովակներու կամ փայլի օրկանիդմներու մէջ սահմանափակուած են: Մանուէլեան ապացոյց մըն է այն կարեւորութեան զոր բժշկական հմտութիւնը կրնայ ունենայ լապորաթուարի թեքնիքագէտի մը համար: Ան պիտի կարենա՞ր մայր-երակին տորոմումին (anévrisme) ախտաբանական անդամազննութեան, կատաղական ախտավարակման «մեքանիզմ»ին վրայ իր նշանաւոր աշխատութիւնները կատարել, եթէ ջերմեռանդ աշակերտ մը եղած չըլլար էթէնօէ մեծ «բլինիտիէն»ին:

Տոսնեւհինգ տարիէ ի վեր ես կրցած եմ գնահատել Մանուէլեանի գիտական յատկութիւնները: Ան իմ հիւանդանոցս կը յաճախէր, եւ որովհետեւ ծանօթ էի

իր գունաւորման հրաշալի եղանակներուն, անոր տուի ֆրանկախոտաւոր սաղմերէ (foetus) առնուած կտորներ՝ որպէս զի թրե փոնեմը փնտռէ հոն: Այդ կտորներէն, որ ուրիշ ձեւքերու մէջ հաւանօրէն աւելի ոչինչ պիտի տային բայց եթէ սփիրօքէթներու գոյութեան հաստատումը, ան հասնեց շատ կարեւոր օրէնքներ, որ ֆրանկախոտային ժառանգականութեան հարցին սրբէն իսկ ա՛յնքան շահեկան տարողութեան անդին կ'անցնին: Ինչո՞ւ սաղմնային օրկանները ա՛յնքան յաճախ հարուստ են սփիրօքէթներով, մինչդեռ պլակնտը (placenta) անկից գրեթէ միշտ թափուր է: Որովհետեւ այս վերջին օրկանը սփիրօքէթներու քանդիչ մըն է: Մանուէլեան ապացուցուց՝ շլացուցիչ լոյս մը սփռող կարածքներով թէ մակաբոյժը՝ «վիլլօզիթէ քօրիալ»ներուն մէջ կ'ենթարկուի կազմաճամբան մը (désintégration) որուն մեքանիզմին հետեւիլ գիւրին է: Մանուէլեան կրցաւ նաեւ բացատրել վրգովիչ իրողութիւնը մայրերու որ աւերեւոյթս քաջառողջ են եւ որ կը ծնին ազայ մը լաւ կազմուած ու ամէն տեսանելի խոցէ (léSION) զերծ, բայց ազան քանի մը օրէն կը մեռնի, առանց որ անոր ներքին գործարանները ո եւ է սփիրօքէթի ներկայութիւնը ցոյց տան: Եւ սակայն այդ սաղմերը շատ հիւանդ են, որովհետեւ եթէ մարդ հետաքրքրութիւնն ունենայ պորտային լարը (cordon ombilical) գննելու, կը նկատէ՝ զէթ ինչ ինչ պարազաներու մէջ՝ պորտային երակին բորբոքում մը (phlébite) որու մէջ սփիրօքէթները կը վխտան: Այդ ֆրանկախոտային «ֆլեպիթ»ը ծնունդ առած է ուժեղ արիւնալուծիչներու (hémolysine) որ նորածինին մահը յառաջ բերած են: Կարելի չէ՝ միթէ այդ ֆլեպիթը նկատել իբր սկզբնական յայտնաբերումը (accident primaire) «գլխատուած սփիւլիա»ի մը: Ահա՛ հարցը զոր մէջտեղ կը դնէ Մանուէլեան:

խուզութեանց ետեւէ է՝ այն ձեւերուն վրայ զոր ինչ ինչ խոցերու մէջ կը ներկայացնէ սփիւլիաին ազդակը, անբնականն ձեւեր որոնց յարակցութիւնը (filiation) պէտք պիտի ըլլայ գտնել մինչեւ արական մակաբոյժը: Մանուէլեան կարողացած է իր աշխատութիւնները յաջողապէս կատարել՝ շնորհիւ իր իմացականութեան եւ ընդարձակ ծանօթութեանց, բայց իր յաջողութիւնները պարտական է ուրիշ յատկութիւններու ալ, որոնց մէջ առաջին գծին վրայ պէտք է դնել իր մտքին քրննադատական բնոյթը:

Անիկա աններող է ինքզինքին հանդէպ, ինչ որ կրնայ չքմեղացնել այն խտտութիւնը որով կը գատէ ուրիշներու աշխատութիւնները, եւ որովհետեւ՝ սակից զատ՝ բացէ ի բաց իր կարծիքը յայտնելէ չի վախնար, կը հասկցուի թէ ինչու ան միշտ իր ճշմարիտ արժէքով գնահատուած չէ: Ի՛նչ փոյթ սակայն, այդ ճղճիմ փոքրօրէութիւնները, թէպէտ եւ ինք անոնցմէ ուժգնապէս կը զգածուի, իրեն իբր գրգիռ կը ծառայեն յառաջանալու համար այն ակօսներուն մէջէն զոր գծած է:

Մանուէլեան, թէեւ Հայ, մաքուր ու յոտակ ֆրանսերէն մը կը գրէ, եւ անոնք որ զինքը լաւ կը ճանչնան, դժուարութիւն կը կրեն ըմբռնելու թէ ի՛նչպէս այդ կրակոտ մարդը, որ խօսուածքին մէջ այնքան ուժգնախորդ է, կրնայ գրել այդքան պարզ ու հակիրճ կերպով: Ան նաեւ բանաստեղծ մըն է որ կրնայ ըստ հաճոյս, գործածել Ապոլոնի վինը կամ Արիստփանի մտրակը: Ամէն բանէ առաջ, անձնուէր, անշահախնդիր ու փափկազգաց բարեկամ մըն է:

Dr. A. BRINDEAU



Այս միջոցիս, արդէն, մեր բարեկամը ամենաբարձր շահեկանութեամբ հետա-

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹԻԻՆ. — ՀԻՒՍՈՒՄԾԱԲԱՆԿԱՆ - ՄԱՆՐԷԱԲԱՆԿԱՆ ՀԵՏԱԽՈՒ-
 ԶՈՒԹԻԻՆՆԵՐ «ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՆԳԱ-
 ՄԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ» ՄԱՍԻՆ. — ԹՐԵ-
 ՓՐԵՓՈՆՆԵՐ ԳՈՅՈՒԹԻԻՆԸ ՈՒՂԵՂԱՅԻՆ
 ԿԵՂԵԻՆ ԶՂԱՅԻՆ ԲՋԻՋ-
 ՆԵՐՈՒՆ ԽՈՐՇԱՆԻԹԻՆ (CY-
 TOPLASME) ՄԷՋ:

Նօր Պ. Ե. ՄԱՆՈՒԷԼԱՆԻ, ցերեպայտուած Պ.
 Ռուի ձեռնով Գիսուբեանց Ակադեմիայի
 (նիս 1922 Ապրիլ 24):

Անգամ մը որ օրկանիզմը կ'ախտավա-
 րակուի, թրեփոնեմը թաքնութեան երկար
 ժամանակաշրջանէ մը յետոյ կրնայ արթըն-
 նալ եւ իր կենսունակութիւնը ցոյց տալ: Լաւ
 զեկավարուած հակասթիբիխական դարմա-
 նում մը արգելնաւոր կ'ըլլայ թրեփոնեմին
 գէժ՝ պարագաներու մեծամասնութեան մէջ.
 Խոցուածքները կ'անհետացնէ եւ հաւաքող մա-
 կարոյժին յարձակողական վերադարձը կ'ար-
 զելէ: Բայց կարելի չէ օրկանիզմը ամլացնել
 (stériliser): Թրեփոնեմը կը պահուրտի, բայց
 չի ջնջուիր:

Հիւսուածա-մանրէաբանութիւնը չի՞ կըր-
 նար արդեօք օգնել այս խնդիրը լուծելու:
 Այս եղամ է մեր հետախուզութեանց նպա-
 տակը:

«Ընդհանուր անդամալուծութիւն»ը ու-
 սումնասիրութեան թանկագին նիւթ մը կ'ըն-
 ծայէ: Մէկ կողմէն, մեր գէժն ունինք քրոնիկ
 հիւանդութիւն մը որ վերաբորբոքումներով
 (poussées) կը յառաջանայ: Միւս կողմէ, այդ
 հիւանդութիւնը կը տեղակայանայ ուղեղային
 կեղեւին մէջ: Կեղեւին ջղային բջիջները՝
 ինչպէս բոլոր ջղօնները (neurones), անգամ
 մը որ իրենց ամբողջ զարգացմանը հասնին,
 այլ եւս չեն փոփոխուիր եւ երբեք չեն բազ-
 մապատկուիր: Ուստի, երբ ջղային բջիջները
 հարուած կը կրեն ու չը ջնջուին, ո եւ է վե-
 րանորոգում անհնար ըլլալով, այդ գործարա-
 նիկներուն (organite) վիճակուած պաշտօնա-
 վարութիւնները կը ջնջուին: Վերջապէս, հա-
 կասթիբիխական դարմանումը՝ իր բոլոր ձե-

ւերով՝ անագրեցիկ է «ընդհանուր անդամա-
 լուծութեան» գէժ:

Նոկուշիին կը պատկանի արժանիքը՝
 1913ին «ընդհանուր անդամալուծութեան» մէջ
 թրեփոնեմը երեւան հանած ըլլալու: Անկից
 ի վեր, Մարինեօք եւ Մինէա, Լէվատիճթի
 եւ Մարի, Պանքովսքի, Կեպէո, Պենետէք եւ
 Թաթար, Յօրսթեր եւ Թոմաշեվսքի, Փուլիտօ
 Վալէնթէ, Էւայլն, հաստատեցին Նոկուշիի
 գիւտը:

1905ին մենք մեր հետախուզութեանց մէջ
 չէինք յաջողած՝ ջղօնաւորիկներու (neuro-
 fibrilles) զանգուածային թաթաւումին (im-
 prégnation) պատճառով. քանի մը տարիէ ի
 վեր վերսկսանք «ընդհանուր անդամալուծու-
 թեան» ուսումնասիրութիւնը: Ատիկա կրցանք
 ընել շնորհիւ գերազանց բարեհաճութեանը
 Պ. Փուլիտօ Վալէնթէի որ Լիզպօնէն հաճե-
 ցաւ մեզի զրկել «ընդհանուր անդամալուծ»-
 ներէ առնուած նիւթեղէններ: Ս ենք կրցանք
 օգտագործել նաեւ կտորներ որ կուզային Պ.
 Էթէնթէի եւ Պ. Փօլ Կիրոյի հիւանդանոց-
 ներէն:

Թեքնիքին համար, մենք կիրարկեցինք
 արծաթային թաթաման եղանակը, Մաննի,
 Նիսիի մեթոտները, Էւայլն:

Փուլիտօ Վալէնթէ, բաղզն ունեցած ըլլա-
 լով Նոկուշիի մեթոտին օգնութեամբ ուսում-
 նասիրելու «ընդհանուր անդամալուծութեան»
 պարագայ մը ուր թրեփոնեմները չափազանց
 բազմաթիւ էին (1), սապէս կ'արտայայտուի.
 «Թրեփոնեմները ջղային բջիջներուն շուրջը
 կը դասաւորուին եւ նոյն իսկ անոնց մէջ կը
 թափանցեն: Մակարոյժներով ամենէն աւելի
 հարուստ շրջաններու մէջ, այսինքն հոն ուր
 «փրոսեսիւս»ը լիալիբ բնաշրջման մէջ կը
 գտնուի, զանազան «փլան»ները իրենց բուն
 կէտին զնելով՝ որոշապէս կը նկատեմ թէ
 ջղային բջիջները պաշարուած են թրեփո-
 նեմներու խիտ համախմբումներով, որ տեսակ
 մը ամբողջական շրջապատ կը կազմեն ա-
 նոնց: Բջջային կազմածատման (désagrégation)
 աւելի յառաջացեալ հանգրուանի մը,

(1) Երկու «պատրասպուլութեանց» վրայ գոր-
 Պ. Փուլիտօ Վալէնթէ մեզի զրկեց, թրեփոնեմ-
 ները աւելի բազմաթիւ էին ուղեղային կեղե-
 լին քան մարդկային «շանք»երու մեծ մա-
 սին մէջ:

կորիզն ինքն իսկ կ'անհետանայ եւ ամբողջ
բջիջէն ուրիշ բան չի մնար բայց եթէ հա-
տակոյտերու (granulations) շեղջեր՝ պա-
շարուած մակաբոյծներով որ ամէն ուղղու-
թեամբ հոն կ'ելլեն ու կը մտնեն»:

Ուրեմն, ըստ Փուլիսօ վալէնթէի, թրեփո-
նեմները ջղային բջիջներուն վրայ կը յարձա-
կին, նոյն իսկ անոնց մէջ կը թափանցեն ու
վերջ ի վերջոյ կը ջնջեն դանոնք: Հուսկ ապա՝
ջղային տարրերուն տեղը, ուրիշ բան չենք
գտներ բայց եթէ մակաբոյծներ ու հատակոյ-
տերու շեղջեր:

Մեր ունեցած կտորներուն մէջ մենք
թրեփոնեմներու այդպիսի առատութիւն մը
չտեսանք: Բաց ի ինչ ինչ կտրածքներէ, ուր
սակաւաթիւ նրբանօթներ (vaisseaux) պա-
շարուած էին սփիրօքթներու ցանցով մը,
մակաբոյծերը ցանցառ էին:

Գիտենք թէ պարագաներու ստուար մե-
ծամասնութեան մէջ միքրոպները, մանաւանդ
պաքթերիները կ'ապրին մարմնոյ հիւթերուն
(humeurs) մէջ, շողկապիչ հիւսուածին (tissu
conjunctif) շարժուն եւ սեւեռեալ տարրերուն
եւ նրբանօթային «անտօթելիոմ»ներուն մէջ,
բայց միւս հիւսուածներու ջղային բջիջնե-
րուն մէջ չեն թափանցեր:

Բաց ի նորածինին ժառանգական սիֆիլի-
սէն, փանթրեփօնեօգ՝ ուր թրեփոնեմը ազ-
նիւ բջիջներուն, — մանաւանդ լերդային բը-
ջիջներուն — մէջ կը թափանցէ, թրեփոնեմը
կը հետեւի ընդհանուր կանոնին. զայն կը
տեսնենք միայն այն տարրերուն մէջ զոր քիչ
առաջ թուցինք. ան երբեք միւս հիւսուած-
ներու բջիջներուն մէջ չի բնակիր: Արդ,
«ընդհանուր անդամալուծութեան» մէջ, թրե-
փոնեմը զոյութիւն ունի ուղեղային կեղեւին
մէջ, ան կը գտնուի այն ցանցկէնին մէջ (lacis)
որ կազմուած է ջղային բջիջներու
«տանտրիթ»ներէն, «նեփօկլիք» բջիջներու
զլան-առանցքներէն ու երկարաձգումներէն:
«Ընդհանուր անդամալուծութեան» մէջ թրե-
փոնեմը ուղեղին մէջ չէ այնպէս ինչպէս է
«շաքր»ի մը մէջ, սիֆիլիտ մը կամ «կօմ» մը.
ան կը գտնուի ուղեղին հիւսուածքին մէջ
իսկ: Բայց, իրողութիւն մը որ՝ աւելի եւս շա-
հեկան է, մեր թաթաւումները անփճելի կեր-
պով ցոյց կուտան թէ թրեփոնեմը «բօթէք-
ս»ին ջղային բջիջներուն «սիթօփլազմ»ին մէջ
կը թափանցէ: Մեր պատկերները «շեմայա-

կան» են. յաճախ մեր «պատրաստութեանց»
մէջ գունահիւթը (pigment) եւ ջղօնեարդիկ-
ները չեն գունաւորուած. «սիթօփլազմ»ին
բաց գոյն խորքին վրայ սեւ գոյնով կ'ան-
ջատուի միայն թրեփոնեմը իր բոլոր նկարա-
զիրներով, ջղային բջիջին կորիզը որոշակէս
տեսանելի է. ինչ որ ունինք մեր դէմը, այլա-
սերած կամ ջնջուած բջիջներ չեն, այլ յա-
րաբերաբար լաւ պահպանուած տարրեր:

Կեղեւին երկրորդ եւ երրորդ խաւերուն
մէջ է որ ամենէն յաճախ այս հաստատու-
ներն ըրած ենք: Մակաբոյծներով լեցուն
ջղային բջիջները՝ առաւելապէս փոքրածա-
ւալ տարրեր են որոնց հատիկ (grain) անու-
նը կուտան հեղինակները:

Այս իրողութեանց լոյսին տակ, ահա ինչ-
պէս կ'ըմբռնենք «ընդհանուր անդամալու-
ծութեան» յառաջխաղացութիւնը (processus):
Թրեփոնեմը կը վարակէ գորովներին (pie-
mère), եւ աւելի կամ նուազ երկար ժամա-
նակաշրջանէ մը յետոյ, այդ թաղանթին ձա-
գարներուն մէջէն կ'երթայ «քորդեքս»ին նա-
խանրբանօթային պատեաններուն մէջ (gai-
nes prévasculaires), աւշային (lymphatique)
անջրպետէն կ'անցնի, ջղային հիւսուածին
կը հասնի. սկզբնաւորութիւնն է «ընդհանուր
անդամալուծութեան»: Այդ հիւսուածին մէջ
կը զարգանայ, վառարան մը կը ստեղծէ եւ
ջղային բջիջները կը խոցէ: Յաջորդաբար
յառաջ կուգան ֆրանկախտային «մենենթիթ»,
«լենֆանթիթ», «անսեֆալիթ»:

Բայց քանի մը թրեփոնեմներ մտած են
կեղեւին ջղային բջիջներուն «սիթօփլազմ»ին
մէջ, ուր անշուշտ անմատչելի են դեղադար-
մանական նիւթերու: Եւ երբ վառարանը կը
շիջանի, կը մնան սակայն ժահրի պահեստա-
բաններ (réservoirs): Որոշ բոպէի մը, թրե-
փոնեմը ջղային բջիջէն դուրս կ'ելլէ ու նո-
րէն կը զարգանայ. այսպէս կը վերաբորբո-
քին նոր վառարաններ:

Եթէ միջբջջային թրեփոնեմները ան-
մատչելի են դեղադարմանական նիւթերու,
ասիկա մեզի թոյլ կուտայ ըմբռնել նաեւ թէ
ինչո՞ւ հակասիֆիլիտական դարմանումը ազ-
դեցութիւն չունի այս ահարկու հիւանդու-
թեան վրայ («ընդհանուր անդամալուծու-
թեան»):



ԱՆՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՉՆՆՈՒԹԻՒՆ.—
 ԻՆՉԷՆ ՅԱՌԱՉ ԿՈՒԳԱՅ ԼՈՐՉՈՒՆ-
 ՔԻՆ ԺԱՀՐՈՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱ-
 ՂՈՒԹԵՆԷ ԲՈՆՈՒԱԾ ԱՆԱ-
 ՍՈՒՆՆԵՐՈՒՆ ՄՕՏ:

Նօր Պ. Պ. Ե. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ ԵՒ Ժ. ՎԼԱՎՅՈՒԻ,
 ԳԵՐԿԱՅԱԳՈՒԱԾ Պ. ՌՈՒԻ ԿՈՂՄԷ ԳԻՏՈՒՔԻՄԵՐ Ա-
 ԿԱԳԵՄԻԱՅԻՆ (Նիս 1926 Գեկտեմբեր 27ի):

Այն գաղափարը թէ կատաղական միք-
 րոպը ջիղերուն ճամբով կը տարածուի, հին
 է. մասնաւորապէս Տիւպուէ տը Փօ պաշա-
 պանած է զայն. իրենց կատարած փորձարկու-
 թիւններէն յետոյ, Ռու եւ Նօքար կը գրէին
 1892ին. «Հաւանական է որ ջիղերու ճամբով
 տարածուելով է որ կատաղական միքրոպը
 թուքին մէջ կ'անցնի»: Երեսունհինգ տարի
 յետոյ մենք կարող ենք հաւաստել թէ ալալա-
 հով է որ կատաղական միքրոպը ջիղերու
 ճամբով թուքին մէջ կ'անցնի: Բերանի և լեզ-
 ուի «միւքէօզ» նոսրուն մէջ միքրոպայից անհա-
 մար ջղային բջիջներու ներկայութիւնը, ջղա-
 յին բջիջներ որ մերթ ծայրայեղօրէն բարակ
 էփիթելիոմի մը ներքեւ տեղաւորուած են,
 լիովին կ'արդարացնէ այս հաւաստումը:

1924ին երեւցած յուշագրի մը մէջ, մենք
 նկարագրեցինք կատաղութեան միքրոպը
 կատաղութենէ բոնուած անասուններու ջղա-
 յին դրութեան եւ լորձնագեղձերուն մէջ: Այս
 վերջիններուն մէջ, միքրոպը կը գտնուէր ոչ
 միայն միջզեղձային ջղային կանկլիոններուն
 ջղային բջիջներուն մէջ, այլ եւ լորձունք
 արտադրող (sécrétante) բջիջներուն մէջ,
 ասինիի բջիջներուն, եւ արտաժայթքող (ex-
 créteur) նրբանցքներուն (canaux) մէջ. ա-
 սով կ'ապացուցուէր ուրեմն թէ միքրոպները
 թուքին մէջ կ'անցնին:

Արդ, երեք տարիէ ի վեր ձեռնարկուած
 բազմաթիւ հետախուզութիւններ ցոյց կու-
 տան որ եթէ միջզեղձային ջղօններուն (neu-
 rones) մէջ միքրոպներու ներկայութիւնը
 մշտակայ իրողութիւն մըն է, ընդհակառակն
 ասինիները եւ արտաժայթքող նրբանցքները
 յաճախ անոնցմով վարակուած չեն. մեր քըն-
 նութիւնները, թէ՛ կատաղութենէ բոնուած և

թէ՛ փորձարկութեան հետեւանքով կատա-
 ղութիւն ստացած շուներու վրայ, մեզ այս-
 արդիւնքին առաջնորդեցին:

Լորձնագեղձերու սեփական հիւսուածքին
 մէջ միքրոպներու վխտումը հազուադէպ ի-
 րողութիւն մըն է: Ուստի, պարագաներու մե-
 ծամասնութեան մէջ, այլ եւս կարելի չէ
 պաշտպանել մեր այն թէզը թէ թուքին ախ-
 տավարակումը լորձնագեղձերու սեփական
 հիւսուածքին մէջ կատաղութեան միքրոպին
 մշակման արդիւնք է:


Սակայն, լեզուին եւ բերնին երեսներուն
 (paroi) ուսումնասիրութիւնը մեզի թոյլ
 տուաւ այս խնդիրը լուծել:

Ըստ մեր հետախուզութեանց, բերնի ե-
 րեսներու միւքէօզը, մանաւանդ լեզուինը,
 էփիթելիոմին տակ տարածուած ջղային
 բջիջներ կը պարունակեն, ջղային բջիջ-
 ներ՝ համախմբուելով դէզ մը կազմած,
 նոյնքան փոքրիկ կանկլիոններ, ճշմարիտ
 շրջածրային (périphérique) ջղային բջիջ-
 ներ: Իրողութիւն մը որ նոյնպէս շատ շահե-
 կան է, — եւ հոտ է որ ճիշտ է Ռուի եւ Նո-
 քարի Ֆրագը,— սա է որ բերնին ու լեզուին
 միւքէօզներուն մէջ կը գտնուին ջղային փոք-
 րիկ կոճղեր, ոստեր, ոստիկներ, որոնք կը
 պարունակեն ջղային բջիջներ՝ խումբ խումբ
 դասաւորուած կամ տարադաս (aberrantes):
 Այդ ջղային բջիջները մերթ միւքէօզին մա-
 կերեսին շատ մօտ կը գտնուին, ճիշտ վերելը
 էփիթելիոմին որ յաճախ ծայրագոյն բարա-
 կութիւն մը ունի: Կը բաւէ ճեղքորտուք մը,
 ճաթոտուք մը այդ գծին վրայ, եւ ջղային
 բջիջները կը մերկանան:

Արդ, բոլոր կատղած շուներուն մօտ, այդ
 ջղօններու սիթօփլազմը կատաղութեան միք-
 րոպը կը պարունակէ: Ահա՛ լորձունքին ախ-
 տավարակման բացատրութիւնը:

Որովհետեւ ո՞րն է այն ենթական որ ճեղ-
 քորտուք մը կամ ճաթոտուք մը չունի իր
 միւքէօզներու մակարդակին վրայ: Ակտանե-
 րու քիչ մը ուժեղ ճնշում մը կը բաւէ այդ
 պիսի վիրականութիւններ (traumatismes)
 յառաջ բերելու: Ասկից զատ, մսակերներու
 սնունդի տեսակը գանոնք ատոր կը նախա-
 տրամադրէ: Սակայն, առանց ինքնախեղումի
 (automutilation) պարագաներու վրայ ծան-
 րանալու, եթէ յիշենք որ կատղած անասուն-
 ները կը խածնեն, հիւսուածքները խոցել կրցող

Պ Ա Տ Կ Ե Ր Ա .



Պ Ա Տ Կ Ե Ր Բ .



ՊԱՏԿԵՐ Ա. — (Հազար անգամ խոշորացում) . — Անոմալուր անդամալուծուրիւն: Ջղային բջիջ ուղեղային կեղեւիկն: Նկատել ներկալուրիւնը բրեփոնեփին (սեւագոյն) ջղային բջիջին փոքրովագմային մեջ: Կանոնաւորապէս գալարաւոր ձեւերը բնականոն բրեփոնեմներ են: Այն մայաբոյձները որ անկանոնաբար գալարաւոր են, ինչպէս եւ աւելի կամ նուազ բոլորագիծ կազմաւորումները՝ սփռոպին բնաւորում ձեւերն են (գոր Մանուէլեան երեսան համաձ Է):

ՊԱՏԿԵՐ Բ. — (Երեք հարիւր անգամ խոշորացում) . — Կասադուքենե բռնում Եւս մը որ խաձաձ Է՝ լեզուին Երջաձրային (periphérique) մասնն կհրաձ Էր: Վերը՝ կը սեւնուին վերնամաձկային (épi-thélial) բջիջներու Եարբեր. վարը՝ «forth»-ին մեջ, ջղային «կանկիթոն» մը որ կը պարունակէ Եւս մը ջղային բջիջներ՝ կասադուքեան սփռոպով վարակում:

առարկաներ կը կլլեն, կը տեսնենք թէ ի՞նչ-քան բազմաթիւ են այդ միւլթէօզներուն «թրօմաթիք» խոցերուն պատճառները: Եթէ խորհինք որ, կը կրկնենք, յաճախ շափազանց բարակ էփիթէլիոս մը կը բաժնէ բերանային խոռոչը (cavité) աճաւոր միքրոպները պարունակող ջղային բջիջներէն, պիտի ընդունինք թէ այդպիսի բաժանում մը, թէեւ ուշադիր քննութենէ մը կը վրիպի եւ պարզ աչքով անտեսանելի է, կրնայ միքրոպներուն թոյլ տալ դուրս ելլել ու լորձունքը վարակել:

Այս տուեալներուն շնորհիւ, կ'ըմբռնենք որ լորձունքին ժահրոտութիւնը մէկ վայրկեանէն միւսը կարենայ մեծ համեմատութիւններով տարբեր չափ ունենալ: Կ'ըմբռնենք թէ ինչո՞ւ կատարած շունչ մը խածուած մէկէ աւելի անհատներու մէջէն, ոմանք կատաղութենէ բռնուին եւ միւսները անփաստ մնան: Ամէն ինչ այս խնդրոյն մէջ կախում ունի երկու գործօններէ. — 1. Ջղային բջիջները՝ միշտ միքրոպալից. 2. Վիճակը լորձաթաղանթին որուն մէջ կը պարփակուին ջղային կեղրոնները:

Լորձունքը ժահրոտ չէ եթէ բերնին ու լեզուին միւլթէօզները կատարելապէս անեղծ են՝ առանց ո եւ է ճեղքբոտութիւն, առանց ամենափոքր ճաթոտութիւն: Որովհետեւ միւլթէօզին մէկ խոցին միջոցով է որ կատաղութեան միքրոպը խածուածքի վերքին մէջ կը մտնէ, եւ այդ պատահականութիւնը դժբախտաբար յաճախադէպ է կատարած շունչերուն մօտ (1):

(1) Comptes-rendus hebdomadaires des Séances de l'Académie des Sciences, Tome 183^{me}, juillet - décembre 1926, page 1357—1359. Paris, Gautier - Villars et Cie., imprimeurs—libraires, 1. 26.

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

ԿԱՏԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԽՈՐՀՐԳԱՌՈՎԻՆ ՄԷՋ

ԱՐՏԱՍԱՆՈՒՄԾ ՃՍՈՒՆ

Պարոններ,

Ծանօթութիւնը շրջածրային (périphérique) ջղային կեղրոններուն որ ենթամաշկի (derme) «քորիօն»ին մէջ տարածուած են՝ պարուրող բջիջներէն շատ քիչ հետու, այս ծանօթութիւնը կ'ըսենք՝ շատ կարեւոր է եւ ընդհանուր տարողութիւն մը ունի: Կրնանք մենք մեղի հարցընել թէ ջղային գրութեան ինչ ինչ ժահրոտ (virulentes) հիւանդութեանց մէջ, արտահոսումներ (sécrétions) չկա՞ն որ մակաբոյժներով լեցուն շրջածրային ջղային բջիջներէն ախտավարակուած ըլլան: Նոյնքան հաւանական է որ այդ հիւանդութեանց փոխանցումը վարակուած ենթականերէն առողջ անհատներուն՝ տեղի կ'ունենայ նմանօրինակ բայց ներհակ մեքանիզմով մը: Այդ պարագային, շրջածրային ջղոններու վարակումը հիւանդութեան առաջին հանգրուանը պէտք է համարիլ, եւ վարակման ընդհանրացումը պէտք է արդիւնքը նկատել շրջածրային բջիջներուն եւ կեղրոնական ջղային գրութեան բջիջներուն միջեւ աստիճանաբար շարուած ջղոններուն մէջ ախտին տարածուելուն:

Հոս կանգ կ'առնեմ, պարոններ, վարկածներ, նոյն իսկ արտաոոց, կրնան շահեկան աշխատութեանց պատճառ դառնալ եւ նոր իրողութեանց յայտնագործման նպատել: Որոնոզներուն համար ճամբան բացուած է:

ԵՐՈՒԱՆԳ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

25 Ապրիլ 1927

ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.— Ախտաբանական հիստոլոգիանու-
թիւն մարդուն սկզբնական եւ երկրորդական
արկածներուն՝ սփիրոքեթա փալիտային հեա
իր յարաբերութեանց մէջ: — Կենսաբանա-
կան ընկերութիւն, 1905:

2.— Ախտաբանական հիստոլոգիանու-
թիւն կապիկին ֆրանկախտային «շանքր»ին՝
սփիրոքեթա փալիտային հեա իր յարաբերու-
թեանց մէջ: — Կենսաբանական ընկերու-
թիւն, 1905:

3.— Նոր արագ մեթոտ կտրածքներու վը-
րայ սփիրոքեթներու գունաւորման: — Կեն-
սաբանական ընկերութիւն, 1906:

4.— Ախտաբանական հիստոլոգիանու-
թիւն կապիկին փորձարկական սիֆիլիսին՝
սփիրոքեթա փալիտային հեա իր յարաբերու-
թեանց մէջ: — Կենսաբանական ընկերութիւն,
1906:

5.— Նպաստ՝ սեւեռեալ ժահրով (à virus
fixe) կատաղութեան ախտաբանական հիս-
տոլոգիանութեան: — Կենսաբանական ընկե-
րութիւն, 1906:

6.— Հետախուզութիւններ սփիրիլլոզին
վրայ զոր յառաջ կը բերէ «թիք-Ֆիվըր»ի
սփիրիլլ: — Կենսաբանական ընկերութիւն եւ
Տարեգրութիւնք փաստէօրեան Հաստատու-
թեան, 1906:

7.— Նոր հետախուզութիւններ հաւերու
սփիրիլլոզներուն վրայ: — Տարեգրութիւնք
փաստէօրեան Հաստատութեան, 1906:

8.— Ուսումնասիրութիւններ ջղային բջիջ-
ներու քայքայման վրայ՝ ձերութեան եւ ախ-
տաբանական վիճակներու մէջ: — Գիտութեանց
Ակադեմիա, 1907:

9.— Պնդերակային խոցերու (lésions ar-
tério-scléreuses) ախտածնութեան վրայ հե-
տախուզութիւններ: — Գիտութեանց Ակադե-
միա, 1911:

10.— Լորձնային գեղձերու ջղային կանկ-
լիոններու մէջ Նեկրիի մարմնիկներու գոյու-
թեան վրայ՝ կատաղութենէ բռնուած ան-
սուններու մօտ: — Գիտութեանց Ակադեմիա,
1911:

11.— Հիստոլոգիանական ուսումնասիրու-
թիւն լորձնային գեղձերուն մէջ ասինիներու
քայքայման՝ կատաղութենէ բռնուած ան-
սուններու մօտ: — Գիտութեանց Ակադեմիա,
1911:

12.— Ուսումնասիրութիւն Նեկրիի մարմ-
նիկներու եւ սեւեռեալ ժահրով կատաղու-
թեան յատուկ եղող կաղմաւորումներու (for-
mations): — Տարեգրութիւնք փաստէօրեան
Հաստատութեան, 1912:

13.— Հետախուզութիւններ սրտի ջղահիւ-
սին (plexus) վրայ եւ մայր-երակին (aorte)
ջղաւորման մասին: — Գիտութեանց Ակադե-
միա, 1913, եւ Տարեգրութիւնք փաստէօրեան
Հաստատութեան, 1914:

14.— Հետախուզութիւններ մայր-երակին
ուռեցքին (athérome) վրայ: — Տարեգրութիւնք
փաստէօրեան Հաստատութեան, 1913:

15.— Բջջաբանական հետախուզութիւն-
ներ մարդկային կարկամախտին (tétanos)
վրայ: — Գիտութեանց Ակադեմիա, 1914:

16.— Հիստոլոգիանական հետախուզու-
թիւններ չորձնային գեղձերուն վրայ՝ կատա-
ղութեան մէջ: — Տարեգրութիւնք փաստէօրեան
Հաստատութեան, 1914:

17.— Կուրձքի փողոցաւին (angine de
poitrine) ախտածնութեան վրայ նոր տեսու-
թեանց մասին: — Տարեգրութիւնք փաստէօր-
եան Հաստատութեան, 1914:

18.— Նկատողութիւն գործարաններուն
մէջ ջղային կեղծոններու գոյութեան մասին:
— Տարեգրութիւնք փաստէօրեան Հաստատու-
թեան, 1914:

19.— Արագ թեքնիք՝ կտրածքներու մէջ
դալարաձեւային (spiralé) գործարանաւորու-
թեանց գունաւորման (imprégnation): — Կեն-
սաբանական ընկերութիւն, 1918:

20.— Տժգոյն թրեփոնեմ եւ մայր-երակի
տորոմոմ (anévrisme), ախտադնական (cli-
nique) եւ հիստոլոգիանական մանրէարանական ու-
սումնասիրութիւն մայր-երակին ֆրանկախ-
տային տորոմոմին: — Բժշկական ընկերու-
թիւն փարիզի հիւանդանոցներու, 1920:

21.— Որովայնային մայր-երակին տորո-
մոմ, թրեփոնեմներ, plexus solaireին ջղա-
տապը (névrite): — Բժշկական ընկերութիւն
փարիզի հիւանդանոցներու, 1921:

22.— Պրահայական փրահայութեան եւ
թրեփոնեմի ֆակտիթոզ: — Կենսաբանու-

թիւն (gynécologie) եւ Մանկաբարձութիւն, 1924:

23.— Տժգոյն թրեփոնեմ եւ ֆրանկախտային երակատապ (phlébite): Ախտագնահական եւ հիւսուածա-մանրէաբանական ուսումնասիրութիւն պորտային երակին սկզբնական ֆրանկախտային երակատապին: — Կնախտաբանութիւն եւ Մանկաբարձութիւն, 1924:

24.— Աւքոյամուլական անդամալուծութիւններ եւ կողմնածուծային խոցեր (lésions médullaires): Բժշկական ընկերութիւն փարիզի հիւանդանոցներէ, 1922:

25.— Հիւսուածա-մանրէաբանական հետախուզութիւններ «ընդհանուր անդամալուծութեան» վրայ. թրեփոնեմի գոյութիւն ուղեղային կեղեիկն ջղային բջիջներուն մէջ: — Գիտութեանց Ակադեմիա, 1922:

26.— Մատակ առիւծի մը մօտ՝ կատաղութեան պարագայ մը: Գիտութեանց Ակադեմիա եւ Տարեգրութիւնք փաստէօրեան Հաստատութեան, 1922:

27.— «Encéphalitozoon Rabcii», կատաղութեան մակաբոյժ: — Գիտութեանց Ակադեմիա եւ Տարեգրութիւնք փաստէօրեան Հաստատութեան, 1924:

28.— Ո՛ւրկից յառաջ կուզայ լորձոնքին ժահրոտութիւնը կատաղութենէ բոնուած անասուններուն մօտ: — Գիտութեանց Ակադեմիա, 1926:

29.— «Encéphalitozoon Negrii», շան ձագերու անսեֆալոմիելիթի մակաբոյժ: — Գիտութեանց Ակադեմիա, 1927:

30.— Լորձնային գեղձերու ջղային բջիջներ եւ ժահրոտութիւն (virulence): — Գիտութեանց Ակադեմիա, 1927:

31.— Գերիկամնային (surénal) գեղձերու ջղային բջիջներ եւ ժահրոտութիւն: — Գիտութեանց Ակադեմիա, 1928:

32.— Կատղած շուներու մօտ՝ բերնի եւ լեզուի երէսներու (paroi) խոցերը: — Գիտութեանց Ակադեմիա, 1928:

33.— Լորձնային գեղձերու ժահրոտ ջղօններ եւ արտավարիչ նեղուցներ (canaux excréteurs): — Գիտութեանց Ակադեմիա, 1928:

34.— Թոքստամոքսային (pneumo-gastrique) ջղային բջիջներն ու ժահրոտութիւնը շան կատաղութեան մէջ: — Գիտութեանց Ակադեմիա, 1928:

35.— Ողնածուծը, կոճղէզը (bulbe), այտոյցը (protubérance) եւ կատաղութեան միքրոպը: — Գիտութեանց Ակադեմիա, 1928:

36.— Անտիպ հետախուզութիւններ, Փրօֆ. Ա. Մառիի ձեռամբ հաղորդագրուած (կատաղութեան միջազգային համագումար), կատաղութեան միքրոպային բնութեան վրայ: Տարեգրութիւնք փաստէօրեան Հաստատութեան, 1928:

37.— Ծննդաբերական սիֆիլիսի սկզբնական յայտնաբերումը (accident): — Կնախտաբանութիւն եւ Մանկաբարձութիւն, 1929:

38.— Ժառանգական սիֆիլիսի եւ թրեփոնեմին անբնականոն ձեւերը. Պ. Ա. Բալմէթի ձեռքով Գիտութեանց Ակադեմիային հաղորդուած 1930 յունուար 20ին:

Ո Ս Կ Ե Հ Ո Ս Ա Ղ Բ Ի Ի Ր Ը

(ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԷՔԵԱԹ)

Անոնք երեք կոյտեր էին,
Գիւղին կանանց սրտին վըրայ
Մաղկած երեք շուշաններ:

Անոնք երեք քոյրեր էին
Գիւղին կանանց սրտին ձեջւն
Մաղկած երեք վարդենի:

Անոնք երեք հարսներ չեղած՝
Գացին Եզրիւրն ու չեկան:
Այսպէս կ'երգէ եղէզը նուրբ
Եօթը վերքով արխնած
Ծրթունքին վրայ հովիւին
Որ իրիկունը կ'իջնէ
Արծաթին ձեջ Եզրիւրին
Ողջունել աստղը սակի
Այս արտօմանուշ հէքեաթին...

Անոնք երեք կոյտեր էին
Մէկ տունի ձեջ, ձեկը ձիւսէն զեղեցիկ:
Աճէն առտու զիւղին կանանց սրտին վըրայ
Չորս արշաղոյս կը ծաթէր
Մէկը ձիւսէն լուսաւէտ...

Գիւղին հողին անոնց համար կը հլուսէր
Պատձուձաններ լուսնի, օղի կապոյտով:
Անոնց անունը ձեկ հատիկ, բերնէ բերան
Մեղեղիի ձը շունչն էր.
Մեծ բոյր նազիկ,
Միջին նազիկ,
Պզտիկ նազիկ,
Մէկը ձիւսին աչնբա՛ն որ շատ նըման էր:
Ուկի ծաղեր ունէին,

Կապոյտ աչքեր ունէին,
Բարակ թրթռուն հասակով
Անոնք երեք սօսիներ
Միշտ արեւէն համբարուած,
Հէքեաթին՝ ձեջ, աստղերուն ասկ զիւթական
Գիւղին կանանց սրտին վըրայ
Օր ձը զիրար էին զըտեր...

Հէքեաթը կ'ըսէ
Որ աճէն առտու
Կ'երթային անոնք
երեք սափորով
Տուն ջուր բերելու:

Հեռուէն աչնպէ՛ս
Նուրբ էին անոնք,
Որ աճէն հասակ
Կը շարունակուէր
Լոյսին ձեջ սակի
Սլացի՛կ զեպ ի վեր՝
Աճէն սափորով...

Հէքեաթը կ'ըսէ
Որ անոնց ուղին,
Ակէն զեպ ի տուն,
Կը հագնէր հազար
Գոյնով ծաղիկներ...
Թեթեւ, հոլանի
Պարսը սաքերուն
Լըուութեան սրտին
Վըրայ կը արօփէր..

Հէքեաթը կ'ըսէ

Որ անոնց համար
Աճէն համբարու
Աճէն ակի ծօա,
Քաստուն ակի ծօա,
Մտղերու ծովէն
Հանուած բււրուսը
Մարգրրիտներով
Մանեակ կը հիւսէր...

Հէքեաթը կ'ըսէ
Որ անոնց ոսկի
Մաղերն ունէին
Հազար ծաղկի բոյր,
Որ անոնց կապոյտ
Աչքերն ունէին
Հազար աստղի բոց,—

Որ անոնց չքնա՛ղ
Մարծինն օրօրուած
Հազար ալիքով՝
Ափը սրտերուն
Կուգար երազով,
Ատուծոյ գիշեր...

Հէքեաթը կ'ըսէ
Որ անոնք գացին,
Երեք հարս չեղած,
Երեք սափորով,
Աղբւրը հեռո՛ւն,
Ձիւնի գիշերով
Ոսկի լեցնելու,
Բշխարքին տալու
Անհո՛ւն գաղտնիքով
Կաղանդ գիշերուան
Թանկագին ընծան...

Հէքեաթը կ'ըսէ
Որ ա՛լ չըզարձա՛ն...

✱ ✱ ✱

Գիւղին հոգին ա՛ն գիշեր
Բճէն տունի ձէջ ունէր
Պլպլուն աստղով ձէկ ճըրագ.

Աճէն ճրագի շուրջ բոլոր
Թիւովն ամբողջ սրտերուն
Վըտիւս ձոճեր գոյնըգոյն...

Մոճերը դեռ չըվառած՝
Մեծ քոյր նաղիկը լըսեց
Չայն ճը կանչող պարտեզէն.
Ելաւ տեղէն ու զընաց:

Միեւնոյն ձայնը լըսեց
Սիջին նաղիկը ներսէն,
Ներսի ջերծի՛կ թոնիրէն.
Ելաւ տեղէն ու զընաց:

Միեւնոյն ձայնը լըսեց
Պղտիկ նաղիկն իր սրտէն,
Սրտին գաղտնի անդունդէն,
Ուղեց յայտնել բոյրերուն,
Նայեցաւ շուրջն ու տեսաւ
Որ ծինա՛կ էր տունին ձէջ...

Միայն ինքը կար
Որը ճըրագին հետ,
Երեք ձոճին հետ,
Բայց ան չըվախեցաւ...

Չայնը կ'ըսէր. «Ձուրը ոսկի
Աղբւրներուն
Պիտի հոսի,
Երբ որ հնչէ կէս գիշեր
Լըռութեան կապոյտ
Անհուն գանգակով...
Ձիւնածաղկի
Մեծ քոյր նաղիկ,
Աղբւր զընա՛
Կանանչ փարչով...»

«Ձուրը ոսկի
Աղբւրներուն
Պիտի հոսի,
Երբ որ հնչէ կէս գիշեր,
Լըռութեան կապոյտ
Անհուն գանգակով,

Ձիւնածաղիկ,
Միջին նազիկ,
Աղբիւր գընա՛
Կապույտ փարջով...

«Ձուրը ոսկի
Աղբիւրներուն
Պիտի հասի,
Երբոր հնչէ կէս գիշեր,
Լըռութեան կապույտ
Անհուն զանգակով.
Ձիւնածաղիկ
Պղտիկ նազիկ,
Աղբիւր գընա՛
Կարծիք փարջով...»

★ ★ ★

Մառանը ցուրտ այնքան չէ
Լեցուն աշնան ծիրկերով:
Ազաճանգներ եւ սուտակներ խաղողի
Արեւին բոցն են պահէր.
Ու խնձորները կարծես
Պղտիկ ջահեր են հազար
Մէկը ծիւսին ձօտ վառուած:

Մեծ քոյր նազիկն է եկեր
Ու փարջ ծը հոն կը փնտռէ...

Միջին նազիկն անոր ոտքին հետքերէն
Ձիւնին վրայէն լուսնաշող
Չէ որ գիտցեր է ճամբան...

Պղտիկ նազիկն է ձիացեր քոյրերուն,
Կաճա՛ց, ոտքին ձատներուն վրայ կոխելով...

★ ★ ★

Իրար տեսան եւ հարցուցին.
Մէկը ծիւսին կը տեսնէր
Թափանցաշող հողիին ձէջ
Գաղտնի պատկերն հէքեռ թին...

— «Ի՞նչ կը փնտռես, քոյրիկ, այստեղ:

— «Կանանչ փարջ ծը կար,
Չեճ գիտեր ո՞վ է պահէր...

— «Ի՞նչ կը փնտռես, քոյրիկ, այստեղ:

— «Կապույտ փարջ ծը կար,
Չեճ գիտեր ո՞վ է աւեր...

— «Ի՞նչ կը փնտռես, քոյրիկ, այստեղ:

— «Կարծիք փարջ ծը կար,
Չեճ գիտեր ո՞վ է տարեր...

★ ★ ★

Երեք տարբեր ճամբաներէ
Անոնք հիճա կ'երթան Աղբիւրն հետաւոր =
Ձիւնի գիշերն է ճերմակ,
Ձիւնի գիշերն է լուսնակ.
Եւ Աղբիւրին զիւթական
Չայնը կ'երգէ լըռութեան
Սրտին ձէջէն՝ սնթըլելի
Եղէգներու ճրճունջով
Ու բիւրաւոր շրթներու
Սիրակարօտ հաճբոյրով...

Մեծ քոյր նազիկն ո՞ր է, չըկայ...
Ձիւնի կապույտ պարտէղին ձէջ
Ատողեր կ'անձրեւեն,
Ոսկի բոցեր կ'անձրեւեն...

— «Արթնցի՛ր, շուտ արթնցի՛ր...

Մեծ քոյր նազիկն է հասեր
Լէրան ոտքին ձօտ փորուած
Քարայրին դուռն ուր լուսնկան սիրավառ
Հարսի նըճան կը հսկէ...

— «Արթնցի՛ր, շուտ արթնցի՛ր...

Հովին ընդոտ կ'արթննայ,
Ու տա՛ք, երկար հաճբոյրով
Կը խըճէ շունչն աղջըկան

Որ նըւագիտո կը հեւայ...
Բայց կը յայտնէ ամէն ինչ,
Աղբիւրին ոսկի գաղանձիքը որով
Անոնք հարո՛ւստ պիտ'ըլլան...

Հովիւը խոշոր բըզուկ ձը կ'առնէ,
Մէջի կաթը ձիւնին վըրայ կը պարպէ...
Եւ հիծա կ'երթան
Արագ շնչասպառ.
Կը վազէ ձէկը ձիւսին ետեւէն,
Հասնելու համար՝
Դեռ կէս գիշերուան ժամը չըհնչած՝
Կախարդահոս Աղբիւրին...

Ձիւնին վըրայ հեռաքերն անոնց ոտքերուն
Լուսնի ցոլքով կը լեցուին,
Ձիւնին վըրայ ձէկուն ըստուերը ձիւսին
Ըստուերին հեռ գրկըւած՝
Կը վազէ դէպ ի Աղբիւրը հէքեաթին,
Ուր կը սպասեն բովքովի
Երկու քոյրերն, ինչպէս երկու վարդենի
Արշալոյսին կը սպասեն..

— «Քոյրիկ, ծիայն դո՛ւն լըսէիր
Ձայնը պարիկին...

— «Քոյրիկ, ծիայն դո՛ւն լըսեցիր
Ձայնը հէքեաթին...

Կը հարցընէ ձէկը ձիւսին.
Մէկը ձիւսին դեռ չըրըւած պատասխան,
Կուգայ հովիւն եւ ակնթարթ ձը յետոյ
Մեծ քոյր նազիկն հեւասպառ...

Կը նստին անխօս
Մօտիկն Աղբիւրին,
Ու չեն հասկընար
Թէ ինչո՞ւ համար
Իրենցձէ առաջ
Եկած են այնտեղ
Նազիկը ձիջին,
Նազիկը պղտիկ...

— «Մեծ քոյր, դո՛ւն ալ լըսեցիր

Ձայնը պարիկին,
Ձայնը հէքեաթին...

Հովիւը տեսան ու շա՛տ գարծացան,
Ու շա՛տ ալ վախցան
Կաղանդ գիշերին ոսկի հէքեաթէն...

★ ★ ★

— «Տեսա՞ր, ի՞՞՞՞՞ քոյրիկ,
Ես չէի առեր սափորը կանանչ...

== «Անոր ձէջ զըտայ խնձոր ձը կարծիր,
Խնձորը ձէջն է...

— «Տեսա՞ր, ի՞՞՞՞՞ քոյրիկ,
Ես չէի առեր սափորը կապոյտ...

== «Անոր ձէջ զըտայ երեք օփ ցորեն,
Ցորենը ձէջն է...

— «Տեսա՞ր, ի՞՞՞՞՞ քոյրիկ,
Ես չէի առեր սափորը կարծիր...

== «Անոր ձէջ զըտայ բաժակ ձը գինի,
Դեռ ձէջն է գինին...

Հովիւն ալ ըսաւ.

— «Այս բըզուկին ձէջ լեցուցեր էի
Կաթն ի՞՞՞՞՞ ա՛յժերուս,
Ձիւնին վըրայ պարպեցի...

Ու լըսութի՛ւնը վերտին հիւսուեցաւ
Մանեակի նձան՝ Բ. պատուծի վըղին շուրջ
Կարապօրէն ըսպիտակ
Դէպ ի Աղբիւրն երկարած...

★ ★ ★

Անոնք այսպէս քովէ քով
Կը տեսնէին ջուրին ձէջ
Լուսինը ցուրտ, ինչպէս կըտոր ձը հայլի
Ջըրմանոյշի ձը ձեռքէն
Հոն ինկած...

Ասուպի ճը սսկի աղեղն երկինքէն
Մինչեւ երկիր կածար կապեց,
Մարեցաւ...

Մէկը ճիւսին ետեւէն
Ասողերը լուռ կ'իջնէին
Հորիզոն...

Ձիւնի գիշերը ճիջոցէն կը թըւէր
Կապուտակ,
Ծովի ճը պէս հեռաւոր...

— «Քոյրիկ, շո՛ւտ ըրէ, կանանչ փարջը բե՛ր...

— «Քոյրիկ, շո՛ւտ ըրէ, կապոյտ փարջը բե՛ր...

— «Քոյրիկ, շո՛ւտ ըրէ, կարճիր փարջը բե՛ր...

Աղբիւրին ջուրը լուսեղէն կարկաջով
Ոսկի՛ր ճիայն կը հոսեր...

Հովիւը չըկար:

Սառի բլուրեղներ ճարճարէ ճարճար
Լուսնակէն վառուած
Ջահ ճը կաղճեցին:

Հովերուն վա՛րը հիւսիսի պալտէզէն
Ծաղկեցաւ...

Ձիւնը ճթնեց լուսնի ցոլբին
Մարեցուն...
Յեառյ գիշերն եղաւ ա՛յնքան
Լուռ եւ ցուրտ...
Երեք կոյսերը ճընացին
Քով քովի...

Մէկը ճիւսին կը նայէր
Ու իստեկէ կը վախճար...
Մէկը ճիւսին կը նայէր,
Կ'աճըջնար...

Լոյսը ճութին ճալքերէն

Դողըզաց,
Ինկաւ անոնց սոքերուն,
Անոնց սսկի ճաղերուն,
Անոնց ճերճա՛կ ճիճերուն,
— Աղանիներ ճըրափող
Կըտուցներով ճիրանի, —
Անոնց կապոյտ աչքերուն ճէջ կաթեցաւ...
Ու տեսան որ ճերկ էին...
Ի՞նչ պիտ'ըսէր գիւղը գիրենք տեսներով...
Փախչիլ ուղեցին
Դէպ ի լեւներն հայրենի
Ուր եղնիկները գուցէ
Պիտ'ըլլային իրենց կեանքի ընկերներ...
Բայց անոնք արդէն ճղթայուած էին
Աղբիւրին չար հարսներէն...

— «Աղբի՛ւր, սսկիդ չեճ ուղեր,
Կաթիլ ճը ջուրով ինճի քօղ հիւսէ...

Մեճ քոյրը պարպեց սափորը կանանչ,
Եւ անոր ճէջէն
Ինկաւ խնճորը ճիայն...

— «Աղբի՛ւր, ետ ա՛ռ քու սսկիդ,
Ու ճըռալ եղի՛ր որ ճէջըղ պահո՛ւիճ,
Ու գիս չըտեսնեն...

Միջին նազիկն ալ՝ սափորը կապոյտ
Երբ ջուրին պարպեց,
Անոր անդորրիկ ճոցէն թափեցաւ
Յորենը ճիայն...

— «Աղբի՛ւր, ի՞նչ ընեճ քու տըւած սսկիդ,
Ես ճէջըղ իյնած,
Ձիւնի պէս ճերճակ ճարճինըս հայի, —
Որ գիս չըտեսնեն...

Պղտիկ նազիկն ալ սսկին ճէջ պարպեց
Սափորը կարճիր գինիով լեցուն...



Ու ճէկը ճինչեւ այսօր չըգիացաւ
Թէ բըղուկին ճէջ հովիւը տարա՛ւ
Աղբիւրին սսկին...

Բայց գիւղին ձէջ ամէն հովիւ
 Իր ծերութեան օրերուն
 Միշտ ունեցաւ ջուխտ ծը տըղայ՝
 Մէկը ահօս բացող, ծիւան ալ հօտ արածող...
 Ու ձէկը դեռ ծինչեւ այսօր չի կրնար
 Յիշողութեան հայելիին դէժ բռնել
 Դէժք ծը հովիւի

Որ ձըգած ըլլայ արօտը դալար,
 Քարայրը զովիկ ամրան տօթերուն,
 Ակերը հնչող բլրերդի ձայնով,
 Ու գացած ըլլայ հեռու տար-աշխարհ
 Ոսկի շահելու ոսկիի ոյժով:

★ ★ ★

Ու ձէկը ծինչեւ այսօր չէ գիտցած
 Ի՛նչ եղան երեք կոյսերը չքնաղ...

★ ★ ★

Հէքեաթը կ'ըսէ.
 «Մէկը քար դարձաւ,
 Եւ ծիւսը ուսի.
 Պատիկը լացաւ,
 Լացաւ այնքա՛ն շատ
 Որ աղբիւրին ջուրը վրձիտ բարձրացաւ

Անոր անվե՛րջ արցունքէն,
 Ու ծածկեց
 Աղջիկն ու սափոր...

★ ★ ★

Երա՛ւ է. հոն, երեկոյին երբ կ'իջնէ
 Գիւղին հովիւն իր ըսպիտակ հօտին հետ,
 Աղբիւր ծը կայ որուն քովէն կը վախնան
 Ոչխարներն իսկ անցնելու...
 Հովիւն ի գուր կը կանչէ
 Ազու ձայնովը իր սրինգին...

Ու երբ լուսնակը ծաթի
 Մաղկեցնելով իր գողգոջուն նունուփարն
 Ականակիտ անդորրութեան ծըփանքէն,
 Ժայռին ծոցէն ծրթասուեր
 Քարէ դէժքով կոյս ծը կ'ելլէ
 Սափոր ծը ձեռքին...
 Եւ ուսի ծը տերեւները կարծես
 Կը փոփրսան շրթունքներով ծարրկային.
 Եւ Աղբիւրին ջուրը ձեղձիկ ու ճըռայլ
 Կը բարձրանայ ծինչեւ եղբբը ճամբուն՝
 Մրմնջելով անթըւելի գաղանկներ
 Որոնց վաղո՛ւց է կորսւած բանալին...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

Ն Ա Ա Պ Ր Ե Լ Է . . .

(Նուէր՝ սիրելի Ա. Մ. Շիրվանգադեիին
նրա գրական 50ամեայ յոբելեանի առթիւ:)

Նա պատանի էր:

Կենսուրախ աչքերով նա հայտնում էր
այն կեանքին, որ քնաթաթախ հոտում էր
հրա յեա ընկած ծննդավայրում, այդ լեռ-
նային Ղարաբաղի խուլ անկիւնում:

Պատանու սուր աչքերը թափանցում
էին այդ սահմանափակ, հեղ, հասցապետա-
կան կեանքը եւ արաքին երեւոյթների
մէջ տեսնում էին հրա կմախքը, հրա ծու-
ծը, հրա չարն ու բարին, հրա ստիպաւ ժը-
պխան ու ծիծաղը եւ հրա անկերջ լացն ու
կակիծը:

Եւ այդ կեանքը անբարդառնում էր
երազող պատանու զգայուն սրտում, թող-
նում էր այնտեղ խոր աղօսներ, պարուբում
էր հրա կենսուրախ աչքերը թափսիծով,
տալիս էր հրա ըմպել իւր մրուրը ու լեզին
եւ ստիպում էր չարչարուել, տառապել ու-
րիշների, օտարների տառապանքներով:

Այդպէս անցաւ երազող պատանու
կեանքի գարունը:

Հասաւ ամառը:

Բնութիւնը ածնում էր իւր ածնը:

Ծառերի տերեւների մեղմ սոսափիւնը
պատմում էր հմայիչ հեքեթներ, սքան-
չելի առասպելներ:

Խորհրդաւոր լուռ անտառը քաղցր
հիրհում էր եւ տեսնում էր սակեայ երազ-
ներ:

Միգանուշները, սղոյուած լուսնի ար-
ծաթափայլ շողերով, թեթեւ թռիչքներով
ոսանում էին ճիւղից ճիւղ եւ հրանց հմա-
յիչ ծիծաղի ելեւէջները, իբրեւ արծաթ-
եայ փոքրիկ զանգակների հնչիւններ, տա-
րածւում էին անտառի խորհրդաւոր սու-
սունքի մէջ:

Սարերի գագաթները, պարուրած մութ,
արծճային ամպերով, յիշում էին խոր քնի
մէջ հին անցեալը. իշխանների եւ մեղիք-
ների օրերը, արիւնալից անցքերը, պան-
ծալի յաղթութիւնները եւ ամօթալից
պարտութիւնները:

Լայնածաւալ դաշտերում ազատ փչում
էր քամին: Նա կուցնում էր գետնին սը-
րածայր եղէգը, ցորեննի լի հասկերը եւ
երգում էր իւր երգը:

Պիշերային լուսեան մէջ ծնում էին
անորոշ հնչիւններ, նախ թոյլ, անզօր, իբ-
րեւ հազիւ ըմբռնելի մի շշուռչ եւ ապա
աճելով, զօրանալով, անցնում էին գաշ-
տերի վրայով, ձորերով, եւ կատաղի մանչու-
ցով կորչում էին սարերի լանջերում եւ
նեղ մուռլ կիրճերում:

Երազող պատանին գարձել էր հասու-
նացած մի երիտասարդ եւ զգայուն սրտով
ըմբռնում էր այդ ամէն հնչիւնները, մի-
գանուշների սառն ծիծաղը, անտառի խոր-
հրդաւոր սոսափիւնը, գաշտերի անորոշ
մրմունջը:

Այդ հնչիւններով հա լցնում էր իւր
սիրտը, հոգին, հրա խորին խորանները եւ

տառապում էր, չարչարում, սրովհետեւ այդ հնչիւնները փափսում էին նրա ականջին մարդկութեան կսկիծի, արցունքների, գանգամաների եւ բողոքների զրոյցներով...

Եւ այդպէս անցաւ երազող երիտասարդի կեանքի ամառը:



Թանձր մշուշը ծածկեց հորիզոնը:

Սեւ, մութ ամպերը ցածր լողում էին սարերի վրայով եւ ժամանակ առ ժամա նակ թրջում էին գետինը արցունքներով:

Անտառի ծառերը թափել էին կանաչ տերեւները եւ նրանց սեւին աւուր, բաց ճիւղերը տարածուած մշուշում անմխիթար նայում էին իրենց նախկին զարդին, որ դեղնած, թօշնած ծածկել էր գետինը:

Անհամբոյր էին լայնածաւալ դաշտերը. չկար այլ եւս աչք եւ սիրտ ուրախացնող կանաչ, թարմ արօտը. չկային գոյն-զգոյն դաշտային ծաղիկները, թռել գնացել էին տաք երկիրներ կուռնկը, արտուտը եւ սիրոյ երգիչ սփռակը եւ միայն սեւ ագռաւը իւր սիրտ մաշող կտուցով խզում էր ամայի դաշտերի մեռելային սուտուքը:

Եւ երազող երիտասարդը, որ դարձել էր արդէն փորձառու մի մարդ, որ տեսել էր կեանքի մրրիկը, նրա սխառահասները, աւելի սուր, աւելի խորը զգում էր համայն մարդկութեան ցաւերը, կսկիծը եւ տառապանքը:

Այդ ցաւերով լի էր նրա արիւնաքամ սիրտը, եւ ամէն մի ցաւին, կեանքի ամէն մի երեւոյթին եւ արկածին, նրա լոյս ու խաւար էջերին՝ նաեւ, իբրեւ էօլիան քնար, տալիս էր արձագանգ:

Թախիծը աւելի եւս պարուրել էր նրա գէմքը. երբեմն կենսուրախ աչքերը տխուր, մեղամաղձոտ նայում էին լոյս աշխարհին. նրա գրիչը սրտի արիւնով գրում էր Քաօսը, նրա հերոսներին, դժուր էր էլիզբարոյների գարշելի գէմքերը, Սաղաթելների դաբախանայի կաշուի պէս

հաստ երեւները. եւ այդ անձունի ընտանիքում հրաշքով բուսած, զգալուն, միակ մարդ հերոսուհու հոգեկան ասնջանքները, նրա աղիողորմ հեծկտանքները վառարանի մօտ, ուր այրւում էին Օթարեանի իրաւունքների վաւերաթղթերը:

Այդ օրից երազող մարդու գեղեցիկ ջութակը արձակում էր միայն տխուր, աշնանային մեղեդիներ...

Այդպէս անցաւ այդ ընտրեալ մարդու, այդ զգալուն սիրտ ունեցող մարդու կեանքի աշունը:



Նա արդէն զգում էր կեանքի ծանրութիւնը:

Տարիների երկար ու ձիգ շարքը կուպարի ծանրութեամբ իջել էր նրա յաղթանդամ ուսերին եւ խոր ախօսներ գծագրել էր նրա հոգեշունչ երեսին եւ նրա գեռ վառվուռն աչքերի կուպերի շուրջը:

Նա գեռ հպարտ նայում էր կեանքին, գեռ բարձրաձայն հնչում էր նրա խրոխտ կոչը, նրա ջերմ քարոզը համայն մարդկութեան միութեան, եղբայրութեան և և ազատութեան մասին:

— Հարագատու եղբայրներ ենք մենք. տուէք ձեռք ձեռքի, եղէք մի սիրտ, մի հոգի, ընթացէք յաղթական շաւղով դէպի լոյսը, դէպի աստղերը... Թօթափեցէք սարկութեան բիրտ շղթաները, եղէք ազատ, ինչպէս ազատ է բարձրաբերձ լեռների արբան—հսկայ արձիւր:

Եւ կորովի, եռանդի կայծերը փայլում էին նրա գեղեցիկ, թախածալից աչքերում:

Իսկ շուրջը բուք ու բոսան էր. ճիւնը անպարար խոշոր, խոշոր փաթիլներով ընկնում էր մառախլապատ երկնքից գետին և սպիտակ, ցուրտ սաւանով ծածկում էր սառած, սեղ սեղ ձեղքուած հողը:

Բայց համամարդկային ցաւերով տառապող մարդու սրտում գեռ վառ էր երկնային կայծը, այն սրբազան կրակը, այն լոյսը, որ նա յիսուն տարի շարունակ բաշ-

խում էր մարդկութեան, գրելով իւր սրտի արիւնսով, իւր ջղերի բռնկումներով գեղեցիկ, վեհ, արդար խօսքեր...

Եւ այդպէս անցնում է երազող, ծերութեան հասած մարդու կեանքի ճմեռը:

Եւ երբ մի օր անխիղճ մահը իր սուկրուս ձեռքով գարկէ նրա խրճիթի դուռը, խօսքի մեծ վարպետը սուրբ ժպիտը շրթներին կը գլխաւորէ հիւրին եւ կեն-

սուրախ աչքերով կը նայէ նրա կմախք երեսին, նրա փոս աչքերին եւ կ'ասէ.

— Ես պատրաստ եմ գալ քեզ հետ ստուերների աշխարհը. ես կատարեցի իմ վեհ, սրբազան պարաքը... feci quod potui, faciant meliora potentes...

ԳԷՈՐԳ ՉՈՒԲՍՐ

1930 թ. Փետրուար 3.

Նոր-Նախիջեւան

Ի Ն Չ Է Կ Ա Մ Ք Ը

(Շարունակութիւն եւ վերջ)

Ինչպէս տեսնւք, կամքի բնախօսական եւ հասարակագիտական բացատրութիւնները ձեռնարկէ կը սահմանափակեն անոր ազատութեան գործելու ընթացքը: Արդարեւ, բովանդակ պատճառներն ձեռք, ճարտկային ազատութեան ձեռք չափ տրուած չէ բնա: Թաղէս, Հերաքլիտ, Տեոքրիտ, Լիւքրէս՝ բացարձակ ճակատագրականութեան կողմնակիցներ էին: Իսկ դարերու ընթացքին, այդ ճակատագրականութեան գաղափարը առաւել կամ նուազ կոկուելով եւ չափաւորելով, ստացաւ իր փիլիսոփայական, զիտական կերտուածքը որ ներկայիս գիտական որոշակաւորութիւն անունին սակ ծանօթ է: Կամքի կողմնակիցներէն՝ Սոկրատ կ'ըսէր թէ ոչ ոք կամաւորապէս չար չէ, Պլատոն կ'ընդունէր որ կամքը հարկադրարար կը ձգտի դէպի բարին: Արիստոտել կը հերքէր անոնց գաղափարները եւ կը նկատէր ճարտը կատարելապէս ազատ:

Եպիկոտ, պատճառներու թեզանին ձեռք չէզոք կէտեր կան կ'ըսէր, ուր ճարտ ազատ է ուզած ուղղութեան հետեւելու: Պրուտարքոս նաեւ այդպէս կը խորհէր: Ըստ Աենեկայի, ճարտկային ազատութիւնը

պատրանք ծըն էր լսի: Ստոյիէեաններէն շատեր կ'ընդունէին որ կամք եւ իմացականութիւն սահմանուած են (déterminé): Եբրայական եւ քրիստոնէական կրօնները, հնարիմացութեան ահեղ ուժեր վասնեցին կարենալ հաշտեցնելու համար ատուածային անհնահզօրութեան եւ ճարտկային ազատութեան գաղափարները: Փարիսեցիները՝ Եսսենեան ազանդաւորներու դէմ՝ կ'ընդունէին որ ատուածային կամքը չի ծիջածուեր ճարտոց բոլոր գործերուն: Պօղոս առաքեալը գտաւ Շնորհքի գաղափարը, իսկ Եկեղեցւոյ առաջին դարերուն պայքարը անպակաս եղաւ Շնորհքի եւ Ազատութեան կողմնակիցներու ծիջելու: Ս. Օղոստինոս, կամքը եւ նախասահմանութիւնը ջանաց հաշտեցնել իր ձեկ գրքով: Միջին դարու կարգ ծր փիլիսոփաներ, յետոյ Քլարք եւ Ռիտ, պաշտպանեցին այն ինչ որ Ֆենելոն եւ Պօսիւէ կ'անուանէին «անտարբերութեան ազատութիւնը» որ, առանց պատճառի, տեսակ ծր որոշականութիւն էր, բլլայ Աստուծոյ, բլլայ ճարտը համար: Իսկ Փլատ եւ Չէլէսթիլու կը նկատէին ճարտը կատարելապէս ազատ եւ տէր իր

ճակատագրին: Տասնեւեօթներորդ դարու փիլիսոփաները ընդհանրապէս որոշադրական էին. ըստ իրենց՝ ճակատագիրը ըստաճը կը շփոթուէր իրերու բնական կարգին հետ որ ուրիշ բան չէր այլ «Անհրաժեշտութեան եւ նախախնամութեան, նիւթի կոյր յատկութիւններու եւ յաւիտենական Իծացականութեան շարախառնութեամբ ծնած տիեզերական օրէնքներու ածրոյջութիւնը» (Ա. Ֆրանկ): Այս ըմբռնուծը՝ կը բանաձեւէր համաստուածային փիլիսոփայական տեսակէտը, ըստ որում՝ տիեզերք եւ Աստուած կը նոյնանային, Աստուած աշխարհի մեծ հոգին էր եւ տիեզերք անոր ճարձմնացուծը: Իրականին մէջ, համաստուածութիւնը, նիւթապաշտութենէն եւ գաղափարապաշտութենէն շատ աւելի հին էր եւ իր սկիզբը կը կորսուէր հնդկի հնագոյն կրօնքի աղջամուղջին մէջ, եւ բանի որ կը նկատէր անհատը որպէս ճասնիկ մը ընդհանուր աստուածութեան, հետեւաբար ըլլայ իր կրօնական ձեւին, ըլլայ իր փիլիսոփայական տարազին տակ, ան կը չէզոքացնէր անհատը իր կամեցողական ուժերէն: Համաստուածութիւնը փիլիսոփայութեան մէջ իր մուտքը գործեց Սփինոզայով, Կէօթէ եւ Շէյլի զայն ներարկեցին իրենց բանաստեղծութեան, արդի գրականութեան մէջ անոր է՛ն ժողովրդական ներկայացուցիչը կարելի է նկատել Թօլսթոյն, Ռընան նաեւ համաստուածեան մըն էր, իսկ մեր մէջ՝ այս ուղղութեամբ կը ճանչնամ ճիւղն Պ. Չրաքեանը, որ կըրցած էր ճիւղնոյն ատեն լայնօրէն հաշտուիլ Կիւրիք եւ քեօգօֆի տեսութիւններու հետ: Ամէն անոնք որ կամքի ազատութեան կողմնակից էին, ընդհանրապէս կը տարուէին իրենց հաւատքը անվթար պահելու անհրաժեշտութենէն, ինչպէս Տէբարթ եւ ուրիշներ: Իսկ վերջին գարերու կարգ մը գիտուններ եւ մտածողներ բոլորովին թօթափէին կրօնական հոգը, անարգել կարեւար հետեւելու համար գիտութեան նոր տուեալներու վրայ հաստատուած նիւթա-գրապաշտական վարդապետութեան, ըստ որում, կեանքը իր ճակատագրով՝ ավեղերական որոշականութիւնը արտայայտող կենսարանական օրէնքներու մեքենական կիրարկումն էր: Մօլլըթ, Պիւլինէր, Ք. Վօկաթ, Հէքէլ, Օ. Քօնթ, Լը Տանթէք, իսկ մեր մէջ Մուրատեան, Տէմիրճիպաշեան, Գարագաշեան, եւն., նիւթապաշտ. իմաստասիրութեան հետեւողներ էին: Արդի բազմաթիւ գիտուններ և ճաստարականներ կը շարունակէն դեռ այդ շարժումը եւ շատ մեծ տեղ չէն տար ճարդկային ինքնիշխան ազատութեան գաղափարին: Որքան որ ալ նիւթապաշտութիւնը կը սկսի աղօթանալ գիտական եւ հոգեկան նոր երեւոյթներու առջեւ, բայց օրգանիզմի բնախօսական էն վերջին գիւտերը՝ իրաւունք կուտան ճարդկային ազատութեան նկատմամբ՝ անոնց տաճած սահմանափակման տեսակէտներուն: Հակառակ այս բոլորին, դեռ հարցը իր կատարեալ լուծումը գտած չէ: Վէճերը անպակաս են: Արդեօք պիտի կրնա՞յ օր մը հարթուիլ ճաթեմաթիքական եղանակաւ: Թերեւս երբեք, քանի որ հարցին բնոյթը չի վերցնէր այդ կերպ լուծում: Որոշականութեան յառաջդիմութիւնները ունեցան որպէս հակադրեցութիւն ազատութեան կողմնակիցներուն աւելի վճռական եւ յստակ յայտարարութիւնը, ըստ որում ազատութիւնը իրերու բնական վիճակն է ու կը գտնուի ամէն տեղ, և թէ որոշականութիւնը ինքն իսկ արդիւնքն է այդ ազատութեան: Ահա՛՛ դէպ ի որ կը յանդի Մէն տը Պիրանի, Քանթի եւ Շէյլի կի հետեւողներու կարծիքը (1): Փիլիսոփայական այս տեսակէտները դեռ երկար ատեն պիտի պահեն իրենց հակաճարտութիւնը: Եթէ մէկ կողմէ ճարդ կը զգայ թէ ազատ է եւ ազատութեան գաղափարը անբաժան կը թուի ըլլալ արդարութեան, պատասխանատուութեան. արժանիքի եւ անարժանութեան, վարձատրութեան եւ պատիժի գաղափարէն, թէ ճարդկային գործնական կեանքը այդ ազատութեան վրայ է որ կը յենու, միւս կողմէ բազմաթիւ իրողութիւններ, բնախօսական եւ հոգեզանցական, անողորբօրէն կը սահմանափակեն այդ ազատութիւնը: Գաղափարներու այս տարտամութեան եւ ընդդիմութեան մէջ, համոզուծը կը շինուի ճիւղն իրողութիւններու ներկայացուցած փաստերէն:



Գեռ վերջերս երեւան եկած բնախօսական վճռական փորձեր եւ յայտնութիւններ պերճաօսօրէն կ'ապացուցանեն որ մեր հոգեբարոյցական կեանքը իր մեծագոյն ուժը կը ստանայ մեր օրգա-

(1) էջ 324—357 Histoire de la Philosophie par P. Janet, chez Delagrave. Paris 1928:

նիզմի մէջ գործող ներքինիւքանոս գեղձերու (glandes à sécrétion interne) անթերի պաշտօնավարութենէն և ձեր առողջական վիճակը, Ֆիզիքական թէ բարոյական, ճեճ մասամբ կախում ունի այս գեղձերու անվթար վիճակէն: Ուրեմն ձեր բնախօսական կազմն է, բան ճը զոր չենք կրնար փոխել, որ կը պայծանաւորէ ճեճ մասամբ ձեր խառնուածքը, ձեր նկարագիրը, ձեր օրգանական եւ հոգեկան բովանդակ կենցաղը: Փէնտ, Խաւալցի նշանաւոր բնախօս ճը, կ'ըսէ թէ շատ ճը խառնուածքներ ներքնահոս գեղձերու առաւել կամ նուազ անբնական գործունէութեան հետ կապուած են, որմէ կը յառաջանան ձեր ճտային-հոգեկան երբեմն ճեղկ ու տկար, երբեմն զօրաւոր եւ յախուռն տրամազրուծիւնները: Անոնք կը ստեղծեն ոճանց քով խանդավառութիւն, ոգեւորութիւն, գերզգայնութիւն, իսկ ուրիշներու քով՝ անփութութիւն, անինամութիւն և անտարբերութիւն: Կան ալ, որ կը զգան հոգեկան ճնշում, բարոյական զգացման թերութիւն, յոռետեսութիւն եւն.: Հարկ է զիտնալ որ այս երեւոյթները տեղի կ'ունենան յաճախ ոչ-ախտաբանական գեանի վրայ, թէեւ բացարձակ առողջութեան գաղափարը պատրանք ճըն է լոկ եւ առողջ ու հիւանդ վիճակներու սահմանը որոշել՝ շատ դժուար: Իսկ ինչ որ կրնայ ապահովել, ինչպէս ձեր Ֆիզիքական, նոյնպէս ձեր ճտաւոր-բարոյական կարողութիւններու կատարեալ զարգացումը, այդ ձեր ներքնահոս գեղձերու անթերի գործունէութիւնն է միայն: Բայց քանի որ, ոչ մէկ անհատ բացարձակապէս առողջ չէ եւ ո եւ է տկարութիւն իր արձագանգը կը հաղորդէ այդ գեղձերուն, անկանոնութեան ճատնելով անոնց աշխատանքը, հետեւաբար պէտք չէ կարճել որ մենք ձեր իմացական, կամեցողական յատկութիւնները կրնանք անվթար պահել, երբ անոնք ուղղակիօրէն կ'ազդուին ձեր ներքին հոսանքներէն: Հաւանաբար հեռու չէ այն օրը, երբ պիտի ապացուցուի որ ճարոյց՝ ո եւ է ասպարէզի հանդէպ տաճած հակաճտութիւնը, արդիւնք է իրենց ներկայացուցած բնախօսական պայճաններուն, ձեր ճտաճման եղանակները, ըմբռնելու ձեւերը, քաղաքական հաճողութիւնները նաև կապուած են անոնց հետ: Մ. Պէրման (նիւ ենրքէն) չի վարանիր ըսելու որ ճարու կեանքը. իր իւրաքանչիւր շրջանին, կը յատկանշուի այդ ներքնահոս գեղձերու ազդեցութեամբ, այ ինքն այդ

բարդ, ղեկավար սխտեմը կը հակակշռէ ձեր օրգաններն ու իրենց պաշտօնավարութիւնը, ձեր վարքն ու բարքը, ձեր նկարագիրը, թէ ձեր բանականութիւնն ու հաւասարակշռութիւնը կախում ունին, ճեճ ճափով, ներքին գեղձերու եւ շրջապատին միջազդեցութենէն, թէ ամէն անհատի բով այդ գեղձերը, կամ անոնց սխտեմներէն մին, բնախօսականօրէն կը դառնայ գերակշիռ, յատկանշելով անոր կեանքի ամենօրեայ ղեկաքերն անգամ: Այս գերակշռութիւնը կը կազմէ մէկ խօսքով ճարդկային անհատականութեան հիմը: Որպէս եղրակացութիւն, Պէրման կ'ըսէ նաեւ թէ երբ անհատի ճը գեղձահոսման բաղադրութիւնը զիտնանք, կարելի է նախատեսել, որոշ մէկ աստիճան, անոր կեանքին զըլխաւոր գճերը, ինչպէս հիւանդութիւնները, ճաշակը, սովորութիւնները, կերպով ճը գուշակել անոր ապագան:

Արդէն վիրաբուժութեան վարպետներէն Փրօֆ. Վ. Փօշէ, Փարիզի Հոգեբուժ. Վարժարանի 1928—29ի դասընթացքի իր բացման ճառին մէջ (1) կ'ըսէր. «Հոգեկան ախտաճանաչութիւնը մեճապէս կրնայ օգտուիլ բնախօսական այն նորագոյն ճշգրտութիւններէն թէ զլիւի, անդամներուն եւ ճատնաւորապէս ձեռքի ձեւերը արդիւնք են ներքնահոսութեան գեղձերու ազդեցութեան: Ուրեմն պատահմունքի հետեւանք չէ որ ոճանք ղէր կամ նիհար, ուրիշներ ճեճ կամ պղտիկ, ճարոտ կամ հերատ են: Մեր հոգեբանական վիճակներն անգամ կախում ունին անոնցմէ, ձեր տրամազրուծիւնները, կեցուածքը, նկարագիրը, ճտաճումները, ինչպէս նաեւ ձեր ճայնը, զրուծիւնը. օրգաններու ենթայական վիճակը, կախում ունին այդ գեղձերէն: Ըստ Լէօփօլտ Լէվիի, ճարու ճը ճակատագիրը իր ձեռքին մէջ է գճուած: Գիւրին է ճանչնալ մէկու ճը անցեալը, ներկան եւ ապագան, քանի որ իր ճակատագիրը կախում ունի իր հոգեկան վիճակէն որ կը հաճապատասխանէ իր ներքին գեղձերու զրութեան, իսկ այս վերջինն է որ կը պայճանաւորէ ձեռքի եւ իր գճերուն կազմաբանութիւնը:»

Ամէն անոնք որ խորապէս հետաքրքրուած են գեղձերու ուսումնասիրութեամբ, հաճաճայն են

(1) No. Février 1929) Revue de Psychothérapie et de Psychologie appliquée. Paris.

ընդունելու որ աննոց ազդեցութեան տակ են ձեր ֆիզիքական, բարոյական, ճտաւորական վիճակները: Ա. Փէլար, թուչուններու որձառամածք եւ սեռային հակառակ գեղձերու պատուատուձով կրցու փոխել ոչ ճիշտն աննոց կազմական ձեւը, այլ աննոց նկարագիրը, սեռային բնազդը: Ներքնագեղձերու արտադրած ճասնաւոր հորմոններն են, որոնց ներարկմամբ, արու հնդկախողը իգութեան յատկութիւններ կը ստանայ եւ հասերը աքաղաղային կազմու բնոյթ ձեռք կը ձգեն, ինչպէս նաեւ դարպասելու ճղում: Բոլոր այս փորձերը եւ Վորոնոֆի՝ պատուատուձով՝ ճարդուն վրայ յառաջ բերած երիտասարդական ձգտումները եւ կազմախօսական զարմանալի փոփոխութիւնները, ցոյց կուտան բացորոշապէս, որ ձեռք ձեր օրգանիզմին ճեղ պարտադրած բնախօսական անհրաժեշտութեան կ'անսանք պարզապէս ձեր կեանքի բոլոր երեւոյթներուն ձէջ եւ այս է որ կը կոչուի ներքին որոշականութիւն: Երբ ձեր բովանդակ էութիւնը անոր ճիրաններուն ձէջ է աճէն վայրկեան, առանց նկատի առնելու հասարակագիտական եւ բնախօսական այլ եւ այլ ստեղծները, որ կ'ազդեն ձեր վրայ իրաժամանակ, չենք կրնար ըմբռնել թէ ինչպէ՞ս կարելի է կամքին տալ կատարելապէս ազատ եւ անկախ ուժի ձը յատկանիշը:



Արտասովոր անհասականութիւններու արտադրողական հրաշալի կարողութիւնները ի՛նչ աստիճան իրենց ներքնագեղձերու ազդեցութեան տակ են եւ ի՛նչ հաճեճատութեամբ արտաքին ճիշտ վայրի պահանջումներէն կը քողեն իրենց ճղոնը, կ'անգիտանանք: Ստուգուած է ճիշտն որ հանձարեղ անձերու ուղեղային ճալքերը խիտ բազմաթիւ են, կանոնաւոր եւ նուրբ կերտուածք ձը ունին եւ ո՛ւր, ուղեղի աղիւն ճասը, գորշագոյն նիւրբ (substance grise) տիրապետող գիրք ունի (Լափիք): Ներկայ պայճաններու ձէջ կարելի չէ ճշդիլ ուղեղային ֆիզիքական վիճակին եւ ճտաւոր կարողութիւններու ճիշտ գտնուած փոխազդեցութեան ձերանիզը: Հաստատուած է սակայն որ հանձարեղ ճարդոց քով, կամքէն շատ աւելի՝ ենթագիտակցական ուժն է գործող գլխաւոր տարրը: Յաճախ ճանուկ հասակի ձէջ երեւան եկած երաժշտական, նկարչական

նուրբ հանձարեղ գործերը չէ կարելի բացատրել ոչ ճառանգականութեամբ եւ ոչ կամքի դաստիարակութեամբ: Եւ որովհետեւ, այս կարգի անհասաներու քով է որ կամքի ուժը կը թուի գտած ըլլալ իր արդարացուձը, հետեւաբար տեսնենք թէ ինչպէս կ'աշխատին եւ կ'արտադրեն հանձարեղ ճարդիկ:

Հանձարը, որ երեւան կուգայ որոշ անհասաներու քով եւ կը յատկանշուի արտասովոր գործերու, հրաշակերաններու արտադրութեամբ, ուրիշ բան չէ, այլ շրջապատին ճասնայատուկ ճէկ դրդմամբ՝ սահմանեալ անհասին քով ստեղծուած հակազդեցութիւնը: Աճենէն աւելի գիտական նորութիւններու ձէջ է որ երեւան կուգայ պատահում կոչուած անձանթ ուժի ձը դերը, որ կը գնէ անհասը իր կարողութիւններու լարուածութեանը ձէջ, որ հաճապատասխան ըլլայ ուրիշ պատահականութիւն ձը կորդելու: Փրօֆ. Գ. Ռիշէ, որուն գիւտերը ձեճ յեղաշրջում յառաջ բերին արդի կենսաբանութեան ձէջ եւ որուն նճանը, որպէս ճշճարիտ հաճայնագէտ, ճարդկութիւնը դեռ տեսած չէ Վօլթերէն ի վեր, կ'ըսէ հետեւեալը. «Ես կ'ուզեճ ապացոյցանել որ առաւել կամ նուազ գիւտի ձը ձէջ որքա՛ն հաճետ է ձեր անձնական դերը...» Կ'աւելցնէ նաեւ թէ գիւտուճով է որ ըրած է իր կարգ ձը գիւտերը (1): Իսկ քանի՛ հանձարեղ էակներ, առտակ՝ աճէն կարգի ստեղծագործութեան, ինչ ինչ պատճառներու հետեւանօք, ոչինչ չեն արտադրած եւ կորած են իրենց անհասականալի ուժերու ճաշնճին ձէջ: Ստուգուած է նաեւ որ հանձարի գործը, որքան որ ալ իր կոնակը կը հաշուէ տարիներու աշխատանք, կուգայ յանկարճակիօրէն, ներշնչուճով, որ ուրիշ բան ըլլալու չէ հաւանաբար, այլ ենթագիտակցական հզօր եւ անճանթ պատկերներու յորդառատ դեղուճը՝ գիտակցութեան սահմանէն ներս, առանց ո եւ է ջանքի, ճիգի, կամքի ո եւ է բռնադատութեան: Բայց ինչո՛ւ այդ բախտաւոր անճերէն յաճախ շատ աւելի զօրաւոր ուղեղներ չունին այդ յանկարճական նուաները եւ կամաւորապէս ոչ ձէկ ճիշոց, ոչ ձէկ կարելիութիւն կայ այդ հրաշալի երեւոյթին տիրանալու: Անկասկածօրէն, այլ կարգի անճանթ ուժ ձը գո-

(1) Le Sivaut. էջ 89—99. Richet, chez Hachette. Paris.

յութիւն ունի, որ ոճանց կուտայ խորհրդաւոր գեր-
զգայնութիւնը կարենալ ազդուելու ճիշտվայրի դեռ
լուռ պահանջութեան եւ ենթագիտակցական լա-
փիւրիթոսներու ձեռք թաքնուած կարողութիւններու
աննշմար ճղուճէն: Հոգեզանցութեան՝ բազմաթիւ
փորձերով երեւան դրած, բայց իր էութեան ձեռք
դեռ անձանօթ, վեցերորդ զգայարանքն է այդ հա-
ւանաբար, որ ճարտարական իմացականութեան ներ-
քին ծալքերուն ձեռք, օրգանական եւ բնախօսական
ճասնայատկութեանց համապատասխան շլացուցիչ
փայլատակուծով ճը, իր գոյութիւնը կը յայտնա-
գործէ յանկարծակիօրէն եւ հազուագիւտ ճարտոյ
քով:

Վօյթէր կ'ըսէր Տիարըօի. «Ինչ որ կ'ընէ
հանձարը, պարզապէս բնագրի գործ է: Աշխարհի
բոլոր փիլիսոփաներն ալ եթէ հաւաքուին, պիտի
չկրնան գրել ոչ Քրիստի «Արժիար», ոչ Լաֆօնթէնի(1)
«Ժանախառնուր կենդանիները», եւ ոչ ալ Քօր-
նէյլի «Հօրաս»ը, զոր արտադրեց առանց գիտնալու
թէ ի՞նչ կ'ընէ, այնքան դիւրութեամբ որքան
թռչուն ճը կը շինէ իր բոյնը...» Հաքէն կը գրէր.
«Երբ հանձարեղ ճարողը կը յաճախուի գաղափարէ
ճը, ճիւղքը անկարող կ'ըլլայ ցրուելու ուրիշ տեղ,
իւր գործունէութիւնը կը թուի ըլլալ կամեցողական,
ինչ որ չէ բնաւ: Հանձարը կը ստեղծէ ոչ թէ
անոր հաճար որ կ'ուզէ, այլ այն պատճառաւ որ
կը պարտի:» Ըստ Ռիխթերի, հանձարի ճարողը
քնաշըջիկ ճըն է եւ իր քունին ձեռք կը տեսնէ ի-
րականէն շատ աւելի հեռուն: «ճարանդը, կ'ըսէր
Ժիւրիլըն-Մէյէր, գիտէ թէ ինչու եւ ինչպէս կը
յանգի տեսութեան ճը, իսկ հանձարը ոչինչ գիտէ,
որովհետեւ ոչինչ այնքան աւաճայ է որքան հան-
ձարեղ գաղափար ճը...» Կը թուի ուրեմն որ բա-
նաստեղծը, փիլիսոփան եւ գիտունը չեն որ կը շա-
րադրեն, կը արաճաբանեն եւ կը գանեն, այլ բարձ-
րագոյն եւ ճակատագրական ուժ ճըն է որ իր
կամքը կը հարկադրէ անոնց եւ ճարողը հլու գոր-
ճաւոր ճըն է ճիւղն: Պիւֆօն, ըսելէ յետոյ թէ
հանձարը երկար համբերատարութիւն ճըն է, կ'ա-
ւելցնէ. «Պէտք է ճտածել երկար ատեն իր նիւ-
թին վրայ, կուգայ վայրկան ճը որ ճեր ուղեղն ու
սիրտը կը ցնցուին ելեքտրական հոսանքէ ճը: Հան-

ճարի վայրկեանն է այդ...» Հանձարը, իր էութեան
ձեռք տեսակ ճը նոպայ է, որ ունի իր կան-
խապատրաստական շրջանը եւ որուն է՛ն ցայտուն
գիճն է ներշնչուճը, անբացատրելի, անհասկանալի
յանկարծակիութեամբ ճը համակուած: Մոցարթ
կ'ըսէր. «Երբ հանգիւտ եճ եւ լաւ տրամադրութեան
ձեռք, ճտածութեանը զիս կ'ողողեն. ուրիշ՞ կուգան և
ի՞նչպէս, չեճ գիտեր. ես հոն ոչ ճէկ դեր չունիմ:»
Կոնքուր կ'արտայայտուէր այսպէս, «Առաջին զիպ
ուածին ձեռք որ իր գաղափարը կը հարկադրէ քեզ,
կայ տեսակ ճը ճակատագրականութիւն. յետոյ՝ ան-
ճանօթ ուժ ճը, բարձրագոյն կամք ճը, գրելու տե-
սակ ճը անհրաժեշտութիւն՝ որ քեզ կը հար-
կադրեն գործը, կը շարժեն քու գրիչդ ա՛յնքան
լաւ որ երբեմն քու ճեռքէդ ելած գիրքը չի թուիր
քեզմէ եղած ըլլալ, կը զարմացնէ քեզ այս բանը
որպէս թէ քու ձեռք իր գոյութիւնը անճանօթ ճէկը
եղած ըլլար...»

Աճէնքին ճանօթ է բանաստեղծներու ներշնչ-
ճան պարագան: «Գրելու պէտքը, կ'ըսէր Պայրըն.
կ'եռայ իմ ձեռք ճարչարանքի ճը պէս, որճէ պար-
տիմ ազատուիլ:» ճանթէն այսպէս կ'ըսէր. «Ես
այնպէս ճը ճնած եճ որ սէրը կարենայ զիս ներ-
շնչել, կը նօթագրեճ եւ համաճայն թելադրու-
թեան կ'արտայայտուիմ:» Ըստ Ա. աը Միւսէի,
անճանօթ ճըն էր որ կը խօսէր իր ախանջին: Լա-
ճարթին ցոյց կուտար ինչ որ կայ կրօնորական՝
ներշնչճան ձեռք, «Ես բնաւ չեճ ճտածեր, կ'ըսէր,
գաղափարներն են որ կը ճտածեն իմ տեղս:»

Հնագոյն խորհոյներէն՝ Սոկրատ նշճարած էր
որ բանաստեղծները կը գրեն բնագրաբար ինչպէս
պատգամախօսները, առանց գիտնալու թէ ի՞նչ կ'ը-
սեն...» Պրատոն կ'ըսէր. «Բանաստեղծը թէթեւ,
յեղեղուկ եւ նուիրական բանի ճը նճան է. ան
երբեք չ'երգեր առանց աստուածային վերացճան
ճիջնորդութեան: Երբ կ'ուզէ անսալ բանականու-
թեան ճայնին, բանաստեղծութիւն եւ պատգամ կը
խուսափին իրճէ: Որքան ատեն որ ան հանգիստ է
եւ կը գտնուի բանականութեան սահճանին ձեռք,
անկարող է արտադրելու հրաշալին եւ վեճը:
Բայց երբ ներդաշնակութեան եւ կշռոյթի գեղեց-
կութենէն գիտուցած է եւ բորբոքած, երբ կ'անցնի
ցնորքի սահճանը, այն ատեն ճիւղն կ'արտադրէ
հիացուճ աւթող գորճեր...»

Որքան որ ալ, ինչպէս կը տեսնուի յիշուած
օրինակներէն, հանձարի բնութիւնը անճանօթ է ճեղ-

(1) Ստուգուած է որ Լաֆօնթէն քնաշըջիկ
էր եւ իր լաւագոյն գորճերը արճարած է ան-
գիտակցաբար, ենթագիտակցական ուժով:

կրնանք ստուգապէս ըսել որ կամքը հոն ոչ ձեկ
դեր չունի: Արդի հոգեբանութիւնը, նախնեաց գեր-
բնական ուժին տեղ դրաւ ենթադրատակցականը, ան-
գիտակցականը որպէս բացատրութիւն, որ իրա-
կանին ձեջ շատ ձեծ բան չի պարզեր ձեզ:



Կամքի գործողութեան բնախօսական փուլերու
վերլուծուծը, անհատի ընկերային ծիջավայրին
հաւաքական անհրաժեշտութիւնները, ճարդկային
ներքին որոշականութեան վճիռները, ինչպէս նաեւ
հանձարեղ ճարդոց գործելու եղանակները՝ ձեզ բո-
լորովին աննպաստ կարծիք կազմել կուտան կամք
կոչուած հրաշագործ ուժի ճասին: Իսկ կամեցողա-
կան այն վիճակը ուր կը կարծուի թէ ազատութեան
ամենալայն գաղափարով կ'արտայայտուի ճարդ, շատ
քիչ անգամ տեղի կ'ունենայ եւ յաճախ այդ ազատ
կարծուած գործունէութեան կերպերն ու հետե-
ւանքները կը խուսափին ձեր իմացականութենէն:
Աշխարհի վրայ քիչ չեն ամէն անոնք, որ նորձալ
պայճաններու տակ, ձիայն կամքի ուժին վստահե-
լով, իրենք վրիենք գտած են տխուր իրականու-
թեան առջեւ, հոս է այդ պատրալից ուժի հան-
դէպ տածուած արտասովոր վստահութեան եւ ա-
ւանդական հճայքին վնասը: Իսկ յաջողողներէն,
որ ամէն ինչ իրենց կամքի ուժին կը վերագրեն,
շատ քիչեր ձիայն կրցած են հասնիլ իրենց կամե-
ցողական ջանքերու համապատասխան տեղը: Աշ-
խարհի վրայ քանի՞ Էտիօպներ, Փօրաք կարելի
է համբել երբ անոնց չափ աշխատող, յոյնոյ եւ
ուղեղի տէր բիրաւոր հանձարներ կան այսօր, որ
անոնց բախտին հարիւրին ձեկ բաժինն անգամ չու-
նին: Մարդու ձր ճակատագիրը որքան որ ալ իր
ձեռքը ըլլայ, ձիայն կը ձեւաւորուի արտաքին
ձգտումներու, պահանջներու եւ դեռ ի՞նչ անձա-
նօթ ուժերու կազապարով: Գիտակցութիւնը թէեւ
հեւ ի հեւ կը հետեւի բովանդակ շարժման, բայց
իմացականութիւնը, կամեցողական ո եւ է վիճակ՝
անկարող է փոփոխութեան ենթարկելու այդ շարժ-
ման տարրերը, ահա թէ ինչո՞ւ տեսակ ձր laisser-
aller է որ ընթացք կուտայ ձեր գործերուն: Եթէ
կան պարագաներ, ուր տեղի ունեցած դէպքերու
դասաւորման պատճառաբանական աշխատանքը ցոյց
կուտայ կամքի անանկութեան եւ կամ յաղթանակի

արտաքին պատկերը, բայց զարձանալին այն է որ
նոյն այդ պայճաններու ձեջ անգամ, ձուտք կը
գործէ յաճախ անհասկանալի բան ձր, որ եթէ ձար-
ձին կուտայ ձեկուն փափաքներուն եւ ձուտձան,
խորտակման եւ անդունդի եղերքը կը հասցնէ ձեկ
ուրիշը: Ամենահարազատ կամքի գործ ձր, յաճախ
որպէս արդիւնք բոլորովին անյուսալի բան ձր
ձեջտեղ կը դնէ, որ կը խուսափի ձեր իմացակա-
նութեան հսկողութենէն: Մարդ կը ձղուի օգնել,
բարիք ընել, զորացնելու համար ձարդոց ձուտու-
րական եւ բարոյական ձգտումները, եւ ահա փոխա-
նակ այդ ազնիւ արդիւնքներուն, իր դէձ կը գտնէ
ապերախտութիւն, շահագործուծ, ոչ ձիայն իր բա-
րեկամութիւնը, այլ նաեւ կամքն իսկ վրայ տալու
աստիճան վատ դրութիւն: Իսկ անպարկեշտ ձիջոց-
ներով, սխալ գործերով յաջողողներու թիւը անպա-
կաս է: Այսպէս ուրեմն, կամքը շատ քիչ ազդեցու-
թիւն ունի ձեր գործերու հետեւանքներուն վրայ,
պարսպ տեղը չէ որ ձողովրդային իմաստութիւնը
կ'ըսէ. «Խորհուրդ ձարդկան, կամք Աստուծոյ»:

Հաստատուած է նաեւ որ քաղաքակրթական
յառաջդիմութեան ձեջ ձանօթ անձնաւորութիւննե-
րէն շատեր, իրենց վերագրուած գործերուն ձեջ
ձեծ կամք դրած չեն, այլ յաճախ քշուած են խոր-
հրդաւոր եւ անհասկանալի ձղանակէ ձր դէպ ի ի-
րենց ձրագրի իրագործուծը:

Ոմանք գիտած են որ ամէն դէպք, պատա-
հար, իրողութիւն, հրաշալի յարմարութեամբ ըն-
թացք տուած են իրենց ձրագիրներուն, իսկ ուրիշ-
ներու համար, ամէն ինչ աննպաստ է եղած եւ
ձեծագոյն արդեւքը ձագած է՝ ձանաւանդ ամենէն
աւելի կամքի ուժ գործածուած պահուն:

Ամէն անոնք որ իրենց հրաշալի գործունէու-
թեան փառքը կտակած են պատմութեան, ոչ ձեկ
աստեւ կեանքի ձեջ այդ երջանիկ իրողութիւննե-
րուն խելայեղօրէն փափաքող եղած չեն եւ ոչ ալ
կամեցողական համապատասխան ուժ վատնած են,
ինչպէս ամէն անոնք որ ձագաչափ ձր անգամ
շեղած չեն իրենց կացութենէն, երբ լաւագոյն դրու-
թեան հասնելու համար հարկ եղած ոչ ձեկ ջանք
եւ ձիւզ չեն խնայած:

Ճատոնց տեսնուած է որ որոշ ձարդոց քով,
երջանիկ կամ դժբախտ դէպքերը կը կրկնուին ա-
ւանց նախորդ դէպքերու ձակատարական հետե-
ւանքներէ ազրուած ըլլալու, կամ ո եւ է յարակ-

ցական վերաբերութեան, նոյն իսկ առանց անհատական պատասխանատուութիւնը բեռնաւորելու: «Դժբախտութիւնը առանձինն չի գար» առածը, յաճախ իրականութիւն դարձած է կեանքի մէջ: Երբ զինուորական ծր բաղձաթիւ վտանգաւոր ընդհարումներէ ծիշտ կը խուսափի՝ առանց ամենապարզիկ վնասի՝ ծինչ իր հազարաւոր ընկերները զոհ կ'երթան, երբ նաւաստի ծր ծիշտ անվտանգ կը խուսափի բոլոր ալեկոծութիւններէն՝ ծինչ իրմէ շատ աւելի ճարպիկներ ծովամոյն կ'ըլլան, այս վիճակը չէ կարելի վերագրել ոչ անոնց ձեռնբեռնութեան եւ ոչ ալ քաբիբի կերպերուն: Անպաճառ իրենց իծացականութեան համար աննախատեսելի շարք ծր պարագաներ կ'իրականանան ամէն անգամ եւ ծինք ճակատագիր կամ բախտ կը կոչենք կեանքի այդ ծանաւոր ու խարհրուոր օրիանրասիօնը: Կան ծարրիկ որ բազում անգամներ խորտակուած են իրենց կեանքին մէջ ծիշտ անպատելի դէպքերէ, կլիներ՝ որ ծիշտ կորսնցուցած են իրենց ամուսինները, ծնողներ՝ որ իրենց գաւակները ծիշտ ծիւռնոյն արկածներուն զոհ առած են: Կան ալ որ հակառակ իրենց կամքին եւ յատկութիւններուն, չեն կրցած բնաւ կայուն վիճակ ծր ստեղծել, ոչ ընտանեկան, ոչ սիրային, ոչ ընկերական, ոչ նիւթական, եւ ամէն դէպք, կարծես զիտակցարար, ծիշտ աննպատակ ընթացք է ունեցած իրենց համար: Ակնբերէ է որ այս բոլոր յաջողութիւններու եւ ձախորդութիւններու բովանդակ պատասխանատուութիւնը կարելի չէ վերագրել այդ անհատներուն: Հետեւաբար ստիպուած ենք ընդունիլ, ոչ ծիշտ մեզ ծանօթ ներքին կամ արտաքին որոշականութեան վճիռները, այլ նաեւ անբացատրելի, անհասկանալի տարբեր մէկ որոշականութեան, ըսենք ճակատագրի ծր գաղափարը որ լայնօրէն կը գլէ. կ'անցնի անհատական բոլոր կարողութիւնները, կամեցողութիւնները եւ նախատեսութիւնները եւ իրերայաջորդ դէպքերու ծօտաւոր կամ հեռաւոր հետեւանքները...:

Կոստան Զարեան, որու քով խորունկ գրագէտին կ'ընկերանայ նուրբ հոգեբան ծր, հետեւեալ սողերուն մէջ կուտայ ծեր ծտածման գրական սքանչելի խտացոծը. «... Կարելորը այն է, որ վերջ ի վերջոյ հասկանում ես, որ կեանքի բոլոր դէպքերը անխտափելի էին, որ ամէն ինչ նախօրօք արձանագրուած էր քո մէջ, որ մէկ դէպքը պատրաստուծ էր ծիւսին, որ կեանքը տարօրինակ

միւթիւն է: ... Եւ այն օրը զու կատարեցիր այնքան որ երբեք չպիտի կատարէիր: Ընդունեցիր ծր առաջարկ... աւելորդ վեհանձնութիւն ցոյց աուիր, զոհաբերեցիր այն, ինչ որ պէտք էէիր զոհաբերել: Եւ կեանքդ իր անիւը քշեց տարբեր ծր ճանապարհ:»

«Գէպքի արիւնալից արգանդը դէպք ծնաւ: Ամէն ինչ յեղաշրջուեց, տակն ու վրայ եղաւ, սլաքը շարժուեց ուղեցոյցի վրայ եւ ամպերը հսկայ կըտաւի նման պատուեցին հորիզոնը:

«Հիմա տեսնում ես՝ դէպքերու ետեւ ստուերներ են ծան կալիս եւ պարզ այն ծպլաը ծր մեծ ծակատագիր էր (1):»

Հոգեբանական աշխատանոցներու մէջ կատարուած ամենավերջին փորձերը անհերքելի փաստերով կ'ապացուցանեն ծարրկային անհասկանալի ճակատագրի ծր մասին եղած կարծիքները եւ զննուած պարագաները:

Մեր ուսումնասիրութեան այս վերջի ծասին անցնելէ առաջ, ըսենք նաեւ որ կամքի ուժէն աւելի, ծարրիկ կը տարբերուին իրարմէ ծիծիայն իրենց իծացական ծակարդակով, աւելի շիտակ պիտի ըլլար ըսել թէ անոնք ունին առաւել կամ նուազ իծացականութիւն քան թէ կամք, որ բնաւ առանձինն ուժ ծր չէ, այլ ծեր բովանդակ «ես»ն է: Աշխատանոցի գիտունը, գործարանի բանուորը, գինետան յաճախորդն ու խաղածողը, իրենց ցանկութեան եւ իտէպներուն մէջ ծիւռնոյն չափով կամք կը գնեն. իրենց միջեւ եղած տարբերութիւնը, լոկ իծացական տարողութեան եւ զիրենք չբարդեցնող նիւթերու զանազանութեան մէջ կը կայանայ: Կատարեալ ծոյլին եւ ամբողջ գիշերը իր սշխատութեան սեղանին առջեւ անցընող ուսանողին միջեւ, կամքի տեսակետով ոչ մէկ տարբերութիւն չկայ, երկուքն կ'ընեն այն ինչ որ կ'ուզեն (Ծ. Ռիշէ), ծիշտ թէ մին լաւ ուղղութեամբ կ'ընթանայ, իսկ միւսը վատ:

Հիմակ որոշ կը տեսնուի որ կամքի զատկարակութեան (2) նուիրուած հատորներ, պարզապէս կեանքի գնահատման, արժեցման եւ աշխատութեան լաւագոյն ծեթօտներու արձանագրութիւններ են եւ ոչ ուրիշ բան:

(1) «Հայրենիք» ամսագիր. հոկտ. 1928:
 (2) Օգտակար հասոցներէն մին է. L'Education de la Volonté, par J. Payot, chez Alcan. Paris.



Որքան որ ճարդկային գործունէութեան ազբիւրները պրպտենք, այնքան աւելի անոնց ամբողջական ծանօթութիւնը կը խուսափի ձեր Հետազոտութենէն: Մենք կ'ապրինք տիեզերքի ծր ճէջ եւ ձեր կեանքը ձեռով ծր կապուած է անոր Հետ: Ոչ ճիայն ենթակայ ենք ձեր ֆիզիքական, բնախօսական եւ արտաքին, ընկերային Հրամայողականութեանց, այլ նաեւ բնութեան բոլոր տարրերը կ'ազդեն ձեր վրայ: Ուժերու ճառագայթման ուսումնասիրութիւնները ձեզ կը դնեն անհուն թրթրուումներու ահաւոր ցանցի ծր ճէջ եւ Հազար փորձեր կուգան Հաստատելու, որ ձեր ֆիզիքական օրգանիզմին նձան, ձեր Հոգեկանութիւնը նաեւ ենթակայ է այդ նիւթական տիեզերքի բոլոր արտայայտութեանց:

Իսկ կայ աւելի առեղծուածայինը, աւելի խորհրդաւորը. ո՞վ գիտէ թէ ոչ-նիւթական ուժեր նաեւ չեն ներգործեր ձեր վրայ. քծաՀաճօրէն չէ որ արդի գիտութիւնը կը յառի դէպի Հոգեպաշտական շարժուծը: Զգենք այս սարսափելի Հարցը ժամանակի եվոլյուսիօնին: Պէտք է անգիտանալ ոսկայն, որ կատարելապէս Հաստատուած փաստուած իրողութիւններ կան այսօր, որ ճեզճէ իւրաքանչիւրին կեանքը կը դնեն ինքնայատուկ եւ անհասկանալի ճակատագրականութեան ծր առջեւ: Փրօֆ. Շ. Ռիշէ կ'ըսէ. «Նախաղղացումներ կան, որ Հակառակ ամէն կարգի առարկութեան, իրական են: Զեռեւաբար, ճարդկային իճացականութիւնը, Հաղուադէպ պարագաներու ճէջ, կրնայ կանխատեսել դէպքեր, զոր ոչ ճէկ իճաստութիւն և գիտութիւն չեն օգներ ժամանակէն առաջ Հասկնալուն: Ուրեմն ապագան պատահականութեան գործ չէ, այլ կանխօրօք Հաստատուած, արձանագրուած իրողութիւն:»

Այո՛, ապագան ճանչնալ կարելի է, բազմաթիւ փորձեր եկած են Հաստատելու որ կեանքի ամենահեռուոր, ամենամտրամաբանական եւ ներկայ ու անցեալ իրողութիւններու ճէջ ոչ ճէկ արձատ չունեցող դէպքերը կարելի է կանխատեսել տարիներ առաջ: Այս իրողութիւնը, որ քարուքանդօրէն կը խորտակէ բազմաթիւ փիլիսօփայական դրութիւններն եւ կ'աճքի ուժի վարդապետութիւնը, այսօր բոլորովին այլուր դարձուցած է ճանաւանդ

Հոգեգանցութեաճը զբաղղ բազմաթիւ գիտուններու ճտաճճան դեկը: Տօքթ. Օսթի, Փարիզի Հոգեգանցական Հաստատութեան Դերհուն դեկավարը, երկար տարիներէ ի վեր կը զբաղի այս Հարցով եւ ունի խոշոր Հատոր (1) ճը, որ կը պարունակէ փաստուած, ստուգուած բազմաթիւ իրողութիւններ: 1927ին, Փարիզ գուճարուած Հոգեկան Հետազոտութեան 3րդ Միջազգ. Հաճաճողովին, որուն ներկայ էին բազմաթիւ Հաճալարաններու փրօֆէսօրնր, գիտուններ եւ բժիշկներ, Տօքթ. Օսթի ներկայացուց իր գերբնականն ճանօթութեանց իրողութիւնները (2):

Մենք, տասը տարի առաջ, բոլորովին անկախ ըլլալով Տօքթ. Օսթիի այս աշխատութիւններէն, ձեր ըրած փորճարկութեաճը Հասաճ էինք ապագայի գուշակճան կարելիութեան գաղափարին: Այդ ուղղութեաճը ձեռք ձգուած փորճի արդիւնքները ձեզի առկն յետագային կեանքի դէպքերուն կանխօրօք Հասկացճան կատարեալ Հաճողուծը եւ ուրեմն անհրաճեշտաբար այդ ըճբնճան Հարկաղրած փիլիսօփայական եզրակացութիւնը: Հոս կարելի չէ ճտնել ճանրաճաննութեան ճէջ այն բոլոր իրողութիւններուն, որ ձեզ առաջնորդուծ են Հաղար ձեւ առարկութիւն վերցնող տեսակէտի. չենք անգիտանար նաեւ այն Հոգեկան շփոթեցնող դրութիւնը, որ կրնայ ստեղծուիլ ձեր Հաճողճան ընդհանրացճաճը, ձեր գորճելու աղատութեան եւ պատատիսանատութեան Հարցին շուրջ: «Ոչ ճէկ փիլիսօփայական սիտեճ, ոչ ճէկ վարդապետութիւն, ոչ ճէկ արճաբանութիւն աղբեցութիւն չեն ըներ ճշղուած, ստուգուած իրողութիւններու վրայ», կ'ըսէր Փասթլօր, իր ճիքրոպներու գիւտին ճեճարղոյ աղաղեճականներու եւ գիտուններու շրջանակին ճէջ յառաջ բերած իրարանցուճին եւ անորակելի ընդգիճութեան առթիւ:

Իրողութեան առջեւ գլուխ ճոկ պէտք է. ո՛չ իրողութիւնը և ո՛չ անկէ յառաջացճ ճեռեանքը, ճեզճէ կախուճ չունին, ճեզ կը մնայ զաննք ճանչնալ եւ ընղունիլ առանց վրղովճան:

(1) La Connaissance supra - normale, par Dr. E. Osty, chez Alcan, Paris.

(2) էջ 187 Comptes-rendu du IIIeme Congrès International de Recherches psychiques. Paris.

Այս ուղղութեամբ ամենասկեզարիկներն անգամ, երբ աննախապաշար կերպով ձօտենան թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկայիս տեղի ունեցած նախագեկոյց երազներու (rêves prémonitoires) իրականութեան, շուտով պիտի համոզուին որ մեր ծանօթութեան սահմանէն դուրս, անձանօթ, խորհրդաւոր բան ճը կայ այդ կանխագուշակութիւններու ճէջ: Ըստ Ֆրէժուստի, եթէ ո եւ է երազ, ծպտուն եւ այլակերպուած իրականութիւնն է զսպուած փափաքի ճը, ըստ հոգեգանցութեան, փորձառական եւ գննողական արդիւնքներու, կան ալ երազներ, որ օրեր, շաբաթներ, ամիսներ առաջ, բոլորովին անկախ՝ ենթադրատակական թելադրութիւններէ եւ կեանքին արածաբանօրէն կանխատեսելի դէպքերէ, աղբանջանը կ'ըլլան ապագայ այնպիսի իրողութիւններու, որ ոչ ճէկ կ'ալ չունին մեր ցանկութիւններուն եւ փափաքներուն հետ: Մ. Մէթէրլինք, իր վերջին գործերէն ճէկուն ճէջ (1), խօսելով, երազներուն՝ յետագային տեղի ունենալիք դէպքերուն հետ ունեցած խորհրդաւոր կապակցութեան մասին, կ'ըսէ. «Այդ կարգի երազներէ վերջ, մեր անհատական փորձառութիւնը պիտի չուշանայ մեզ համոզելու որ ապագան գոյութիւն ունի արդէն ներկային ճէջ...»: Կայ ճանաւանդ մեքսիքսիւմական՝ յայտնութիւնը, որ յաճախ դարձանալի կերպով, տարիներ վերջ տեղի ունենալիք կատարելապէս աննախատեսելի եղելութիւնները մաթեմատիքական ճշգրտութեամբ կը պարզէ: Այս եղածը, հանդիպուածի, զուգադիպութեան գործ չէ: Բայց հարկ է գիտնալ թէ շատ քիչ է թիւը ճշմարիտ կանխագուշակներու, հրապարակը ողորդներէն շատեր չեն արդարացներ իրենց անունը, շահամոլութիւնը աւելի դեր ունի իրենց յայտարարութեանց ճէջ քան թէ իրական կարողութիւնը: Հասարակութիւնը զգուշանալու է այդպիսիներէն, նկատելով որ շատերու թելադրելիութիւնը կրնայ խիստ վնասակար ըլլալ իրենց: Այս փորձերը արժէք ունին ճիշտ իրենց գիտական եւ հոգեբանական արդիւնքներուն համար, Գելլիան պատգամները, Եսկուլապի, Իսիսի եւ Օսիրիսի քուրճերուն երազները, Յունա-Հռոմէական բոլոր արտագուշակներու յայտնութիւնները, ներկայիս, գիտական եւ հոգեգանցական կազմակերպուած աշխատանքներու ճէջ, ճեւով ճը հակակշռի ենթար-

կուած են: Ստացուած արդիւնքները, որ կը հաստատեն արդի մէտիիւճական կարգ ճը յայտնութիւններու ստուգութիւնը, ճանաւանդ կանխագուշակուճի գորճին ճէջ, նոր լոյս ճը կը սփռեն այս խնդիրներու նկատմամբ եղած հնարքեան հասկացողութեան շուրջ: Այս կերպ ճանօթութիւններու անձանօթ աղբիւրները պէտք է փնտռել ենթադրատակական փլաւնէն շատ աւելի վեր, հոգեկանութեան խորհրդաւոր անցքերուն ճէջ: Եթէ ոչ ճէկ բացատրողական ճեւ չի գոհացներ ներկայիս կանխագուշակութիւններու գիտական մեքսիքսիւմակ, ոչ ճէկ կասկած կայ արդիւնքին նկատմամբ: Այն գիտունները, որ ճանաւորաբար զբաղուած չեն այս ճիւղով եւ չեն հետեւած գէթ հարիւրաւոր հատոր հաշուող հոգեգանցական գրականութեան, ոչ ճէկ ճեւնհասութիւն կրնան ունենալ իրենց ժխտութիւններու ուճին ճէջ. քանի որ ամէն ժխտում ենթակային կը պարտադրէ կատարեալ ճանօթութիւն: Վէճի նիւթին շուրջ իսկ ամէն անոնք որ շիճան ճէջ են այդ փորճերու եւ անոնց արդիւնքներուն հետ, ճատագրականութեան զաղափարը կը դառնայ համոզում, հետեւաբար անոնք կեանքի խորհուրդին եւ անոր գորճունէութեան աղբակներուն կը նային բոլորովին տարբեր մտայնութեամբ:

Նկատելով նաեւ որ մեր շուրջ ամէն ինչ կը դիճէ դէպ ի վախճանականութիւն, ճարգը բացառութիւն չկազմելուն, իր ճակատագրականութիւնը ուրեմն կը թուի ըլլալ իմացական: Կեանքը, բնագիտակատարբաբանական երեւոյթէն աւելի՝ ուրիշ բան ճըն է. աշխարհի ճէջ ամէն ինչ յաճախ իր արտաքին պարզ երեւոյթին տակ կը ճածկէ խորհուրդներու ովկէան ճը: ճիւղերք բնաւ պատահականութեան գորճ չէ, բնութեան կոյր ուճերը անկարող են գճելու եւ պարտադրելու աշխարհին՝ իր ներդաշնակութեան ահիդ օրէնքները: Այսպէս ալ մեր մտածութիւնը, հոգեկան ճգտութիւնը, եւ կեանքի բովանդակ դէպքերը, կարճուածին չափ պատահական, կաճեցողական չեն: Ո՛վ գիտէ թէ մեզ զեկավարող ներքին եւ արտաքին որոշականութեան, անհասկանալի ճակատագրականութեան ետին շատ աւելի գորաւոր ուճ ճը չէ որ զանոնք շարճման ճէջ կը դնէ:

Մարդկութիւնը եթէ դեռ ի վիճակի չէ, իր հոգեկան բնաշրջման յետամնացութեան հետեւում օք, կարենալ օգտուելու ճակատագրականութեան զաղա-

(1) էջ 162 La vie de l'espace, par M. Maeterlinck. Paris.

փարէն, հաշտեցնելով զայն անհատական եւ ընկերային արդարութեան եւ բարոյականութեան բարձրագոյն պահանջներուն հետ, բայց ոչ ձեկ ատեն այդ գաղափարը ծարգոց ձեւներէցութեան ոգին և յառաջըլի՛նութեան ձգտուծը խափանելու բնոյթ չունի՝ հակառակ արեւմտեան կարգ ճը ծտաւորականներու կարծիքին: Մենք կ'ապրինք բնութեան ձեջ եւ ենթակայ ենք անողոքօրէն անոր պարտադրութիւններուն: Հոն դադար չկայ եւ ուրեմն ծարղը չի կրնար բացառութիւն կազմել: «Իրականութեան ձեջ, կ'ըսէ Նիչցէ (1), ծարղ ձեկ ծանկին է ճակատագրակա-

նութեան, ինչպէս իր յիծար, նոյնպէս իր է՛ն իծատուն զործերն անգամ ծաս կը կազմեն անոր:» Իսկ Շ. Ռիշէ, այդ աննման հանճարը, կ'ըսէ. «Մեքենական աշխարհը զոր կը ճանչնանք իր հիւլէնելով, էլեքտրօններով, աստղերով, արբանեակներով, կենդանիներով, ճիբրուներով, քիմիական բեախիօններով, ջերմութեամբ, էլեքտրականութեամբ, թերեւս իրականութեան շատ պզտիկ ձեկ ծասն է: Այլ կարգի անձանթ ուժեր անկասկածօրէն կը շարժին ձեր չորսդին: Ո՛վ գիտէ թէ երբ այդ աննիւթական աշխարհները չե՛ն որ կը զեկալարեն ձեր ճակատագիրները...:»

(1) Le Voyageur et son ombre, par Nietzsche.

ՏՕԲԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ

Խ Ո Ր Հ Ո Ի Ր Դ Ը

Արեւը՝ իրիկնամուտի բոցեղէն ջուրերուն մէջ վերջին լոգանք մը առած եւ իր սիրահարին գիրկը դացած էր: Բայց գիտակցելով որ Երկինք՝ իր լքուած սիրահարը՝ նախանձով ու գայրոյթով համակուած, պիտի հետախուզէր ու գտնէր զինք եւ պիտի գրկէր այն վայելքէն որուն անձկագին ու կարօտով կը փութար՝ խնդրած էր իր Խաւար քրոջմէն որ իր մտայլ վարսերը ցրիւ տալով անթափանցելի քօղ մը կազմէր Երկնքի տեսողութեան առջեւ:

Խաւարը սիրով փութացած էր իր քրոջ տարփական տոամը ծածկելու:

Արեւուն բացակայութիւնն ընդհուպ զգալի եղած էր. ու Երկինք իր անհամար աչքերը բացած գայն կը փնտռէր... միջոցին մէջ ամպի ոչ մէկ արատ կար. այդ երեկոյ. Ովկիանոսը ցաւագին հառաչներ չէր արձակեր որ ամպերու վերածուէին, վասն զի ան՝ այդ պահուն կրցած էր իր սիրուհին իր թեւերուն մէջ ունենալ ու երջանիկ անգորրութեան մը

մէջ թաղուիլ: Խաւարը սակայն, առանձինն իսկ, այնպիսի ահարկու գօրութիւն մը ցոյց կուտար որ, կը թուէր թէ, անոր նմանը զբոխքն անգամ չպիտի կարենար արտաբերել:

Երկինք՝ Խաւարին ընդդիմութիւնն ընկճելէ յուսահատ՝ Լուսինն օգնութիւնը կը խնդրէր: Բայց — ո՛վ երկնային ոյժերու ցանկութեանց ամենի ուղբերգութիւն — Լուսինը գիտէր որ Արեւուն մեծապանծ փայլը՝ սիրահար Երկնքին անոր ընծայաբերած թանկագին իրերու ցոլմունքն էր եւ թէ Երկինք անոր կը տածէր այն գերագոյն սէրը՝ որ Աստուծոյ մը սրտէն կրնայ բղխիլ: Լուսինը ի՛նք կ'ուզէր Երկնքի սիրոյն արժանանալ:

Որով կը զժկամակէր այդ վշտառիթ գերակատարութիւնն ստանձնել. որովհետեւ, ան գիտէր որ Երկնքին յաղթանակը իր պարտութիւնը պիտի ըլլար:

Ի վերջոյ սակայն, Լուսինը տեղի կուտայ Երկնքի սրտառուչ պազատանքին, որովհետև

ան, ամենէն զգայուն, ամենէն գթոտ սիրտը կրող ոգին է՝ վերի բովանդակ գորութիւններուն մէջ: Ա՛խ, եթէ ան՝ Արեւուն տեղ՝ ինք սահմանուած ըլլար տարրերու մէջ կենսաւիշ ներարկելու՝ պիտի զլանար իր ջերմութիւնը Անարդարութիւն ըստուած ժանտ ու թունաւոր իշխանութեան, որպէս զի ան չզահակալէր աշխարհներու վրայ...:

Մինչեւ Լուսնին ողորուիլն ու Խաւարին զէմ գալը՝ կէս-գիշերը մեկնելու պատրաստուած էր արդէն: Երբ անյայտնուեցաւ, մթնոլորտն ա՛յնքան մաքուր, յղկուած ու պրիսմակի մը փոխարկուած էր որ անոր շողիւնն սկսաւ ամէն կողմէ արձանագրուիլ: Այն ատեն, ա՛յնքան հիացական ու պայծառ տեսարան մը բացուեցաւ, որ անոր նմանը ոչ մէկ արշալոյս կրնար ցուցադրել: Անոր բամպակահանգոյն լոյսէն՝ ծառերը բաց-կանանչ պատմուճանով՝ կանանց կերպարանքներ ստացած էին. քաղաքներ ու աւաններ՝ կարծես սպիտակաբուրդ ոշխարներու նախրներ էին որ կը մակաղէին, ծաղիկներ՝ դիւթական զրզուամով մը նուաղած՝ սիրոյ հոռաչներ կ'արձակէին. սոխակը՝ կարծես հրաշքով մարմնացած դարաւոր վիշտը երկրին՝ սկսած էր իր յաւիտենական ողբը հեծեծել. այն ատեն մթնոլորտը հեշտաթախիծ դրախտի մը փոխարկուած էր, ուր կը թուէր թէ Լուսինը աստուած մը ծնելէ կուգար...:



Մեր դահլիճներէն դուրս, Աշխարհին ու կապոյտին միջեւ, երկնային ոյժերը ահա թէ ի՛նչ խորհրդաւոր տենդերու մէջ էին, ա՛յն միջոցին երբ ես ու ան՝ մարդկային երկու սիրահար էակներ՝ առանձին, շքեղօրէն կահաւորուած սենեակի մը մէջ սիրոյ փիլիսոփայութեան մէջ խորասուզուած էինք: Բայց, արդեօք սիրահարներու սէրը տրամաբանութեան, պատճառաբանութեան, — փիլիսոփայութեան վրայ հիմնուած է: Սէրը՝ երկնքի հուրն իսկ է. ան չի հանդուրժեր ոչ մէկ տրամախոնութեան: Անարատ սէրը՝ բոցեղէն հեղեղ մըն է որ կուգայ, փոթորկօրէն անարգել, ծովօրէն անհատնում՝ իր ընթացքին մէջ ամէն ինչ բոցի վերածելով: Թերեւս, սակայն, կ'ուզէինք զերբնականին արահետով սիրոյ

լուսաւոր կայքը հասնիլ. կամ, գուցէ, դուրսի խորհրդաւորութիւնը կը ներգործէր մեր սիրտերուն, ու մենք կը փիլիսոփայէինք...:

Թափանցած էինք մարդկային ներքին էութեան ու հոն դտած էինք անզոյն ու լարձուն ուրուականներու փաղանգ մը ամբողջ, որոնք արտաքին երեւոյթներու ցնցողականութեան տեսակին եւ ուժգնութեան համաձայն՝ գոյներ ու ձեւեր կը ստանային: Հոն հանդիպած էինք Եսականութեան, որ դիւային ծրագիրներու յատակագիծ մը կը պատրաստէր, հոն հանդիպած էինք Նախանձին, որ միշտ մոայլ ու միշտ դժգոհ՝ դժոխքէն հրեղէն տարրեր կ'առնէր ու իր բնակարանին մէջ կը մթերէր. հոն հանդիպած էինք Ատելութեան, որ շղթայակապ զագահի մը նման կը մոնչէր. հոն հանդիպած էինք Գթութեան, որ ձմեռուան թուփի մը պէս սարսոտն՝ Եսականութեան կը սպասարկէր. հոն հանդիպած էինք Հեզութեան, որ իբր դուստր Նախանձի՛ ի դուր կը ջանար անոր զէմքին վրայ ժպիտ մը ձեւացնել. հոն հանդիպած էինք Վարկին, որ Ատելութեան մաղիւններուն մէջ կ'ոգորէր... Եւ վերջապէս, մեր այս տաժանագիրն ուղեւորութեան մէջ՝ հասած էինք հոգեկան աշխարհը:

Այս մարդին մէջ՝ իրարու ներհակ ըմբռնումներ ունէինք: Ըստ անոր, մարդ՝ մարդ ըլլալէ դադրելու եւ բացարձակ իմացականութեան փոխուելու էր հոգիին իսկութիւնը հասկնալու համար. ան՝ հոգին ամէն ինչ կ'ընդունէր եւ, կը խօստովանիմ, հանճարեղ ստեղծագործութեամբ մը՝ մեծապէս համոզիչ փաստարկութիւններ կ'ընէր: Բայց, ես կը նմանէի հսկայ ապառաժի՝ որ իր վրայ թափուող անձրեւի մեծաղորդ տարափներու ուժգնութիւնը զգալով հանդերձ՝ ապառաժ ըլլալէ չէր դադրեր...: Ըստ իս, հոգին, մեր էութիւնը ձեւաւորող բազմազան նիւթերու ամենանուրբ գրեթէ խուսափուկ մասերու, ձեւերու եւ շարժողականութեան, լրիւ ու ներդաշնակ միաւորման մը ցայտուն թրթռականութիւնն է միայն: Եթէ հոգին ո եւ է տեղէ մը եկած ու մեզի եւ բոլոր կենդանական աշխարհին զգացողութիւն տուած ըլլար, ան իբր անսկզբնական կենդանութիւն մը՝ կրօնար աշխարհիկ կեանքի կոչուելուն գիտակցութիւնն ունենալ, կրնար ետքէն ս՞ուր մեկնելուն տեղեակ ըլլալ ու նաեւ, կրնար յիշո՞

շողութիւններ պահած ըլլալ իր անցեալ կեանքէն, մինչդեռ մենք բացարձակապէս կ'անգիտանանք այդ բոլորը:

— Անվախճանը՝ անսկզբնականն է միայն: Վերջապէս, տիրապետեցի անոր գիտակցական աշխարհին ու այն ատեն, ան՝ իր ըմբռնած հոգեկան բարձրութենէն գահավէժօրէն նիւթական աշխարհի մէջ իննալը զգաց, ու

— Ա՛խ, ըսաւ, ականջներս՝ հազար մեթր բարձրութենէ մը մարմարէ սալայատակի մը վրայ ինկող մետաղէ սկաւառակի մը խափուցիչ հնչիւններով կը լեցուին:



Ան՝ պարզ բայց վայելուչ հագուած էր: Իր մոխրագոյն շրջագոգստը, մթնշաղին մէջէն նշմարուած ջրվէժի մը պէս խորհրդաւոր, մէջքէն կը սկսէր՝ կանգ առնելու համար ծունկերէն հազիւ քիչ մը վար: Սպիտակ մետաքսէ պլուզը, կարծես յոյսի ճերմակ ծուէն մը ըլլար, անոր կուրծքը կաթոգին զրկելով՝ մեղմօրէն կը բարձրանար մինչեւ կզակին ներքեւ, վարէն վեր, մանր, թեթեւ-կապոյտ կոճակներու շարով մը դրասանցուած, եւ թեւերուն երկայնքը առուականման կը հոսէր ու կանգ կ'առնէր դաստակին հասնելուն պէս, նաեւ արմուկէն վար երկնադոյն կոճակներու վէտվէտուն ալիք մը կրելով իր վրայ:

Իր քարայրի մը մթութեան սեւութիւնն ունեցող աչքերը, որոնց կարելի չէր նայիլ առանց ելեկտրական ուժեղ ցնցում մը զգալու, ողորկ ու վարդագոյն դէմքին այնպիսի գեղեցկութիւն մը կը շնորհէին որ առաջին ակնարկով՝ լուսոյ փունջ մը ըլլալ կը թուէր, երկրորդ ակնարկով՝ մեծափայլ շանթ մը, երրորդ ակնարկով՝ ա՛յն գեղեցկութիւնը ուրկէ հուրն իր հրայրքը կը ստանայ...:



Ժամանակի յառաջացումէն թէ տխուր լարուածութենէ մը՝ յոգնածութիւն մը կ'իջնէր անոր վրայ: Կը նշմարէի որ ան կէս մը նուազուն՝ աջ ձեռքը ձգած էր ծունկին վրայ, ձախը՝ բազկաթոռէն վար կախած. կարծես սկսած էր իր գոյութիւնն անգիտանալ:

Հոս՝ դանց կ'առնեմ սենեակը պճնող՝ պատրանաբոյր պատկերներու, գաղափարներ պարտադրող արձանիկներու, նուազիլ առաջարկող բազմաբուրեան ծաղիկներու, զմայլումի հրաւիրող նուրբ ու թրթռուն ասեղնագործութեանց, զնահատումը կապտող գունագեղ ու սքանչելի գորգերու, սիրուն ու նկարագարող վարագոյրներու, տեսակ մը վեհութիւն բարձրացնող մեծագործ թաւիշէ բազկաթոռներու նկարագրութիւնները: Պիտի նկատեմ սակայն պատկեր մը, որ անանուն նկարիչի մը մէկ գլուխ-գործոցն ըլլալ կը թուէր, եւ որուն վրայ սեւեռուած կը մնային այդ վեհոգի գեղուհոյն աչքերը:

Այդ պատկերին մէջ կը նշմարուէր առոյգ երիտասարդ մը, հնազարեան աղեղով մը նշան առած դիրքի մէջ՝ ուրկէ նետը մեկնած է: Քիչ անդին, ծառաշատ բլուրի մը ստորոտը, կանանչ թուփերու մէջէն՝ աղբիւրի մը արծաթ յայտնութիւնը. աղբիւրին կից՝ նայեալ մը: Նայեալին ջուրով լեցուն կուժը՝ որ երիտասարդին նշանակէտն է եղած՝ վար ինկած փշրուած է, ու ջուրը՝ նայեալին ուսէն վար եթերագոյն մետաքսէ զգեստը թըրջելով՝ կը հոսի դէպ ի աղբիւրը... այս բոլորը՝ գոյնի ու ձեւի այնպիսի համագոր դաշնակաւորութեամբ մը դասաւորուած՝ որ հոն բացայայտ էր Յաւերթին էութեան ներուժ խորհրդանշանումը ... այս պատկերը կը կրէր «Սրբապղծութիւնը» տիտղոսը:

Ան՝ երբեք չէր արտայայտուեր թէ այդ տեսիլքը ի՛նչ կը ներշնչէր իրեն. բայց իբնայումքը անոր մէջ ընկուզուած կը մնար միշտ: Արդեօք կեանքի ու մահուան մեկնութիւնը կը նշմարէր անոր մէջ. արդեօք կուսութեան խլուած զոհաբերութիւնը որ կ'երթար վերստին ձեւաւորուելու. կամ բնաշըրջումը տիեզերքին, որ կը քանդուի վերաշինուելու համար...:

Այս խորհրդածութիւններուն մէջ էի՝ երբ — Մ'արդիկ, շշնաց, նոյն իսկ լուսոյ մէջ, կարծես անլոյս ու անբաւիղ ներքնուղիի մը մէջ եղած ըլլային, լոյսը չեն տեսներ երբեք: Ի՛նչ բանի կ'ակնարկէր ան. ի՛նչպէս իմանալ: Անհնար է անոր թոխչքին հասնիլ: Անմատոյց բարձունքն իսկ է ան. գեղի ու շնորհի, լոյսի ու յուզման միացեալ ու ամբողջական գումարն է. այո՛, Անմատչելին է ան: Կ'ուզեմ որ խօսի. բայց անոր խօսքը՝

դաժան մտածման մը պէս ստուերամած է միշտ, անոր խօսքը՝ այնպիսի խորութեան մը մէջ կը հնչէ որուն վրայ հարիւր ձմեռներու ամպերը կուտակուած են:

Անմիջապէս յետոյ յարեց.

— Եթէ ես նկարած ըլլայի այս պատկերը, «Արհաւիրք» կը կոչէի զայն:

— Սիրելիս, ըսի, քու մտածումներդ՝ երազներէդ աւելի բարձր ելած են միշտ. ինչպէս...

— Անհունին մէջ արձակուած լուսեղէն շաւիղ մը:

— Արդ, ի՞նչ հաճոյք կը գտնես երազելու մէջ՝ երբ երազներդ ա՛յնքան վար կը մնան...

— Վէ՛մերը չեն բացուիր. անցեալի զգայութիւնները դադրած են շնչելէ... երէկուան վրայ երբ մտածման հոգը փչէ՝ «յիշատակ» ըսուած փոշի մը կը յառնէ ու կը լեցուի մեր ունեզերուն մէջ ու եթէ երբեք չթօթուենք զայն՝ խեղդամահ կ'ըլլանք անոր ներքեւ... ներկան՝ խօլարշաւ մըն է, ապագան՝ սառնամանիք մը. պէտք է կտրուիլ բոլոր ժամանակներէն... ազուաւր անհաճոյ է, մինչ արտոյտը կը պաշտենք... որովհետեւ կարելի չէ մոխրի վրայ բնակիլ:

Տեսնդի՞ մէջ ենթադրէի զայն. ո՛հ, ո՛չ: Մարդկութեան շոգին կը խօսէր անոր բերնով: Որովհետեւ, ի՞նչ է կեանքը վերջապէս եթէ ոչ մոխրակոյտ մը որուն մէջ խրած ենք մինչեւ մեր կոկորդը: Մեր մտածումներն որքան ալ յանդուզն ու բարձր ըլլան՝ միշտ երազն է որ մաս մը գեղեցկութիւն ճաշակելու հաճոյքը կուտայ մեզի: Սակայն, իր այս խորհրդածութենէն՝ ինչպէս — թէ եւ ի դուր — որ եւ է ըօթէ մը՝ ուզեցի խոյս տալ, վախնալով որ անոր տակ տարբեր ու հասարակ դադանիք մը կրնար թաքնուած ըլլալ ու իմ երջանկութեանս վրայ ցայտել՝ ինչպէս գիշերը որ օրուան վրայ կ'ոստնու:

Նաեւ, այդ սիրաբորբ լարուածութեան մէջ, իր այս ուղղութեամբ կեանքին մօտենալը՝ հաճելի չէր ինծի: Հետզհետէ կը սկսէի մանկանալ, որով զձուձ ու եսամոլ դառնալ: Բայց բանաստեղծելու արամադրութիւնս կը պահէի.

— Տե՛ս սա լուսինը, ըսի, ո՛րքան ժամանակներէ ի վեր հոն եղած է ան, բայց ամէն հեղ որ նայիս՝ նոր բացուած աղբիւրի մը կը նմանի...:

Տժգո՛յն ժպիտ մը ուրուագծուեցաւ անոր դէմքին վրայ՝ որմէ սոսկացի. չեմ գիտեր ի՞նչ էր այդ... բայց արհամարհանք մը չէր երբեք...

— Իութիւններու ամենամութ խորերն իջանք, ըսաւ, պէտք է դուրս գալ այդ խաւարէն... բայց դէպ ի առաջ չնետուինք. որովհետեւ չենք գիտեր թէ լոյս կա՞յ առջեւինս...:

Կը հեզնէր. վասն զի միշտ խիզախ եղած է ան:

Բայց նպատակէս հեռանալ չուզելով՝ մրմնջեցի.

— Փնտռուած ա՛յն ցնորքն ես դուն որ մշտապէս խոյս կուտայ հասողութենէս... ամէ՛ն ինչ ունիս ու բա՛ն չես տար:

Այն ատեն ցաւագիտօրէն աչքերը վեր առնելով՝

— Կը լսե՞ս, Երկինք, ձայնեց, ինչ փոյթ թէ ամէն բան կը գլանաս ինծի... ու կ'ըսեն թէ ես ամէ՛ն ինչ ունիմ. ամէ՛ն ինչ, — ծովերու՝ մարգարիտը, հանքերու՝ ոսկին, հնոցներու՝ կրակը, արեւու՝ երջանկութիւնը...

Յետոյ՝ ինծի դառնալով.

— Ո՛վ բարեկամ, ի՞նչ ունիմ ես որմէ կարենամ բաժին հանել քեզի... ես՝ միջոցներու ունայնութիւնը ունիմ միայն:

Այսպէս խօսած ատեն՝ ան հրդեհուած թուփի մը կը նմանէր. ինծի կը թուէր անոր մարմինէն արձակուած բոցեղէն շաւիղներ տեսնել...: Ծունկերս կ'թոտեցան... եսամոլութիւնս փճացած էր: Անոր մէջ նշմարեցի ցաւի մը անհատնում բոցը. ու իմ տանջանքիս պատիկութիւնը տեսայ այդ մեծ տառապանքին քով: Բայց ի՞նչ ցաւ էր այդ որուն չէի կրցած թափանցել:

Ան կը շարունակէր.

— Ես ցաւ մը ունիմ՝ որուն կը տոկայի քեզ տեսնելէս առաջ... ինչո՞ւ չխաւարեցաս ա՛յն լոյսը որ քեզ ինծի ցուցադրեց...:

Ահաւոր էր այս: Յանցանքը իմս չէ՞ր սակայն: Որովհետեւ իր քօղարկուած խօսքերուն մէջ զգալի կ'ըլլար թաքուն զարհուրանք մը զոր կոյր սիրահարութեանս մէջ ուզած էի անտեսել: Այժմ ան կը յայտնուէր պայծաս՝ առտուան լոյսին պէս. անկէ փախչիլ փորձելու տկարութիւնը պէտք չէր ունենայի. որովհետեւ, մարդկային հնարագիտութիւնը՝ ամենէն աննշան պատուհասէ մը

իսկ՝ չէ կրցած գերծ մնալ: Հակառակ սակայն
զայն արդարացնելու՝ բոլորովին խորտակ-
ուած էի:

— Ա՛խ, ըսի, պիտի նախընտրէի զիշա-
տիչ թոռուկէ մը յօշոտուիլ՝ քան թէ քեզմէ
լսած ըլլալ այդ:

— Բայց ինչո՞ւ տեսայ քեզ հոն...: Տե-
սայ, ու անկից ետք ամէն տեղ քեզ փնտոե-
ցի... Անկից առաջ, երկնքին չափ բարձր էի
ես, ամէն ոք ինծի կը ձգէր ու ոչ ոք կը
հասնէր ինծի... քեզ հոն տեսայ, այդ բարձ-
րութեան վրայ. ու, ինչպէս կեդրոնական
հրթիռէ մը կայծեր՝ գլխէդ լուսեղէն ճառա-
գայթններ կը ցայտէին... հոն տեսայ ու սիրե-
ցի քեզ. այնպիսի ջիւղ ու բարձր սիրով մը,
որուն նմանը լոկ արեւը կրնայ ցոլացնել...

«Սակայն այդ սէրը՝ ցաւիս մեծութիւնը
զգացնել տուաւ ինծի. եւ որովհետեւ աշխար-
հիկ է ամէն ցաւ՝ բարձրութենէս աշխարհիս
վրայ իյնալս տեսնելու սոսկումն ունեցալ
ես... իմ սէրս ա՛յն սէրերէն է սակայն, որոնց
համար ամէն կատար պատրաստ է իր տեղը
տրամադրելու: Այդ սէրը քեզի համար ունե-
ցայ՝ բայց ինծի միջոցը կը պակսի զայն քեզի
ընծայաբերելու. որովհետեւ...

Հեծկտաց:

Գլխու պտոյտ մը ունեցայ: Քիչ առաջ-
ուան բիրտ իրականութիւնը՝ յանկարծ գորո-
վալից երազի մը փոխուած էր: Բարակ ու
թաւաշային մշուշի մը մէջէն կը նշմարէի որ
ան, հոյզով ու արեւով լեցուն հասկի մը պէս,
գլուխը հակած էր իր ձախ թեւին վրայ ու
ձախ ոտքը ղէպի բազկաթոռը քաշած, մինչ
աջ ոտքը՝ կիսով մը առաջ երկարած էր: Լու-
սինը՝ պատուհանին ապակիներէն շտապ անց-
նելով՝ եկաւ իր լոյսը անոր վրայ թափել:

Այդ վսեմ սպիտակութեան մէջ՝ ան կը
նմանէր ազամանդէ արձանի մը... ան եթե-
րանոյշի մը կը նմանէր որ զիպուածով իջած
էր այդ բազկաթոռին վրայ ու լուսնին լոյսը
զերզ աստուածային գթութիւն մը անոր վրայ
կը հոսէր... ան կը նմանէր արշալոյսի մը որ
կարծես քիչ ետք պիտի բարձրանար ու կոր-
սուէր այերքի մէջ... կը զիտէի անոր լանջ-
քին ելեւէջը ու շունչս կը դադրէր բանելէ...

Մ'տեսցայ անոր ու ծունկի եկայ այդ աս-
տուածութեան առջեւ, եւ իր աջ ձեռքը ձեռ-
քերուս մէջ առած՝

— Խօսէ՛, ըսի, կ'ազաչեմ, մի՛ տանջեր

զիս: Չե՞ս զիտեր թէ որ դուն ինծի համար
ա՛յն ես՝ ինչ որ արեւը երկնքին համար. չե՞ս
զիտեր միթէ որ դուն ա՛յն հուրն ես՝ ուրկէ
աչքս իր տեսողութիւնը կը ստանայ... ո՛հ,
դուն արտասուելու համար չես ծնած երբեք...
այդ ի՞նչ տառապանք է որ մշտապէս կը
ժայթքէ քեզմէ՝ ինչպէս ամպեղէն հսկայ սիւն
մը՝ ու ծաւալելով ամբողջ ոլորտները կը լե-
ցնէ... կը թախանձեմ, արտասանէ վերջապէս
այդ բա՛ռը որուն մէջ երջանկութիւնս կամ
կործանումս ծրարուած է... Ուզէ՛, ու պիտի
երթամ աշխարհի բոլոր աղբիւրներէն ջուր
բերել քեզի... Ուզէ՛, ու բոլոր կրակներէն
կայծեր հաւաքած բազմերանդ հովանի մը
բանամ վերեւը... Ուզէ՛, եթէ հարկ է արցունք
թափել, ես կ'արտասուեմ քեզի համար:

Ան՝ ինչպէս լոյսը որ լեռներու ետեւէն
մոզական նազանքով մը կը բարձրանայ՝ յամ-
բօրէն վեր առաւ իր գլուխը ու կիսով մը ին-
ծի դարձուց: Ան բոլորովին եթերացած էր
այդ պահուն: Անոր աչքերէն ցօղուած ար-
ցունքի շիթերը հրեղէն կաթիլներու վերած-
ուած էին, որոնց փաղփուկէն լուսնին լոյսը
չբացած էր արդէն...



Արեւը վեր կ'ելլէր իր հեշտանքի անկո-
ղինէն ու երկինք՝ ի տես անոր ցնորական
գեղեցկութեան՝ դժայլումով փակած էր իր
աչքերը եւ երջանիկ վերացումով մը այնքան
բարձրացած էր, որ տիեզերք կը թուէր բա-
ցարձակ դատարկութեան մը վերածուած:

Օրը հազած էր իր ճերմակ պատմուճանը
եւ փողոցներէն, հանդիսաւոր կերպով, հան-
դարտ ու երջանիկ կը քալէր: Ճառագայթ մը
զալով մեր պատուհանին նիզակի պէս մը լս-
ուեցաւ:

— Ի՛հ, խորհրդածեց, զիշերը մեր աչքէն
կը ծածկէ լոյսը. բայց լոյսը ինչե՛ր չի ծած-
կեր մեր տեսողութենէն...

Յետոյ, վճռական շարժումով մը՝

— Պէտք է բացուիլ վերջապէս .. ըսաւ.
ծաղիկներ կան, որոնք կը բացուին անուշ
բուրելու համար. ուրիշներ՝ բարկ: Կեանքը կը
բացուի՝ իմացական տիեզերք մը ստեղծելու
համար. մահը՝ կեանքը աւարելու: Այդը կը
բացուի թէ՛ զեղխութիւն եւ թէ՛ թշուառու-
թիւն ցուցնելու համար. ես կը բացուիմ...

Ու մինչեւ մէջքը մերկանալէն վերջ՝

— Ահաւասիկ ես ի՞նչ բանի համար կը բացուիմ... ահա ի՞նչ բան զիս կ'այրէ՝ առանց մոխրացնելու... ահա ինչո՞ւ չէի ուզեր քեզ տեսած ըլլալ, սիրելի քեզ, ու ետքէն մերկօրէն ինձմէ փախչիլդ տեսնել... ա՛խ, մի՛ լքեր զիս...:

Տարբեր պարագայի մէջ տղեկ բան պիտի ըլլար անոր այսպէս անակնկալօրէն մերկանալը. բայց հոս՝ իրաւունք ունէր ան. որովհետեւ՝ իրականին վրայ ուրիշ բան չէր տեսնուեր եթէ ոչ

Մութ-սրճագոյն վիթխարի օձի մը երեւոյթը, մորթին վրայ կարծես ասեղով բանուած, որ աջ արմուկին քովէն դէպ ի ուսը ոլոր մը կազմելով՝ կողէն վար գահավէժ կ'իջնէր ու ետեւի կողմէն դառնալով, կրքոտ զալարումով մը մէջքին վրայ երկու անգամ ոլորուած, ձախ կողէն վեր շատրուանի նման կը բարձրանար եւ ձախ ստինքն իր ոլորաքին մէջ առնելով՝ դէպ ի փորը քիչ մը կը ծռէր ու կրկին կը բարձրանար աջ ստինքն ալ պարուրելու համար եւ յետոյ կուզար ու իր գլուխը անոր կուրծքին վրայ կը դնէր ... անոր աչքերը դեղին սաթի երկու հատիկներ էին՝ որոնք ա՛յնքան բնական, ա՛յնքան որոշ, ա՛յնքան տպաւորիչ, ա՛յնքան սարսուզղեցիկ արտայայտութիւն մը ունէին, որ կը թուէին բոլորովին կենդանի ըլլալ:

Տարապայմանօրէն ուժեղ եղաւ սարսափս: Որովհետեւ երբեք պատրաստ չէի այսպիսի արհաւիրքի մը առջեւ գտնուելու:

Կեանքիս մէջ չէի հանդիպած ու եւ է դէպքի եւ ոչ ոքէ չէի լսած ու եւ է անցք մը, որ՝ գէթ հեռաւոր կերպով՝ այսպիսի զարհուրանքի մը պատրաստած ըլլար զիս:

— Արդէն, ըսաւ, այնքան տժգունեցար ու մոայլեցար որ եթէ առաջուց հոս չըլլայիր՝ առաջին տեսնելուս մահուան ստուերը պիտի կարծէի քեզ:

Այսու ամենայնիւ. այդ սարսափը չկրցաւ ցանկութեանս թելը կտրել. ու ես, մղուեցայ կրկին փառաբանել անոր առոյգ զեղն ու կենդանութիւնը: Ես մղուեցայ փառաբանել զայն կրկին, որովհետեւ արեւը՝ ամպերու վարագոյրին իսկ ետեւ՝ նոյն վսեմ ու ցանկալի կենդանութիւնը չէ՞ նորէն:

— Եթէ, ըսի, առաջուց իմացնէիր, նորէն պիտի սիրէի քեզ այնպէս՝ ինչպէս հողն իր անունները... նորէն պիտի սիրէի քեզ այնպէս՝ ինչպէս երկիրն իր օդը... նորէն պիտի սիրէի քեզ այնպէս՝ ինչպէս երկինքն իր աստղերը... եկո՛ւր զրկիս մէջ ու թոյլ տուր որ այդ ժանտ երեւոյթը համբոյրներովս վերցնեմ իր հունէն ...

Այն ատեն որ այդ կախարդական մարմինը թւերուս մէջ զգացի, ինձի թուեցաւ որ սենեակը կը մթազնէր... Սենեակը կը տատանէր՝ կարծես ան սաւառնակ մը ըլլար մերկային օդի մը մէջ... սենեակը կ'անջատուէր տան միւս մասերէն ու կը բարձրանար, կը բարձրանա՛ր միշտ՝ ամպերու լեզնոնով մը պաշարուած...:

Փարիզ Ա.Ս.ՏՈՒՐ ՍՈՓՈԿԼԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՈՍԿԵՐԶՈՒԹԻՒՆԸ

Ժ Ը. -- Ժ Թ. Դ. Ա. Բ

Բ.

(Ճարուհակութիւն եւ վերջ)

Ըստ էվլիա Չէլէպիի, տասնըեօթերորդ դարու թուրք ճամբորդն որուն ծանօթութիւնները համայնագիտական են, թուրքիոյ ոսկերիչներու դասակարգը (եսնաֆ) իր սլացքը եւ համբաւը կը պարտի Սէլիմ Ա. եւ Սիւլէյման Սուլթաններուն, որոնց երկուքն ալ իրենց երիտասարդութեան մէջ ոսկերչի արուեստը սորված էին: Տրապիզոն քաղաքը Կ. Պոլսոյ հետ, թրքական շրջանին, այս արուեստին ամենէն կարեւոր կեդրոնը (1) եղած ըլլալ կը թուի: Տրապիզոն յոյն տիրապետութեան մը մայրաքաղաքն էր զոր Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ գրաւած էր 1461ին: Էվլիա Չէլէպի կը յիշէ այս քաղաքին ոսկերիչները իբր աշխարհիս ամենէն ճարտարները (2) եւ

սոյն քաղաքին մէջն է որ Սէլիմ իշխանը այս արուեստին ծանօթացած էր: Սիւլէյման իշխանին վարպետը Ուն Գափանցի (Կ. Պոլիս) Կոստանդին (3) անուն Յոյնն էր:

Միշտ ըստ էվլիա Չէլէպիի, Կ. Պոլիս շինուած արծաթէ առարկաներուն ստուգութեան համար կնքուիլը, Սէլիմ Ա.ի կողմէ հաստատուած է, իսկ Սուլթան Սիւլէյման քաջալերած է այս դասակարգը (էսնաֆ), գլխաւորապէս արուեստանոցներ հիմնելով:

1592 թուակիր Սուլթանին մէկ հրամանը (4) կ'արգիլէ, գրաւման եւ բանտարկութեան պատիժ հաստատելով, Պէդեստէնի մէջ կամ Սաամպուլի ոսկերիչներու կողմանէ առանց կնքադրոշմի արծաթ առարկաներու վաճառումը, ինչ որ կը հաստատէ տասնըվեցերորդ դարուն մէջ ար-

(1) Վան եւ Էրզրում քաղաքներն ալ անուանի էին իրենց հայազգի ոսկերիչներով: Վանի ոսկերիչներուն մասնագիտութիւնը սեւ կիտուածի (սավազ) գործերն էին, զոր կը ստորազրէին իրենց անունովը: Էվլիա Չէլէպի Էրզրումի ոսկերիչներուն համար կ'ըսէ թէ շատ վարպետ կ'ըլլան: Յիշատ. Մատ. հատ. Բ. էջ 215:

(2) Էվլիա Չէլէպի, Յիշատ. Մատ. հատ. Բ. էջ 91, իրենց արտադրութիւններէն կը յիշատակէ սանձեր, բուրանոցներ, վարդեջուրի ամաններ, թուրեր եւ Ղորղոր Օղլուին գանակները:

Անցեալ դարուն մէջ Տրապիզոնի ոսկե-

րիչները ընդհանրապէս Հայեր էին: Տրապիզոնցի զարգացեալ ազգայիններ տեղական արծաթէ առարկաներու հաւաքածոներ կազմած էին: Արդեօք ո՞ր են հիմայ այս հաւաքիչները եւ իրենց հաւաքածոները:


(3) Էվլիա Չէլէպի Յիշատ. Մատ. հատ. Ա. էջ 570:

(4) Ահմէտ Թէվֆիք, Կայսերական Դիւանի վաւերագրեր (1554 — 1592) հրատարակեալ կեանքի Կ. Պոլիս Տասներորդ դարուն (Մասնետական թուական) վերնագրով, Կ. Պոլիս, 1338, թուրքերէն:

ծաթեղէններուն ստուգութեան համար կնքուիլը:

Ուրեմն տասնըվեցերորդ դարուն սկիզբն է որ կը սկսի սոկերչութեան դարգացումը: Արդէն այս դարուն Կ. Պոլսոյ Հայերուն մէջ շատ սոկերիչ կար, ինչպէս կը յիշէ Քան Կեոզախ Գերմանացին 1576ին (5) եւ հետեւեալ դարուն Հայերը կարեւոր դիրք

լալէ զատ, իր կիսուածանկար ժամացոյցի պահարանները, խենջարներն ու թուրերը Հնդկաստանի թագաւորներուն եւ Պարսից Շահին իբր ընծայ կ'ուզարկէր: Երկրորդ աստիճանի կատարեալ վարպետնին՝ Ուն Գալանցի Հայ իրաչասուրը: Ասկէ վերջը Պէդէստէնի առջեւ Հայ Այոլընը եւ Ալպանիացի Օսման Զէլէպին:



Պատկեր 1. — Կոթով հայելիներ. (Հաւարածոյ հեղինակին)

մը կը թուին գրուել այս գասակարգին մէջ: Էվլիա Զէլէպի չորս արուեստագէտ(6) կը յիշէ արծաթի վրայ փորագրիչներու (գալիմբար) սեւ կիսուածագործներու (սավաղ) եւ կիսուածանկարիչներու (մինէ) մէջ: Յոյն մը, Սիմիաճի Օզլու Միխաիլ, որ Օսմանեան Սուլթաններէն ճանչցուած ըլ-

(5) Գ. Հնասէր, Հայ վաճառականները եւ արհեստաւորներ Կ. Պոլսոյ մէջ, Հայաստանի կոչնակ, Դեկտեմբեր, 1928, էջ 1515:


(6) Էվլիա Զէլէպի, Յիշատ. Մատ., հատոր Ա., էջ 376:

կը տեսնուի թէ ժԶ. եւ ժԷ. դարերուն, Յոյները առաջին կարգը կը գրուեն Տրապիզոն եւ Կ. Պոլիս: Աւելի վերջն է որ Հայերը ոչ միայն առաջին այլ եւ գերակշիռ դիրքի մը կը տիրանան:

Դժբախտաբար չի թուիր թէ տասնըվեցերորդ դարէն դրոշմեալ առարկաներ մեզի հասած ըլլան: Էվլիա Զէլէպի կուտայ Սուլթան Մուրատ Գ.ի (7), որ իշխած


(7) Էվլիա Զէլէպի, Յիշատ. Մատ., հատոր Ա., էջ 372:

Պատկեր 2. — Կորով հայելիներ (Հաւաքածոյ հեղինակին)



է տասնըօթերորդ դարուն առաջին կէսին մէջ, կնքագործին արձանագրութիւնը, բայց ամենէն հին գրոշմեալ կտորը որ տեսած եմ գօտիի գրչաման (սիվիթ) մըն էր, գրոշմովն իր յաջորդին Սուլթան Իսկընդըմի, որ իշխած է 1640էն մինչև 1648: Հաւաքածոյիս մէկ գրչամանը Մուսթաֆա Բ.ի կնքագործը կը կրէ եւ հետե-

սերը այս ծառին վայելուչ ձեւը կը ներկայացնեն: Այս բուրանոցին Սուլթան Ահմէտի քիւրպէն փոխագրուած ըլլալը եւ իր վրայի արձանագրութիւնը՝ տասնըօթերորդ դարու առաջին քառորդին գործ ըլլալը կը ցուցնեն (9): Այս արծաթեղէնները տասնըհինգերորդ դարու վերջին եւ տասնըօթերորդ դարու սկիզբին ոսկերչու-



Պատկեր 3. — Հին ձեւով հայելիներու կռակ (Հաւաքածոյ հեղինակին)

լապէս տասնըօթերորդ դարուն վերջերուն կը պատկանի:

Ստամպուլի էվքաֆի թանգարանին մէջ քանի մը շատ աւելի հին առարկաներ կը պահպանուին, սակայն գրոշմեալ չեն:

Թիւ 1825 կանթեղ մը, որ Փաթիհի Մզկիթէն փոխագրուած է եւ որ մետաղէ եգիպտական լապտերներուն ձեւը ունի, տասնըհինգերորդ դարու գործ ըլլալ կը թուի եթէ ի նկատի առնուի ընտպաշտ (8) հակումներ ունեցող ծաղկեայ զարդարանքները: Նոճիի ձեւով թիւ 440 ինկաման մը ծակուած կափարիչ մը ունի որուն լի մա-

թեան հազուապէս եւ հետաքրքրական հմոյշներ են:


Ոչ գրոշմեալ, այլ թուականը ստոյգ ուրիշ կտոր մը Սուլթան Ահմէտի քիւրպէին Տի ձեւով արծաթեայ մեծ գրակալն է, իր սրբույն կողմանէ ընծայուած և որ 1619 թուականով արձանագրութիւն մը կը կրէ: Զարդարանքը հակիրճ է եւ գլխաւորապէս կը բաղկանայ սճաւորուած (stylisé) տերեւներէ եւ ծաղիկներէ (10) եւ

(8) Ասոնք, ժ.Ն. դարու պարսկական արուեստին մէկ յատկանիշը ըլլալով հանդերձ, օրինակի համար՝ Փաթիհ Սուլթան Մէհմէտի ժամանակակից կազմերու վրայ կը տեսնուին:

(9) Այս խնկամանը 1662ին վախճանեալ Օսման Բ.ի գայեակին սեփականութիւնը եղած է:

(10) Էվքաֆի թանգարանը կը գտնուի խնկամանի վերածուած չինական մեծ անօթ մը որ Սուլթան Ահմէտի թիւրպէին նուիրուած է 1618 թուականին իր ներքինապետին:

Պատկեր 4. — Հին ձեռով հայերիներու կրճածի (Հարաբաժնոյ հեղինակին)



պարսկական ոճով (թալիֆ) արձանագրութիւններէ, ոլորուած ծաղկազարդ ոտտերու յատակի մը վրայ:

Գ.

Այս ուսումնասիրութեան պատկերները Հայթայթող հաւաքածոն (11) տաննեւհինգ տարիներուն ընթացքին ժողոված եմ Ստամպուլի Չարշըն ուր հետաքրքրական արծաթեղէնները երթալով հազուագիւտ կը դառնան: Օտար ճամբորդներու գնումները, արծաթին ըստ ինքեան ունեցած արժէքին հետեւանքը ըլլալով ոսկերչական իրերու հալեցուիլը, վերջապէս հըրդեհները, Կ. Պոլսոյ աղէտը, կը բացատրեն հին կտորներուն երթալով անյայտանալը:

Կը բաւէ անխարկ մը նետել պատկերներուն վրայ, աեմնելու համար թէ ֆրանսական ոճերուն ոչ թէ մէկ ընդօրինակութեանը այլ պատշաճեցմանը հանդէպ կը գտնուինք: Այնպէս որ այս արծաթեղէնները արեւմտեան ոսկերչութենէն կը դանազանուին, եւ տասնութերորդ դարուն վերջը ու տասնըիններորդ դարուն առաջին կէսին մէջ ապրող հայ գծագրիչներն ու ոսկերիչները ինքնուրոյն ոճ մը իրագործած են: Այս ոճով զարդարանքը ոսկերչութենէ դուրս ալ կ'իրարկուած է եւ հաւաքածոյիս Լուի ժՁ ոճով մէկ կաշի կազմը դեղին, կանանչ եւ մանիշակագոյն գսկիով զարդարուած, որ ժամանակակից է նոյն

կողմէ, ըստ կրած արձանագրութեան: Խնկամանին ոսկեգօծ մետաղէ յեղուածքին (monture) զարդարանքը վերոյիշեալ գրակալին զարդերուն ոճովն է:

(11) Այս հաւաքածոն Փարիզի Musée des Arts Décoratifsին արեւելեան սրահներուն մէջ ցուցադրուեցաւ երեք ամիս (Գեկեմբեր / ր 1926—Մարտ 1927), իբր «Հայ ոսկերչութիւն Կ. Պոլսոյ, ֆրանսական ազդեցութեամբ»: Գըլխաւոր կտորներուն լուսանկարները կը պահպանուին Bibliothèque du Musée des Arts Décoratifsի արեւելեան ոսկերչութեան յատկացուած թիւ 387 ժողովածոյին մէջ:

ոճով արծաթէ տուարկաներուն, (Պատ. 1) անտարակոյս այս գծագրիչներուն գործն է (12):

Այս ֆրանսական ոճերէն ամէն մէկուն պատշաճեցումը, արեւելեան ճաշակով հետեւապէս աւելի ճոխ կամ աւելի խճողեալ ըլլալէն զատ, տեղի կ'ունենար թուականի մը ուր նոր գիծեր եւ նոր զարդեր կը գործածուէին Արեւմուտք, ինչ որ կը բացատրէ այս ոսկերչական առարկաներուն իբր ոճ անխառն չըլլալը: Այսպէս Կ. Պոլիս Լուի ժԵ. ոճով արծաթեղէններ կը զարդարէին, երբ Ֆրանսա Լուի ժՁ. ոճը գոյութիւն ունէր արդէն. նոյնպէս Կ. Պոլիս Լուի ժՁ. ոճը կը գործածէին երբ Ֆրանսա Ամիիո ոճը ստեղծուած էր: Արդարեւ Լուի ժԵ. ոճով արտադրուած բոլոր առարկաները տասնըութերորդ դարուն վերջէն են, եւ Լուի ժՁ. ոճով եղողները՝ տասնըիններորդ դարէն.

Այս պարագային, այսինքն հայ ոսկերիչներուն ֆրանսական աւելի հին ոճի մը հաւատարիմ մնալուն հետեւանքը ըլլալով, 1830—1850 ժամանակամիջոցին վերաբերեալ բազմաթիւ ֆրանսական արծաթեղէններ, անուանի վարպետներու գործ ըլլալով հանդերձ, իբր ճաշակ եւ իբր ոճ, չեն արժեր ժամանակակից Կ. Պոլսոյ արտադրութիւնները, ինչպէս որ կարելի էր գիտել վերջերս Pavillon de Marsan տեղի ունեցած Աշխարհիկ Ֆրանսական Ոսկերչութեան Ցուցահանդէսին (13):

Ստամպուլի Չարշըն հանդիպած ար-

(12) Վերջին եւ ամենէն լաւ թուրք կագմարար-ծաղկողներէն չգինով (սերիոյ) Ալիին գիւմած ըլլալով 1915ին, երբ զարդ մը պատիկցնելը առաջարկեցի իրեն, պատասխանեց թէ իր օրինակները գծագրիչ (ըլստամ) Օհաննէսին գործն են, որուն ոսկորները անգամ չեն մնացած:

(13) Exposition d'Orfèvrerie civile française de la Révolution à nos jours. Pavillon de Marsan. Juin-Juillet, 1929, Catalogue. Մասնաւորապէս 304, 409, 411, 622, եւ 748 թիւերը:

Պատկեր 5. — Հարսանեկամ արկղիկներ (Հարաքածոյ Տեղիսակին)



ճաթեղէններուն մէջ ընտրութիւն մը կատարած ատենս իրողութիւն մը ուշադրութիւնս գրաւեց: Եթէ տամբութերորդ գարու սակաւաթիւ առարկաներ մէկդի թողունք, մէկ քանի բացառութեամբ բոլոր գրոշմեալ (14) կտորները Սուլթան Մահմուտ Բ.ի բուզրան կը կրէին, որ իշխած է 1808էն մինչեւ 1839: Եթէ ի նկատի առ-

որ 1808էն 1844 երկարող շրջանն է որ կը ներկայացնէ այս սակերչութեան ամենէն փայլուն ժամանակը: Այս ատենուան հայ սակերիչները, ինչպէս որ ըսի, Լուի Ժ. Թ. ճէն կը ներշնչուին:

Մինչդեռ հին արեւմտեան սակերչութեան մէջ սեղանի վերաբերեալ առարկաներն են որ ամենէն կարեւորը սեղը կը



Պատկեր 6. — Ասեղնոցներ (Հաւաքածոյ հեղինակին)

նուի սա սրարագան թէ իր յաջորդին Սուլթան Ապտիւլ Մէճիտի անունը կրող կնքագրոշմը գժուարութեամբ կարելի է զանազանել Սուլթան Մահմուտի բուզրայէն մինչեւ 1844 — թուական օամանեան գրամական բարենորոգման որով բուզրային ձևը փոփոխուած է (15) — կարելի է հետեւցնել

բռնեն, թուրքիոյ մէջ ամենէն շատը հայելիներու եւ հարսանեկան արկղիկներու պէս կանանց արդուզարդին կը վերաբերին: Արդեօք ասիկա արեւեկքի կիներուն աւելի պճնասէր ըլլալուն հետեւո՞նքն է: Պէտք է դիտել նաեւ որ զարձերու կամ օպիսնի ու քթախոտի սուվերու պէս, արեւեկեան քեֆի հետ ազերս ունեցող առարկաներ եւս սակաւաթիւ չեն:

(14) Կ. Պոլսոյ արծաթեղէնը ընդհանրապէս գրոշմեալ է: Սակայն առանց կնքագրոշմի բացառապէս խնամեալ կտորներ կը գտնուին: Ասոնք՝ խառնուրդին աստիճանին մասին կասկած չունեցող Արքունիքին կամ հարուստ անհատներու ապսպրանքը ներկայացնելու են:

Հայ սակերիչները զարգը ետեւէն դուրս ցցելու եղանակը գործածած են ընդհանրապէս եւ անոր մէջ գերազանցած են: Զարմանալի է որ գործիքներուն անունը անգլիերէն punchon բառէն սերիլ կը

(15) 1844էն սկսեալ կայսերական թուղրան աւելի պզտիկ է, խառնուրդին աստիճանը որ է 90, այսինքն 900 առ հազար, նշանակուած


է եւ երկրորդ կնքագրոշմ մը արծաթին աննկղ ըլլալը կը հաստատէ:

Թուի: Վերջը զարդը սկզբիկ մուրճերով քանդակելով կը կատարելագործուի (16):

Թիւ 3 պատկերին Ամփիոս (17) ոճով հայելիին պէս, զարդերը միայն քանդակուած, այսինքն մուրճերով ձեւակերտուած առարկաները բոլորովին բացառիկ են եւ այս եղանակը կը կիրարկուի գրեթէ միւ միայն բանալիի, ասեղնոցի, գգալի եւ

ունի որ զարդարուած ձուածեւ շրջանակ մը կը ներկայացնէ:

Թիւ 4 պատկերին կոթով ձուածեւ հայելին գեղեցիկ օրինակ մըն է ետեւէն դուրս ցցուած եւ քանդակուած Լուի ԺԶ. ոճով աշխատութեան՝ աւազոտ յատակի վրայ: Սուլթան Մահմուտ Բ.ի կնքագործմը կը կրէ: Նոյն պատկերին ութանկին



Պատկեր 7. — Քրախոսի եւ արիոնի տուփեր (Հաւարածոյ հեղինակին)

սուրճի զարճերուն պէս սկզբիկ կտորներու համար: (Տես Թիւ 7, 8, 11 եւ 12 պատկերները):

Հայելիները կամ կոթով են, ինչպէս Թիւ 3 եւ 4 պատկերներուն վրայ, կամ աւելի հին տիպար մը կը ներկայացնեն եւ պարզապէս բոլորածեւ են (Թիւ 5 եւ 6 պատկերներ): Այս հայելիները պատէն չեն կախուելի եւ արծաթէ կոնակնին, որ ապակին կը պաշտպանէ, զարդարուած է: Պատէն կախուելիք տիպար մը եւս գոյութիւն

Լուի ԺԶ. ոճով հայելիին մէջտեղի զարդը, մուրճով ծեծուած յատակի մը վրայ դուրս ցցուած եւ քանդակուած է:

Թիւ 4 պատկերին երրորդ հայելիին աղեղով եւ կապարճով կոնակը սատարէ է:


Թիւ 5 պատկերին ոսկեգօծ արծաթէ հայելիին որ հիմնալի կերպով քանդակուած է, կեդրոնը՝ վարդագոյն եւ կապոյտ կիտուածէ աստղ մը կը կրէ ազամանդով մը զարդարուած: Մէջտեղի ճաճանչը ստէպ կը տեսնուի հայ եկեղեցական ոսկերչութեան մէջ:

Թիւ 5 պատկերին նոյնպէս ոսկեգօծ միւս հայելին խիստ գեղեցիկ ոճ մը ունի. իր ձեւը որ եօթերորդ դարու հայ ճարտարապետութեան (18) մէջ կը տեսնուի,

(16) Ազնաւուր անուն հայ ոսկերիչ մը Թուրքիա guillochageը ներածած բլաւով, այս եղանակը «Ազնաւուրի գործ» կը կոչուի:

(17) 1839ին վախճանած Սուլթան Մահմուտ Բ.ի դամբանը (Թիւրպէ), նոյն Ամփիոս ոճով է, եւ Պալեան ճարտարապետներուն գործը:

(18) Զուարթնոց եկեղեցի:



Պատկեր 8. — Ծախարամաններ (Հաւաքածոյ հեղինակին)

դասական ժամանակներուն ալ ծանօթ է: Մահմուտ Բ.ի կնքագրոշմը կը կրէ:

Աւագոտ յատակի վրայ փունջով մը զարդարուած ձուածեւ մեծ հայելիին զարդերը, պատկեր 6, արծաթի հաստ թիթեղի մը վրայ ետեւէն դուրս ցցուած ըլլալով, քանդակագործութեան բաժինը աւելի կարեւոր է: Այս կտորը գրոշմեալ չէ: Թիւ 4 եւ 5 պատկերներուն հայելիներն եւս արծաթի հաստ տերեւներու վրայ գործուած են:

Թիւ 6 պատկերին երկու միւս հայելիները, որոնցմէ մին վարդի ալեձեւ պըսակով մը շրջանակուած առատութեան եղջիւրով մը զարդարուած է, եւ միւսը հանգոյցով մը կապուած մեխակներով, իբր գործեակներով՝ Կ. Պոլսոյ ետեւէն դուրս ցցուած աշխատանքին սովորական տիպարը կը ներկայացնեն, գործածուած արծաթի թիթեղը բարակ ըլլալուն համար: Այս կտորներուն առաջինը բացառաբար Ապտիւլ Մէճիտի 1844էն (19) վերջը գործածուած կնքագրոշմը կը կրէ եւ երկրորդը Մահմուտ Բ.ինը:

Թիւ 7 պատկերին երկու հարսանեկան արկղիկները որոնց զարդերը ետեւէն դուրս ցցուած եւ քանդակուած են, Լուի ԺՉ. ուճէն կը ներշնչուին: Մին զարդարուած է շոճիի պտուղներով եւ վարդի պսակով մը, միւսը երաժշտական գործիքներով եւ ծաղիկներով: Բանալիները արծաթի զանգուածի մէջ քանդակուած են եւ իրենց քմահաճ գծագրութիւնը ուշադրութեան արժանի է:

Թիւ 8 պատկերին ներկայացուցած պզտիկ առարկաները միշտ կնոջ կը վերաբերին: Ասեղնոցներ են զոր մեծ մայրերը դեռ կը գործածէին:

Հետեւեալ տախտակին տուփերէն մէկը որ խեցիէն կը ներշնչուի, Լուի ԺԳ. ուճին ազդեցութիւնը կը ներկայացնէ. երե-

քը Լուի ԺԵ. ուճին կը պատկանին և երկու ձուածեւները Լուի ԺԶ. ուճին:

Ի բաց առեալ այս երկու վերջինները որոնք գրոշմեալ չըլլալով հանդերձ՝ տասնըիններորդ գարու գործ են, բոլոր միւսները տասնըութերորդ գարէն են եւ Սէլիմ Գ.ի կամ իր անմիջական նախորդներուն քուլբան կը կրեն: Բոլոր այս տուփերուն զարդերը դուրս ցցուած են ետեւէն եւ քանդակուած: Լուի ԺԶ. ուճով, եւ աւագոտ յատակի մը վրայ վարդերով տուփը բացառիկ ճարտարութեամբ քանդակուած է:

Այս տուփերը կը գործածուէին քթախտի եւ ափիոնի համար, զոր այն ժամանակուան սիրողները դեղահատի ձեւով կը սպառէին: Քթախտին թուրքիոյ մէջ շատ տարածուած ըլլալը, ծխախտի գործածութիւնը՝ տասնըեօթերորդ գարուն առաջին կէսին մէկ Սուլթանին (20) կողմանէ մահուան պատիժով արգիւլուած ըլլալուն հետեւանքն էր:


Թիւ 10 տախտակին պզտիկ ձուածեւ փսէները եւ հանգոյցով տերեւները շաքարամաններ են եւ Սուլթան Մահմուտ Բ.ի կնքագրոշմը կը կրեն: Տերեւներով ընդմիջուած վարդեր եւ ելակներ երկու ձուածեւ շաքարամաններուն շրջանակը կը կազմեն: Վարդերով եզերքը մասնաւորապէս համարձակ ցցուածք մը ունի:

Արդեօք այս տախտակին վրայ պատկերացուած արծաթէ տերեւները տասնըութերորդ գարու Սաքսոնիոյ ճենսպակիներէն կը ներշնչուին, կամ անուանի գերմանական գործարանն է որ Արեւելք արտածելու համար ընդօրինակած է ձեւ մը որ արդէն ընթացիկ էր թուրքիոյ մէջ: Ամէն պարագայի մէջ, հանգոյցը տասնըութերորդ գարու Ֆրանսական ոճերուն հետ կապ ունի:

Իբր սեղանի վերաբերեալ առարկայ թիւ 9 նրատկերը կը ներկայացնէ շարք մը

(20) Սուլթան Մուրատ Գ. 1625—1649: Էվլիա Զէլէպի, որ ժամանակակից մըն է, օրական հարիւր քսան մահուան պատիժի խօսքը կ'ընէ: Յիշատ. Մատ., հատոր Բ. էջ 228:

(19) Տես էջ 12. Հետեւապէս այս առարկային թուականը 1844էն մինչեւ 1861 կրնայ ըլլալ:




Պատկեր 9. — Գզակներ (Հաւաքածոյ Նեղիմակին)

դժգոհներ: Մեծերը որ 1844 թուականէն յետագոյն են, Սուլթան Ապտիւլ Մէճիտի ու Ապտիւլ Ալիլի կնքագրոշմը կը կրեն, եւ իբր ընծայ կբ արուին ամուսնութեան ու թլխատութեան պէս դէպքերու անթիւ: Լայն ձեւերնին եւ կոթերուն պէսպէս վարդերը ուշագրութեան արժանի են: Երբեմն թուչուն մը կը տեսնուի կոթերուն վրայ:

Ժ.Ի. ոճով է: Այս վերջինը ոսկեզօծ պղինձէ է, բայց իր յետին ծայր նրբութեան պատճառաւ զայն արծաթէ գարձերուն հետ դասեցի:

Սրեւելքի մէջ կնիքները ստորագրութեան տեղը բռնելով՝ թէ՛ անգրագէտներուն եւ թէ՛ գրագէտներուն համար, կարեւորութիւննին յայտնի է: Այնպէս որ ոչ



Պատկեր 10. — Սուրնի «գարձ»եր (Հաւաքածոյ հեղինակին)

այս դժգոհները տղայոց համար են: Երկու պղտիկները, Լուի ժ.Յ. ոճի ազդեցութեամբ, տամբուլութեանը վարու գործ են, այն ժամանակուան դրոշմով կնքեալ:

Թիւ 10 պատկերին սուրճի գարձերը, այն փոքրիկ առարկաներէն՝ են որոնց համար հայ ոսկերիչները ամենէն շատ ճարտարութիւն եւ ճաշակ վասնած են, ինչ որ սուրճի սէրը եւ արեւելեան կեանքին մէջ ունեցած կարեւորութիւնը կը բացատրէ: Ասոնցմէ ոմանք, վերջին աստիճանի սիրուն են: Գծբախտաբար լուսանկարին վերայ անոնց բոլոր նրբութիւնը եւ վայելչութիւնը կարելի չէ նշմարել: Երբեմն ետեւէն դուրս ցցուած եւ քանդակուած են, եւ երբեմն զանգուածի մէջ քանդակուած: Ոմանք ոսկեզօծ են եւ ոմանք մասամբ միայն ոսկեզօծեալ, շատ յաջող տեսքով մը: Ընդհանուր առմամբ այս գարձերը Լուի ժ.Չ. ոճով են, ի բաց առեալ պատկերին վերի մասինը որ ամենագեղեցիկ Լուի

միայն անոնց գեղագրութեանը եւ փորագրութեանը խնամք կը տարուի, այլ ոսկերիչները շատ անգամ անոնց արծաթէ կոթը նուրբ կերպով կը քանդակեն:

Կնիքները՝ միշտ թուական կրելնուն համար, զարդական ոճին շրջափոխութեան տեսակէտով աւելի եւս հետաքրքրական են:

Ահա՛ ձեռագործը այս վարպետներուն որոնք ոչ ստորագրած եւ ոչ յասուկ դրոշմով կնքած են իրենց ստեղծագործութիւնները, այնպէս որ ոչ մէկ կտոր կարելի է նոյնացնել իբր այս ինչ ոսկերչին գործը: Այս անանուն արտագրութիւնը, հետեւապէս, սեպիականութիւնն է ամբողջ դասակարգին Կ. Պոլսոյ ոսկերիչներու, որոնք ցարգ կը պահպանեն իրենց արհեստական եւ գեղարուեստական հասարակաց շահերուն զգացումը:

ԱՐՄԵՆԱԿ ՍԱԳԸԶԵԱՆ

Հ Ի Ն Ա Ս Տ ՈՒ Ա Ծ ՈՒ Հ Ի Ն

Գեղին ձախ թեւին վրայ կը բարձրանար Մըղ-տէսմիլօ անունով բլուր ծր, որ ծածկուած էր Հա-րիւրաւոր այգիներով: Մըղտէսմիլոյին ետեւ, լճին եզրէն ձինչեւ Անձուտ լեռան ստորոտը կ'երկարէր ձեծ ձոր ծր, որ իր կուռ պարտէզներով լեռնային լճակի ծր տեսարանը կը ներկայացնէր:

Ուձկնակը՝ այդ պարտէզներուն ամենէն գեղե-ցիկն էր:

Այդ տարին, գեղին աղջիկները որոշեր էին իրենց Վճիկի խաղերը կատարել Ուձկնակայ այն Հնամենի ընկուզենիին տակ որ վճիտ առուակի ծր եզերքին երիտասարդ խնձորենիի ծր Հետ բարձրա-ցած կը ստուերէր ընդարձակ վայր ծր:

Առաւօտուն, արեւածագէն քիչ յետոյ, արդէն բոլոր աղջիկները Հաւաքուած էին ընկուզենիին տակ եւ խաղերուն սկսելու պատրաստութիւնները կը կարգաւորէին:

Վճիկի այս տօնակատարութեան սեյր ընող գեղացիք, ծամաւորաբար «ճահիլներու թախըմը», Հայրենի բարքերու աւանդապահ Հրեշտակներու պէս լուսանցքի արահետէ ծր իրարու ետեւէ կու-գային տեղ գրաւել քիչ անդին պարտէզին կուրծքը կազմող գեղեցիկ ճարգագետնի ծր վրայ: — Այդ ճարգագետնինը Ուձկնակայ փառքն էր, վկան՝ Ծովե-ցիին բազմաթիւ երազներուն ու ձգտումներուն: Ե-տեւն ու աջ կողմը, բալենիները վարդի եւ ուրիշ ծաղիկներու թուփերուն Հետ շարք կազմած էին, խփ ձախ կողմը, պայծառ աղբիւրի ծր վրայ, ուրիշ Հնամենի ընկուզենի ծր իր տարեկից խնձորենիի ծր Հետ գիրկ գրկի թեւ առած, եղբայրացած՝ Հո-վանի կ'ընէին ճարգագետնին ամբողջ տարածու-թեանը: —

Երբ աղջիկները իրենց կախընջորակները Հաս-տատեցին եւ ամէն բան կարգի դրին, փոքրիկներու թափօր ծր յառաջացաւ, կանգ առաւ անկիւն ծր կեցող վրանին առջեւ: Միւս աղջիկները բոլորն ալ

թափօրին երկու կողմերը բռնեցին: Վրանին դուռը բացուեցաւ, ուրկէ դուրս եկան դեղնագոյն զգես-տաւորուած երկու աղջիկներ որոնք շատ ճեղճիւ կը զարնէին ձեռքերնին ունեցած ծնծղաները: Անոնց ետեւէն դուրս ելաւ ճիջահասակ եւ վայելուչ կազ-մով ուրիշ աղջիկ ծր նարնջագոյն Հագուած: Այդ աղջիկը գլուխն ունէր թագ ծր, ճաղերուն վրայ ցանուած էր ոսկի փոշի, ասեղնագործուած կտոր ծր փորուարի պէս պարանոցէն կախուած էր, թե-ւերը կը կրէին ուլունքներով զարդարուած թեղանիք-ներ եւ աջ ձեռքը բռնած էր բաժակ ծր որուն մէջ խունկ կը ծխար:

Անոր ետեւէն երեւցան երկու ուրիշ աղջիկներ վարդագոյն Հագուած, կը կրէին արձան ծր որ ծածկուած էր ոսկի թելերով բանուած ճերմակ քօ-րով ծր:

Այդ արձանը Վիճակ կը կոչուէր: Թափօրը վերադարձաւ ծնծղաներու բարակ ձայնով եւ բոլորակ կազմեց ընտիր շորերով ծած-կուած քարէ սեղանի ծր շուրջը, որուն վրայ զգու-շաւորութեամբ սեղաւորեցին Վիճակ—արձանը:

Թագ կրող աղջիկը որ ամենէն փայլունն էր զգեստաւորուած եւ խունկ կը ծխէր արձանին առ-ջեւ, քրճուհին էր, ընտրուած բոլոր աղջիկներուն կողմէ Հսկելու եւ առաջնորդելու Վիճակի արարո-ղութեան պաշտօնին:

Երբ արձանը իր տեղը Հաստատուեցաւ, քրճու-հին խունկի բաժակը վեր բարձրացուց եւ խոնար-հութիւն ծր ըրաւ: Ի տես այս նշանին, գեղացիք խաղող կարգաւորութեամբ իրարու ետեւէ վար ի-ջան, եւ բռնեցին սեղանին երեք կողմը, ձօտէն տեսներու այդ տարուան պատրաստուած Վիճակին գեղեցկութիւնը եւ անոր բացուծը կատարելու արա-րողութեան շուրքը:

Քրճուհին նշան ըրաւ, աղջիկները ծափ-զարկին ձայնակցելով ճեղճ ծնծղաներուն: Քրճու-

Հին նայեցաւ արձանին, բաներ ճը ճրմնջեց եւ քո-
ղը վար առնելով այսպէս երգեց.

Տո՛ւր մեզ, տո՛ւր մեզ
Բանալ զբերանս մեր
Եւ երգել զերգս
Փառաւոր:

Տո՛ւր մեզ, տո՛ւր մեզ,
Լցեալք ուրախութեամբ
Կախաւել ու կայթել
Եւ կասարել Վիճակ բարի:

Տո՛ւր մեզ, տո՛ւր մեզ
Պարել ու ածել
Եւ ծնծղայ հարկանել,
Զի այսօր տօն է բարեաց,
Տօն է վայելից:

Տո՛ւր մեզ, տո՛ւր մեզ,
Ծնորհի երկնային
Ու անմահութիւն,
Եւ մինչեւ արեւմուտս
Կասարել տօն ուրախութեան:

Տո՛ւր մեզ, տո՛ւր մեզ,
Ո՛վ Վիճակ բարի,
Ի յիշատակ նախահարցն
Մեր Աստուածուհւոյն,
Պարգեւատիւն Հայաստանի:

Քրճուհիին ըսածները ճնծղաներուն հետ տուն
տուն եղանակաւոր կ'երգէր ընարեալ զասը եւ եօթը
աղջիկներ անդադար կը պարէին սեղանին շուրջը:

Արձանը որ հարսի կերպարանքով էր շինուեր,
գլուխն ունէր կանանչ թագ ճը եւ ոսկեգոյն պլոր-
ուած կուռ ճագեր: Ծակատը ճածկուած էր երկու
թանկագին պսակներով, որոնց ճէկը ոսկի իսկ ճիւսն
արծաթ էր: Երկու այտերէն ճինչեւ ուսերը կախ-
ուած էին վարդագոյն վարսակալներ: Պարանոցը եւ
ամբողջ կուրճքը շարուած գոյնզգոյն ուլունքներու
ճէջ կը վխտար հին գարդերու եւ ոսկիներու
հսկայ հարստութիւն ճը: Մէջքը կապած էին հին
օրերէն մնացած իշխանուհիի ճը գօտին, իսկ թե-

ւերը անցուցած էին նուրբ թեղանիքներ, որոնց
ճայրերը փայլող զոյգ ապարանջաններուն հաճար
ալ կը հաւատացնէին թէ իշխանական գերդաստանէ
մնացած են: Ուսերէն սկսելով առանճին առանճին
գոյներով գարգարուած եօթը արտախուրակներ կը
թաղուէին ճագերուն ճէջ: Զախ ճեռքը եօթը գոյնե-
րով ճաղկեփունջ ճը կար, իսկ աջ ճեռքը փարջ ճը
եօթը աղբիւրներու ճրով լիցուն եւ որուն վրայ
գեղնագոյն ճածկոց ճը ճգուած էր:

Արարողութեան աւարտին, քրճուհիին որ տասն
երկու տարեկան Ծովակին քոյրն էր, ճնկաչոք խո-
նարհութեամբ խօսնկ ճիւսեց, յետոյ քօղով վերստին
ճածկեց արձանն ու դարճաւ խոնարհութիւն՝ ըրաւ
բոլոր ներկաներուն:

Ծովակ, որ իր ճանուկ հոգիին ճէջ խոշոր տեղ
էր տուեր քրիստոնէական կրօնի հաւատքին եւ
ջերմեռանդ կը հետեւէր անոր, առաջին անգամ ճըն
էր որ այս տեսակ տեսարանի ճը ներկայ կ'ըլլար:
Ատոր հաճար երգուած երգերէն ու ճիւսած խօսն-
կերէն վերջ երբ նորէն տեսաւ քրոջ երկրպագու-
թիւնը անճանօթ արձանին, ա՛լ ճկրցաւ գսպել իր
հոգին, իր երկիւղած հոգին եւ ինկաւ ճօրը գիւրկը:

Մինչ գեղացիք իրարու ետեւէ իրենց տեղերը
կը քաշուէին եւ աղջիկները խօսքերու բաճնուած
իրենց խաղերուն կը սկսէին, Ծովակին ճայրը պար-
տէզին ճէկ անկիւնը քաշուած ուռենիի շուքի ճը
տակ իր օրդին գրկած կը հաճբուրէր ու կը
հարցնէր.

— Ինչո՞ւ տխրեցար, օրդիս:

Ծովակ հեկեկաց, ճար աջք ճը նետեց քրոջ
կողմ եւ խորունկ լաց ճը փրթուց:

Մայրը խոր գարճանքի տակ շարունակեց գըգ-
ուել իր օրդին, իր անուշ օրդին եւ հարցնել.

— Զագո՛ւկս, ինչո՞ւ կուլաս, ի՞նչ պատահե-
ցաւ, ո՞ր տեղդ կը ցաւի:

Ծովակ պատասխան ճէր տար, լացի հեճկըլ-
տուքէն կարող ճէր բան ճը խօսիլ:

Ոչ ոք ուշադրութիւն դարճուցեր էր Ծովակի
վիճակին, ճինակ ճայրն էր որ ուռենիին տակ գըր-
կած իր օրդին, պաղատագին կը հարցնէր ան-
դադար.

— Ինչո՞ւ կուլաս, ճագուկս:

Ծովակ երկրորդ ճար աջք ճը նետեց քրոջ
կողմ եւ այս անգամ խորունկ հառաչանքով ճը
արտասանեց.

— Հեթանոս, Սատանայ, Գժոխք:

— Ի՞նչ կ'ըսես, ձագուկս, ի՞նչ կը խօսիս, չե՞մ հասկնար:

Հայրը որ կը փնտռէր զիրենք, վրայ հասաւ և տեսնելով Ծովակին լացը, հարցուց ձօրը.

— Ինչո՞ւ կուլայ Ծովակ:

— Ձե՞մ գիտեր, չհասկցայ, չ'ըսեր լացին պատճառը: Քրոջ կողմը գէշ կը նայի եւ չգիտցայ թէ ինչու «Սատանայ, Գժոխք» արտասանեց. Գրօղը տանի սատանան ու դժոխքը: Կ'երեւի թէ քիչ առաջ քրոջ ձօտ եղած աստե՛ն սխալ բան ճը հասկըցած ունի:

— Ո՛չ, ո՛չ, սխալած չե՞մ, — պատասխանեց Ծովակ ու հեծկտուքն աւելի զօրացնելով, փաթթուեցաւ հօրը վիզը եւ գոչեց.

— Հայր, հայր, փախան սուրբերը ձեր հայրենի տունէն. փակուեցաւ եկեղեցիին դուռը ձեր առջեւ, որովհետեւ քոյրս այսօր սատանայ դարձաւ եւ պղծեց ձեր տունը դժոխքի պէս:

— Անպատճառ բան ճը տեսած է որդիս իր քրոջ վրայ, —ըսաւ հայրը ինքնիրեն եւ կարծեցաւ: Իրեն այնպէս թուեցաւ թէ իր աղջիկը երիտասարդի ճը հետ սիրային գաղտնի կապ ունի, եւ այդ օրը, արարողութեան առաջին հանդէսին, աչքերը քրոջ վրայէն չվերցնող Ծովակը տեսած է սիրականին հետ փոխանակած ձեկ շարժումը: Ծովակ կռահեր էր շատ բան, եւ այդ տեղեկութիւնը սոսկալի ծանր էր: Սոսկալի ծանր էր ճանաւանդ անոր համար որ ճինչեւ այդ աստե՛ն հայր եւ ճայր կը հաւատային թէ իրենց աղջիկը առաքինի է հրեշտակի պէս: Գլուխը ճոռեց, նայեցաւ անձեղունակ Ծովակի աչքերուն, եւ երբ տեսաւ որ կատղեր էին, կասկածն աւելի զօրացաւ եւ ինկած սրտով հարցուց.

— Ի՞նչ տեսար, որդի՛ս: Քոյրդ ո՞ր երիտասարդին հետ կը ճշակէ այդ գէշութիւնը:

— Ոչ ոքի հետ, հայր, ոչ ոքի հետ՝ ի՞նչ հեթանոս բոյրը:

Մայրը շուարեցաւ: Բան ճը կար որ Ծովակը տեսեր եւ շատ գէշ կերպով սխալ էր հասկցեր իր հաւատարի՞մ աղջկանը ճասին, եւ սակայն չպարգեկը իրեն համար առեկճուած ճըն էր: Եւ աւելի առեղճուած գարճաւ երբ տեսաւ որ Ծովակին հայրն ալ իր գոյնը փոխեց:

— Ո՛չ, Ծովակ, ճագուկս, սխալ ես հասկցեր:

Քու սիրուն քոյրդ այդ բանը չունի, ճի՛ լար եւ ճի՛ խռովեր ճնողքիդ սիրտը:

— Ի՞նչ քոյրս, ա՛խ, ի՞նչ քոյրս սիրուն չէ: Այսօր տգեղացաւ ան եւ տգեղացուց ճեղ ու ճեր տունը:

Մօրը սիրաւ ա՛լ չգիճացաւ, որ չէր կրնար իր հաւատարի՞մ աղջկան վրայ Ծովակին կագճած սխալ գաղափարը փոխել: Մէկ նայեցաւ որդոյն, ճեկ գիտեց աճունոյն խոր տխրութիւնը եւ երկու պաղ արցունքներ գլտորեց այտերէն վար:

Ծովակ շարունակեց.

— Ի՞նչ քոյրս սատանայ եղաւ ու դժոխք դարճուց ճեր տունը: Որովհետեւ ան այսօր հեթանոսի պէս՝ շինուած կուռք ճը պաշտեց:

Հայրը գարհուրելի երագէ ճը ցատկողի պէս ցնցուեցաւ: Խոշոր տրածութիւնը գերեզճանող բարակ ժպիտ ճը՝ յուսանցքի պէս շողացուց աչքերէն այտերը: Պարզուած էր առեղճուածը: Իր որդին անհասկացողութեան ցաւն էր բուներ, որուն խայթերը երկարած էին ճինչեւ իր հոգիին:

— Ատոր համա՞ր է որ կուլաս, որդի՛ս:

— Ա՛խ հայր, ի՞նչպէս պիտի գիճանամ երբ եկեղեցուց զանգակին ճայնը լսե՞մ: Ի՞նչպէս պիտի համարճակի՞մ քայլերս առաջնորդել եկեղեցին ճըտնելու խաչ հանելու ու սուրբ տաճարին նայելու, երբ գիտե՞մ թէ ի՞նչ քոյրս կռապաշտ է գարճի ու կուռքի կ'երկրպագէ:

— Մի՛ լար, որդի՛ս, ճի՛ լար, այդ կռապաշտութիւն չէ, սխալ ես հասկցած, այդ սուտ երկըրպագութիւն է: Այդ արճանը վիճակ է, կուռք չէ, եւ անոր առջեւ կատարուած աճէն ինչ խաղ է, խաղ, ճեր հին օրերէն միացած: Ինչ որ կայ՝ պարզ յիշատակութիւն ճըն է ճեր հին Աստուածուհիին որ բարճրագոյն խնամակալն էր Հայաստանի: Այդ Աստուածուհին ոսկեճայրն էր ճեր նախահայրերուն, որ կենդանութիւն եւ լիութիւն կը բաշխէր: Ոսկեճինն էր որ բարութեան ու զգաստութեան օլէնքները կը սահճանէր: Բարի ճայր էր, որդի՛ս, աւելի բարի բան քու ճնողքդ: Եւ այն ժաճանակ երբ ունեցեր ենք այդ Աստուածուհին, ունեցեր ենք թագաւորութիւն, տէրութիւն, զօրք, բանակներ, որոնք ճեր տունն ու տեղը կը պաշտպանէին թշնամիներէն:

Ծովակ տղայ էր, թէեւ չէր կրնար իր հօրը բսաճները բոլորն ալ հասկնալ բայց շատ բան կը

լսէր որ ճինչեւ այդ ատեն լսած չէր: Երկու ձեռքերով արցունքոտ աչքերը կը սրբէր ու կը սիրէր որ հայրը շարունակէ:

— Հայր, ուրեմն հեթանոս չէ՞ քոյրիկը, չբարկացա՞ն սուրբերը, Յիսուս պիտի լսէ՞ իմ աղօթքիս՝ ինձի եւ իմ ծնողքիս համար, վարժապետը չի՞ պատժեր զիս, Տէր Հայրին օրհնութիւնը չհեռացա՞ւ ձեզմէ:

— Ո՛չ, դաւակո, ո՛չ: Յիշատակը ինքնին սրբանոց է: Վաղը երբ մեծնաս ու դասերուդ մէջ յառաջանալով մտնես պատմութեան խորը, դէպի ազգային աւանդութիւններ, այն ատենը պիտի գիտնաս թէ ո՞րքան քաղցր են հայրենիքն ու անոր յիշատակները, ո՞րքան արժէք ու օգուտ ունի պատմութեան ճանաչումը: Երբ այդ ժամանակին հասնիս, որդի՛ս, գիտցիր թէ պիտի սիրես օրերով անօթի միայ, կեանքդ մաշեցնել, չարչարել քու հայրենի պատմութիւնդ՝ կէտ մը աւելի տեսնելու, յիշատակի դիմ մը աւելի ճանաչելու: Որովհետեւ առանց պատմութեան կեանքը այս աշխարհի վրայ դժոխք է եւ այդ դժոխքին մէջ երբեք հնարաւոր չէ ազգային գոյութիւն պահել: Այն ատենը որքա՛ն անուշ պիտի մտիկ ընես այսօրինակ հանդէսները՝ լացի փոխարէն, որքա՛ն պիտի սիրես քոյրդ պէս դուն ալ երկրպագել յիշատակներու առջեւ, որոնք քեզի կուգան քու հայրերէդ՝ եօթը անմահական ջուրերուն պէս զոր մեր հին Աստուածուհին կը բաշխէր Հայ գինուորներուն, զանոնք երկրին պաշտպանութեան դիւցազներ դարձնելու համար:

— Եօթը անմահական ջուրեր...:

— Այո՛, որդիս, եօթը անմահութեան ջուրեր՝ Հայաստանի եօթը փառքերու խորհուրդն ունեցող եօթը տեսակ ծաղիկներու բոյրերուն հետ, անմահանալու համար, որոնց յիշատակը դուն տեսար այսօր գեղեցիկ արձանին երկու ձեռքերուն մէջ: Քու անուշ քոյրդ, երեկ երեկոյ իր ընկերուհիներուն հետ եօթն աղբիւր ու եօթը պարտէզ վազելով է պատրաստեր զանոնք:

— Իմ անուշ քոյրս...

— Գիտցիր, դաւակո, Սուրբ Մամբրայ (1) այն երկու քարերը, որոնք այնքան երկիւղածութեամբ կը համբուրես՝ ամէն անգամին երբ անկէ անցնիս,

կը հանգչին աւերակի մը վրայ, որ մեր այդ հին Աստուածուհին մէկ տաճարինն է: Եւ այդ քարերուն կից եղող ինքնաբոլոս աւազանին ջուրը, ուր մինչեւ հիմա լողանք կ'առնեն Սուրբ Մամբրայ եօթը սրբուհիները (1), ի՛նչ հիւանդներ չեն բժշկած: Այն ժամանակ երբ մեր հայրերը կանգնած են Սուրբ Նշանը (2), Սուրբ Մամասը անոր մէծ քոյրն է դարձեր, եւ այն օրուրնէ ի վեր տարին մէկ անգամ, գիշեր ատեն լոյսի խոշոր գնդակի մը պէս կը ծաղի ու թռչելով կ'երթայ Սուրբ Նշան եղբօր քով: Ով որ այդ գիշեր արթուն եղած է, աստած է անոր թախիլը:

— Դուն ալ տեսա՞՞մ ես, հայր:

— Ո՛չ, որդիս, ես արթուն եղած չեմ:

— Հապա մայրի՞կը:

— Ես ալ տեսած չեմ, բայց իմ մայրս շատ հեղ տեսած է:

— Ա՛խ, երանի թէ դուք ալ տեսած ըլլայիք, ես ալ, քոյրիկս ալ:

— Կը տեսնես, որդիս, կը տեսնես՝ օր մը: Եւ լալու տեղ այսպէս ուրախ եղիր, որ գեղին աղջիկները այս տարի քոյրդ են վիճակեր վիճակ-արձանին արարողութեան պաշտօնը:

Հայրը տեսնելով որ Ծովակ, զաղբեցուցած լացը՝ իր սխալը գիտցող տղու մը պէս, պայտի կտոր մը առած կը չզէ գետնի վրայ՝ առանց գլուխը վեր առնելու, մօրը նշան մը ըրաւ եւ ետ քաշուեցաւ գեղացուց մէջ:

Ծովակ ինկած էր խորունկ, իր լացին պէս խորունկ մտմտութեամբ մէջ: Յիշեց դպրոցը, կրօնի դասերը, եկեղեցին, երգեցողութեան սէրը, Տէր Հայրէն, տիրացուներէն սիրուիլը, մտածեց, չափեց, չափչփեց ու չկրնալով մէջէն ելլել, գլուխը վեր առաւ: Հայրը չկար, մայրն էր միայն իր սնարին նստած որ կը հսկէր ու անձկանօք կը սպասէր որ Ծովակ ժպիտ մը ցոյց տայ, այդ տեղէն երթալու կամք ունենայ:

— Մայր, ուրեմն նոր Աստուածը ընդունելու համար է որ այսպէս չունինք Հայ գինուոր, թագաւոր, իշխանութիւն ու այսպէս կը վախենք

(1) Այդպէս կը հաւաստիմ Ծովեցիկ, եւ կը հաւաստիմ թէ շատեր տեսած են այդ սրբուհիները ներմակ սաւաններով պլլուած: Կ. Խ.

(2) Անուանի Ս. Նշան վանքը որ հիմա մալոս է Ս. Նշան կղզի անուանով: Կ. Խ.

(1) Այս աւերակը կ'իյնար Ծով գիւղի արեւելեան բեւիւն վրայ: Կ. Խ.

Քիւրտերէն եւ Թուրքերէն: Երբ ձիււորները գան, հայրիկը կը պահուի ու դուն կը դողաս:

Մայրը լեզու չգտաւ պատասխանելու: Անձեզ ծովակիրն այս վերջի հարցումները նետի պէս ծակեցին իր սիրտը: Աչքերը պողպեցան, նայեցաւ ինքն իր հոգիին ճէջ եւ ահաւոր սարսուռով ձը ցնցուեցաւ: Արցունքը կոկորդին ճէջ խեղդեց, ու ծուրով պազ համբոյր ձը տուաւ ծովակիրն:

— Մայր, ինչո՞ւ չես խօսիր: Սխալ են հայրիկին ըսածները:

Մայրը չղիճացաւ, որովհետեւ ծովակիր վերջի հարցումները իր աչքին առջեւն էին բերած զիական իր կտորի՞ աղուն՝ քսաներկու տարեկան Առաքէլին, զոր վեց ամիս առաջ Խալիլ սնուն աղա ձը սպաննել տուած էր իր ճէկ խօսքը ծախի չընելուն համար, ու ոչ ոք համարձակիւ էր այդ սպանման ծասին զանգատ ձը ընելու:

— Հայրիկին ըսածները... — ա՛խ... շիտակ է, որդիս, շիտակ: Նոր Ստուածը տէր չեղաւ ի՞մ ճահիլիս, քու եղբորդ՝ Առաքէլին, որ այնքան շատ կը պաշտէր զինքը:

Ու ծայր եւ որդի զիրկընդիւսունուած թաղուեցան լացի ճէջ:

Կէս օրէ վերջ, երբ աղջիկները իրենց խաղերուն արշաւը զօրացուցած էին՝ գրաւելով բոլոր հանդիսականներուն ուշադրութիւնը, ծովակիր ձը հարցուեցաւ տուն էր դարձեր եւ կ'աշխատէր շինելու արձան ձը: Իրիկունը երբ իր բարի քոյրը վերադարձաւ խաղէն, լսեց ծովակիրն խնդրանքը եւ աւարտելով արձանը՝ զետեղեց զայն իր սիրած պատուհանին առջեւ:

Շաբաթ ձը վերջ ծովակիրն քոյրը, բեհեգեայ կտորի ձը վրայ ոսկեգոյն ճետաքսեայ թելերով ծաղիկներու ճէջ բանուած հետեւեալ տողերը կախեց արձանին կուրծքին. «Ի յիշատակ Հայոց Հին Աստուածուհի՝ Անահիթին, որ մայրն էր ամենայն բարեաց եւ պարգեւատուց Հայաստանին:»

ԿԻՒՐԵՂ ԽՐԱՅԵԱՆ

1929 Հոկտեմբեր

Պոստ

Յ Ո Վ Ս Է Փ Փ Ո Ի Զ Մ Ա Ն

Արեւելեան հմայքներու միասիբ միջավայր մը, ստուերալից: Անշունչ իրեր, կրօնական առարկաներ, հնաբոյր գեղօրներ, պուտտայի արձանիկներ, անսպաւուտութեն դասաւորուած:

Իրենց գոյութեան նպատակը վաղուց լրացուցած իրեր, գերեզմաններու անդունդէն պեղուած, եկեր են հանգչիլ աշխատանոցին դարաններուն եւ զարգասեղաններուն վրայ, նորէն ապրելու համար նկարչին վրձինին տակ:

Անշունչ իրերու ապրելու այս ճիգը, կեանքի անմահութեան խորհուրդը կը ներկայացնէ. եւ կը պայծառանայ հոգիդ:

Միջնադարեան այս անկիւնը Յովսէփի Փուշմանի աշխատանոցն է:

Ան իր խաղաղութեամբը, տեսակ մը զարտուղութիւն կը կազմէ Նիւ Եորքի շնորհալից եւ ազմկայոյզ օրէնքներէն:

Բազմոցի մը վրայ նստած է Տիկին Փուշման, եւ ես իր կողքին: Կիսաստուերին մէջ, հոս ու հոն վառուած քանի մը մումերու տառանոց լոյսին տակ, բոլոր առարկաները քաղցրօրէն կ'արտաշնչեն դարաւոր հնութիւններու խորհուրդը:

Եւ Փուշման, իր նուիրական սրբավայրին մէջ, գորովագին ձայնով կը վերյուզէ իր անցած օրերը:

Մեծ արուեստագէտի իր փառքերէն մերկացած, հոգին մանկացեր է նորէն, մաքուր, ազու մը պէս բարի: Կենսայորդ իր աչքերուն մէջէն, յիշատակները լոյսի ցոլքեր կ'արձակեն: Բաւերը պատկերալից են, ինչպէս իր վրձինը, եւ շունչը՝ թաթաւուն իր մանկութեան միջավայրին ապրումներով:

Յանկարծ կը փոխադրուինք, վարպետին

նկարագրութիւնովը, Արեւելք: Կը տեսնենք Փուշմանի աշուղ հայրը, որ կը գառնայ իր սղինձի գործարանէն: Ան չի սիրեր մետաղի կարծր աշխատութիւնները, իր սիրալ եւ միաքը թռիչքներ ունին, ազատ ոլորաներ կը վնասեն:

Քնարը թեւերուն եւ ինքնաստեղծ աշուղի երգերը շրթունքին, իրենց տանը սեմին առջեւ, բարեկամներու խրախճանքի օրերուն, կամ իր կեանքին ամենէն ցայտուն պահերուն, հայր Փուշման կը թրթռացնէ օդը մ'ելանոյշ խաղերով:

— Մեծ մարդ էր հայրս, կ'ըսէ Փուշման՝ գլխու հաստատական շարժումով մը, եւ կը ներկայացնէ հզօր բաւերով, անոր էութեան տարրերուն մէջ, զօրաւոր եւ շքեղ, հոգեկան ուժգին ներշնչումներու ազանդը:

Փուշման իր մանկութիւնը սերտօրէն կը կապէ իր հօրը յիշատակներուն: Աշխատանոցին կիսաստուերին մէջ կը զգանք Տիգրանակերտի երեկոներուն թախիծը, երբ հօրը կողքին մանկիկ Յովսէփի կը վերագառնայ տուն:

Գորովագին ու թարմ շունչի մը հզու մին մէջ, կ'ընդնշմարենք Տիգրանակերտի պարիսպներուն վիթխարի մեծութիւնը եւ այն առասպելական մութ գոյնը, զոր ժամանակին ու խոնաւութիւնը տուած են անոնց:

Այնքան թանձր են եւ խիտ՝ սարիսպներուն ստուերները: Արեւուն ճառագայթները հազիւ կրնան ոսկի դաշնակութեամբ մը երջանկացնել անոնց կատարները:

Վարը՝ քաղաքը կը մնայ խոնաւ ու խաւար:

Ստուերները կը տատանին նեղ անցքերու մէջ: Գարունները կուգան եւ կ'անցնին՝ իրենց կենսայորդ լոյսովը, բայց անկարող են ներարկելու իրենց աւիշը՝ հողին արգասաւորման:

Գարերու անբացատրելի երկիւղով պաշարուած է Յովսէփի մանկական հոգին. եւ մահուան գաղափարը սարսուռներ կը ցանէ անոր էութեանը մէջ:

Գողգոթուն ձեռքը յանձնած հայրենի ափին հզօր պաշտպանութեանը, շրթունքները կափկափուն, խռովագին կը հարցնէ.

— Ո՞վ է մեռեր, հա՛յր, այս քաղաքին մէջ:

Վարպետը կը նկարագրէ մեզի ամառուան պայծառ ցորեկները, եւ յանկարծ պարպին մէջ թանձրութիւն մը թխալահոծ, վատագո՛յժ...:

Աւարն է երկրագործ ժողովրդին աշխատութեան եւ յոյսին... սեւ արշաւը հեռաւոր հորիզոններէ խուժող մարտնչերուն... Մթազնումը պայծառ ու արեւոտ գաշտերու թաւիշին:

Ձմեռ գիշեր է. մութը կը տարածուի քաղաքին վրայ. մանուկ Յովսէփին ընտանիքը հաւաքուած է տաքուկ երգիկին տակ. եղբայրներ, քոյր. ինք Չերմօրէն կապուած անոնց կեանքին, պլլուած մօրը սրտին:

Այնքա՛ն մութ է գուրքը. խաւար ստուեր իսկ չի անսուիր: Հովը կը փչէ, ձմեռուան գիշերները կ'երկարին: Հեռուէ՛ն հեռու կը լսուի շուներու մեղմ ու երկարաձիգ ունումը. ողբերգական արձագանգներ...:

Այս ամէնը մահամերձ հոգեվարքներու վախճանը կը գուժէ. եւ կը լսենք մօտակայ տանիքներու ներքեւ՝ ալեծփող հոգիներու հեկեկանքը...:

Մանուկ Յովսէփ կը սիրէ առանձնութիւնը եւ ընտրեան մէջ ամէն երեւոյթ, ամէն շշուկ որոշ ազդեցութիւն մը կը գործեն իր հոգեկան տրամագրութեանց վրայ:

Անոր մանկութիւնը գուցէ բնաշխար-

հի բոլոր աղոց մանկութիւնն է, բայց ինքն այն հազուագիւտ տղաքներէն է, որ մեծ մարդոց պէս ունին իրենց թաքուն զգայնութիւնը եւ կ'ապրին իրենց ներքնաշխարհին մէջ:

Անոր արեան մէջ հոսող գեղարուեստական շառաւիղներուն ընոյթը՝ այնպէս մը տպաւորուած է որոշ գէպքերու ազդեցութեանէն, որ իր վերլիշումները կը դառնան խորհրդաւոր հէքեաթներ:

Այս պատմութիւնները կ'ազդեն մեր տրամագրութեանց վրայ:

Վարպետը կը զգայ մեր հոգեկան ընկճումները, եւ երջանկութեան լոյսով մը իր աչքերը պայծառացած, կը նկարագրէ իրենց տանիքը՝ ննջարանի փոխուած. հեռաւորութեանց մէջ կախուած թափանցիկ ամպերը, անոնց հեւքոտ վազքին մէջէն ամառուան աստեղագարգ գիշերները. հողին հոտը եւ պարտէզներէն բարձրացող ծաղիկներուն բոյրը. իր քոյրը եւ եղբայրները եւ բոլոր ընտանիքը որ երջանկութեամբ կ'ընկղմէին այդ բոյրերուն քաղցրութեան մէջ:

Եւ իր շրթունքները՝ սրոնք կը բացուին հեշտանքով ըմպելու համար երկնքէն հոսող ծիր կաթինին առասպելը:

Ինչպէ՛ս կը սիրէ թափ տալ իր երեւակայութեանը. կը կտրէ կ'անցնի ծիր կաթինէն հոսող թափանցիկ միջոցը, կը վայելէ օտար ու հեռաւոր աշխարհներու հեթանոսական գեղեցկութիւնը: Յոգնած արտեւանսունքը կ'իյնան պահ մը աչքերուն վրայ. կէս մրափի հեշտանքի մը անձնատուր, անորոշ մտածումներ՝ զոր չի կրնար սահմանել՝ կը խուժեն իր գլխուն մէջ, և աչքերը կը բանայ կրկին, զանոնք լաւ ըմբռնելու եւ անոնցմով արբենալու համար:

Փուշման, հեռոցհեռէ խանդավառ իր մանկութեան վերլիշումներէն, չի հասկընար, թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս իր կեանքի նախաշրջանին խառնուած չըլլար այն ազնիւ հոգին, այն իսէպլ կ'ինը՝ որ կոչուած էր մօտաւոր ազգային բաժնել իր

բոլոր գեղարուեստական յուզումները, ձեռ
ու շունչ տալով անոնց:

Եւ այս անգամ Ժպիտը շրթունքին՝
օգնութեանը կը դիմէ Տիկին Փուշմանին,
որպէս զի ան պատմէ ծաղկոցի կեանքէն
միջադէպեր, զոր վարպետը ա՛յնքան
մանկուենակ բարութեամբ մը, մտերմօրէն
պատմած է իր կնոջ, մօտէ՛ն, աւելի՛ մօ-
տէն, աղայ տարիքէն իրարու հետ խմոր-
ուած ըլլալու պատրանքէն տարուած:

Ակներեւ զրկանք մըն է Տիկին Փուշ-
մանի համար ալ, պզտիկ Յովսէփին հետ
իր չվայելած մանկութեան պակասը, եւ
անձկութիւնը որ կ'ուրուագծուի Տիկնոջ աչ-
քերուն մէջ, կը յիշեցնէ ինծի Տիկին Ռոս-
թանի ամուսնոյն ձօնած բանաստեղծու-
թիւնը.

«Այսօր աւելի շատ կը սիրեմ քեզ
քան թէ երէկ, եւ վաղը պիտի սիրեմ՝ ա-
ւելի շատ. ու կը ցաւիմ բոլոր ա՛յն տարի-
ներուն համար ուր չէի ճանչնար քեզ:»

Փուշման իր յիշողութեան մէջ պրպը-
տելէն յետոյ՝ կը հարցնէ Ժպտազին.

— Պիտի մոռնամ ա՛յն պզտիկ հար-
ուածները, որոնցմով կը ցաւընէր վարժա-
պետը իմ մասներս:

— Չար մարդը, իր անճոռնի խոշոր
քթովը, կը յարէ Տիկին Փուշման, ամառ-
ուան հեղձուցիչ օրերուն, ձանձրոյթէն երբ
կը քնանար գլուխը պատին, եւ ճանճերը
սնոր իւզոտուած գէմքին շուրջը կը բզգա-
յին, յանկարծ կ'արթննար աղօցը քրքիջնե-
րէն, որոնք Յովսէփին գծած ծաղրանկա-
րին վրայ ճռած, ձեռքէ ձեռք կը քաշէին
ու կը խնդային. ո՛վ գիտէ որքա՛ն պատ-
ուելին նմանութիւն կը գտնէր Յովսէփիս
գծած ծաղրանկարին եւ իր գէմքին մի-
ջեւ, որ կատաղօրէն կը պոռար ու հար-
ուածներ կուտար խեղճ պզտիկին մատ-
ներուն:

Ծննդավայրի այս սիրազին յիշատակ-
ները, իրենց զգայնականութեան գրոշմը
դրած էին Փուշմանի էութեանը մէջ, երբ
արդէն ինը տարեկան՝ իր ընտանեկան պա-
րագաներով կը գաղթէր Կ. Պոլիս:

Անկէ վերջ Պոլսոյ Սկիւտարն է իր
պատանութեան օրրանը: Սկիւտարը իր
չքնաղ դիրքովն ու իր տեսարաններով,
գարնանային գեղեցիկ օրերով ուր ջերմ ու
պայծառ արեւուն կայծերը Մարմարայի
կուրծքին մէջ խողտալով կը փայլին:

Սկիւտարէն նաւամատոյց իջնող ճամ-
բուն երկայնքին հեռակայ նոճեստանները,
եւ նոճիներու սեւ գագաթները որոնք լու-
սաւոր մշուշի մը մէջ կայծկլտուքներով
կը հաղորդակցին իրարու հետ: Հեռուն
Սթամպուլի սիւուէթը տեսիլքի մը պէս
հրաշագեղ, դէպի երկնքին կապոյտը սլա-
ցող իր մինարէներով:

Եւ վոսփօրը, որուն մշտագալար ա-
փունքներուն վրայ կը խալտայ արեւու եւ
լոյսի խողովի ցանկութիւն մը:

Մարմարայի արեւամուտները եւ ար-
շալոյսները, Չամլըճայի վեհափառ տեսա-
րանը, խառնուած Փուշմանի ծննդավայրին
քարերուն, գաշտերուն եւ պարիսպներուն
յիշատակին, այլ եւս հիւթական ըլլալէ
կը դադրին իր մէջ եւ կը դառնան զգայ-
նական ազգակ մը, իր հոգիին անհրաժեշտ
մէկ սնունդը:

Ահա թէ ի՛նչպէս Փուշման իր նկար-
ներուն մէջ կը դնէ հոգեկան ապրումները,
յոյզերը, իր յոյսերն ու խտալները, իր
խոհերը, տենչանքն ու կարօտը, իր ցաւն
ու բերկրութիւնը, իր հոգիին բոլոր վիճակ-
ները, իր հոգիին բոլոր շարժումները:

Յետոյ կը տեսնենք Փուշմանը իր
տանըմէկ տարեկան հասակին, որ ուխտա-
տեղի մը գացողի երկիւղածութեամբ կը
յաճախէ Պոլսոյ Գեղարուեստից վարժարա-
նը, լուրջ եւ կորովամիտ վարպետի մը՝
ճանօթ արձանագործ երուսնդ Ռսկանի
գնահատանքին եւ գուրգուրանքին առար-
կայ:

Փուշման աւելի տարեց ընկերներէն կը
խլէր առաջնութեան մրցանիշը. իր ուսու-
ցիչը, իրեւ բացառիկ գնահատութիւն իր
պզտիկ աշակերտին գեղարուեստական ակ-
ներեւ ձիրքերուն, կը թոյլատրէ՝ որ հե-

տեւի ան նկարչութեան և միեւնոյն տառն արձանագործութեան ճիւղերուն:

Պոլսոյ մեծ երկրաշարժին տարին, 1894ին, կը ստանայ Գեղարուեստից վարժարանին Ա. մրցանակը: Այդ պատիւը իրաւունք կուտար իրեն կառավարութեան ծախքով մեկնիլ Եւրոպա եւ հոն լրացնել գեղագիտական իր ուսումը:

Գժբախտ պատահարով մը, նոյն տարին կը զուգագիպի Համիտեան առաջին ջարդը՝ հայ գանգուածին հանդէպ: Բնական է որ Թուրքերուն ամենէն աչքառու սարսափան կը դառնայ Փուշմանի ազգութիւնը, եւ անոր տեղ կառավարութիւնը կը զրկէ Փարիզ տաճիկ երիտասարդ մը:

Ճիշտ նոյն տարին կը ծագին կուսակցական ինքիւններ ու գործունէութիւն. խլրտումներ հայ տուներու մէջ, կասկածներ ու ձերբակալութիւններ, խուզարկում ու դատաւարատութիւն: Հայր Փուշման իր հանդարտ ու խաղաղասէր հոգւոյն անյարմար կը նկատէ այդ միջնորդութիւնները եւ երկիւղներ կ'ունենայ իր սղոյթի Յովսէփին մասին: Չի թողուր որ շարունակէ վարժարանը:

Փուշման ընտանիքը 1896ին կը գաղթէ Ամերիկա:

Յովսէփ Փուշմանի միակ իտեալն էր Փարիզ երթալ եւ հոն կատարելագործել իր արուեստը. սակայն իր նիւթական միջոցները չեն ներեր: Հայր Փուշման շատ չէր քաջալերեր իր որդւոյն անմիջապէս Եւրոպա մեկնիլը: Կը փափաքէր որ նիւթական ապահով միջոցներով երթայ Ֆրանսա, քանի որ դրամական մտահոգութիւնները կասկածելի կը դարձնեն գեղարուեստի յաջողութիւնները:

Փուշման օր մը երբ հօրը դէմքը կենդանացուց սղոյթին վրայ, անիկա՝ յուզուած երջանկութեամբ մը՝ սղոյն ըսաւ.

— Գիտեմ որ բան մը պիտի ըլլաս ապագային. բայց մեռնիմ ես, յետոյ բաժնուէ՛ ինձմէ՛:

Երիտասարդ Փուշման կը հաստատուի ընտանիքով Շիքահօ: Պէտք էր ապահովել

նիւթականը, մղել կեանքի սայլքար, օր մը համեւելու համար իտեալին, — դառնալ վարպետ մը:

Այդ իտեալը հեռաւոր հրաշքի մը դժուարութիւնը չունի Փուշմանի երեւակայութեանը համար: Ան ունի կորով, հաւատք ու ձեռներէց սգի: Կը հաւատայ աշխատութեան բարիքներուն:

Ան նշմարած է իր յաղթանակին ճառագայթները հեռաւոր ուղիներուն ծայրը. կը քալէ դէպ ի հոն, անսայթաք:

Գեղարուեստը, որ գերագոյն նուիրումն է հոգեկան իտեալներուն, կը միտոնէ հերոս մը՝ անմահացնելու համար անոր մեծութիւնը: Փուշման հասած է իր կեանքին ամենէն զգայացունց սրահերուն: Արուեստագէտներուն համար շատ անգամ հերոսը կին մըն է որ, իբրեւ գորովալի մայր, կը բանայ իր սիրար իրականացնելու համար անոր իտեալներուն մեծութիւնը, փոխանցելով անոր երանգապնակին հոգեկան զգայականութեան դրոշմը, իր ներքին թրթիւրը, ըմբռնումները, սպառումներուն, իղձերուն եւ երազներուն գունաւորումը:

Փուշման՝ քսանըմէկ տարեկան, իր կեանքին կը կապէ իր իտեալներուն հերոսուհին: Յանկարծ իր դէմքը կը դողայ մեծ կիրքերու բոցովը եւ կը յարէ.

— Եթէ իմ արուեստս նշանակութիւն մը ունի, կը պարտիմ այն ազգին որ ծնաւ զիս, եւ ո՛չ այն երկրին որ զիս դատաւարակեց: Եւ սրտագին գուրգուրանքով մը օժելով Տիկին Փուշմանի էութիւնը, կ'աւելցնէ.

— Եւ կը պարտիմ կնոջս, որ իր երիտասարդութիւնը, իր սիրար վստահեցաւ ինձի, ու միտաին խիզախեցինք՝ սիրահար ու արբշիտ՝ կեանքի դժուարագոյն ճամբաներէն:

Տիկին Փուշմանի ժպիտը, խօսքն ու խրախոյսը, անոր հանդարտ ու ծայրայեղօրէն անուշ նկարագիրը, մեծապէս նպաստած են Փուշմանի յաջողութեան:

Երբ շատ արուեստագէտներու համար

իրենց հերոսուհին կը դառնայ կենակից և գաւախներու մայր, կը դադարի ըլլալէ հերոսուհի ու ներշնչարան: Միեւնոյն ատեն մտահոգութիւնները, որոնցմով կը գեղուն ընտանեկան յարկերը, կերպով մը կը պակսեցնեն արուեստին հմայքը եւ կը ճնշեն մտքին վրայ, թեւատելով անոր ազատ սաւառնումը հեռաւոր ու ազատ ուորաներու մէջ:

Փուշմանի ամուսնական կեանքը օրհնութիւն մը կը դառնայ, եւ իր կեանքի գոռարութեանց դիմագրաւելու եւ անոնց ծանրութիւնը մեղմացնելու հրաշալի ազդակ մը:

Հիմա կը տեսնենք երիտասարդ Փուշմանը իր կոչումէն տարբեր գործերու խառնած իր կեանքը. Շիքախօի գորգի իր վաճառատունը, գորգի կոյտերու առջեւ, յաճախորդներու հետ, արուեստագէտի տաղանդին բոլոր հմայքովը, կապերաներուն գունաւորման եւ զարդարանքին ներքոյը իր շրթունքներուն: Գործնական կեանքին մէջ, ներկերու եւ գիծերու գիտութիւնը վաճառողի իր արուեստը կը դիւրացնէ. ան հմայքով կը լեցնէ իր յաճախորդները, ինչ որ կ'ըլլայ ազգակներէն մին՝ նիւթական յաջողութեամբ պակելու Փուշման վաճառատան առեւտուրը:

Գորգի վաճառատունը՝ միշտ երկրորդական գծին վրայ կ'երեւայ Փուշմանի կեանքին: Որովհետեւ անհամբեր կը սպասէ երեկոններուն, յաճախելու համար Շիքախօի գեղարուեստական վարժարանը, ականգելու համար հոն դասեր, փոխադարձաբար ինք զարգանալով գեղարուեստի նուիրումին մէջ եւ ստանալով գեղագիտական դասեր:

Բեղուն ու բազմազբաղ այս կեանքը կ'ապրի տաներիւ տարիներ Շիքախօի մէջ, մինչեւ որ կը հնչէ սպասով ժամը, նիւթական հանգիստ պայմաններով հաստատուելու համար Փարիզ:

Կը տեսնենք Հիմայ Փուշմանը վստահ ու գիտակից իր գեղարուեստական ապագային: Աշակերտ Académie Julianի, առաջին

տարին իսկ կուրծքը կ'ուռի ուրախութեան խայտանքէն, երբ Salonի մէջ ցուցադրուած պատկերներուն մէջտեղ կը ժպտի իր կնոջ կենդանագիրը: Ուսանողի առաջին տարուան իր պատկերին Salonի մէջ բնդունուիլը բացառիկ յաջողութիւն մըն էր, մանաւանդ երկրորդ մետալի արժանանալը: Անկէ վերջ ամէն տարի, կը ստանայ հետզհետէ աւելի մեծ պատիւներ. 1914ին Rayon de soleil նկարը կը շահի պղինձէ մետալ, եւ La fille du Cheikը արծաթէ մետալ:

Մինչեւ պատերազմի սկիզբը կը մնայ Փարիզ. եւ վերադարձին Ամերիկա՝ կը յղանայ իր nature morteերը. 1926էն յետոյ կ'արտագրէ իր կարեւոր գործերը, որոնք կուտան իրեն վարպետի համբաւը:

Ճիշդ այդ թուականին կուտայ ցուցահանդէս մը Փարիզի մէջ, որուն մասին կը գրէր Պ. Ա. Չօպանեան. «Այս ցուցահանդէսը եղաւ յաղթանակ մը մեր հայրենակցին համար, եւ ամենէն շքեղ ազատ-ցուցումներէն մին մեր ցեղին գեղարուեստական ստեղծագործ հանճարին:» Ֆրանսայի մեծագոյն քննադատները գրուատած էին հայ նկարչին ինքնատիպ տաղանդը:

Նոյն թուականներուն Նիւ Եորքի Grand Central Art Galeriestի մէջ ալ կը սարքէ ցուցահանդէս մը, որ նոյնպէս կ'արժանանայ ամերիկեան գոռարահած քննադատներուն գնահատութեան:

Անցեալ Նոյեմբերին սկիզբը, նոյն կալըրիին մէջ նորէն եկաւ պանծալ Հայ անունը՝ հոն ցուցադրուած նկարներուն եւ քանդակագործութիւններուն մէջ:

Նիւ Եորքի բոլոր թերթերը արձագանգը եղան այս արուեստահանդէսին՝ ուր Ամերիկայի լաւագոյն արուեստագէտները ներկայացուցած էին իրենց վերջին գործերը:

Park - Avenue Social - Reviewի մէջ Wallace կը գրէր այս առթիւ. «Արդէն մեծ յաջողութիւն մըն էր նոյնքան ջերմօրէն բացուած մրցումի մը մէջէն խլել պարգեւը: Ուրեմն ի՞նչ ըսել երբ նոյն ան-

Ճը երկու կարեւոր պարգեւները միասին խլած դուրս ելաւ մրցումէն, Haward Heinzի 500 տոլար պարգեւը եւ ժողովրդի ֆուէին Պարգեւը՝ նոյնպէս 500 տոլար. թասերական պզտիկ դէպք մըն էր ասիկա: Քիչ անգամ տեսնուած է որ ժողովրդական քուէն համաձայնի ֆրնիչ Յանձնախումբի դատատանին, բայց այս դէպքը պատահեցաւ Յովսէփ Փուշմանի գեղեցիկ ու խռովիչ nature-mortelին համար, «Երբ ի բիկուեր կուգայ:»

Այսպէս ուրեմն, ամէն օր արուեստահանգէս այցելող բազմութիւնը կեցաւ պուտտային եւ քանի մը թարշամած ու թափթփող վարդերու անօթին առջեւ ու իր քուէն նետեց քուէատուփին մէջ, անփոյթ թէ ֆրնիչ Յանձնաժողովը պիտի գնահատէ իր հաւանութիւնը թէ ո՛չ: Եւ այս կերպով, գրեթէ դուն ուրեք տեսնուած պատեհութեամբ մը, ժողովուրդին իրաւունք արուեստը իր անհատական հիացումը յայտնել՝ առանց ճշնումի եւ նախապաշարման, եւ իսկապէս զարմանալի էր որ ժողովուրդը իր ընտրութեան մէջ գտած էր ուղիղ ճամբան:

Այս բոլոր յաջողութիւններուն հետ, երբ իրիկուեր կուգայ նկարը գնուած էր արդէն արուեստահանգէսին բացումին օրն իսկ: Եւ Փուշմանի արուեստով ու գործով հետաքրքրուող Ամերիկացիները այդ օրը նկատեցին նշանաւոր օր մը արուեստագէտին համար:

Այս նկարը որ մրցանակը շահեցաւ, յափշտակութեամբ զինքը գիտող հասարակութեան կը բացատրէր կեանքին յաւիտենական փիլիսոփայութիւնը: Առութեան մէջէն կ'ընդհնարուէր բարձրացումը իմաստութեան, գիտակցութեան, որ չի սպասեր այլ եւս անակնկալներու եւ անշարժ ու հանգարտ է, նոյն իսկ անցնող կրքերուն հանգէպ:

Փուշմանի արուեստին գաղտնիքն է, ջերմութեամբ փոխանցել գիտողին հոգիին մէջ իր զգայնութեան խորքը:

Այն թախիժը եւ խորհուրդը, որնցմէ ներշնչուած է Փուշմանի մանկութիւնը, փոխանցուած են իր կեանքի գանազան շըրջաններուն և կերտած են հիմնական գիժը իր արուեստին արեւելաթոյր հրապոյրին:

Իր գործերուն հրապոյրը՝ որքան իր արուեստէն, նոյնքան իր նիւթերուն ընտրութենէն կը ծնի. իր գոյներուն ժուկակալութիւնն ու խոհականութիւնը եւ իր ներկայացուցած իրերուն պարզութիւնը, յտակութիւնը տեսակ մը խորհրդաւոր հանգարտութեամբ կը լալինան, կը խորունկնան եւ հետզհետէ կը կենդանանան:

Բանաստեղծական սարսուռը կը բաբախէ նոյն իսկ պզտիկ անօթի մը շուքին տակ, որուն խորհուրդին մէջ կը մխուի հոգին առանց խոնջէնքի: Իր nature - mortelը, տեսակ մը խորհրդապաշտ տաղերգութիւններ են գոգցես, մշուշաւոր երկնքի մը վրայ, ուր նկարչական տարրին հետ մահաւանդ զգացումի յորդ գեղում մը կը հրաւիրէ մտերմանալ հոգին նկարին ասրումներուն:

Մեծարանքը զոր կ'ընծայեն այս Հայ վարպետին գեղարահաճ Ամերիկացիները, գնահատութեան տուրքը զոր անոնք կը մատուցանեն գանազան առիթներով, ի՞նչ աստիճան կը մտնէ անոնց արձագանքը Հայ տուներէ ներս: Եւ մեր ազգը կը ճանչնա՞յ արգեօք ըստ արժանւոյն այս մեծ վարպետը, որ օտարներուն մօտ մեզի պատիւ կը բերէ իր Հայ անունովը, Հայ տաղանքովը եւ Հայ սիրտովը:

ՉԱՐՈՒՀԻ Մ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ

Նիւ Եոթ

Մ Ի Հ Ա Յ Ի Լ Է Մ Ի Ն Ե Ս Ք Ո Ւ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Ք Ի Ի Ն Ն Ե ր

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Մարեցաւ կեանքը հրպարաւ Վենետիկին գեղանի,
Ա՛լ ոչ մէկ երգ կը լսուի, չըկան լոյսերը շողուն,
Սանդուղներուն վրայ մարմար, դռներէն ներս ծերունի,
Կը թափանցէ լուսինը, ու կը հրպի պատերուն:

Ջրանցքներուն վրայ կ'ողբայ Ովկիանը լալազին,
Յաւերժական՝ միայն ինք, ու յաւերժ թարմ ու ծաղկուն,
Կ'ուզէ շունչ տալ վերըտին նազենի, բաղցր իր հարսին՝
Ալիքներովն իր հնչեղ կը բաղխէ ծե՛ր պատերուն...

Կարծես ըլլար գերեզման՝ բերդաքաղաքը լուռ է.
Եւ իբրեւ հին օրերէ մընացած սուրբ քահանայ՝
Սուրբ Մարկոսը մռայլադէմ կէս գիշերը կը զարնէ...

Ու ծախսով մը խոր, կարծես ըլլար նոր մէկ Սիբիլլայ,—
Ան կը գոչէ հանդարտիկ, ընդհատ ընդհատ ու դժնէ.
«Ձո՛ւր է, տըղա՛ս. յարութիւն՝ մեռելներուն ա՛լ չըկա՛յ...»:

★ ★ ★

Մ Ա Ռ Ա Խ Ո Ւ Ղ Ի Ն Ը Ն Դ Մ Է Ջ Է Ն

Ինձ կ'երեւիս անցեալին մառախուղին ընդմէջէն՝
Մարմա՛ր, հերմա՛կ թեւերով, խարտեաշ մագո՛վ աղջընակ,
Գունատած դէմքըդ ինչպէս մեղրամոմը ըսպիտակ,
Ու դուն նիհար, հալումաշ՝ դառն ու անուշ վշտերէն...

Փըպիտովըդ մեղմանուշ աչքերս ահա կը գգուես,
Կին՝ աստղերուն մէջ բոլոր, ա՛ստըդ կանանց մէջ անուշ.
Մինչ ձախ ուսիդ կը հակի դէմքըդ տժգոյն ու քնքուշ,
Երանութեան աչքերուն մէջ կորսըւած՝ կուլա՛մ ես...

Մըշուշներու քառսին մէջէն ինչպէ՛ս գատել քեզ,
Դարձեալ բերել քեզ կուրծքիս, ո՛վ հըրեշտակըս սիրուն,
Ու քու դէմքիդ վրայ ծըռել դէմքս արցունքով ողողուն,
Քեզ դարձեալ շունչ ներարկել համբոյրներովըս հրակէզ,
Ու տաքցընել իմ կուրծքիս քնքուշ ձեռքերդ սառի պէս,
Քեզ պահել մօտը՛ս, շա՛տ մօտ, սրտիս վըրայ տըրտփուն...

Սակայն, աւա՛ղ, դուն՝ պատկեր անիրական, դուն անցեա՛լ,
Ըստուերդ ահա կ'անհետի ցուրտ մըշուշի մը ետին,
Ու կը գտնեմ թեւաթափ ու միայնակ զիս դարձեալ,
Երազի մը գեղեցիկ գրկած յուշը լոկ տըխուր,
Դէպ ի ըստուերդ անուշ կ'երկարեմ թեւերս ի գուր,
Բա՛յց չեմ կրնար քեզ խըլել մառախուղէն անցեալին...

★ ★ ★

Ե Ր Գ

Ձէի հաւտար թէ՛ օր մը կ'առնեմ համն ե՛ս ալ մահուան,
Ես որ յաւերժ պատանի, ինձ պլլած իմ վերարկուն,
Սոփոր էի աչուըներս յառել անհոգ, երազուն՝
Դէպ ի աստղը մենութեան:

Երբ դուն յանկարծ երեւցար ճամբուս վըրայ, սիրակա՛ն,
Դո՛ւն, տառապա՛նքը, դո՛ւն, կի՛ն, որ դառն ես ու մեղրալիբ,
Ես խըմեցի ցըմըրուր անհուն հեշտանքը մահուան՝
Որ չի գըթար, չ'ողորմիր...

Հիմա կ'այրի՛մ կենդանի, ինչպէս երբեմըն նեսոս
Կամ Հերակլէսը ինչպէս՝ թունաւոր ի՛ր հանդերձէն.
Կըրակը որ ներսըս կայ, ա՛հ, չեն կրնար մարել հոս
Ծոփուն ջուրերը ամէն...

Կ'ողբամ ի՛մ իսկ երազը՝ ա՛լ խորտակուած բրտօրէն,
Իմ իսկ հոգւոյս խարոյկին բոցէն կ'այրիմ ես լըռիկ.
Պիտի կրնա՞մ, ա՛հ, դարձեալ, վերածնիլ ես մոխիրէն
Ինչպէս թռչունը փիւնիկ...

Ա՛հ, հեռացո՛ւր իմ ճամբէս աչքերդ համակ թունալի,
Թող գայ դարձեալ սրտիս մէջ անհոգութի՛ւնը թախծոտ,
Որպէս զի ես կարենամ մեռնիլ խաղաղ ու հեզնոտ,
Իմ հոգիս ե՛տ աուր ինձի...

Փարզմ. Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՎԱՅԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

(Նրա գրական գործունեութեան 40ամեակի առթիւ)

1. Բանաստեղծը

Այսօր լրացաւ 90ական թուականների հայ բանաստեղծութեան յայտնի դէմքերից մէկի՝ Վահան Միրաքեանի գրական գործունեութեան 40-ամեակը:

40 տարի: Գա ծի խոշոր պատմաշրջան է, որի ընթացքում նա լուռ ու մունջ, իր մանկավարժական գործունեութեան հետ զուգընթաց, ծառայել է հայ գրականութեանը:

Շատ բան չի գրել նա, մանաւանդ «Լալուարի Որսը» մեծ պոէմից յետոյ լուել է երկար ժամանակ եւ երբեմն միայն գրական այս կամ այն հանդիսում վրձինել է բանաստեղծական փոքրիկ նկարներ եւ դրամաներ: Սակայն այն մեծ արձանը, որ նա բանդակել է, հոգեբանական-սոցիալական այն տիպերն ու երեւոյթները, որ պատկերել է եւ բնութեան շքեղ այն տեսարանները, որ նկարել է իր պոէմում գեղարուեստագէտի վարպետ վրձինով, ինքնին բաւական են, որ գրաւի նա իր ուրոյն տեղը մեր բանաստեղծական գրականութեան պատմութեան մէջ:

2.— Վահան Միրաքեանի գրական գործունեութեան ամբողջական պատկերը:

Գրական ի՞նչ գործեր է թողել սակայն Վ. Միրաքեանը, ի՞նչ է երգել, վրձինել 40 տարուայ ընթացքում: Անհրաժեշտ է նրա գեղարուեստական ողջ ստեղծագործութիւնը մի շրջանակի մէջ առնել եւ գրական հրապարակի վրայ գնել. մանաւանդ այսօր, երբ նա կանգնած է իր 40ամեակի շէմքին:

Նրա գրական գործունեութիւնն սկսում է 1887 թուին: Առաջին անգամ Տիգրան Նազարեանի «Աղբիւր»ում լոյս են տեսնում նրա «Երեւ Վարդ»ը, ա-

պա՛ «Մանկութիւն», «Սայլորդի երգը» եւ ուրիշ երգեր: 1897 թուին Թիֆլիսում լոյս է տեսնում նրա «Առանց լարերի» լիրիկ ոտանաւորների ժողովածուն. սակայն այդ էլ նրան չի բաւարարում և նա գրում է իր գլուխ գործոցը՝ «Լալուարի որսը» պոէմը, որ առաջին անգամ լոյս է տեսնում 1901 թուին «Մուրն» ամսագրում: Մյուսհետեւ նա գրում է մի շարք բանաստեղծութիւններ զանազան պարբերականներում — «Համբաւաբեր» (Թիֆլիս), «Գեղունի» (Վենետիկ), «Արագած (Փարիզ) եւ «Կարճիր ծիլեր» (Թիֆլիս): Վերջերս էլ նա առանձին գրքոյկներով լոյս ընծայեց խորհրդային կեանքից վերցրած պիէսներ, «Մանուշի Հարսանիքը», «Նոր Գիւղի շէմքին» (արժանացած է Հայաստանի գիւղատնտեսական գեղարուեստական գրականութեան մրցանակին), «Խոզարածի կինը» գիւղական դրամա, իսկ Հայաստանի Պետհրատը հրատարակեց «Լալուարի որս»ը: Նա ունի նաեւ մի շարք անտիպ գործեր, որոնցից ուշագրութեան արժանի են. «Եղնիկի Փերի», պոէմ, «Եփրատի կոյսը», պոէմ, «Նոր Սասուններ», ուր երգում է գիտութիւնն ու տեխնիկան, «Ուսուցչի օրագրից», «Կոմմունայի յաղթանակը», վերջին երկուսը գիւղական պոէմներ են:

Ահա այս է Միրաքեանի հայ գրականութեան թողած երկերի ամբողջական պատկերը, որի մէջ սակայն կեղրոնական եւ առաջնակարգ տեղ է գրաւում «Լալուարի որսը» վիպական բանաստեղծութիւնը:

3.— Հասարակական միջավայրը եւ ազդեցութիւնները:

Այժմ տեսնենք, թէ հասարակական ի՞նչպիսի միջավայրի ճնշում է Վ. Միրաքեանը, ի՞նչ ազդե-

ցութիւններ է կրել նա այդ ճիշտ վայրից եւ որ պիտաւորն է ի՛նչ աղբիւրներից է աղղուել իր պոէ- ճը գրելիս:

Վ. Միրաքեանի ստեղծագործութեան Հիմնա- կան առանցքը Լուուայ Լալուարի լանջերն են, Լալ- ուարի Հասարակական ճիշտ վայրը: Նրա Աւազը, Ալ- վարըը, Կարօն այդ ճիշտ վայրի Հարազատ ճնունդն են: Այդ սոցիալական ձթնոլորտումն էլ ապրել եւ ներշնչուել է պոէտը: Բայց դա պատահա- կան երեւոյթ չէ:

Հայրը լինելով անանապահ՝ տար- ուան ձեռն ճասն իր ընտանիքով անց էր կացնում Լոք, Լալ- ուար, Լեջան, Ղարա- խաջ սարերի բար- ձունքներում եւ Շու- լավէրի ճոփ եւ Կար- ձիւքար կուսական անտառներում, որ- տեղ եւ օրօրում է պոէտի օրօրոցը եւ անցնում է նրա ճան- կութեան եւ պատա- նեկութեան շրջանը: Այդ սարերումն էլ նա ճասնակցում է քոչ- ւորների ճասսայական երթին, օրերով անց- նում է անտառների



Վ. Ա. Հ. Ա. Ն. Մ Ի Ի Ա. Բ. Ե Ա Ն

ճիշտով, կարաւանների հետ կանգ է առնում սառ- նորակ աղբիւրների ափին, ահանատես է լինում սարերում շարունակ տեղի ունեցող բուրակուրներ- ըն, աղջիկ փախցնելու վրիժառութիւններին, սար- ւորների եւ բէկերի ընդհարումներին: Գիտում է նա սարւորների ջիրիղները, ճասսայական որսերը, լսում է թափառական աշուղների երգերը, հովիւ- ների շվիւների լեռնային անուշ ճեղեղիները: Այդ բոլոր տեսարաններով նա խորապէս ապրում է եւ տպաւորում... Առանձնապէս նրա երեւակայու- թեան վրայ ուժեղ եւ անջնջելի հետքեր են թող- նում լեռնային սքանչելի եւ հարուստ բնութիւնը, գիւղացիների եւ սարւորների կենցաղը, Ղարախաջի

բարձունքների առաջ տարածւող Փարվանա լիճը, վերջալսյի կախարղիչ տեսարանները:

— Ես շարունակ բարձրանում էի սարերի կա- տարները, — ասում էր նա ճեղ. — այնտեղից դի- տում էի հիասքանչ բնութեան տեսարանները՝ բարձրաբերձ լեռները, կանաչազարդ անտառները, Բորջալուի եւ Ղարաեազի տափաստաններն ու ա- րօտները, կանաչ Ֆոնի վրայ նկարուող ոչխարների ու գառների հօտերը, իսկ աւելի հեռուն՝ Կովկասի լեռնաշղթան իր ճիւղազարդ պար- թեւ գագաթներով, և այսպէս անվերջ ապ- րում էի կախարղիչ հորիզոնի հետ»...

Ահա թէ ինչու նրա պատկերած տի- պերն ու ճիշտ վայրը հարազատ են եւ գու- նեղ: Ահա թէ ինչու հարազատ կերպով ցոլանում է նրա պոէ- ճում նահապետական կենցաղով ապրող լեռ- նաբնակների ուրոյն կեանքը: Այնտեղ են եւ հովիւները, հով- ւուհիները, Լալուարի իգիթները, գիւղացի- ները: Գուք լսում էք նրանց երգերը, խօ-

սակցութիւնները, ճանօթանում էք նրանց յոյգերի, ապրումների հետ:

Այդ յետամնաց ճիշտ վայրում, սակայն, վճռա- կան դեր են խաղում նախապաշարումները, որոնք թագաւորում են ամենքի վրայ: Մի ամբողջ աշ- խարհ գալարում է, տարուբերում, ընկնում, լալիս կախարղական այդ ոլորտի ճէջ: Մի ամբողջ կեանք բազալուում է այդ ախտաւոր շրջանում: Այս բոլոր ճոճեանները Միրաքեանը գճել է վարպետ վրճինով:

4.— «Լալուարի որս»ի առաջին վարիանսը եւ բանաստեղծ Յովն. Թումանեան:

Վահան Միրաքեանի գրական բանաստեղծա-

կոտորում է բաժակը եւ պոկում կարուած գրերը: Այդ գրութիւնը շարունակուում է նրա ճինչեւ դպրոց յաճախելը: Ծնողները նրան իր եղբայրների հետ ուղարկում են գիւղի դպրոցը, ուր նրա վրայ ձեռն ազդեցութիւն է գործում իր ժամանակին յայտնի պրուզնիստ եւ լեզուագէտ Գրիգոր Տէր-Մելիքսեղեկեանը, որ ինքնաշխատութեամբ բազմակողմանի կրթութիւն է ձեռք բերում եւ ձարիզմի շրջանում դատարաններում բոլորովին ձրի պաշտպանում «քեասիբ» գիւղացիների իրաւունքները: Ուսուցչի աշխատասիրութիւնը եւ նրա դէպ ի կեալուր գիւղացիներն ունեցած սէրը Միրաքեանի վրայ անշքնջելի հետքեր են թողնում: Նրա ազդեցութեան տակ էլ նա իր առաջին ոտանաւորները գրում է այդ ուղղութեամբ, ինչպէս՝ «Սալորղի երգը», «Պանդխտի հրամեշտը» և այլն:

Այնուհետեւ նա ծանուած է Թիֆլիսի «Արհեստաւորաց դպրոցը», այնտեղից անցնում է «Տեխնիկական» միջնակարգ ուսումնարանը, ապա՝ «Ուսուցչական ձեռնարանը», ուր 1888 թուին աւարտելով՝ նուիրում է ուսուցչական ասպարէզին: Ուղիղ 41 տարի պաշտօնավարում է նա Անդրկովկասի դանազան քաղաքներում ու աւաններում (Ստեփանաւան, Նուխի, Նոր-Նախիջեւան, Թիֆլիս, Էջմիածին, Գեորգեան ձեռնարան, Երեւան) եւ զլխաւորապէս Շուլավերում:

Հետաքրքրական է նրա Էջմիածնայ Գեորգեան ձեռնարանի պաշտօնավարութեան շրջանը: Ուսանողները տեսնելով նրա ընկերական վերաբերմունքը ամենասերտ կերպով կապում են նրա հետ: 1894 թ. ուսանողները չգիմանալով ձեռնարանի փակ, կըզգիացած բէժիմին՝ ըմբոստանում են վարչութեան և ուսուցչական կազմի դէմ, որի հետեւանքով արտաքուում են 90 մեծահասակ ուսանողներ (նրանցից այժմ ապրում են Պօղոս Աբէլեան, Սրամ Չարըզ, Դերենիկ Դեմիրջեան, Շահճուրատեան (երգիչ), Արշակ Աթայեան): ձեռնարանի վարչութիւնը հալածում է նաեւ Միրաքեանին, համարելով նրան խռովութեան գործակից, հիմք բռնելով ուսանողութեան նրա հետ ունեցած կապը: Վաղարշապատի ոստիկանապետը խռովարար ուսանողների անուանացուցակը յանձնելով Միրաքեանին, առաջարկում է ձեռնարանի վերին յարկից ցած բերել եւ յանձնել ոստիկանութեանը, բայց նա հրաժարուում է եւ ընդձիշտ հեռանում ձեռնարանից:

Այժմ նա ապրում է Երեւանում եւ զբաղւում գրականութեամբ: Առանձնապէս ծշակում է «Եղնիկի Փերի» ձեռն պոէմը (1):

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թիֆլիս



ԱՆՏԻՊ ԿՏՈՐՆԵՐ
Վ Ա Ն Ա Ն Մ Ի Ր Ա Ք Ե Ա Ն Ի
“ԼԱՆՈՒԱՐԻ ՈՐՍԸ” ՔԵՐԹՈՒԱԾԷՆ (*)

Երգում են, խնդում, հազար բերանով
Լալուարի վիթխար հասակը գովում:

— Հէ՛յ, ջան Լալուար, էլի բարով —
Մութ ծորերով, մով լեռներով,
Հազար ծաղկանց անուշ բոյրով,
Բիւլբիւլներով — էլի բարով:

Գարունը գառ նոր է եկել —
Աղբիւր, առուն զի կարկաջում:
Ալ ու արվան շոր ես հագել,
Ամէն կողմից հիւր ես կանչում:

Թուխ ամպերով ծով երկնքում,
Թմբուկները մեծ խնդոյքի
Որոտներով գովքն են երգում
Գարնան անուշ հարսանիքի:

(1) 1924-5—1928-9 տարեշրջանում, որպէս վարիչ (սեսուչ) պատշտօնավարում էինք Երեւանի Քաղաքապետի «Ձերթիսկու» անուան բարձր սիպի դպրոցում: Այդ շրջանում Վ. Միրաքեանը բարձր խմբերում դասաւանդում էր Հայոց լեզու: Իբրեւ մանկավարժ նա հմուտ էր եւ բարեխիղին: Կարողանում էր դասաւանդութիւնը դարձնել հետաքրքիր եւ մասշնի, իսկ շնորհիւ իր ընկերական վերաբերմունքի ստեղծել էր սերս կապ ուսանողութեան, ուսուցիչների եւ վարչութեան հետ: Ա. ԵՐ.

(*) Վահան Միրաքեանի «Լալուարի որս»ի անխալ այն երգերը, որոնք պոէսից անկախ պատճառներով լոյս չեն տեսել պոէմի սկզբնական հրատարակութեան ժամանակ:

Չարդարեւ են նորահարսներ —
Անտառները զանգուր հագած.
Հարս ու փեսայ պար են բռնել՝
Շուրջը իրար ուսով ընկած:

Քարւաններով ձիգ շարեշար,
Զով լանջերիդ հիւր ենք գալիս.
Վառ դէմքերով բարկ արեւառ
Հարսանիքիդ ողջոյն տալիս:

Հէ՛յ, ջան կալուա՛ր, օջախըդ փառ,
Բինի ծուխը փարուած լանջին...
Գուգարք լեռներ շա՛տ կան, կալուա՛ր,
Դու մի հատ ես նըրանց միջին:

★ ★ ★

— Սարի հովի՛ւ, սարեր մարջան,
Չարդարեւ են ծաղիկներով.
Սարի հովի՛ւ, սարի եար ջան,
Քըշի՛ր հօտը արօտներով:

Ձա՛ն աղջըկե՛րք, չայիր-չիման,
Ծաղիկները շատ են սարին.
Քայց ոչ մէկն էլ, ա՛խ, ձեզ նըման
Ճար չի լինիլ սրախս եարին:

Երբ որ լցեն կաթով մարջան
Կաթսաները փըրփըրալէն,
Սարի հովի՛ւ, սարի եար ջա՛ն,
Ճար կը լինի ջան քո եարէն:

Ձա՛ն աղջըկե՛րք, ձեր սէրիցը
Կը թափառիմ արօտները.
Կաթ կը հանեմ սեւ քարիցը,
Մինչեւ լցնէք կաթսաները:

★ ★ ★

Մենւմենակ ես եմ
Սարերին թշուառ.
Ո՛չ բինա ունեմ,
Ո՛չ էլ ետրդ, կալուա՛ր:

Դաշտին թէ սարին
Քուն չունեմ, կալուա՛ր.
Կարօտած եարից
Լուր չունեմ, կալուա՛ր:

Որս կ'ուզեմ, կալուա՛ր,
Որ տանեմ եարիս.
Որս կ'ուզեմ, կալուա՛ր,
Ճար արա՛ դարդիս:

★ ★ ★

Կոյր աշուղներն էլ երգ յօրինեցին
Եւ նոր իգիթին զովաբանեցին.

Կարօն է զարկել
Բէկերից մեծին,
Կարօն է փրկել
Սիրուն Ալվարդին:

Թոյլերի պաշտպան,
Զըկայ նըմանը.
Օրհնել է նըրան
Աւագ որսկանը:

Թնդում են լեռներ
Երգերով գովքի.
Կարօն է՛, Կարօ՛ն
Արժանն Աւագի:

★ ★ ★

Ա Ղ Ջ Ի Կ Ն Ե Ր Ի Ե Ր Գ Ր

— Զինարի պէս բոյ ունես,
Սարի ծաղիկ հոտ ունես.
Ափսո՛ս քեզ, որ տըխուր ես —
Անուշ եարից լուր չունես.

էս սարերին ուխտել եմ,
Որ միշտ մատաղ ես կ'անեմ.
Թէ՛ զայ եարըս մեծ որսով,
Սէրըս նըրան բաց կ'անեմ:

Աւագ որսկանը սարին,
էսօր հանդէս բաց կ'անի.
Ա'խ, երանի՛ք էն եարին՝
Աւագութեանն արժանի:

★ ★ ★

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

— Լալուար սարից, գով սարից,
Ո՞վ չի գալիս իր բախտին,
Ո՞վ չի կապում էս ծառից
Սիրոյ յուշերն Ալվարդին:

Ամէն գարուն ու աշուն,
էս ծառի տակ, էս թումբին,
Մենք ենք գալիս միշտ յիշում
Սարի աղջիկ Ալվարդին:

Սէր է արել նա բիւում,
Սէր է արել կարօտով.
Նա սիրել է շա՛տ գուլում,
Նա ընկել է զընդակով:

Սրսկում է թոյնը ազատ մտքերին,
Մտնում պալատներ, խուզեր գեանափոր,
Հնչում ամէն տեղ միշտ կոռուի շեփոր:
Խառնելով իրար ծովեր, ովկիանոս,
Սուգում է նաւեր անդունդն արիւնհոս,
Եւ նըրա դիւթած մահն ու դաւերը
Հասնում են երկրի բոլոր ծայրերը՝
Արեւմուտք, Հարաւ, մինչեւ Արեւելք,
Ամէն տեղ ազատ անում մուտք ու ելք.
Անվերջ դաւերի, մահերի փորձով
Անցնելով ամէն արեան հընոցով,
Փնտռում է աւար ծովում, ցամաքում,
Խեղդելով ամէն մի լոյս ակունքում.
Եւ դեռ չաւարտած աւարը մէկի՝
Հնչում է փողը նոր արշաւանքի,
Եւ ամենուրեք կոռից անբաժան՝
Թնդում է նըրա չար խինդը դաժան:

★ ★ ★

Ես կը չափեմ, կը ձեւեմ
Բախտը ամէն աշխարհի,
Ամենուրեք կ'արշաւեմ—
Կամքն է այսպէ՛ս իմ՝ Նեոի՛:

Թնդանօթներն անբաժան
Աստուածներն են ի՛մ շահի.
Ծով ու ցամաք ատրուշան
Միշտ ի՛մ կամքով կը վառուի:

Ես կը ջարդեմ դարբեղար
Ըմբոստների խրոխը,
Որ զըլտրուի դարէ դար
Մեծ՝ Նեոական անիւր:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, ի՛նչ լաւ եմ,
Ամենուրեք կ'արշաւեմ.
Նըրան կ'առնեմ աւարի,
Միշտ էլ կ'երթամ պայքարի...

★ ★ ★

Եւ ասերային ծանրը երկունքով
Անցնում է շողը անհունի խորքով,

ՀԱՏՈՒԱԾ “ԵՂՆԻԿԻ ՓԵՐԻ” ԱՆՏԻՊ ՊՈՒՄՅԱՆ

Ն Ա Ի Ե Ր Գ Ա Ն Բ

Ն Ե Ռ Ը

Թոչում է տիտան Նեոը մանեման
Արար աշխարհի ճամբով անսահման.
Թեւթեւին տըւած մահին խաւարում,
Մահին փառք տալով, մահ է արշաւում.
Մահով ուռնացած՝ մահի թոյներով,
Սրսկում է դաւեր հազար գոյներով.
Թոչում է անզուսպ, անյաղթ, անվեհեր,
Տանելով իր հետ արիւն ու աւեր.
Ժանտ օծի նըման խայթում է երկրին,

Ալ արեան գոյնով եռում, բրորնկում,
Սար ու ձոր հազար գոյներով ներկում:

—Դո՛ւ, որ անվերջ դարերով
Աւեր ու մահ ես ցանում,
Այդ քո դաժան դաւերով
Պիտի մարիս քո բընում:

Մե՛նք կ'աւերենք հիմնովին
Քո ցընորքներն ապարդիւն,

Մե՛նք կ'աւետենք աշխարհին—
Նո՛ր կեանք, նո՛ր սէր, խնդութիւն:

★ ★ ★

Եւ լեռն այլայլուած ծագող Արեւից՝
Փարւում է ամուր խաւարի թեւից,
Եւ բորբ բոցերից սարսում է, դողում,
Խաւարը շարկած յետ յետ է սողում:

Երեւան

Վ.Ս.ՀԱՆ ՄԻՐԱՑԵԱՆ

ՏԻԿԻՆ ԳԱՆԼԵՌԻ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դրացուհի՛՜ Տիկին Գանլէն, վաթսուներեք
վաթսուներեք տարեկան փոքրիկ պառաւ
մըն է, կոկիկ, մաքուր, առանց ճեբմակի և
խնամքով սանարուած շագանակագոյն մա-
զերով, փոքրիկ շիւ աչքերով, սրտնք հա-
խընարութեամբ ակնոցին երկու քովերէն
երեսդ կը ընային աւելի քան ապակիներուն
մէջէն, ու հաճելի ժպիտ մը եւ իր դա-
սակարգին համար ընարուած շարժումներ
եւ խօսակցութեան ոճեր ունի: Բայց իրեն
հետ միայն առօրեայ քաղաքավարական
ձեւակերպութիւններուն մէջ պէտք է մը-
նալ եւ օդին երեւոյթներուն վրայ կար-
ծիք փոխանակելէ անդին չանցնիլ: Եթէ
դժբաղդութիւնն ունենաս վայրկեան մը
աւելի կանգ առնելու բակին մէջ կամ իր
գեանաւորիկի պատուհաններուն առջեւ, ու-
րոնց ետին խոշոր սեղանի մը վրայ հակած
կ'աշխատի ամբողջ օրը, այլ եւս օձիբդ
դիւրութեամբ չես կրնար ազատել:

Տիկին Գանլէն արդուկող է, և իր ար-
հեստակիցներուն պակասութիւնն ունի. շա-
տախօս է: Բայց չլարձէք թէ կը սիրէ ունէ

նիւթի վրայ խօսիլ. ո՛չ: Մէկ եւ միօրինակ
նիւթ մը ունի. — իր դժբաղդութիւններուն
պատմութիւնը. եւ ի՞նչ պատմութիւն...:

Բարդ, անսպառ, անվերջանալի, թուա-
կաններով հարուստ, իրաւագիտական, code
pénalի յօդուածներով գիտուն, հօտարնե-
րու, փաստաբաններու, դատաւորներու,
Procureur de la Républiqueներու անուն-
ներով լեցուն, ամբողջ շարք մը օրէնս-
գէտներու, անցեալ եւ ներկայ, որոնց հետ
Տիկին Գանլէն գործ ունեցած է տարիներէ
ի վեր— եւ որոնք ձեռք ձեռքի տուած են
զինքը խաբելու, մնանկացնելու, իր ամու-
սինը գերեզման իջեցնելու, իր տունը ձեռ-
քէն առնելու, զինքը առանց նեցուկի, ա-
ռանց օճախի ձգելու, եւ վերջապէս այսօր
զինքը իր այդ տարիքին մէջ այս ծանր
աշխատութեան դատապարտելու համար:

Այս հսկայական պատմութեան մէ-
ջէն, որ սրտայոյզ մանրամասնութիւններէ
ալ զուրկ չէ, այս ըսած եզրակացութեանս
հասնելու համար, մտքի ահագին ճիգի մը
պէտք ունիս արդէն. բայց թէ ինչօ՞ւ, ի՞նչ

պատճառաւ այդ բարձրաստիճան պաշտօնեաները ամբողջ ետեւէն ինկած են այդ փոքրիկ Մատամ Գանլէոնին, ահա թէ ո՞րն է ամենէն դժուարահասկնալին: Իր դրացիները ընդհանրապէս կը նախընտրեն չհասկնալ ընտել, եւ իր պատուհաններուն տակէն շուտով անցնելու համար, իրեն հետ՝ իր գաւառահայերը կ'ամբաստանեն...:

— Այո՛, այո՛, խաբեբաներ են այդ մարդիկը բոլոր, գողեր են, ոճրագործներ են...:

Բայց ես իր պատուհաններուն կամ դրանք առջեւէն անցնելու կամ կենալու ընտրութիւնը չունիմ՝. ես յարձակումը իմ տունիս, իմ սենեակիս մէջը կը կրեմ, եւ պէտք է զինքը մտիկ ընեմ, աւելի ճիշդ՝ ձգեմ որ խօսի. որովհետեւ այդ փոքրիկ գէմքը եւ շիլ աչքերը, որոնք իր պատմութեան առաջին բառին հետ ջրվէժի մը կը փոխուին, բոլոր ուժերս կը ջլտան եւ անկարող կը դարձնեն զիս պաշտպանողական կորովի միջոցներ ձեռք առնելու: Ուստի իր պատմութիւնը քառասուն անգամ լսած եմ, եւ վերջապէս քիչ մը հասկցած:

Հիմայ իր բոլոր նոտարներուն, փաստաբաններուն, ավուկներուն անունները գոց գիտեմ, մարդեր՝ որոնց մեծամասնութիւնը տասը տարիէ ի վեր հրաժեշտ տրւած են մեր անցաւոր աշխարհքին, եւ որոնք Մատամ Գանլէոնին գործին խառնուած ըլլալուն համար անմահ են այսօր...:

— Ո՛հ այո՛, Ռընօտէն «նօթէն»ը, որ մէկ միլիոն ֆրանք ձգած է իր ժառանգորդներուն... Տիւրիւի «ավուէ»ն, որ իրական պալատ մը ունի Մէօտօնի մէջ... Դը փութամ օգնութեան հասնիլ, որպէս զի խնայէ գոնէ այդ մանրամասնութիւնները, բայց ի գո՛ւր...:

Ամենէն անտանելին այն է որ Տիկին Գանլէոնին պատմութեան նիւթը մահաշուք է, իր սկզբնակէտէն մինչեւ վերջակէտը, իր բոլոր յեղաշրջումներուն մէջը:

Ահա՛ պատմութիւնը.
Լուսահոգի հայր Գանլէոն, պառաւին ամուսինը, Գլամատի գերեզմանատան մէջ

հող մը գնելու գաղափարը կ'ունենայ, իր եւ իրեններուն արժանավայել գերեզմանի մը համար:

Այդ մեռեալներուն թաղին մէջ կալուածատիրութեան կանխահաս հոգը, բաղդ չի բերեր մեր ծերունիներուն, որոնք այդ հողը գնած չգնած՝ դժբախտութիւնը կ'ունենան իրենց միածին գուակը, տաղանդաւոր ճարտարապետ մը, յանկարծ կորսնցնելու: Թաղման միջոցին հայր Գանլէոն այդ հողին հիմերուն մէջ փոքրիկ լիճ մը կը գտնէ: Ծեր ամուսինները իրենց որդին պէտք եղածին չափ կը սիրեն անոր մարմինը այդ գերագոյն լողանքին չենթարկելու համար. ուստի ուրիշ հող մը կը գնեն ուրիշ գերեզմանատան մը մէջ եւ մարմինը հոն կը փոխադրեն: Այդ տեղափոխութեան միջոցին՝ իրենց marbrierին հետ չեմ գիտեր ի՞նչ անհամաձայնութիւն մը կ'ունենան եւ խնդիրը գատի կ'իյնայ: Մեր ծերունի բարեկամները այդ գատը կը կորսնցնեն եւ գատարանին կողմէ հազար ֆրանք տուգանքի կը դատապարտուին:

Ռընօտէն նօթէնը այդ միջոցին է որ երեւան կուգայ իր բոլոր արբանեակներով, եւ վճիռէն վերջը, չկրնալով բաւական համոզիչ լեզու մը գործածել, այդ տուգանքը՝ օրէնքին անունովը՝ կուգայ ծերունի ամուսիններուն միակ կալուածին — տունին — ամսականներուն վրայ գրաւել: Գրաւում, անիրաւ գատավարութենէ մը յետոյ... այդ էր պակաս միայն: Հայր Գանլէոն կը բողոքէ իր տկար ուժերովը, Համայնքին, Procureur de la Républiqueին, դատաւորներուն, փաստաբաններուն, գեռ չեմ գիտեր որս'ւ գէմ, եւ այդ անիրաւ դատին բեկանումը կը պահանջէ:

Ճիշդ այդ միջոցին է որ Գանլէոն ամուսինները իրենց գեղեցիկ տունը ծախուելու համար, ինչո՛ւ. անօթի չմտալու համար, հայր Գանլէոն մեծ հարուածէն վերջը այլ եւս ի վիճակի չըլլալով աշխատելու: Պառաւին շատ արամբանական եւ համոզուած եզրակացութիւնն է այսօրուան, բայց կասկածէ դուրս է որ ծերունիները իրենց

տունը համով պատառի մը փոխարէն տուած պէտք է ըլլան:

Վերջապէս տասը տարուան զուր բողոքներէ, գանգատներէ, յոգնութիւններէ վերջը, հայր Գանլէն կը մեռնի վիշտէն, մահուան անկողնին մէջ իր կնոջը կտակելով իր գործին շարունակութիւնը: Պառաւը խօսք կուտայ, և իր խօսքը սրտանց տուած է, այնքան անոր նուիրականութեանը համար որքան այդ հազար ֆրանքներուն սիրոյն, զոր ժամանակին վճարած է եւ որոնց պէտք ունի այսօր — որոնք իրն են, կասկած չի վերցնել, եւ որոնք Ռընօտէն նոտարին գրասենեակին մէջ տասը տարիէ ի վեր կը բարդուին ու կը բարդուին իրենց տոկոսներով...: Ասիկա ինքը լաւ գիտէ, շատ լաւ գիտէ. մնացեալը իր գործը չէ. թէ դատարանը այդ տարին բեկանումը հազորդած է թէ չէ, թէ բեկանումը տեղի ունեցած է թէ չէ, — այդ բոլորը իր գիտնալիք բաները չեն եւ միեւնոյնն են իրեն համար:

Այնքան որ խեղճ հայր Գանլէնին մահուանը առթիւ, գորովոտ այրին ուզելով իր ամուսնոյն արժանի յուզարկաւորութիւն մը ընել, pompes funèbresի մը պաշտօնեային կը յանձնարարէ ծախս չինսայել. Ռընօտէն նոտարին քովը ուզածին չափ ստակ կայ...: Pompes funèbresի գիւրահաւան պաշտօնեան Տիկին Գանլէնին խօսքին կը հաւատայ, եւ անանկ հաշուեցուցակ մը կը պատրաստէ, որուն գումարը այդ յիշեալ հազար ֆրանքներն ալ կ'անցնի իր բոլոր տոկոսներովը մէկտեղ...: Բայց աւելորդ է ըսել որ յուզարկաւորութենէն վերջը պաշտօնեան յիշեալ նոտարին քովը մէկ սու մը չի գտներ...: Եւ տարիներէ ի վեր կը սպասէ որ Տիկին Գանլէն ինքը անձամբ

երթայ այդ թաղուած գանձը դուրս քշելու համար մութ եւ փոշոտ խաւերէն...:

Պառաւ այրին, շուարած, ուժասպառ, մղուած կոսիտ ստիպումներէն պաշտօնեային, որ իր գրպանէն վճարած է եւ այլ ևս չի կրնար սպասել, առտուընէ մինչեւ իրիկուն իր տէրտը մտիկ ընող մը կը վնասէ: Ասիկա կերպով մը իր կորուած ստակին տէրը կը դարձնէ զինքը: Իսկ գիշերները, մինչեւ ուշ ատեն, այնքան տաժանելիօրէն վաստակած իր հանգիստի ժամերը կը զոհէ աջ ու ձախ, կառավարական բոլոր բարձրաստիճան պաշտօնեաներուն երկար եւ անսպառելի նամակներ շարագրելով, զոր կը տանի յաջորդ առաւօտուն, հակառակ իր միջոցներուն նեղութեանը եւ նամակագրոջմաներուն սղութեանը, կը յանձնարարէ ստացագրով, որպէս զի «հասարակաց կողովին» մէջը չկորսուին:

Բայց այդ բարձրագոյն եւ ամենակարող պաշտօնեաներէն ո՛չ մէկը մինչեւ ցարդ Տիկին Գանլէնին օգնութեան չէ եկած, եւ ոչ խելք մը սորվեցուցած՝ զինքը այս անել վիճակէն դուրս հանելու համար:

Ամէն անգամ որ pompes funèbresի ներկայացուցիչը, Պ. Թապէնան, կուգայ եւ պառաւին պատուհաններուն տակը աղմուկ կ'ընէ, շատ մեղքնալով հանդերձ փոքրիկ խեղճ կ'ինքն չեմ կրնար չմտածել որ, միւսը, հայր Գանլէն, ան որ այլ եւս մեր ցաւի աշխարհքէն չէ, իր հազար ֆրանքները առած է դարձեալ կերպով մը, հոգ չէ թէ որո՛ն գրպանէն եւ ի՛նչ տեսակ գործածութեան համար...:

ԷԼԻՉ ՄԷՀՏԵՐԵԱՆ

1922 Օգոստոս
Գլամստ

Յ Ո՛Յ Ս

Յո՛յս, կանքեղիզ սակ պրլպրուն, գեղակեցուած արձանի պէս
Մարմարակէտ պատուանդանի մը կատար կանգնած եմ ես.
Իտեալիս պակներն աղուոր, դեռափրփիք ոս մը դալար,
Թեւերուս մէջ կը բարձրանայ լի ջերմութեամբ հոգեպարար:

Գլխուս պրսա՛կ մ'իմ իղձերես, երազանքի գարուն մ'ամբողջ,
Թարմ ծաղկներն աւետ լեցուն ու կոկոններ ու նոր բողբոջ.
Ապագայի ձայնը աղուոր, գրկորացող աղբիւր մեղրի,
Հոգւոյս ներմակ բաժակներուն՝ լոյս շիրերով կը կաթկրփի:

Արեւներու արեւն ձօնուած նառագայքներ երազնրկար
Իմ աչերուս շողերուն հետ կը պրսպրղան շուրջս անդադար,
Քուրումնաւէտ շուշանի մը բացուածքին մէջ դողդրղացող
Յոյներու պէս ոսկեաղախ, ցոլներու պէս անըջաւող:

* * *

Ո՛վ Յո՛յս, այսպէս, դուն այսօրիս վերես կուրծքին բալասան,
Զիս կը շոյես, կը փայփայես զեփիւռի պէս հոտեւան,
Ամեն ծաղկէ բոյր մը առած, ամեն լոյսէ նառագայք մ'հիր.
Բայց ալ բա՛ւ է ըսպասումը, դուն մօտեցի՛ր, շո՛ւտ մօտեցիր,
Քանի վաղանց երազի պէս դեռ չեմ հալուեր կեանքի գրկին,
Քանի դեռ ես կայծ մը ունիմ հրահրելու իմ կոյս հոգին:

ՆԱԶԵՆԻ

Մ Ե Ն Ո Ի Թ Ի Ի Ն

«La Solitude, c'est la Fécondité».

(Բարեկամուհիի մը նամակէն)

Ա.

Երբ նաւակս գետնին յանձնած՝ աչքերս կը գոցեմ աստղերուն դէմ, ահանջս կը դնեմ հողիս գրան — ինչպէս բժիշկը հիւանդին կուրծքին — ուշադրութիւնս կ'ամփոփեմ եւ կ'ուզեմ ինքզինքիս մտիկ ընել:

Հովիտը կը տարածուի շուրջս՝ ուր առուները անվերջակէտ նախադասութեան մը կէտագրութիւններն են: Մայրիները կը սողոսկին լեռներն ի վեր ու կը համբուրեն երկինքին կապոյտ երիզները: Երկինքը կափարիչի նման կը փակուի վրաս: Ու երբ աչքերը աւելի ուժով սեղմած կը գտնեմ ինքզինքս, ամէն ինչ խոյս կուտայ շուրջէս, համաչափ ընկրկումով, եւ ահա, երկինքի կափարիչին տակ՝ կը նմանիմ իր պատեանին մէջ մենաւոր շերամին:

**

Ո՛հ, ինչպէս ինքզինքս ուրիշներու մէջ կորսնցուցեր էի: Եւ զուր անձկութեամբ մը վնասներ եմ ինքզինքս ուրիշներու մէջ՝ կեանքի բոլոր ճամբաներուն վրայ. բոլոր շէնքերու գոներէն ներս: Մուրացկանի պէս գոնէ գուռ ինքզինքս մուրացեր եմ ու միշտ տառապել՝ ինքզինքիս տուած հարցումներուս պատասխանը ուրիշներէ ստացած ըլլալուս: Երբե՛ք, երբե՛ք ես իմ սփական Եսիս ձայնը չեմ լսած, ու խորհե-

լով մահուան՝ որով յղի են վայրկեանները՝ սարսուղացած եմ:

Երաժշտութեան ութնեակներու ո՛ր ձայնանիշին կը համապատասխանէ ան, որպէս զի անով հիւսեմ երգս:

Յանկարծ — երբ դեռ հազիւ մենութեան խաբկանքը ունեցեր եմ — Լուսինը կ'երկարէ իր ճառագայթէ մասները որոնք կը մերկացնեն զիս: Կը զգամ մարմնիս մերկութիւնը, տարածուած մարմանդին վրայ: Սարսուռը գօտի կը կապէ մէջքիս: Խոտերը մորթիս վրայ կը փսփսան, կ'ապրին... որդերը կը սահին դանդաղ, միջատները կը համբուրուին: Փոսուռայ մը կ'անցնի օդին մէջէն: Անիկա պիտի ուզէր իր վէտովտուն լոյսովը հրդեհել անջրպետը, բայց խաւարը կը կլանէ զինքը:

Եւ ահա շուրջս կը համախմբուին բնութեան անշունչ թէ շնչաւոր տարրերը տիեզերական պարով մը: Անոնք կը խլեն մտքիս լարուածութիւնը որ կը մխրճէր խորութիւններուս մէջ:

Հովիտին առուները — որոնք նախադասութեան մը կէտերուն պէս մսւնջ էին — ձայնանիշեր կ'ըլլան... Թափօր կը կազմեն միջոցին մէջ: Բուրգերու պէս անշարժ լեռները անապատէն վերադարձող ուղտերու կարաւանի կը նմանին: Մայրիներու անտանները դաշնամուրներ են — որոնք աստղերու նրբին մասներուն տակ ցայ-

գերգնեցու կը փոխուին: Երկրաչափական կտրուածքներով ածունեքը պալատներ կ'ըլլան լուսնի լոյսին տակ — ուր Պանը, միսմիսակ, սրինգ կը նուագէ: Հեռուն՝ գիւղերը կուրծքեր են՝ ուռած բազմերանգ եւ բազմապիսի երազներով:

Ձգացումը թէ Բնութեան բանակը կը հալածէ մեհուկներն, ինչպէս եղնիկը որսորդին առջեւէն՝ կը վերցնեմ սրունքներս ու կը փախչիմ սարսափահար:

Բ.

Դուռս փակ է:

Պատուհանս նոյնպէս: Փեղկերը քաշած եմ գիշերին դէմ ու տիեզերքի կախարդական համերգը անկարող է անկէ ներս թափանցելու:

Սենեակիս լուծեան մէջ՝ սարսուհեւ վազքս կարապին հոգեվարքը կը յիշեցնէ ինձի: Երեսս բարձին դէմ սեղմած անկողնիս վրայ երկնցած կը մնամ:

Կրկին մտքիս ականջները կը սրեմ ու կը մօտեցնեմ հոգիիս դրան: Անոր աչքերը սողնակին ծակէն ներս կը սպրդին: Հաւատքը ունիմ հոն ինքզինքս գտնելու: Այնտեղ է որ Եսս ապաստանած պէտք է ըլլայ: Իմ համեստ Եսս: Եթէ գտնեմ զայն, այնպէս պիտի սիրեմ, այնպէս պիտի գրկեմ, որ այլ եւս չպիտի թողում որ ուրիշները գտն կորսնցնելու անոր հետքը:

Ասիկա գերագոյն պահն է՝ ուր կամաց կամաց կը մօտենամ Եսիս, մինակութեանս գերագանց հաճոյքին: Բայց ինչպէս մեծ կ'ըլլայ զարմանքս երբ ականջներուս կը հասնին ներսի շշուկները: Արդեօք, սխալմամբ, տօնական օրով մըն է որ կը մօտենամ իրեն: Ի՛նչ պար է այս... Եւ ի՛նչ նուագ... Մտիկ ըրէք, պարուհիներ իրենց ոտքի ծայրերուն վրայ բարձրացած կը դայլայլեն Ատողիկին բուրումներէն գինովցած ստիակներու պէս: Եւ կը գիտեմ հոգիիս դրան սողնակէն, կը տեսնեմ զարմանահարաշ կոչունքը: Հոն է առհաւուր ինչը

իր ալեհեր մօրուքով: Նախնիքներս շինքեր են իմ մտեղէն ու հոգեղէն պալատս, որպէս զի անոր սրահներուն մէջ իւրաքանչիւրը իր գահը պահէ, ինքզինքը տեւել տալու համար աշխարհի վրայ: Հոն են թափթփած մօրուքներով ծերունի իմաստասիրութիւնները, զոր պարտադրեր են ինձի ճամբուս վրայ: Մէջտեղը սահուն ու պսպղուն շրջանակի մը մէջ անցած սէրերըս պարիկներու պարեր կը սարեն՝ որպէս զի մուտքս ըլլայ երագուն ու չխտովէ հանգիստը միւսներուն: Ասդին դափնեզարդ պատուանդանի մը վրայ անիծուած աստուածները նուագախումբը կը կազմեն: Բանաստեղծները՝ իրենց աթոռներուն վրայէն վերամբարձ՝ արտասանութիւններ կ'ընեն:

Ինչպէ՛ս դիմանալ այս սեսարանին... ինքզինքիս փնտռումքը ինքզինքիս ժըխտումին կը տանի զիս: Ո՛ւր եմ ես: Ինչպէ՛ս գտնել ճամբան որ զիս իմ մենաւոր խուցիս պիտի տանի:

Բոցերու լեզուները կուրծքիս պատերը կը ծեծեն: Արցունքի գաղջ կաթիլներ կը թրջեն սյտերս: Յանկարծ, պալատին մէջ յեղաշրջում մը կը կատարուի: Սարսափ: Փախուտ: Նուագը կը դադրի: Դէմքերն իրարու կը զարնուին ու կը փշրուին: Խուլ հռնդիւն մը: Ընդհանուր շփոթութեան մէջ օձէ գաւազան մը կը սպրդի կայծակի նման: Ձոյգ մը աչքեր կը սղառնան — անողոք, անգութ — կոր ու սուր մանգաղներու նման յօնքերու ետեւէն: Հմայողներու ամբողջ կը փախչի ինչպէս թաթառի բռնուած փոշիները:

Ու հոգիս կը նմանի պարահանգէսէ վերջի տակնուվրայ եղած սրահի մը, տխուր ու մեկամաղճոտ: Հոս հոն շրջուած աթոռներ, թուղթէ գոյնգոյն ժապաւէններ կը կախուին լուսամտիփնեքէն: Ճմլուած ու ստնակոխ քոնֆէթթիները կը փուլին գետինը՝ պատերազմի դաշտին վրայ ինկած զինուորներու պէս: Բիւրեղէ գեղաձեւ բաժակներ լքուած հոգիներու կը նմանին:

Գ.

Գիւղին միւս անկիւնը խրճիթ մը կայ, զոր բանադրուած արքայ կարծեցի: Բայց երբ մօտեցայ իրեն, ճագ-պանտը բռնեց մէջքէս ու զիս ներս տարաւ:

Գիւղին երիտասարդ բնակիչները հոս շաբթուան մը աշխատանքներն կը փոխեն չարլսթոնի կաթսային մէջ: Զոյգերը իյնալու վրայ եզոզ հոգեբու կը նմանին: Ճագը մտրտին է՝ որ կը փակչի, կը պլլուի անոնց մէջքերուն, կը կամթոտ գիտաբը, ու պարը սիրոյ կուռըտը մը կըլլայ:

Պօփս առջեւ նստած, ախանջներու ծորակները կը բանամ ու կամաց-կամաց կը լեցուիմ աղջիկներուն ճիչերով, ու մտեղէն նուագը ջիղերու մէջ անոնց համար տեղ կը պատրաստէ: Ամէնուն պէս ես ալ աղջիկ մը կը սեղմեմ կուրծքիս վրայ եւ իյնալու վրայ եզոզ հոգի մը նման կը դառնամ:

Ճագը սւղեղիս մէջ փլուզումներ կը կատարէ...

Հիմայ որ ամբողջութեամբ խաւնուեցայ ամբոխին եւ կամ ընդհանուր խանդավառութիւնը լուծեցի մէջս, պօփս առջեւ, լուռ, աչքերս փակ, կը զգամ թէ ճուղ մըն է որ ովկիանոսին անյատակ խորութիւններուն մէջ կը սուզի յամր:

Մոգական ի՛նչ խաղով մը մարդերու

միաձոյլ հոգին կը գրաւէ զիս, կը հաւաքէ մի՛նակութեանս ցրուած մասնիկները, կ'ամփոփէ զայն, կը ձեւակերպէ, կը վերածէ սերմնահատիկի մը՝ որուն տամուկ հովը կ'ըլլայ ինք եւ կ'ուռի, կ'ուռճանայ հոն, յորդելով ինքզինքէն դուրս ու ծայրէն գեղուղէջ ծիւեր կ'արձակէ:

Կը զգամ թէ հոգիս կ'ուռի, կ'ուռճանայ... անոր պատերը ընդլայնելով մարմինս շրջապատող մորթին հետ կը շփոթին: Ես կը դառնամ՝ միաբջիջ անասուն:

Այսպէս եմ զգացեր ինքզինքս մեծ քաղաքներու բազմութեան մէջ: Միթիւնկներու միջնուրտը, սրճարաններու ազմուկը եւ փողոցներու մարդկային հոսանքը եղեր են պարտէզս՝ ուր հոգիս իբրեւ սերմ ուռեր, ձեղքուեր ու ծիւ է արձակեր:

Ինչպէ՛ս մի՛նակութիւնս օգին մէջ ծիւտար:

Ներքին տեսողութեանս հեռագիտակները կը լարեմ, վարպետութեամբ մը՝ որ կարենամ տեսնել իմ ներքին ամենահեռուոր անկիւնները:

Ես կը տեսնեմ ինքզինքս՝ արգասաւորուած զինքը շրջապատողներէ:

Երբ ոտքի կ'ելլենք մեկնելու համար, հոգիիս շրթներուն վրայ թրթռացող երգ մը կը լսեմ: Այդ քաղցր երգը ես եմ, բեղմնաւորուած ծիւը՝ որ ինքն ալ բազմաթիւ ծիւերու պիտի վերածուի:

Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ

Մարտի, 1930

Ք Ա Յ Լ Ե Ր Մ ՈՒԹ Ի Ն Մ Է Ջ

Վ Է Պ

(Շար.)

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

Դ.

Դեռ կանուխ էր եկեղեցի երթալու համար: Նստաւ սեղանին առջեւ, զիրքերու պզտիկ դէպի ձը տակէն յուշատետրը առաւ: Արեւը կը փուռէր իր ամբողջ կունակին վրայ, ու ջերմութիւնը ձոճրակէն անցաւ երակներուն, եւ գոհունակ ժպիտի ձը փոխուեցաւ դէմքին վրայ: Օրագիրը կանգ կ'առնէր իր հիւանդանալուն: Շարունակեց:

«Անկողինը տասը օր զիս գամեց իրեն: Եթէ ժէրձէնը չըլլար, ո՛վ գիտէ այդ տասը օրը որքանով պիտի բազմապատկուէր: Ճշմարիտ գոհողութիւն ձըն է իր ըրածը: Բայց եթէ ես իր անխնայ հոգածութիւնը կը համարեմ գոհողութիւն ձը, վըստահ եմ որ իրեն համար բնական ու անխուսափելի բան ձը եղած պէտք է ըլլայ: Որքա՞ն երախտապարտ եմ իրեն: Այս զգացումը սակայն, որբան ալ խորունկ ու անմոռանալի, ստիպուած եմ այսուհետեւ ծածկել իմ ձէջս ու պէտք է զգուշանամ անկէ փշուր ձը իսկ յայտնել ժէրձէնին: Նախանցեալ օր սենեակէս ներս ձտաւ, ու թէեւ կ'ուզէր դէմքին վրայ ժպիտ ձը ձարկեցնել, աչքերը ձտահողութեամբ կը յորդէին: Եւ այդ օրը ինքզինքս արդէն բաւական լաւացած կը զգայի: Երբ ատիկա նշմարեց, դէմքը ձշմարտապէս պայծառացաւ, ու եկաւ նստիլ ձահճակալին վրայ, քովիկս: Ձեռքը առի ու սեղմեցի ուժով ձը.

— Որքա՞ն երախտապարտ եմ քեզի, ժէրձէն:

Ու նկատեցի ձէկէն որ անիկա խոժոռեցաւ Յետոյ տրտմեցաւ ու գլուխը հակեց:

— Հիւանդութեանդ է որ երախտապարտ պէտք է ըլլաս, պատասխանեց առանց ինձի նայելու:

Գիտեմ որ կը սիրէ զիս: Եւ իր սէրը կը զգամ անոր իւրաքանչիւր նայուածքէն, ձեռքի ամէն ձէկ շարժումէն, ձայնի առաջին իսկ շեշտէն: Հիւանդութեանս շրջանին երբ հարկ կ'ըլլար, քրտնած ըլլալուս, փոխուիլ, նկատեցի որ աչքերը կը գոցէր, բայց ձատները դող ունէին ձարմիտ վրայ: Մեր ձարձիները սակայն իրար կը ձանչնային արդէն: Ու այս զիշեր ալ, ամբողջ զիշերը, դեռ ձինչեւ քիչ առաջ...

Ինքզինքս բազմաթիւ անգամներ հարցուփորձեցի, առ այժմ ալ կը կրկնեմ ատիկա: Բայց ձիշտ ալ երախտագիտութիւնն է որ հսկայի ձը պէս, ու զօրաւոր լուսաւորուձով, կը յայտնուի: Ձար զգացում ձը չէ անշուշտ, անիկա շրջանակուած է քաղցր գորովով ձըն ալ. բայց ինչպէ՞ս գորով չունենալ անձնուէր բարեկամի ձը, ընկերոջ ձը հանդէպ: Միա՛կ ընկերը: Ձայն կորանցնելու վախը, ու այդ երկիւղին հետեւանքով զայն ի գին ամէն բանի պահպանելու ձիգը, իմ ձէջս յարուցած են զգացում ձը որ զիս կը ձղէ հաւատացնել իրեն որ փոխադարձաբար կը սիրեմ զինք: Թերեւս եթէ ժէրձէնը ձանչցած ըլլայի տարբեր պայձաններու ներքեւ, այն ատեն սէրը իմ ձէջս ալ հաւասար ուժգնութեամբ արձագանգ գտնէր: Թերեւս ինքնաբերաբար ձնէր: Սակայն այժմ արդէն հողը տուած է իր բերքը ու հոն նետուած օ եւ է հունտ դատապարտուած է կորսուելու, արեւ չտեսնելու:»

Ընդհատեց. արեւը ծանր բեռի ճը նման կը կշռէր կռնակին, ծոծրակին ու գլխուն վրայ: Փեղկերը գոցեց գրեթէ բոլորովին, ու նեղ բացուածքէն արեւը տախտակաձաձին վրայ նիզակի ճը նման գաճուեցաւ: Նստաւ հակառակ ուղղութեամբ, դէմքը՝ պատուհանին:

«Վաղը առտուընէ պէտք է որ լրջօրէն գործ ճը հետապնդեմ: Նախ հացս շահելու ու յետոյ ժէրճէնին պարտքս հատուցանելու համար: Կ'երեւակալեմ իր գայրոյթը ու ճիանգամայն տրտմութիւնը, եթէ այս տողերս կարենար կարգալ: Քիչ առաջ իրեն կը խօսէի այս իմաստով. կը խորհէի լաւ, պատշաճ բան ճը ընել:

— Կը ներեմ այս անգամ, ըսաւ շեշտակի աչքերուս նայելով:

Կ'ուզէր տակաւին խօսիլ, բայց յուզուճէ՞ն թէ տարբեր զգացուճէ ճը, չկրցաւ բռտերը քով քովի բերել: Այն ատեն չհասկեցայ զինքը: Հիճա ալ տակաւին կը դժուարանամ բացատրելու իր հոգին: Վերջապէս սակայն հիւանդութեանս ամբողջ շրջանին խնամեց զիս ճիաճամանակ ե՛ւ նիւթապէս: Սենեակին վարձքիս ճասին չ'ուզեր անգամ ակնարկութիւն ճը իճանալ: Եւ աւելին. կը պարտադրէ որ ճիւնչեւ գործ ճը ճարելս չխորհիմ հացի ճասին: Ինճի հոճար այս դրութիւնը անհուսօրէն նուատացուցիչ է: Բայց ան չի հասկնար որ անօթի մնալը ես նախընտրելի պիտի գտնէի: Ու ես ստիպուճմ եմ զայն չվշտացնելու համար ինքզինքս ճահացնել: Անշրպեա ճը կայ իճ եւ ժէրճէնի բարոյական ըճբընուամերուն ճիջեւ: Լչբերը ապշութենէն դուրս պիտի գային եթէ «ճահացուճ» բառը ըսէի իրեն: Երեւոյթը սովորական, շատ բնական է իրեն համար: Կ'երեւի յառաջացաճ քաղաքակրթութիւնը այդպէս կ'ընդունի: Ճատ ալ հաճելի պիտի չըլար ինճի համար վայրենիի տեղ անցնիլը:

Ինչ ալ ըլլայ սակայն, պէտք է կերպ ճը կարգադրել այս հարցը: Արեւմուտքի ճէջ յայտնի է որ Արեւելքը բարճ չունի: Ասիկա չի նշանակեր սակայն որ արեւը շրջաճ է իր ուղին: Գիտելու ճէէն է կախուճ: Կրնաճ սակայն փոխել իճ եղանակս: Կամ պէ՞տք է որ փոխեմ: Եթէ ատիկա անհրաճեշտ, անխուսափելի իսկ ըլլար. դեւ շատ կանուխ է այս ճասին ճամճելը:

Ես կարօտը ունիմ ճեր տրամօրօր ճեղեղինե-

րուն: Երակներս կը յորդին առաքելական շարականներով: Հոս հասնելէս ի վեր եկեղեցի չէմ գացաճ: Անդիճողրելի է այլ եւս կանչը: Երթաճ, ու թող ականջներս, գանկս լեցուին ճեր պօթքներուն թաղճոտ երաճշտութեամբ: Այսօր խունկով զինովնալ կ'ուզեմ:»

Յունուարի ճէջ գարնանային այս օլը բարենշան երեւոյթ ճը համարեց Արաճ, ու ինքզինքը տղու ճը պէս երջանիկ զգաց: Զրկանք համարեց հանրակառք նստիլը ու բալեց ճինչեւ Սէն-ժաք փողոց: Մատուռին դռնէն արաճասնուճ «անտես ճի՛ առնէք»ը զինք առաւ իր կռնակը ու փոխարեց Ոսկեղջիւրի իր եկեղեցին: Պահ ճը վարանեցաւ բակին ճէջ, ու հոն յաճեցող ճարդոց ճէջ ճասնօթ ճը չնշճարելուն գարճացաւ նախ: Զէ՛ որ ճիշտ հոս կը հաւաքուէին ինքը, Յակոբ, Օննիկ եւ Ստեփան:

— Որոշաճ եմ Փարիզ ճեկնիլ, հոս ինճի համար չէ...

Կը խօսէր ճէկը իր կուշտէն: Ու պատրանքը չքացաւ, խնդաց ինքնիրեն Արաճ, ճտաւ եկեղեցի:

Պատարագը նոր կը սկսէր: Լեցուն էր ճատուր: Յառաջացաւ քանի ճը քայլ, աչքերը դարճուց չորս կողմ ճանօթ ճը նշճարելու յոյսով: Խորանին վրայէն սարկաւագին «Օրհնեա ճէր»ը սակայն հատաւ եւ իր ուշադրութիւնը գրաւեց:

— Աստուճ օրհնէ, թո՛ղ օրհնէ, սիրելիս, ճողթեց Արաճ, ճաթաճ ճայնդ թող բանայ:

«Մի ոք յերեխայից»ին Արաճի ջղայնութիւնը հասաճ էր ճայր աստիճանի: «Մարճին ճէրունական»ին քիչ մնաց պուար: «Սաղճոս ասացէք»ը սարկաւագը «խա՛ջ» դարճուց: «Հրեշտակային»ին Արաճ զլուխը կարեկցութեամբ շարճեց.

— Ա՛խ, ականջդ խօսի, Զուհայեա՛ն, հոս ըլլայիր գոնէ ճէ՛կ պատարագի: Երուսաղէճէն Փարիսեցիները դուրս վտարող աւելը հոս ալ ըլլար, տեղին չէ՞...

Իրենց պատարագը, Զգաց իսկ որ շրթները բացուճմ են ու ճայնը հետղհետէ կը բարճբանայ: Զնշճարեց որ շուրջինները իրեն կը նային տարօրինակ աչքերով: Յանկարճ սթափեցաւ ճէսքի ճը իր ուսին հպուճէն:

— Զարե՛հ:
— Արա՛ճ:

Բակ ելան աճապարանքով: Հաճբուրուեցան ուրախութեամբ: Կեղրոնականի դասընկեր, վերջին տարին քով քովի կը նստէին: Զարեհ ձեկնած էր Արամէն առաջ: Կանգիտանար սակայն անոր Մարսէյլ գտնուելը: Գաղթը արդէն տեղի ունեցած էր այնպիսի պարագաներու տակ ու այնքա՛ն իրարանցուծով որ ժամանակ ու տրամադրութիւն ունեցած չէին իրար տեղեակ պահելու իրենց ձեկնուծէն:

- Ըսել է ամիսը անցաւ որ Հոսս ես:
- Դեկտեմբերին վերջերը Հասայ:
- Ինձձէ շուրջ ամիս ճը վերջ ուրեմն: Զարմանալի է որ իրար չենք Հանդիպած:
- Ու ես որ ծինակութեան ձեջ կը չարջարուէի:

- Բարոյովին ծինակ ես:
- Միս-մինակ: Իսկ դո՛ւն:
- Սկիւտարէն ընկեր ճը ունի՞մ որ ինձձէ առաջ Հոսս եկած էր: Ունէի իր Հասցէն: Ուղղակի իրեն եկայ արդէն:
- Երանի՛ր քեզի:
- Կը կրկնե՞մ. զարմանալի է որ աւելի կանուխ Հանդիպած չենք իրար: Ես ամէն կիրակի եկեղեցի կուգամ...

- Այո, բայց ես դեռ առաջին անգամն է:
- Ատո՛ր Համար... Սխալ ըրեր ես սակայն: Ասիկա կ'ըսեմ ոչ թէ կրօնաճող ճը ըլլալուս Համար, այլ որովհետեւ ծանօթի ճը Հանդիպելու ծիակ ճիջոցը եկեղեցին է:

Փողոց ելան: Արամ ճուռցաւ ամէն ճտահօգութիւն, Ժէրձէնն ալ ճուռցաւ: Ուրախութիւնը զոր իրեն շնորհեց այս Հանդիպումը, ատենի ճը Համար առաւ զայն ամբողջութեամբ իր ճեջ: Գարձաւ Կեղրոնականի տղան: Ուրախ զուարթ խօսակցելով Հասսան Քուր-Պէլլէօնս, Զարեհ տարաւ զայն Café Phocéén:

- Այս սրճարանը բնաւ չէի՞ր եկած:
- Ու Արամի ժխտական պատասխանին վրայ.
- Մենք ամէն օր կէսօր իրիկուն Հոսս կ'ըլլանք: Եղուարդը քիչ վիթջ կը Հասնի. բոլորս ճէկ կը ճաշենք:

Երկու ամիս կ'ըլլար որ Զարեհ Մարսէյլ կը գտնուէր: Գորձ ճը գտած չէր տակաւին: Հայրը կը գրէր որ չճտահօգութի զրամի ճասին:

- Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, Հայկ տեսաւ Արամ ըսել. ճինչ ճտքէն կը խորհէր.

— Երջանի՛կ տղայ, որ դեղարանատէր Հայր ունիս...

Իր Հայրը բանուոր էր. լալու չափ յուղուեցաւ այս յիշողութեան վրայ: Զարեհ կը շարունակէր:

Կը բնակէր Կեղրոնարանական Պարտէզին փողոցը: Հրաշալի կին ճը. ամուսինը նաւորդ է, գրեթէ ճիշտ բացակայ: Բայց աստուածային կին ճը, կրկնեց աչքերը ցանկութեամբ շողացնելով: Ու կարճես իր սպասած Հետաքրքրութիւնը չգտնելով, ճանրացաւ.

— Օր ճը ճեզի տանի՞մ ու տեսնես: Մարձին ճը ունի ո՛ր... ճուկ, ճո՛ւկ: Խերս կ'անի՞ճէ կոր սակայն սատանան, աւելցուց գրեթէ պարճենկոտ:

— Poule ճըն ալ դուն չգտա՞ր, Հարցուց Արամին:

— Հարցնելը աւելորդ է, յարճար նկատեց պատասխանել Արամ կարեւորութիւն չտուող շէշտով ճը:

- Կրնա՞նք տեսնել:
- Ուզած պահուց:

Poule եղար, դո՛ւն ալ poule եղար, Ժէրձէն: Խղճախայթի պէս բան ճը ունեցաւ Արամ, որ սակայն երկար չտեսեց: Կնիկս չէ՛ ես, ճտածեց ինքնիրեն, որպէս ինքնարդարացում: Ու ճէկէն անդրադարձաւ, Հասկցաւ որ երբե՛ք սէր պիտի չկըրնար զգալ այդ կնոջ Հանդէպ: Խե՛ղճ, խե՛ղճ Ժէրձէն: Պա՛հ, ի՞մ երիտասարդութիւնս չի՞ բաւեր ճիթէ իրեն: Անշուշտ, անշո՛ւշտ, պատասխանեց ճայն ճը ներսէն: Ծատ է անգամ, աւելցուց այդ ճայնը: Բայց Արամ չուզեց աւելին ականջ տալ, դուրս եկաւ նորէն, եւ ուշադրութիւնը տուաւ Զարեհին:

— Հրաշալի երկիր ինկած ենք, Արամ: Հոստեղի կիները խենթ կ'ըլլան թուխերուն Համար: Պիտի ապրինք, եւ փառաւոր տեսակէն:

Ա՛յդ է ճիայն ապրիլը. պիտի պատասխանէր Արամ, բայց չխօսեցաւ երբ նշճարեց Զարեհի յափըշտակուած արտայայտութիւնը: Թերեւս ճիճաղի թուէր անոր իր այս խորհրդածութիւնը: Նախընտրեց ուրեմն լուս միալ: Հիճայ որ ընկերոջ ճը կը Հանդիպէր, օտարութեան ու առանճնութեան ճեջ, էականը ճէկը ունենալն էր: Եթէ այս ճիջոցին Հանդիպէր իրենց թաղին ստահակներէն ճէկուն իսկ, որուն բարեւ անգամ տալէ կը խուսափէր այն ատեն, սրտի դեղումով պիտի ճօտենար անոր ու իր օրերը Հետը բաժնէր: Արամ կուգար այս երկիրը,

իր ձեռք կրելով ուրիշ երկիր ձր, եւ ասիկա այն-
քա՛ն աւելի խորապէս որքան կը պատահի որոշ
զարգացումի հասած անձերու համար: Հեռու այդ
երկրէն, բայց եւ այնպէս իր իւրաքանչիւր նետարը
կառահած մնացած էր անոր: Նոյն հողին ընկեր ձր
հաշիշի դեր կը կատարէ: Ժէրձէն, հակառակ իր
բովանդակ զոհաբերումին եւ պարզեւած ինքնածո-
ւացման ժամերուն, դարձեալ սովորական պահերուն
անկարող պիտի դառնար փուզման ահագնութեան
հանդէպ զինք՝ անզգայ դարձնելու: Առանձինն՝ պի-
տի խորտակուէր: Բանակը երգելով կը նետուի
թնդանթններու բերդին դէմ, ատոր բովանդակ գի-
տակցութիւնը ունենալով հանդերձ:

— Ահա եւ ձեր Պէրպէրեանցի Եղուարդը, ը-
սաւ յանկարծ Ձարեհ ցոյց տալով Արամի տարեկից
երիտասարդ ձր որ դէպ ի իրենց սեղանը կ'ուղղուէր:

Կէս ժամ չանցած՝ Արամ եւ Եղուարդ կարծես
տարիներէ ի վեր երկու ձտերիմներ եղած ըլլային:
Եղուարդ կը խօսէր առատ եւ համակրելի անկեղ-
ծութեամբ ձր: Անսպառ բարութիւն ձր ջրվէժի
նձան կը ցայտէր անոր էութենէն: Արամի համար
շատ դիւրին եղաւ անոր հողին անձիջապէս իսկ
կաշալ անոր աչքերուն ձեռք: Ճանչցուելու համար
խորացում պահանջող ձեկը չէր Եղուարդ: Միամիտ
ու հաւատացող: Աճէն հանդիպածին անինայ
շուայութեամբ ձր ինքզինքը բացող ձեկը: Բարու-
թիւնը երբ յորդահուան է, զի՞մ ձրն է որ կը խեղ-
դէ իր ձեռք ձիւս բոլոր գիծերը: Խոշոր առաւելու-
թիւն ձրն է, ու ձիւստամանակ յաճախ թերութիւն
ձր. որովհետեւ զայն ունեցողը առանց պաշտպա-
նութեան կը յանձնէ գիծացիւնին: Լուակեաց, ձութ
ու անժպիտ, Արամ սիրեց Եղուարդը: Թուխերը գրե-
թէ ձիւտ խարտեաշները կը սիրեն ու փոխադար-
ձաբար: Մէկը իր պակասը կը գտնէ այսպէսով
ձիւսին ձեռք ու կ'աճեցնուի:

— Հոս մնալը հրաշալի պիտի ըլլայ, կը խօ-
սէր Եղուարդ: Անձիջապէս ձիւսութիւն ձր կը կազ-
մենք: Երէկ այս ձասին կը խօսէի «Հայաստան»ի
խմբագրին հետ: Անյուսալի շարժում ձր կրնանք
ստեղծել: Կրնանք որ ձրն ալ ձեր թերթը ունենալ:

- Երկսեռ պիտի ըլլայ անշուշտ, չէ՞:
- Աճբարիշար նայէ, ունեցածդ բաւա-
կան չէ՞:
- Իրարձէ ի՛նչ համ կ'ելլէ...
- Աճթ ձ, Ձարեհ, կնածուութեանդ չափ

ձր գիր: Լուրջ խօսակցութեան ձր պահուն գտնէ
զսպէ՛ ինքզինքդ:

Ու շարունակեց ձանրանալ այս նիւթին վրայ,
երկար ու ամենաչնչին ձանրածասնութիւններով:
Ձարեհ ձտիկ կ'ընէր զայն ձերթ ընդ ձերթ նշանա-
կալից անարկ ձր ուղղելով Արամի: Այս վերջինը
պիտի ուզէր սակայն որ Եղուարդ խօսի առանց
զարգրի. անոր խոնդավառութիւնը զովացուցիչ ու
վերանորոգիչ ըմպելի ձր պէս ուճալ ուճալ կը ներ-
խուժէր իր ձեռք ու կ'այլափոխէր զինք: Մինչեւ որ
հասաւ իր հուժկու երեւակայութեան: Այն ատեն
Արամ Եղուարդի բոլոր խօսքերը վերածեց գրեթէ
շօշափելի պատկերներու: Ստեղծեց նոր իրականու-
թիւն ձր որ ձուցնել տուաւ գոյութիւն ունեցողը:

Ճաշին հետ իրենց խմած առատ գինին ան-
զրադարձումի ամէն հաւանականութիւն վերցուց Ա-
րամէն: Իրիկունը ձինչեւ ուշ ատեն մնացին ձիւս-
սին: Բաժնուելու պահուն Եղուարդ հասցէն տուաւ
եւ պնդեց որ անպայման հետեւեալ որ հանդիպի
իրեն: Ինք ամէն որ հօրեղբորորդուն հակիթի
խանութը կը գտնուէր, ուր պիտի սպասէր իրեն
անպայման:

Ե.

Ընդարձակ սրահ ձր, ամբողջ երկայնքին, ու
գրեթէ բոլոր լայնքը գրաւող երկար սեղաններով:
Շուրջ հարիւր յետուն աշխատաւոր, որոնց հազիւ
տասը հողին այր: Իւրաքանչիւրին առջեւ ձե՛ծեկ
պարապ պարկ, որ պիտի լեցուէր սեղաններուն վը-
րոյ բրգացած լուբաներով սարկուելէ յետոյ: Առ-
տուան ժամը ութին գործի կը սկսէին, ու կը վեր-
ջացնէին իրիկուան ժամը եօթնին: Պարկը հինգ
ֆրանք կը վճարուէր: Բաւարար օրապահիկ ձր
ապահովելու համար նուազագոյն երեք պարկ լե-
ցնելը անհրաժեշտ էր: Պէտք էր հետեւաբար ա-
րագաշարժ, խիստ արագաշարժ ըլլալ: Արամ առա-
ջին օրը հազիւ կրցաւ ձեկ պարկ լրացնել: Ու
զարմացաւ որ իր կուշտի Սպանուհիները որոնք
անդադար շաղակրատած էին, իրենց հինգերորդ
պարկը կը լեցնէին արդէն: Արամ իր դիմացը ունէր
Վարդուհին, տասնըութ տարեկան հազիւ, սեւ աչ-
քերով, անուշ աղջիկ ձր: Միեւնոյն պանդուր կը
ընակէին, ու ան էր արդէն որ զինք այս գործին
բերած էր: Կը խօսէր շարունակ. իր խօսակցու-
թիւնը ընդձիջելով ձերթ ընդ ձերթ երգով ձր:

Աքսորին ծնողքը կորսնցուցած էր: Զինադա-
դարին շատ ճր ուրիշներու նման ինքզինքը որբա-
նոցի ճը ճէջ գտած էր: Այժմ եկած էր Մարտէլլ, և
կը սպասէր Ածերիկա վերջին պահուն գտնուած
ազգականի ճը ճօտ երթալու համար անհրաժեշտ
պաշտօնական ձեւակերպութեանց լրացումին: Պա-
րապ սենեակը մնալէն կը նախընտրէր աշխատելը:
Հաճոյքի համար է որ կուզար աշխատանոց:

Անդադրուծ խօսակցութիւնները, զանազան
տեղերէ երգուող եղանակները ու սեղանէ սեղան
նետուող բացազանչութիւնները կազմած էին ճշտա-
տեւ ժխոր ճը որ կարծես ճեքենաներու աղճուկը
կը փոխարինէր այս սրահին ճէջ:

Արամ երբ առաջին անգամ նստաւ սեղանին
առջեւ, ջիղերը անօրինակ ցնցուծ ճը կրեցին, ու
ինքզինքը զգաց կորսուած անճայր տարածութեան
ճը ճէջտեղ: Աչքերը ճնշմարեցին սրահին սահման-
ները, ու կարծես գահավիժած ըլլար անդունդի ճը
ճէջ ուր դատապարտուած էր անորոշ ժամանակով
ճը մնալու: Խօսողներուն ճայները ականջէն ճտան,
բայց բառերը ուղեղին ճհասան: ճրտծութիւնը այն-
քա՛ն ճեծ եղաւ եւ յորճանային, որ յորդեցաւ, տա-
րածուեցաւ դէճքին վրայ ու աչքերուն ճէջ: Գլուխը
հակած, ճտաները դժուարութեամբ կը շարժէին, ու
ճէկէ աւելի անգամներ ճարուր լուրիան ճփոթեց օ-
տար ճարմնի ճը հետ: Երբ նայուածքը հետեւեցաւ
ճաքուած լուրիաներուն ու անոնց հետ ինկաւ
պարապ պարկէն ներս, խորունկութիւնը սարսա-
փագրու եղաւ: Իրեն թուեցաւ որ յաւերճութիւն ճը
անհրաժեշտ պիտի ըլլար ճայն կարենալ լեցնելու
համար: Ու անոր ճէջ նետուած իւրաքանչիւր բուռ
լուրիային հետ, ան պիտի հոն թաղէր պատառ ճը
երիտասարդի իր սրտէն, ափ ճը իր ցանկութիւննե-
րէն ու փունջ ճը իր երազներէն:

Վարդուհիի ներկայութիւնը իրեն համար փր-
կարար եղաւ սակայն: Նշմարելով Արամի ընկճուած
արտայայտութիւնը, կը հետաքրքրուէր.

— Ի՞նչ կը ճտածես ատանկ խորունկ-խորունկ:
Այնքա՛ն բարութիւն, ճտահողութիւն կային անոր
ճայնին ու նայուածքին ճէջ որ Արամ գորովով
ճպտեցաւ անոր:

— Գժուար գտար անպատճառ ճաքերը:
Բայց կամաց-կամաց կը վարժուիս: Ճատ բարակը
նայելու սէտքը ճունիս արդէն: Նայէ՛, ինճի նայէ
անգամ ճը:

— Կնոջ ճը համար դիւրին գորճ է ասիկա,
բայց երիկճարդու ճը համար... ինդալիք է, ճէ՞:

Ու ինդաց ճլալու համար: Վարդուհի կը
խօսէր առանց յոգնելու, ու ճանուկի ճը հետա-
քրքրութեամբ իրարու ետեւէ հարցումներ ուղղե-
լով: Արամի տխրութիւնը անհետացած էր. ան
ճուցաւ նոյն իսկ իր վիճակին գիտակցութիւնը, ու
Վարդուհիի դուարթութիւնը ճինք ալ վարակեց,
պատասխանեց սիրով ու ճպտուն:

Արամ նշմարեց որ իր շուրջիները կը յաճա-
ռէին հետաքրքրութեամբ իրեն նայիլ: Կային որ
իրարու ճէջ կը խօսէին նշանակալից ակնարկներով
ու ճերթ ընդ ճերթ ինդալով: Աճենէն աւելի յաճա-
ռողը ճիճացի շարքին քիչ ճը վերօք նստած երի-
տասարդ կին ճըն էր, շատ թուխ, գրեթէ սեւ, որ
կը ճատնէր անոր օտարական ճը ըլլալը: Արամի
անճիջապէս աջին ճորս Սպանուհիներ էին ճէճ-դի-
ճաց, որոնք անընդհատ կը խօսէին իրենց լեզուով,
ճպիտը անպակաս, ու նոյնքան ալ անպակաս քըր-
քիջներով: ճիշտ իր կուշտի Սպանուհին ճերթ ընդ
ճերթ գողունի ակնարկ ճը կը սահեցնէր իր կողմ
եւ իսկոյն կը դառնար երբ Արամ իր աչքերը կը
դարճնէր անոր: Չախին տարեց Խտալուհի ճը կար
որ սկսաւ գէշ Փրանսերէնով ճը խօսիլ հետը: Վար-
դուհի ցած ճայնով սկսաւ երգել.

Մի լար բլբուլ, փեղ մի քանջօր
Որ փոքորիկն անիրաւ . . .

— Թա կեօ՛ւ, պուռաց անոր քանի ճը կարգ
վարէն լրբենի արտայայտութեամբ կին ճը, անպատ-
կառօրէն ինդալով:

— Մե՛ռս, նետեց Վարդուհի անոր, ճիշտ
ճպտուն, ու նոյն բարի եւ հաճակրելի արտայայ-
տութեամբ. ու շարունակեց իր երգը ճարճանալի
անփութութեամբ ճը.

Կ՛անցնին օրեր, կուգայ կրկին
Մի նոր գարուն վարդաբեր...

Մինչ՛

— Մա՛նճ-լա, կը փոխադարճէր անդիէն կինը
բերանը լայն-լայն բացած: Բայց իր ճայնը գրեթէ
կորսուեցաւ ընդհանուր աղաղակի ճը ճէջ որ բար-
ճրացաւ գրեթէ լոյսը սեղաններէն.

— Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...

Դեռ չվերջացած, ծափեր բարձրացան, ու զիլ ձայն ճը կը պռուր բոլորէն լսուելու աստիճան ուժով.

— Պի՛ւ... պի՛ւ...

Մէկէն սակայն ծափ ու բացագանչութիւն դադրեցան. ֆոնքրքրեքրեք, յօնքերը պոստած ու յաղթ հասակը ցցած, կը հասնէր.

— Վուայթօ՛ն, վուայթօ՛ն, խենթեցա՞ք բուրդ ալ, թէ ոչ օդ առնելու պէտք ունեցողներ կան ձեր ձեջ...

Մասները ձեքենաներու արագութեամբ կ'աշխատէին, ու գլուխները հակ, զսպուած խնդուքները չոր հագերու նման ներթ ընդ ձերթ կը պուծկային:

— Զարձանալի թող չթուի քեզ ասիկա, — կը բացատրէր Վարդուհի Արամին: Սովորական բան ճըն է, ու օրուան ձեջ այս տեսակ պատահարներ քանի ճը անգամներ տեղի կ'ունենան: Պիտի վարժուիս:

Կէսօրին Արամի պարկը քառորդովը լեցուած չէր տակաւին: Նկատելով գայն, անիկա յուսահատօրէն ժպտեցաւ: Յետոյ, ամենուն նման ճաշեց: Հաց ու պանիր բերած էր ծիսախն. ճրարը ծունկերուն վրայ պահած, ամջնալով արագօրէն լրացուց: Իր շուրջը բոլորը շարեցին քանի ճը տեսակ ուտեստեղէններ, ու անխուսափելի գինիի շիշը: Վարդուհին անգամ բազմաթիւ ճոխ ուտելիք էր բերած: Բոլորը կը ճաշէին դուրսը ու իր ճակատագրէն գոհ ձեկու ճը երեւոյթով: Անոնց այն ուրախութիւնը նախ եկաւ իր դրութեան դառնութիւնը շեշտուած գիծերով զգացնել իրեն, բայց քիչ վերջ, զարձանալի հակադրեցութեամբ ճը, չքացուց գայն, ու իր ձեջ ալ ստեղծեց նմանօրինակ գոհ ու թեթեւ արամագրութիւն: Հաճոյք զգաց զիտելով աշխատաւորուհիներու այս բազմութիւնը, լսելով անոնց հնչեղ ճիծաղները, ու հետեւելով անոնց երջանիկ շարժումներուն: Ինք ճինչեւ այժմ երեւակայած էր աշխատաւորներու ամբօխը արտճերես, զճոհ ու ճուսլ նայուածքներով: Անակնկալ ու ճշմարիտ ուրախութեամբ ճըն է որ զինք կը լեցնէր այս պայծառ, ժպտողէն ու գոհ բազմութեան գոյութիւնը իր շուրջ, ու սիրով ինքզինքը ուղեց իստնուած ու նոյնացած նկատել անոր ձեջ: Իր խորթ թափանց ու վերլուծող ճիտքը կը փորձէր հասնիլ պատճառներուն որոնք կարելի կը դարձնէին այս

տեսակ ճը հրաշքը: Անտարակոյս բաղձանքներու սահմանափակուճը որ կը բղխէր իրենց անճակ ճիտքէն: Պակասը ճգտուճին հանդէպ բաներու որոնք ճիշտ պիտի անկարելի միան իրենց նճաններուն համար: Բայց համակերպուճը եթէ իր անճին համար անբնական կը թուէր ճինչեւ այժմ ու չէր իսկ խորհած ատոր կարելիութեան ճասին, գայն կը գտնէր ահա բազմաթիւ անճերու ճօտ, եւ սակայն այս իրողութիւնը իրեն զարճանալի թուելէ աւելի գնահատելի ու բարի երեցաւ:

Իր այս խորհրդածութիւններուն ճեջ սակայն ընդճիջուեցաւ շատ թուխ, գրեթէ սեւ կնոջ նայուածքներէն որոնք տարօրինակ ճանրութեամբ ճը իր վրայ կ'իջնային: Եկած էր Վարդուհիի քով, ու կը խօսէր անոր հետ, բայց Արամ զիւրութեամբ գուշակեց որ ասիկա ըրած էր պարզապէս աւելի ճօտէն զինքը զիտելու ու իր ուշագրութիւնը գրաւելու համար:

— Ձրանսերէն գիտէ՞, կը հարցնէր Վարդուհիին առանց իր աչքերը Արամի վրայէն վար առնելու:

— Այո՛, արիկն, պատասխանեց ուղղակի Արամ ժպտելով թեթեւօրէն:

Ու խօսեցան: Ալճերիա ճնած էր ու այրի: Կրկնեց այրի ըլլալը, աչքերը տարօրինակ կերպով շողացնելով: Վարդուհի հեռացաւ խօսակցութեան ընթացքին, ու այն ատեն կինը նստաւ անոր տեղ, Արամի դէճը: Ըսաւ որ կը համակրէր Հայերուն, չէ՞ որ Արեւելքի կը սեպուէին երկու աղգերն ալ վերջապէս:

— Սուրճը հարկաւ կը սիրէք, հարցուց անակնկալօրէն:

— Անշուշտ, պատասխանեց Արամ, ու աւելցուց.

— Կա՞յ Արեւելքի որ չսիրէ ճիթէ:

Խնդաց կինը, ու վայրկեան ճը հեռանալով վերադարձաւ պզտիկ շիշ ճը ու բաժակ ճը բերած:

— Ես ալ առանց սուրճի չեմ կրնար ըլլալ: Աճէն օր այս շիշով սուրճ կը բերեմ հետս:

Խօսելով հանդերճ բաժակ ճը լեցուց, ու Արամի երկարելով.

— Հարկաւ չէք ճերճեր:

— Բայց դո՛ւք:

— Դճարազարբ բաժակը ճէկ հատ է ճիայն: Ես յետոյ կը խճեմ, հոպ չէ: Ծիշը կէն չէ դեռ: Առէ՛ք, առէ՛ք, պնդեց գրեթէ ինզրական:

Ու երբ Արամ շնորհակալութիւն յայտնելով առաւ.

— Պաղ է, բայց ի՛նչ ընես: Մեր տունը չենք որ Հոս: Թերեւս անհամ գանէք. բայց կ'ուզեմ համոզուիք որ յանցանքը իմս չէ: Օր մը տունս եկէք, պիտի տեսնէք: Եթէ կրնաք այս իրիկուն իսկ, հէ՞. ծիափին տաք սուրճ մը կը խմենք...

Արամ շուարած էր իր պատասխանին վրայ, երբ Վարդուհիի գալուստը զինք փրկեց:

— Տե՛ղդ, շա՛ն կնիկ, ըսաւ հայերէն ու խնդալով: Երեքն ալ խնդացին:

Մինչ կողքի տարեց Իտալուհին Արամի ախանջին կ'ըսէր ցած ձայնով.

— Շատ մտիկ չընես այդ կնոջ, չըլլայ որ տունը երթաս, կատաղածին մէկն է. մեղք ես, շատ երիտասարդ ես տակաւին...

Կէսօրուան դաղարին վերջանալուն քառորդ մը կար դեռ: Փողոց ելաւ: Առանձին, ու ցուրտին ազդեցութեան տակ, իրեն թուեցաւ որ առտուրն է ի վեր իր ժամերը անցած են տարօրինակ, գրեթէ անիրական ճիկոտորտի մը մէջ: Նշմարուած բազմաթիւ դէմքերը, լսուած խօսքերը, ու մանաւանդ անընդհատ աղմուկը որ թաւ եւ աններդաշնակ դիմառութեան մը նման կը ծփար աշխատանոցին մէջ, իրարու խառնուած, յօրինած էին անըմբռնելի երեւոյթ մը զոր Արամ սիրով անհաճոյ մղձաւանջ մը պիտի ուզէր համարել: Դեռ մինչեւ այսօր իրեն անձանթ այս կեանքը, ու իր առաջին անգամ ըլլալով բազմութեան մը մէջ ինկած ըլլալու եւ մանաւանդ այդ ամբողջին մէկ մասնիկը կազմելու հանգամանքը, իր շիղբերու բովանդակ սարուածքը հիմնովին դրդած էին, եւ նո՛ր է տակաւին որ կը կը զգար այդ ցնցումը, բայց օրին տակ ու առանձին: Եթէ իր մէջ անվերադարձօրէն խուսափումի ցանկութիւնը յայտնուեցաւ ուժգնօրէն, քանի մը բոպէ վերջ հոն դառնալու ստիպուած ըլլալու պարագան իր մօտ նոյնքան եւ աւելի գորութեամբ ստեղծեց հետաքրքրութիւն մը խորանալու այդ կեանքին մէջ, ու նշմարելու անհրաժեշտ պայծառութեամբ մը անոր բոլոր երեսները: Առտուրն է ի վեր իր հոն անցուցած քանի մը ժամերը արդէն լայնօրէն բաւական էին որպէս զի հետաքրքրութեան այս զգացումը իր մէջ աւելի քան երբեք արդարանար:

Իր սեղանին չհասած, հեռուէն, նշմարեց որ

իր տեղը գրաւած է կուշտի Սպանուհին ու արագօրէն կ'աշխատի: Մտավախութեամբ լի զարմանք մը եկաւ վրան: Վարանեցաւ աւելի յառաջանալու, կանգ առաւ, ու դիտեց: Վարդուհի ինք ալ կ'աշխատէր, ու յանկարծ Արամի զարմանքը ապշութեան փոխուեցաւ, երբ նկատեց որ Վարդուհի իր մաքրած լուբիաները բուռ բուռ կ'անցընէ Սպանուհիին, բայց գրեթէ նոյն բոպէին իսկ գուշակեց ինչ որ տեղի կ'ունենար, դէմքը առաւ գոհունակ արտայայտութիւն, արագութեամբ իր պարկին մօտեցաւ: Սպանուհին եւ Վարդուհի իրենց աճապարանքին մէջ չնշմարեցին անոր գալուստը, ու երբ Սպանուհին անոր ներկայութիւնը զգաց իր կողքին, շփոթեցաւ, չհամարձակեցաւ իսկ Արամի դէմքին նայելու: Այտերը կը բռնկէին, յանկարծական շարժումով մը անցաւ իր տեղը: Վարդուհի աղուոր կատակ մը յաջողցուցած տղու մը պէս սրտանց կը խնդար: Արամ նշմարեց որ իր պարկը զգալիօրէն լեցուեր է: Շնորհակալութիւն յայտնեց յուզմամբ, բայց Սպանուհին ընդմիջեց զինք իսկոյն.

— Շնորհակալութեան տեղի չկայ. եղածը մեծ բան մը չէ որ. ժամանցի պէս բան մը...

— Բայց կրնայիք ձեզի համար ընել այդ աշխատանքը:

— Օ՛, բացազանչից Սպանուհին ժպտելով ու բազուկի անփոյթ շարժումով:

Բարեկամացած էին արդէն: Սպանուհին զարմանքով տեղեկացաւ իր զարգացման աստիճանին, ու կարեկցութեան զգացում մը զինք ընդվզեցուց որ Արամ այդքան պաշարով եկած էր հոս, լուբիայի աշխատանոց մը: Անխելութիւն չէ՞ր յարմար զբաղումի մը հետամուտ չըլլալը: Արամ աւելորդ համարեց բացատրութիւններ տալ անոր եւ պատճել իր ձախողութիւնները, ու մանաւանդ յաջողութեւ ահաւելի դժուարութիւնները օտարականի իր հանգամանքին պատճառաւ:

Ալճերուհիին աչքերը արաստվոր յամառութեամբ մը կը սլաքուէին Արամին: Վարդուհի վերսկսած էր երգել: Իրենց նուագարանները ներդաշնակողներու խումբ մը կարծես ըլլային բոլոր հոս գանտողները, նոյնատեսակ ժխոր մը կը լեցնէր սրահին մինչեւ ամենահեռուոր անկիւնները: Արամ կ'աշխատէր հիմա, միտքը մէկ կողմէ պարկը կարելի եղածին չափ շուտ լեցնելու մտահոգութեամբ յափշտակուած, միւս կողմէ թափառելով անցեալի սգեկոչումներու խառնուրդի մը մէջ:

Իրիկուան ձեկնուծի պահուն պառաւ Իաալու. հին կրկնեց իր խրատը, ու Երամ, տղու հնազանդութեամբ եւ անբացատրելի զգացումէ ճը ճղուած, խուսափեցաւ Ալճերուհիէն ու աճապարեց պանդոկ:

Իր աշխատանքի երրորդ առաւօտուն էր. տեղը չհասած, Սպանուհին դէմն առաւ, եւ ուրախ շեշտով ճը ըսաւ որ ֆօնքրըմքրեսը զինք տեսնել կ'ուզէ: Հակառակ Երամի պնդումներուն, ան յամառեցաւ թէ պատճառը կ'անգիտանայ: Սակայն իր արտայայտութենէն բացայայտ էր որ զիտէ: Եթէ անոր ուրախ շեշտը չըլար, Երամ պիտի վրդովէր այս հրաւերէն, ու կասկածէր որ պիտի ճամբուի: Անհոգ ու հանդարտ սիրտով գնաց: Երբ կրկին եւրեցաւ, դէժքը կը ճառագայթէր, փութաց անծիջապէս Սպանուհիին ծօտ:

— Կ'ընդունի՞ք որ իրաւունք ունի՞մ ձեզի հանդէպ նեղանալու:

Միւսը, անակնկալի եկած, իր խոշոր աչքերը զարմացմամբ դարձուց Երամի որ խոժոռ արտայայտութիւն ճը կը ջանար պահել իր դէժքին վրայ:

— Կը վայէ՛ ձեր ըրածը:

— Բայց... բայց... կը կծկմար Սպանուհին գրեթէ գունատած:

Ձեռքը առաւ իր ափին ձեջ եւ ուժգնօրէն սեղծելով.

— Չհասկցա՞ք տակաւին ձեր յանցանքը:

Ու ձեկէն ա՛լ չկարենալով զսպել իր խնդուքը.

— Ինչո՞ւ պահեցիք ինձմէ ինծի համար ձեր ըրածը: Նախընտրելի չէ՞ր ձեզմէ լսելս: Ծնորհակալութիւն, իմ սիրելի Սպանուհիս: Եթէ կիթառ ճը ունենայի, լուսընկայ գիշերով հաւատացէք որ կուգայի ձեր պատուհանին տակ ցայգերգ ճը նուագելու: Բայց համարեցէք որ այդ է արդէն ըրածս: Կը կարծի՞ք: Պէտք չկայ, բնաւ պէտք չկայ. ինծի վաղուց ծանօթ է որ Սպանիոյ վարդերը կարծիր ու կրակ կ'ըլլան, ու աղջիկները ձեյ ձեկ վարդ: Նորէն շնորհակալութիւն, օրիորդ Քառմէն:

Անցաւ նոր գործին: Տասնըհինգ ֆրանք օրական պիտի ունենար: Սեղանի ճը առջեւ նստած աշխատաւորներու պատկերը պիտի թուազրէր: Եւ այս հանգիստ գործը կը պարտէր Քառմէնին որ իր ծասին խօսած էր ֆօնքրըմքրեսին:

Իր պզտիկ առանձին սեղանը սրահին ծայրն էր: Սջին՝ սաքղողներն էին ճինչեւ ճիւս ճայրը: Իրեն ամենէն ծօտ գտնուողները երկու երիտասարդ

Փրանսուհիներ էին, ձեկը ճիշտ ժպտուն, կլոր երեսով, որուն հետ Երամ անճիջապէս կատակել սկսաւ: Միւսը անժպիտ, բայց աչքերը եւ սրունդները առաջին իսկ վայրկեանէն Երամի արիւնը խենթեցուցին: Աղջիկը չէր իսկ նայեր իրեն: Միջոց ճը սրունգը նետեց ճիւս սրունգին վրայ, ու Երամի նայուածքը չկրցաւ անկէ դատուիլ:

— Ի՛նչ կը նայիս ատանկ, եղածը սրունգ ճըն է... Երամ յանկարծակիի եկաւ, կարմրեցաւ:

Անիկա լայնօրէն կը խնդար. աչքերը անդի-ճարելիօրէն խռովիչ էին ու ցանկայարոյց: Ձեռքը տարաւ փէշին, բայց զայն վար իջեցնելէ առաջ, բարձրացուց ու զիստերուն սպիտակութիւնը ճառագայթի խուրճի ճը նճան խաղաց: Երամ շրթունքները խածաւ գրեթէ, ու աչքերը բռնկեցան:

— Մի՛ պարապ տեղը իրար անցնիր, կը խօսէր աղջիկը հանդարտօրէն ու հեղնական ժպիտով ճը,—պզտիկ ես տակաւին...

Ապտակ ճը ընդունած ըլլար կարճես Երամ, ցնցուեցաւ.

— Կը կարճե՞ս...

— Պա՛հ, յայտնի բան ճըն է ատիկա...

— Ծատ դիւրին է սխալը հաստատելը, կը բաւէ որ...

— Կը կարճե՞ս, ընդճիջեց այս անգամ անիկա:

— Սպասէ՛ կէսօրին, ու եթէ չես վախնար, կը տեսնուինք:

Մեճ ճը խնդաց.

— Ես վախնա՞մ... նայէ որ կէսօրին դուն վախէդ ճակ ճը ճտած չըլլաս...

Խնդացին իրարու ասպարէզ կարդացողներու նճան: Ու կէսօրին անցան լեցուն պարկերու սրահը: Երբ վերադարձան.

— Հարցուր որ պատճէ, ըսաւ յաղթական երեւոյթով ճը Երամ ճիւս Փրանսուհիին:

Բայց անոնք ճարելու աստիճան կը խնդային, ու Երամ կը մնար շուռած, կը ջղայնանար արդէն, ու պիտի պոռար, երբ նկատեց որ կը հանգարտին:

— Վերջացա՞ւ, յարեց նեղսիրտ ճը:

— Վա՛յ, պզտիկս կը բարկանայ ալ եղեր:

— Գիտե՞ս ինչու կը խնդայինք, կը բացատրէր կլոր դէժքով Փրանսուհին, որովհետեւ եկած օրէդ ի վեր անոր աչքը վրադ մնացած էր: Ուզածը աս էր արդէն...

— Հասկցա՞ր հիմա, պլտիկս:

Արամ ուզեց պոռալ, հայհոյել, բայց անոնք կը խնդային նորէն, ու զգաց որ այդպէսով ծիծաղելի պիտի ըլլար: Զսպեց ինքզինքը, ուսերը թօթուեց ու հեռացաւ: Սակայն հետեւեալ կէսօրին նորէն հետեւեցաւ անոր լեցուն պարկերու սրահը, ու մնացին հոն երկար ժամանակ:

— Նշանածս տեսնելու է, ըսաւ անգամ ճը խնդալով Արամին:

— Ի՞նչ, նշանուած ես որ, հարցուց Արամ ապշահար:

— Զարձանալիք ի՛նչ կայ որ հոտ... Ահա-լասիկ, նայէ՛:

Ու ցոյց կուտար երիտասարդ ատաղձագործը զոր Արամ յաճախ տեսած էր աշխատանքի ծիջոցին:

— Բայց քանի որ չես սիրեր զինքը...

— Ո՛վ ըսաւ քեզի որ չեմ սիրեր, ընդմիջեց անիկա գրեթէ ջղայնոտութեամբ, սըւոր նայէ անգամ ճը, կը լսե՛ս, Թէրէ՛ր...

Ցետոյ, խնդալով.

— Բայց դուն տարբեր, դուն տարբեր: Զես հասկնար դուն սակայն...

Ա՛լճերուհին նկատելով իր նշանակալից ակնարկներուն անհետեւանք մնալը, այժմ չէր խօսեր անգամ իր հետը, ու Արամ անգամ ճը ցնցուեցաւ անոր կատաղութեամբ լեցուն նայուածքին ներքեւ: Ուրիշ անգամ ճը երբ կը խօսէր Փրանսուհիին հետ, անցաւ իրենց ձօտէն, ու շնչաց թունոտ ճը.

— Սա՛լ Արմենիէն (1):

Արամ չլսել ձեւացուց:

— Որովհետեւ սուրճդ անվա՛րճ մնաց, — նետեց անոր Փրանսուհին արհամարհական ժպիտով ճը:

Արամ շուարած էր: Երկու կիները պահ ճը նայեցան իրարու, ճին կատաղութեամբ, իսկ ճիւսը յաղթականի ճը հպարտութեամբ:

— Ինքզինքդ ճի՛ ուտեր, մա պէլ, թաղիդ ճէջ ճիւրթարող ճի պակսիր:

Այնուհետեւ Արամ նշմարեց որ Ալճերուհին կը հետեւի իրենց, ու վատ նախազգացուծով ճը լեցուած, զգուշացաւ անկէ, հակառակ որ Փրանսուհին կը յորդրէր հանդիստ մնալ:

(1) Աղսոս Հայ:

— Հոգդ ճի՛ ըներ դուն, ճգէ այդ բողը ուզածին չափ ճեր ետեւէն պալտի:

Շարաթ առաւօտ ճը Սպանուհին ըսաւ իրեն որ հայրը եւ եղբայրը կ'ուզեն զինք տեսնել:

— Կարճեմ գործի ճը համար է, — հասկցուց տարտամօրէն Արամի պնդումներուն վրայ:

— Լաւ կ'ըլլայ որ այս իրիկուն գաք, ըսաւ յետոյ:

Արամ ուրախութեամբ հաւանեցաւ:

Կէսօրին երբ պարկերու սրահէն դուրս պիտի ելլէին. Ալճերուհին դուան առջեւ կեցած էր, ու իրենց կը նայէր տարօրինակօրէն շողացող աչքերով: Արամ սարսուաց:

— Քանի՛ պիտի վճարեն այդ պաշտօնիդ համար, պոռաց անոր երեսին Փրանսուհին պփփանքի արտայայտութեամբ ճը:

Միւսը չպատասխանեց, բայց աչքերը սպառնալից էին:

— Թուքիս անգամ արժանի չես, վա, փիլքե՛ն, աւելցուց դէպ ի առաջ քայլ ճը առնելով:

— Պարկերուն ետեւէն ելլողը ես չեմ, պատասխանեց Ալճերուհին ժահրոտ շեշտով ճը:

— Թա կե՛օ՛լ, եթէ ոչ երեսդ կը կոտորտեմ, սպառնաց Փրանսուհին ետ դառնալով ու անոր ձօտենալով:

— Քեզ տեսնեմ, ի՛նչ կը սպասես:

Դեռ չաւարտած ապտակը իջաւ երեսին: Ու փաթթուեցաւ իրարու ճագերուն: Արամ շուարած էր ընելիքին վրայ, ու կ'երկմտէր զատելու եւ կամ ճարդ կանչելու ճասին, երբ կռուողներուն աղաղակներուն վրայ կը հասնէին արդէն: Դժուարաւ կըրցան զատել: Փրանսուհիին նշանածը զայն կը հարցուփորձէր պատահածին վրայ, բայց ան չէր պատասխաներ ու կատաղութենէն կուրծքը հեւքոտ շնչառութեամբ ճը կ'ելեւէջէր: Ալճերուհին սակայն կը պոռար.

— Որովհետեւ զինքը տեսայ աղտոտ Հայուն հետ այստեղ, անոր համար վրաս յարձակեցաւ կատղածը...

Ատաղձագործը այն ատեն սպառնալից ձօտեցաւ Արամին. անճիջապէս սակայն Փրանսուհին հասաւ, ու վճռական.

— Զղպչիս, ու ժը դը փլա՛ֆ:

Տղան պահ ճը տատամսեցաւ, յետոյ զսպրած կատաղութեամբ ճը.

— Անգամ ճըն ալ չձօտենաս նշանածիս, թէ ոչ վերջին օրդ է, սա՛լ Արմենիէն:

Արածի արիւնը գլուխը ցատկեց, ապտակ ճը, երկու՝ երեսին: Միւսը ձեռքը զրպանը կը տանէր, երբ Ֆրանսուզին ցատկեց ու անշարժացուց զայն:

— Պարո՛ն, հետեւեցէք ինձի, լսուեցաւ ֆօնրըքմերեւին ձայնը, ու Արած զնայ ետեւէն:

— Այս պատահածէն վերջ կը հասկնաք անշուշտ որ ձեր հոս մնալը կարելի չէ: Ձեր հանգըստութեանը իսկ տեսակէտէն լաւ չէ: Անցէք գրասենեակէն հաշիւնիդ փակելու համար:

Արած Սպանուզիին լուր տալէ վերջ որ իրիկուան դիմացի սրճարանը պիտի սպասէր իրեն, ձեկնեցաւ:

Դուրսը ցուրտ հով ճը վայրենի եղանակով ճը կը շրջագայէր: Արած վերարհուին օձիքները վերցուց, ու գոհունակ ճարգու ճը նճան սկսաւ սուլել: Գործէն ելլելը ոչ ճեկ արածութիւն կը պատճառէր իրեն. ասիկա անշուշտ այն յոյսէն զոր կը ներշնչէր իրեն Սպանուզիին խօսածը: Ուրախ էր ճանաւանդ անոր համար որ անարգանքը ճաքրած էր փառաւոր կերպով ճը:

— Իշո՛ւ կտոր, կը ճաածէր ատողճագործին հասցէին: Ու կուշտ ճը խնդաց խորհելով որ անոր նշանածը... Փլաս տէքս երբ հասաւ, դժուարաւ կը շնչէր հովին սաստկութենէն: Մտաւ սրճարան ճը: Յանկարճ յիշեց որ քանի օր է պատասխանած չէ իր սիրելի Խաչիկին: Թուզթ գրիչ ուզեց գրելու համար:

Սիրելի Խէչօս,

Դուրսը հով ճը կայ, այնպիսի հով ճը զոր անկարելի է կարենաս երեւակայել առանց զգնցած ըլլալու: Մարտիկոյ հովն է ատիկա, միսքրալը: Խենթ, վայրենի, կարճրածորթի ճը ոռնուճով, խորճանկ ու կախակէզ հարուածող: Կը հասնի վրագ երբ բնաւ չէիր սպասեր անոր: Գրեթէ ճիշտ արեւոտ օրերը փողոց կ'ելէ, կարճես հաճաճայնած ըլլայ արեւին հետ քեզ խաբելով անակնկալի բերելու համար: Թերեւս խորհիս որ այս հովը չի վայրեր Ֆրանսայի, ու Թուրքիոյ ճէջ իր յարճար տեղը պիտի ըլլար: Բայց գիտե՛ս ի՛նչ ըսել է «սա՛լ Արմենիէն»: Հազար երանի կեաճուրին. Աստուած վկայ կը փնտռեճ զայն: Չապուշնաս այս փափաքիս համար: Հոս

կ'երթաս քիլօ ճը ճուկ գնելու, ու երբ ճուգես աչք գոցել պակաս կշիւին, երեսիդ կը պոռան. սա՛լ Արմենիէն: Ընկեր ճը ճանչցայ որ ճերթած ըլլալուն համար պանդոկապետուհիին հետ պաուկիլ, դարճաւ սա՛լ Արմենիէն: Սրճարանը երկու սուր տեղ հինգ սու նուէր կուտաս, ու երբ սուրճիդ ճէջ ճանճ ճը գտած ըլլալուդ համար ճեղճութեամբ դիտողութիւն կ'ընես կառսօնին, սուրճին տեղ դոն է որ կ'ըլլաս սա՛լ Արմենիէն: Աջ կը դառնաս, նոյն, ճախ կը դառնաս, նոյն: Կ'ուզե՞ս սալ չըլլալ, պէտք է դառնալ խուլ: Հայերուն համար ճանաւոր բաճբակի վաճասատուն ճը բանալ պէտք պիտի ըլլար այդ պարագային: Ու դուն որ առեւարականի խճոր ունիս, խորհուրդ կուտամ քեզի այս ճասին լրջօրէն ճաածել:

Հիճա ինձի պիտի ըսես որ ճածիկն է որ այսպէս կ'արտայայտուի, իսկ տաճիկներուն պետերը վարճապետն էին ճողովուրդին: Իրաւունք ունիս, սիրելի Խէչօս: Այս տարբերութիւնը կայ, պէտք է ընդունիլ: Ֆրանսայի արտերը ճշակ ճունին, գորճարանները բանուոր ճունին. իսկ պանդոկները, խե՛նթ ես. ինչո՛ւ համար 20—30 ֆրանք աճսաճճարով սենեակ պիտի շարունակեն տալ: Աճենաճաճանը 200 ֆրանք է հիճայ: Ապրի՛ն Հայերը, Ռուսերը եւ բոլոր գաղթականները: «Բաց են մեր դուռները մեր փոքրիկ դաճնակցին համար որ իր արիւնը քափեց բոլոր նակասներուն վրայ»: Բաւական է որքան արիւն թափեցինք, այսուհետեւ քիչ ճըն ալ քրտինք եւ կեանք թափենք: Ապրի՛ Եւրոպան: Ի՛նչ ճարգարէօրէն պայճաւատես եղան ճեր յեղափոխականները, գաստիարակները եւ բոլոր տեսակի բոլոր գորճիչները... Ֆրանսա՛, երկիր ազատութեան, եղբայրութեան ու հաւասարութեան... ճեր երկրորդ հայրենիքը: Կ'երդնում որ այդպէս պիտի ըլլայ սակայն, եթէ ճեր առաջին հայրենիքը Թուրքիան սեպենք...:

Գորճը առատ հոս, եթէ բաղուկիդ ու ճկաններուդ կը վտտահիս: Գրասենեակները, գոնէ ճինչեւ հիճա, «օտարական ճենք ուզեր»: Ուզած ատենդ սակայն «լեճիօն եքրանճեք»ը կ'ընդունուիս: Պետական է անիկա, ու Մարոքը հողաճաս ճը ունի որ կը կոչուի Ռիֆ:

Ես ճինչեւ հիճա եղայ սպասաւոր, խոհա-

բար, լուբիա ճաքող, իսկ այս պահուս փողոցներու երկրաչափ: Կրնաս աւետիսը տալ Գաւաֆեանին, դպրոցը ճաթեմաթիքի ճէջ իր յաջող աշակերտներէն էի, գրտե՛ս: Ի՞նչ յաջողութիւնս լսելով թող քեզքը գայ քիչ ճը:

Հոս բոլոր կիները կարելի է ցանկել. գոնէ ճինչեւ Հիմա դէպքերը այդ Համոզու՛մը տուած են ինձի: Քրիստոս եթէ քսաներորդ դարուն աշխարհ գար, Մարիամներու յիշատակութեան Համար ճիպն աւետարանի ծաւալով ճառնաւոր Հատոր ճը պէտք պիտի ըլլար: Կ'երեւի Ստուած ատիկա խորհելով է որ դայն քսան դար առաջ երկիր դրկեր է: Աճէն պարագայի օգտուողները բողոքականները կ'ըլլան ճիպն, քանի որ իրենց ճրի բաժնած սուրբ գիրքերուն Համար կրկին ճախք պիտի ստիպուէին ընել...

Մի՛ ճոռնար ատեն ատեն Հայրս ճայրս երթալ տեսնելու: Կարօտնին քեզճէ կ'առնեն, ճեղք են անոնք ալ: Եթէ ի՞նչ վիճակս բարեւաւուի, անշուշտ առաջին գորճս պիտի ըլլայ գիրենք Հոս բերել: Յոյս ունի՛մ դեռ սակայն, քանի որ, ինչպէս ըսի, Փրանսա ճեր երկրորդ Հայրենիքն է:

Հարկաւ կը գրես ինձի շուտով ու երկար:

Համբոյրներով
Քոյդ
ԱՐԱՄ

Յ. Գ.— Հասցէս նոյնն է: Պանդոկապետուհին ինձի սա՛լ Արմենիէն բնաւ չ'ըսեր:

Փողոց ելաւ նորէն: Պահ ճը ճտածեց պանդոկ երթալ, բայց ինքզինքը յոգնած ճգաց: Եղուարդին երթալու ատեն կէս ճածքէն Հրաճարեցաւ: Այս իրիկուն իսկ պիտի տեսնար դայն, քանի որ իրենց կազճած ճիւղթիւնը առաջին Հանդէսը կուտար արդէն, ու յետոյ չուղեց գորճէն ընել գայն: Մինէճա ճը գնաց, մնաց Հոն ճինչեւ վեց ու կէս: Եթթնին աշխատանոցին դիճացի սրճարանն էր ու երբ Սպանուհին եկաւ, գացին վարի անկիւնէն էսթաքի Հանրակառքը առնելու: Գնացքը երեք քառորդ տեւեց: ճածբու ընթացքին երկուքն ալ գրթթէ լուռ մնացին: ճեսակ ճը անճկութիւն կը տիրէր իրենց վրայ, ու անհասկնալի ճգացում ճը արգելք կ'ըլլար որ շողակրատեն: Երաճ կը դիտէր անոր խոշոր աչքերը, թուխ ճորթը, բայց ճիշտ ալ նայուածքները ճկրցան Հանգչիլ անոր նուրբ սրունգ

ներուն վրայ: Ակնթարթ ճը ճիպն աչքերը սեւեռեց անոր բաց վերարկուէն յայտնուող առողջ կուրճքին, եւ ուրիշ տեղ կը նայէր արդէն երբ Քառճէն, գաղտնորէն Հետեւած ըլլալով անոր աչքերուն, ճէջքը կը շտկէր ու կուրճքը դուրս կը ցցէր: Ժպտեցան երբ Հանդիպեցան աչք աչքի: Հանրակառքին յանկարճակի կանգ առնելուն Հետեւանքով Երաճ իր բոլոր ճարճինովը ինկաւ անոր վրայ, ու անոր գրտէն գաղջութիւն ճը անցաւ իրեն, բայց փութաց Հեռանալու նորէն, ճինչ աչքերը վար կ'առնէր:

Հանրակառքի կայարանէն Հագիւ քանի ճը քայլ Հեռու էր Քառճէնի բնակարանը: Պզտիկ, շատ պզտիկ տուն ճը: Փողոցի դուռնէն անճիջպպէս ներս աջին սենեակ ճը: Գուռը բացողը երկտասարդ կին ճըն էր: Եղբօրը կինը: Վերէն իջան Հայրը եւ եղբայրը:

Հագիւ ճանթթացած ու նստած, Հայրը, յիսունը անց բայց դեռ կայտառ, ճայնեց.

— Գինի՛ բեր, կնիկ:

— Երթաճ բերեճ, ուղեց Հարսը եւ ոտքի ելաւ, բայց Հայրը իսկոյն ճիջածտեց.

— Նստէ՛, դուն նստէ, անոր գորճը ի՛նչ է: Յետոյ դառնալով Երաճի՛

— Միրուն է Հարսս, Հէ՞:

Ու կը ինդար աչքերու տարօրինակ փայլով ճը: Երաճ կը ժպտէր: Հարսը գլուխը կը կախէր, շիկնած: Եղբայրը, թիկնեղ ու երեսուննոց երիտասարդ ճը, անճպիտ ու լուռ, ճխաճորճը կը ճխէր ու աչքերովը կը Հետեւէր արտաշնչուած ճուխին:

Այս ճիջոցին ներս ճտաւ երեսուննոց կին ճը, գինիի շիջով ու բաճակներով ճանրաբեռնուած: Հայրը կը փութար ճանթթացնել.

— Կինս: Միրուն է կինս, չէ՞:

Ու նորէն աչքերու տարօրինակ փայլով ճը կը նայէր իր տղուն որ այս անգամ ճխաճորճը բերնէն վար առած, շեշտակի կը նայէր այդ կնոջ որ իր ճայրը ճէր կրնար ըլլալ: Երաճ գուշակեց դիւրութեաճը որ Հօրը երկրորդ կինը պէտք է եղած ըլլար: Կինը, գլխահակ, շիշն ու բաճակները կը գետեղէր սեղանի ճը վրայ: Երաճ անախորճ տպաւորութիւն ճը ճգաց աչքերու անհասկանալի այս խաղերէն: Հօրը գարճանալի գուարթութիւնը, տղուն խորհրդաւոր լութիւնը, ու երկու կիներուն գլխահակ վիճակը, իրեն խորհիլ կուտային որ այս յար-

կին տակ օրերը պէտք է անցնին անսովոր եղանակով ճը ու հոգիները իրենց բնական կեանքը չէ որ կ'ապրին:

— Կինս սիրուն է, չէ՞, կը կրկնէր հայրը դէպ ի իր տղան աչքերու քթթուծով ճը:

— Հիճա կ'ուզես որ ճեր հիւրը հակառակը ըսէ, — խօսեցաւ տղան ժպիտով ճը: Ճեշտը սակայն կը ճատնէր զսպուած նեղսրտութիւն ճը:

Քառճէն բաժակները լեցուցած էր արդէն:

— Իսկ ճենք ճեր գործին յաջողութեա'նը, սիրելի բարեկաճ, խօսեցաւ հայրը իր բաժակը վերցնելով:

— Յաջողութեա'նը, ճաղթեցին բոլորը:

Գործը կղճինարի գործարանին ճեջն էր, ուր տղան բանուորներու խոճբի ճը պետն էր: Խօսած էր փոխտնօրէնին՝ Արաճին հաճար, ու անիկա յայտնած էր որ օգնական գրագրի ճը պէտքը ունին:

Արաճ հրճուեցաւ, ու չգիտցաւ ինչպէ'ս շնորհակալութիւն յայտնել: Ձճգեցին սակայն ու որոշելէ յետոյ որ երկուշաբթի առաւօտ անցնի, խօսակցութիւնը դարճաւ տարբեր նիւթի:

Առարկելով որ ճաշի ատեն է ու ճ'ուզեր իրենց հիւրասիրութիւնը չարաչար գործածել, Արաճ հրաժեշտ առաւ անոնցճէ: Քառճէն պիտի ընկերանար իրեն ճինչեւ հանրակառքի կայարանը: Գուռնէն դուրս չեկաճ, հայրը Արաճի դառնալով:

— Աղջիկս սիրուն է, չէ՞:

Արաճ շփոթեցաւ, ու պատասխան ճը չգտաւ: Աղջիկը, նեղսրտած, կը նայէր հօրը: Լայն շունչ ճը առաւ, երբ ինքզինքը փողոցը գտաւ:

— ճարտինա'կ գտար հայրս, կը խօսէր Քառճէն, ճինչ դանդաղօրէն կը քալէին ճութ ու նեղ փողոցէն: Իր երկրորդ երիտասարդութիւնը, կնոջ հաճար խենթ կ'ըլլայ: Անշուշտ հասկցար որ բուն ճայրս չէ այդ կինը: Եղբօրս հաճար սակայն անոր ներկայութիւնը անցանկալի բան ճը չէ...

Ու կը ինզար արտճախառն շեշտով ճը: Արաճ նայեցաւ անոր երեսին վրղովաճ արտայայտութեաճը, ու չուզելով հասկնալ ակնարկութիւնը:

— Այո', ճիշտ այդպէս, չես սխալիր: Սիրուն կին է: Հայրս սիրուն գտնելով առած է զայն, ու եղբայրս ալ սիրուն գտաւ իր կարգին: Այն ատեն հայրս աճուսնացուց զայն, որպէս զի ինքն ալ հարսը սիրուն գտնէ...

Արաճ անկարող եղաւ բացազանչութիւն ճը զսպել: Քառճէն կը շարունակէր:

— Է՛, այդպէս է, ի՞նչ ընենք: Բոլորս ալ գիտենք ճշճարտութիւնը, բայց բոլորս ալ չգիտնալ կը ճեւացնենք: Արդէն ի՞նչ օգուտ իրար ճեղաղրելէն... Պատահելէ՞ն վերջը: Կարեւորը անկուճէն խուսափիլն էր: Այս անկուճը վերականգնուճ չունի:

Արաճ ապշահար երեւոյթով կ'ունկնղրէր Քառճէնին: Անոր խորհրդածութիւնները ճանաւանդ զինք անսպասելի երեւոյթի ճը առջեւ կը դնէին: Մտաճուսնեքը այնքան թափով այճճ կը խուճէին իր ուղեղէն ներս որ անկարող եղաւ տիրող ճառախուղին ճեջ լոյսի ճը պայճառութիւնը սփռելու: Կը քալէին ճիշտ ճութ փողոցէն: Հովը անհետացած էր ու ցուրտը չէր աղղր: Գարճուաճքէն անդին Արաճ յանկարճ ինքզինքը գտաւ ճովին առջեւ: Գարճաւ զարճացճաճը Քառճէնին:

— Ուզեցի քեզի գիշերով ճեր ճովը ցուցնել: Գէ՛ջ ըրի: Մովը կը սիրես, չէ: Ձէի սխալեր ուրեմն: Գեռ կանուխ է, կրնանք քիչ ճը նստիլ հոս:

Ու նստաւ: Արաճ հետեւեցաւ անոր օրինակին: Լայն տարաճութեան ճը վրայ ճովը կը վըռուէր աջ ու ճախ: Ճատ խորունկէն փարոսի ճը լոյսը ճերթ ընդ ճերթ բացխփիկ աչքի ճը պատրանքը կուտար: Ձախ ճայրին թառած քաղաքին լոյսերը երեւոյթը ունէին ճառերու ճիւղերէն կախուած տօնալապտերներու: Մո'վ: Ու Արաճ տարուեցաւ անոր կախարղանքէն: Քառճէնի ճայնը օրօրի պէս եկաւ իրեն ու բառերը ճհասկցաւ: Որքա'ն պիշերներ այսպէս ինք զացած էր փռուիլ Ոսկեղջիւրի ափին, եւ ուղեղը զոց՝ երազաճ: Կը յիշէր այճճ այդ անվերաղարճ օրերը, եւ քաղցր զգալութիւններ իր ճեջ կը սկսէին արթննալ: Ալիքները ճեղճ հճճիւններով կուգային փշրուիլ աւաղներուն վրայ, ու իւրաքանչիւր անգաճին Արաճի հոգին կը ճաքթէին այս օտար երկրին ճեջ ստացաճներէն, ու ան կը դառնար հետզհետէ նախկին տղան: Ձգզաց անգաճ որ Քառճէնի ափերը իր ճեռքերուն ճեջն են: Ձգզաց նորէն որ իր ճեռքերը կը հանգչին անոր հեւացող ճիճերուն վրայ: Քառճէն իր աճբողջ հասակովը գրեթէ երկնցած էր ու զլուխը կրթնցուցած Արաճի կուրճքին: Որքա'ն զօրաւոր էր կախարղանքը: Քառճէնի բաղուկը ինկաւ իր գիտան: Ան, աչքերը հօրիգունին, կ'ապրէր իր յիշողութեանց ու ոգեկոչուճներուն հետ: Ձգզաց

նորէն որ Քառօճէնի ձեռքը իր դիտանէն վեր բարձրացաւ: Օրեր, անվերադարձ օրեր: Իրեն թուեցաւ որ հրաշքով փոխադրուած է իր երկիրը, ու քիչ վերջ երբ սաքի ելլէ, քանի ճը քայլ անդին իր բնակարանին դուռը պիտի իր դէմն առնէ: Քառօճէնի շրթունքները կը ձօնենային իր բերնին: Անոր շունչը եկաւ երազի պէս խաղալ իր դէմքին վրայ: Բայց յիծարի պէս ցնցուեցաւ երբ հպուճը զգաց իր բերնին դէմ:

— Ի՞նչ եղար, Արամ,— կը հարցնէր Քառօճէն հեւանքով:

«Հայրս սիրուն կը գտնէ իր հարսը ու եղբայրս սիրուն կը գտնէ իր հօրը կինը...»:

— Սիրուն չե՞ճ քեզի համար, Արա՛մ...

— Կը բաւէ՛, — պոռաց Արամ ընդզուճով ու խելքը դարձած:

Այջիկը, սարսափահար, լուց: Մօտէն լուեցաւ հանրակառքի ճը ձայնը: Անդիճաղղի կանչի ճը հնազանդողի պէս Արամ վազեց իր սրունգներուն բոլոր արագութեամբը: Եթէ տեսնէր սակայն որ Քառօճէն, պառկած հողին վրայ, կը հեկեկար բարձրաձայն, թերեւս այն ատեն... թերեւս այն ատեն... բայց ծովը աւելի բարձր կ'արտասուէր, բայց Արամի հողին զարհուրելիօրէն կ'արիւնէր:

Ժածը տասին կը ձօնենար երբ քաղաք հասաւ: Վազեց հանդէսին: Սրահը լեցուն էր երկսեռ բազմութեամբ ճը: Եղուարդ եւ Զարեհ ձօնեցան:

— Ո՞ւր մնացիր ճինչեւ հիճմ:

— Գործ ճը եղաւ, շիրքայ աւելի կանուխ գալ:

Նշմարելով անոր անսովոր արտայայտութիւնը, չպնդեցին: Մ'նացին անխօս ու ոտքի: «Հայաստան»ի խմբագիրը, Ենդիշեան կը բանխօսէր: Արամ ընթացքէն հասկցաւ որ վերջնապիւր ձօն է:

«... Ու դուք, սիրելի հայրենակիցներ, ճի՛ ճոռնաք որ Ֆրանսա ճեր երկրորդ հայրենիքն է...»:

— Ինչպէս առաջինը Թուրքիան, — քիչ մնաց պոռար Արամ:

«... Այն Ֆրանսան որ պատճութեան կտակեց Մեճ Յեղափոխութիւնը, որ ճարկութեան բերաւ վեհ ու ազնիւ սկզբունքներ, ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն...»:

Ծափահարութիւն:

— Չկա՞ ճէկը որ պոռայ սա՛լ Արմենիեճ,— Արամի ներսէն խօսեցաւ ձայն ճը:

«... Բազկաւոր ենք ճենք որ տեսնք այս

օրը, Ֆրանսայի ճէջ ապրելու օրը: Աչքերնիս բանանք ու սորվինք: Նոր, ճեճ դպրոց ճը թող ըլլայ այս երկիրը ճեզի: Ու ճեր կրցածին չափ շուտ ու շատ բան սորվինք: Մերինէն անհունօրէն աւելի յառաջադէճ քաղաքակրթութեան ճը ճոցն ենք: Մեր հայ հողին պահելով հանդերձ, գիտնանք սակայն ճայն բարձրացնել այն օրինակներով որ աճէն վայրկեան կը ներկայանան ճեր աչքերուն այս քաղաքակրթ երկրին ճէջ:

— Նշանաճս է ան, բայց դուն տարբեր, դուն տարբեր... — կը խօսէր ձայնը Արամի ներսէն:

«... Ես կը հաւատամ որ ճենք, ճեր ցեղային բնատուր եւ անզուգական ճիրքերով. պիտի դիտնանք օգտուիլ դժբաղդ պարագաներու ճեզի ընձեռած այս բարեբաղդ պատեհութենէն, ու ճեր յաջորդ սերունդը պիտի կերտուի այնպէս ճը որ ճարկակային քաղաքակրթութեան ճէջ պիտի գրաւէ աճենայառաջադէճ երկիրներու հաւասար տեղ: Այդ պաղաճին վստահ ակնկալութեամբ, գոչենք աճենք ճիարբերան «Ապրի՛ Ֆրանսան»:

— Երթա՛նք, առաջարկեց Արամ իր ընկերներուն:

Գուրս ելան, ճացին սրճարան ճը: Արամ հետզհետէ ինքզինքը կը գտնէր: Եղուարդի հարցապնդումներուն պատասխանեց ի վերջոյ:

— Անգործ եճ նորէն, անոր համար տրաճազրութիւնս լաւ չէր: Բայց հիճմ անցաւ. ճոռնանք ա՛լ:

Ու ճուարթացան: Բաճնուելու ատեն յանկարճ Եղուարդ բացագանչեց.

— Աւետիս ճը ճեզի, տղա՛ք, քիչ մնաց ճոռնայի: Չեճ կասկածիլ որ ճեզի համար ալ ընտանեկան կեանքը նախընտրելի է ներկայ այս վիճակէն: Այսօր նաճակ առի տունէն, երկուշաբթի օր ճայրս եւ բայրս հոս կ'ըլլան: Հրաշալի օրեր կ'անցընենք, այնպէս չէ՞:

Երբ իր սենեակը ելաւ, Արամ իր սեղանին վրայ նշմարեց նաճակ ճը: Քովը թուղթի կտոր ճը կար, վրան գրուած.

«Դժբաղդութիւն. աճուսինս այսօր վերադարճաւ: Բայց հող ճի՛ ընէր: Գուրդ բաց ճգէ, կը կարգադրեճ ու կուգաճ:

ԺԷՐՄԷՆ

Նաճակը ճնողքէն էր.

Սիրելի գաւակս,

Ուրախ լուրերդ առնելով, ձեռք ալ ուրախ եղանք: Հայրիկը ճիշտ ճիւղնոյն ֆապրիքան կ'աշխատի: Աճէն օր քու վրայ կը խօսինք, ուրիշ խօսք չունինք, Գու նաճակդ ձեզի կեանք կուտայ: Ինչո՞ւ Հաճար աւելի շուտ շուտ չես գրեր: Մեզի առանց նաճակի ձի' ձգեր: Խենթի պէս կը բանանք ու տասը անգամ կը կարդանք, լալով խնդալով: Մեր ուրախութիւնը ասկէ վերջ քու նաճակ է ճինակ: Ա՛խ, կարելի ըլլար, ձեռք ալ քովդ գայինք, ամա ցածաք Հաց ճը ճինակ ուտէինք:

Սիրելի գաւակս, ինքզինքդ աղէկ նայէ, պաղ չառնես, աղէկ կեր, գիշերները վրայ աղէկ գոցէ, պատուհանը բաց չձողնաս:

Մենք աղէկ առողջ ենք, ձեր ճասին չձտածես:

Ի՛նչ գրենք ուրիշ: Մենք բան ճը չունինք: Գիտես որ գրել ալ չենք գիտեր: Դուն նայէ որ երկար ու շուտ գրես, եթէ չես ուզեր ձեզի արխրեցնել:

Աստուած քեզի երկար կեանք տայ, ձեր սիրելի ու աչքի լոյս գաւակը:

Քու սիրելի ճնողդ
ՄԱՔՐՈՒՀԻ - ԴԱԻԹ

Ընթերցուճը լրացնելէ վերջ երկար պահ ճը կեցաւ անշարժ: Երթունքները կը խաճներ ու աչքերը կը գոցէր արցունքները ետ զրկելու Հաճար: Խորունկ Հառաչ ճը Հանեց կուրծքէն, յետոյ.

— Ես այս տեսակ կեանքը շինողներուն... Հայհոյեց բարձրաճան, Հանուցաւ, ու անկողին ճաննելէ առաջ դուռը բանալով կ'ըսէ:

(Շար.)

Պ. ԶԱՐՈՅԵՍԸ

ԱԼՊԵԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Է Տ Լ Վ Ա Յ Ս Ն Ե Ր Ծ Ա Ղ Կ Ե Ց Ա Ն

(Հ Է Ք Ե Ա Թ)

Ա.

Գիւղը խորան է, Հո՛ւն՝ բարձո՛ւնքը լեւրան, որուն գառիթափին վրայ արօտավայրեր կ'աճին, կանանչ գորգերու նման, ցօղով բեռնաւոր: Ժայռեր կան այնտեղ եզերքը գաշտերուն, որոնց ճերպերուն մէջ ջուրի կաթիլներ ակօսներ են բացեր աղամանդեայ գիծերով: Զիւն կայ քիչ անդին, Հովտին մէջ կախուած լեռներուն վրայ, որոնք առանձին Հորիզոնին կառչած, շիթ-շիթ ջուր կը կաթեն անդունդին մէջ լուռ:

Ալպեանները խորհուրդ են այնտեղ, աստղերու կողքին, ամպերով պարուրուած, ուր Աստուած կ'իջնէ, գիշերուան մութին, ուխտաւորի նման իր աղօթքն ընելու: Զրմբան օրերուն, գիշերային փոթորիկներ կը ըստի կուտան կրանիտէ Ալպեաններուն, որոնց գագաթները, ամպերը պատուէին, երկինքին մէջ կը անկուին շանթերուն առջեւ:

Անտառներ կ'այրին, անհո՛ւն անտառներ, այդ բնական լուսավառութեան մէջ, ուր կապոյտ երաշտահաւեր իրենց վերջին շունչը կուտան մեռնելու համար:

Եղեւիններուն զագաթները, ճիւնով ծածկուած մոմեր են աշխտեղ, եւ անոնց բուններուն մերկ կոթողներուն տակ մըշկածաղիկներ կ'աճին: Քիչ անդին անտառը կանգ կ'աննէ անդունդին վրայ, որուն խորքէն ջրվէժներու որոտումներ կը լսուին:

Եզերքն այդ վիհներուն, զառիթափերուն վրայ, էտլվայսներ կը ծաղկին, սպիտակ տերեւներով:

Էտլվայսներ կը ծաղկին՝ անթառամ գեղեցկութեամբ, երկայնքն անհուն ճիւնագաշտերուն՝ ուր երկինքը, մերթ մշուշապատ, մերթ կապոյտ, օրհնենք կ'ըսէ անոնց վրայ:

Առաւօտուն, երբ կը ծագի արեւը՝ աղջըկան մը մերկութեան չափ աղուոր լեռներուն ետեւէն, էտլվայսները կը բանան իրենց աչքերը ճիւններուն մէջէն ու կը ժպտին: Իրիկնամուտին, երբ կը թաղուի ան լեռներուն ետեւ՝ անդունդը խորացնելով, էտլվայսներու սպիտակութիւնն ալ կը բացուի ովկիանոսին մէջ ճիւնեղէն՝ մինչեւ յաջորդ առտու:

Ու այսպէս, գիւղը խորան է, գիւղը մատուռ է, գիւղը մեհեան է, հո՛ն՝ բարձունքը լերան, որուն անդունդներուն երկայնքը էտլվայսներ կը ծաղկին:


էտլվայսներ կը ծաղկին:



Գուք տեսա՛՞ծ էք երբեք էտլվայսներու ծաղկումը վէտլէտուն ճիւնի ծովերուն վրայ, ուր արեւը, յաճախ մթազնած, կեանք կը կաթեցնէ մառախուղին մէջէն:

Գուք տեսա՛՞ծ էք հրկիզումը Ալպեաններու զագաթներուն, որոնց կրանիտէ ժայռերը կը ճեղքուին յանկարծ ու կը գահավիժին անդունդներուն մէջ, իրենց որոտումով հորթուկներն ահաբեկելով:

Գուք լսա՛՞՛՛ծ էք աստուածային երգերը զուիցերիացի արմայիներուն, որոնք ծնած են Ալպեաններէն՝ անոնց ամեհութիւնը փառաբանելու համար:



Լեռներուն մէջտեղ պատուածքներ կան, անդունդի նման, որոնց մէջէն յախճասլակեայ սառնարաններ կը քալեն շարունակ:

Անոնց տակէն գետը կը ծնի, քարերով բեռնաւոր, իր յորձանքին հետ ժայռերուն կուրծքը տաշելով:

Գետին եզերքն են փռուած հովիտները մշտադաւար, որոնց երկայնքը կովի նախիրներ կ'արածին հանդարտ: Հովիւը հոն է, ժայռի մը վրայ նստած ծալլապատիկ, ու կը պատմէ հէքեաթը հէքեաթային էտլվայսներուն:

Կ'ուռ կեցէք, կը սկսի:

Բ.

Առաւօտ է:

Գիւղէն անդին, ձորերուն մէջ, հովիւը կեանք ունի այծերուն հետ: Զինագաշտեր ամբողջ կը հալին աշխտեղ ժայռի կտորներ տապալելէն: Մինակ է ան ամբողջ օրը, մինակ երկինքին ու լեռներուն հետ, մինչեւ մութն իրիկուան, երբ կը միանայ ան իր սիրածին, իրենց համեստ խուցին մէջ:

Սիրած մը ունի ան ալ՝ բոլոր ծաղկող սիրտերու պէս: Անոր սիրածը վարդ է մըն է կարմիր, լեռներու վայրի վարդ մըն է պարզ, որուն ամբողջ մարմինը կարծես անանուխով են լուացեր:

Սիրահար աղջիկ մըն է ան, սիրահար՝ հովիւին աչքերուն, հովիւին ամեհի, ժա՛յռ կեցուածքին, որուն հետ ամէն գիշեր, ձորերուն մէջ կրակ վառած կը նստին քով քովի: Կոյս է աղջիկը, եւ կոյս են անոր շրթները կեռաս, որոնք սիրահարին շրթներուն վրայ չեն արիւնտտած տակաւին:

Սունկի մեծութեամբ, սունկի թարմութեամբ, սունկի գոյնով ճիծեր ունի ան, որոնք կը խայտան բոցերուն առջեւ իր սպիտակ շապիկին տակէն: Արձանային ողորկութիւն ունին մ'իսերը կոյսին, որուն

մէջ շրջող երակները կը բորբոքին յաճախ: Արինը խաղաղ լճակ մըն է ատուն, ու փոթորկոտ գետ մը գիշեր ատեն, երբ հովիւին հետ, ցայգալոյսին, անպաշտօն մեղրալուսին կ'անցընեն:

* * *

Կասուտաչեայ աղջիկը այդ գիշեր ի զուր սպասեց իր սիրահարին վերադարձին: Գիշեր եղաւ, ու ոչ ոք կար ճամբուն վրայ քարքարուտ որ գիւղ կը տանէր: Այծերը հասան մէկիկ-մէկիկ, իրիկուան դէմ, միսմիսակ:

Չկար տղան, հովիւ տղան:

Ի՞նչ էր պատահեր:

Սիրահար տղան ուզած էր ճնդիան հաւաքել սիրուհիին համար, վերադարձէն առաջ, իրիկուան անոր նուիրելու համար փունջը կասլոյտ աչքերու: Ու յանկարծ ոտքն էր տահած, չար բախտէն, ու գահավիժած էր անդունդին մէջ Ալպեաններուն: Հովիւ տղան մեռած էր:

Լուսնածագ էր այդ գիշեր:

Տիուր աղջիկը դուրս ելաւ, ու ի զուր սպասեց դարձեալ իր սիրածն անվերադարձ: Գնաց փնտռեց անտառներուն մէջ,

ձիւներուն մէջ, եղեւիններուն տակ: Մարդ չգտաւ:

Երբ յուսահատ վերադարձաւ անտառէն, տնակին առջեւ ձիւնին վրայ նըստաւ անհոգութեամբ ու լացաւ տղու մը պէս:

Լացաւ, որքան արցունք ունէին իր կասլոյտ կրակոտ աչքերը:

Անոր արցունքները ձիւնին վրայ կաթեցան ու արգասաբերեցին գայն:

Գ.

Յաջորդ տարին, արցունքներուն տեղ էտլվայաներ ծաղկեցան, ու յետոյ հետզհետէ ամբողջ Ալպեաններուն մէջ տարածուեցան:

Անոնք ծաղկեցան յաւերժացնելու համար անկեղծ սէրը կոյս աղջկան, որ գիշեր ատեն ձիւներուն վրայ իր արցունքները կաթեցուց:

Ու անթառամ եղան էտլվայաները, անթառամ պահելու համար յիշատակը երկու կոյս սէրերու:

Թէ ինչպէ՞ս ծաղկեցան անոնք.

Ալպեաններուն գաղտնիքն է այդ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՒՄՐՈՒՆԵԱՆ

Փրնել



ՀԱՅ ՎՐՁԻՆԸ ԵՒ “ԱՄԵՆԱԼԻ ԲՈՒՐԱՍՏԱՆԸ”

«... Կասարեցի զամենայի Բուսասանս ի Ռ. եւ ի Լ.Գ. ամին, ի քաղաքն որ կոչի Համիր .. ի Հայրապետութեան Հայոց Տեառն Տեր Առաքելին (*), ի Ս. Արքուոյն Էջմիածնի»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Նպատակս չէ եւ ձեռնհասութենէս վեր է գիտնական վերլուծումն ընել հին դարերու Հայ վրձինին: Կ'ուզեմ միայն լոյս աշխարհին աւանդել գեղարուեստասէրի մը թողուցիկ տպաւորութիւններն ու խորհրդածութիւնները զորս այս տողերը գրողը ունեցեր է յաճախ մեր նախնեաց մանրանկարչական հանճարին հանդէպ:

Այս հանճարի ամբողջական յղացումը, արուեստին բոլոր հետաքրքրաշարժ պէսպիսութիւններով, բոլոր ինքնայատուկ ճառագայթումներով, ղուք կրնաք գտնել մեր հին ձեռագիր աւետարաններուն մէջ ընդհանրապէս: Յաճախ «ամենալի Բուրաստան»ներ են արդարեւ անոնք, որ դարերու մաշող ու քայքայող ժանիքներուն դէմ կրցեր են բոլորովին անվթար պահել ու պահպանել հայ գեղարուեստի այդ թանկագին բեկորները կամ նմոյշները: Սովորական գիրքեր չեն եւ ո՛չ իսկ գիրքեր են անոնք: Աւելի՛ խորհրդաւոր եւ երբեմն ալ հրաշագործ ոգիի մը թանձրացումներն են անոնք, որոնց հանդէպ հայ բարեպաշտութիւնը կը տածէ մասնաւոր զուրգուրանք, ակնածանք ու հաւատք: Հայ դիւցազներու նման անոնք ալ ունին իրենց հրաշապատում գրոյցները:

Համբերատար ու ներհայեցող հոգի մը, ներդաշնակութեան սիրահար սիրտ մը, վառ ու ստեղծագործ երեւակայութիւն մը, համա-

գրող միտք մը յաջողեր են յաճախ այդ մանրանկարներուն մէջ ղնել այնպիսի տաք շունչ մը, կենդանի աւելն մը՝ որ անխարդախօրէն թարգմաններ են զանոնք ոգեւորող Խորհուրդը՝ Այդ Խորհուրդը (mystère), թէեւ ըստ ինքեան անանձնական, կը կրէ սակայն դրոշմը զանոնք արտադրող խորհրդանշանապաշտ (symboliste) հոգիին: Վասն զի արուեստը ճշմարիտ արտայայտութիւնն է այն սերտ անհունութեան՝ որով բնութիւնն ու մարդկային Եսը կը գործակցին իրարու: Երագող միտքը, աւելի կամ պակաս չափով, միշտ ալ ունեցեր է այդ արուեստը, երագն ըլլալով արժուութիւնը երեւակայութեան գիւտարար խուզարկութիւնը բնութեան ճոխ ու թաքուն գանձարանին մէջ:

Գեղեցկին հրապոյրը եւ ապա գեղեցկութեան ճաշակը հասարակաց են ամէն ժողովուրդներու: Անոնք աւելի հին են քան կրօնական զգացումը կամ անոր չափ հին: Անոնց ակնադրելը գուցէ պէտք է փնտռել սեռային ընտրութեան մէջ: Գեղեցկութեան ճաշակն է որ՝ իր կարգին՝ ծնունդ է տուեր արուեստին, —գեղարուեստին: Այդ արուեստը այնքան աւելի է զարգացեր, բովանդակալից է դարձեր ու կատարելագործուեր, որքան գեղագիտական զգացումները աւելի են փափկացեր, նրբացեր ու բիւրեղացեր եւ գեղադիտական ըմբռնումները աւելի մշակուեր, ընդլայներ ու խորացեր: Մ'իջնավայրն ալ, իր բոլոր եղանակաւորումներով, այն կախարդական ազդակն է՝ որուն բարսմունքի անդիմադրելի մագնիսացումին տակ անհրաժեշտօրէն կը ծիածան-

(*) Վաղարշապատեցի Գրիգոր ԺԲ. Կաթո. դիկոսի կողմէ նշանակուած երկու աթոռակիցներէն մէկը՝ որ Էջմիածնի գիւղէն էր:

ուին ճաշակներն ու արուեստները, — հան-
ճարի ցուքերը:

Գեղարուեստը, ինչպէս բոլոր արուեստ-
ները, գերազանց արտադրութիւնն է խան-
դավառ ու ստեղծագործ երեւակայութեան: Ան
կը պատկերացնէ՝ հրաշալի երանգաւորումնե-
րով՝ արուեստագէտին ներքին էութիւնը ձայ-
նի, գոյնի ու ձեւերու ներդաշնակ ու խորհրդ-
գաւոր թրթռումներով: Արուեստագէտ է ան
որ ոչ միայն կ'ըմբռնէ այդ ներդաշնոյթը եւ
կը թափանցէ այդ խորհրդաւորութեան — իրե-
րու ներքին ճշմարտութեան — այլ նաեւ կըր-
նայ մարմնաւորել դանոնք: Իրաւունք ունի
էնրիքօ Ֆէրրի արուեստը սահմանելու իբ-
րեւ «հանճարի երփներանգ ցուքը»: Պէտք է
աւելցնել, սակայն, թէ մարդարէաշունչ ոգի
մը միայն կը հնարաւորէ այդ աստուածային
ցոլացումը: Առանց այդ ամենաթափանց ո-
գիին՝ արուեստագէտը պիտի դառնար լոկ
արուեստասէր մը:

Երեւակայութիւնն ինքնին պատկերա-
ցում մ'է: Բայց արուեստագէտին մէջ այդ
պատկերացումը կարծես աւելի ենթակայական
է քան առարկայական: Առարկաները կը
զաղրին հոն լոկ ձեւեր ու տարազներ ըլլալէ:
Անոնք կը դառնան խօսուն ու արտայայտիչ,
շնորհիւ այն խորհուրդին՝ զոր ամէն իր, ա-
ռերեւութապէս ամենէն անտպաւորականն
անգամ, կը ծածկէ իր մէջ եւ զոր արուեստա-
գէտը կը յաջողի տեսնել ու յայտնաբերել:
Արուեստագէտին եւ իրերուն միջեւ ներքին
դէմ-յանդիմանական հաղորդակցութիւն մը
կ'ապահովէ այդ յաջողութիւնը:

Նկար մը, ուր արուեստը դրած ըլլայ
դրոշմն իր կատարելութեան, խորիմաստ այլ
հարազատ մարմնացումն է երեւակայութեան,
այսինքն երազող հոգիի այն ամենաթափանց
պրպտումներուն՝ որոնցմով բոլոր ըղձալի աշ-
խարհները, բոլոր քնարական ներդաշնակու-
թիւնները, իրենց բովանդակ խորհուրդներովը,
երանգներովն ու նրբութիւններովը կու-
զան երեւան: Նկար մը հրաշալի յայտարարն
է զինք յղացող արուեստագէտի հոգիին: Այն-
տեղ կարելի է կարդալ հոգեկան հսկայ աշ-
խարհ մը՝ իր ամենաբարդ եւ զրեթէ անըս-
պառ մանրամասնութիւններով: Զի արուեստը
անվախճան է:

Վրձիւնը, որ կը ծնի այդ մարմինը, առաջ

է քան գրիչը: Գիրն իսկ նկար մըն է նախ
քան բեւեռ մը կամ տառ մը ըլլալը:



Թող ներուի մեզ այս շեղումը, որ անհրա-
ժեշտ է նաեւ հայ արուեստի լուսաբանու-
թեան համար:

Տարակոյս չկայ թէ հայ երեւակայու-
թիւնն ալ, վառվռուն ու պատկերալից, ունե-
ցեր է իր արուեստները:

Նոր ու վարկածային ճշմարտութիւն մը
ըսած չենք ըլլար եթէ դիտել տանք թէ բազ-
մաստուածեան աւելի քան միաստուածեան
կրօններու մէջ է որ արուեստը ունեցեր է եւ
կրնար ունենալ աւելի բազմազանութիւն եւ
երփներանգութիւն ամէն սեռի յղացումներու:
Սեմական երեւակայութիւնը, երբայականը
զլխաւորաբար, սահմանափակուելով Եհովայի
տարամերժ պաշտամունքին մէջ եւ որդեգրե-
լով տեսակ մը արհամարհանք որ եւ կենդա-
նի արտայայտութեան դէմ՝ քարի կամ պաս-
տառի վրայ, շատ քան կորսնցուց անշուշտ
պատկերներու այն ճոխութենէն՝ որով օժ-
տուած պէտք էր ըլլալ իր հեթանոսական
(բազմաստուածեան) շրջանին մէջ: Յունական
գեղարուեստը, որ ա՛յնքան զմայլելի երան-
գաւորումներով է բնորոշուած, ծնունդ է աս-
տուածներու այն հսկայ ու պատկառելի կա-
ճառին՝ ուր հելլէն ստեղծագործ երեւակայու-
թիւնը իր բարձր յղացումներն է մարմնա-
ւորեր:

Հայը, իբրեւ մէկ հարազատ եւ ինքնու-
րոյն շոռաւիղը հնդերոպական մայր-բունին,
եթէ չունեցաւ քոյր ցեղի մը՝ հելլէն մտքին
թոնիչքի բարձրութիւնն ու յղացքի խորու-
թիւնը, կրցաւ սակայն ինքն ալ աւելի երկար
ատեն պահել իր բնատուր ընդունակութիւնը՝
խոյս տալու գոյներու տաղտկալի միօրինա-
կութենէն: Քրիստոնէութիւնն իսկ, որ սեմա-
կան միապաշտական բունէն էր իր ծագումն
առեր, իր յաղթանակներուն հետ կրօնական-
բարոյական գետնին վրայ, ունեցաւ նաեւ իր
պարտութիւնները գեղագիտական մարզին
վրայ, ինչպէս հնդերոպական այլ ցեղերու՝
նաեւ հայկական իրականութեան մէջ:

Գիտենք թէ Արեւմուտքի մէջ հեթանոս
ելլազային յաջորդեց քրիստոնէայ Խտալիան:

Խտալիան ալ, սակայն, իր կարգին ունեցաւ իր Վերածնունդը: Լէոնարտօ տա Վինչիներ, Միքէլ Անճէլօներ, Ռաֆայէլ Սանցիօներ լոյս-աշխարհ եկան Ապոլլոդորներու և Զեւքսիաներու, Պոլիգնոտներու եւ Պարհասիոսներու տեղ: Դիցաբանական հին ներշնչումները, թէև փոխանակուած էին սուրբգրական նոր ներշնչումներով, բայց իտալական հանճարը չէր կրցեր բոլորովին հրաժարիլ այն իսկական գեղարուեստական շնորհէն զոր հին վարպետները, ա՛յնքան անդիմադրելի հմայքով մը, կտակեր էին անոր: Ստոյգ է որ խստակրօն բարոյականութիւն մը, զգաստութեան թերեւս թիւր ըմբռնումով մը, յափշտակեր էր արուեստէն սրբազան մերկութեան մը բովանդակ մանրամասնութիւնները, բայց նախահայրերու ոգին անոնց վրձիններուն դեռ կուտար անզաղտնապահութեան մը յանդրանութիւնը՝ հին յղացումները թափանցիկ շրջարշներու տակ պատկերացնելու:

Հոգին զժուար կը փոխէ իր էութիւնը:

Տարբեր չէ կարելի մտածել հայ հոգիին համար:

Հայ մանրանկարչութիւնը այս տեսակէտով գուրկ չէ շահեկանութենէ:

Հետաքրքրական պիտի ըլլար անշուշտ որ մասնագէտներ երեւան բերէին բոլոր այն պատմական եւ հոգեբանական փուլերը՝ որոնցմէ անցեր է հայ նկարչական արուեստը անհրաժեշտօրէն:

Որմանկարը նախատիպն ըլլալով բոլոր նկարներուն՝ անհաւանական չէ որ հայ կրօնաշունչ երեւակայութիւնն ալ իր աստուածներն ու հաւատալիքի բոլոր առարկաները պատկերագրած ըլլայ նախապէս իր մեհեաններու պատերուն վրայ: Այս ճաշակն ու արուեստը իրենց վերջամնացութիւններն են ունեցեր արդէն քրիստոնէական վանքերու սեմերուն վրայ: Հեթանոսութենէ քրիստոնէութիւն փոխանցման շրջանը ոչ մէկ կասկած թէ մեր արուեստագէտ հայրերուն հրիտակեր է մեր դիցապաշտ պապերու նկարչական շնորհն ու յղացումները, էութեան աննշան փոփոխութեամբ, չըսելու համար նոյնութեամբ եւ միայն տարագի փոփոխութեամբ:

Սպիտակամօրուս պատկառելի ձերունին, որով հայ վրձինը, հոգ չէ թէ օտար աղղեցութիւններու տակ, կ'անձնաւորէ Հայր-Աստուա-

ծը, մի՞թէ չի մատներ զորո՞ւմ երեւակայութեան մը՝ որ երբեմն Արամազդ հայր-աստուածը կամ աստուածներու հայրն է յղացեր: Եղջերաւոր ու պոչաւոր դեւերը, որոնցմով մեր վանքերու որմերը կամ եկեղեցիներու վարագոյրները մերթ կուտան մեզ դժոխքի ուրուանկարը, չե՞ն յիշեցներ մեր նախահայրերու երեւակայած թղպաներն ու ալքերը: Թերեւս եղաւ ժամանակ մը՝ երբ Անահիտի դիմագիծը, արուեստագէտներու երեւակայութեան մէջ կենդանի, ծառայեց որպէս նախատիպ Աստուածամօր հայկական նկարներուն:

Ամէն անգամ որ առիթն եմ՝ ունեցեր դիտելու հայ վանքի մը որմանկարները կամ աւետարանի մը մանրանկարները, միշտ ալ այն տպաւորութիւնն եմ ունեցեր թէ կը զըտնուիմ հեթանոս-քրիստոնէական շունչով ու շնորհով օժտուած երեւակայութեան մը արտադրութիւններուն առջեւ: Ոգիները, թըռչունները, կենդանիները, բոյսերը, արաբանկարները (arabesques), այս բոլորն ունին հեթանոսագրոշմ սրբութիւն մը եւ բազմաստուածեան ներշնչում մը: Սխալ է՝ անշուշտ խորհիլ թէ Լուսաւորիչ կրցաւ կամ ուզեց խաւարեցնել հայ արուեստը, փճացնելով արուեստի բոլոր գործերը: Վկայ աւետարանները, որոնց լոյսով հայ վրձինը պատրաստեր է իր ամենալի բուրաստանները, իր սքանչելի մանրանկարները:

Այդ աւետարաններէն մէկը ես տեսայ Մշոյ Ս. Յովհաննու մենաստանին մէջ: Տասնեկեցերորդ դարու հայ վրձին մը այդ աւետարանի առաջին էջերուն վրայ է փոխադրել իր «Ամենալի Բուրաստան»ը: Կ'ըսեմ փոխադրեր է, վասն զի հաւանաբար ան ընդօրինակութիւն մըն է լոկ, քանի որ զարդանկարներու լուսաբանութիւնը Շնորհալիի կողմէ եղած կը նկատուի գիրքին մէջ:

Հետաքրքրութեան համար այստեղ կը դնեմ այդ նկարներէն մէկ քանիներուն նկարագրութիւնը՝ զոր հապճեպով արձանագրեր եմ յուշատետրիս մէջ Ս. Յովհաննէս այցելութեանս առիթով 1913 Հոկտեմբեր 5/18ին:

Ահա ատոնք.—

1.— Եզեկիէլի տեսիլը քոբար գետին վրայ:

2.— Գուշակումն մարգարէից.— Շինգ կարգ, ընդամէնը քսանեւիւր մօրուսաւոր եւ անմօրուս անպելս անձեր, որոնց մէջ կը նշմարուի նաեւ Աստուածածինը՝ մանուկ Յիսուսը զրբ-

կած: Մէջտեղ բարձրացած է ծառ մը, հաւանաբար ազամաթղենի, վերջաւորուած չորս տերեւներով՝ որոնց վրայ նստեր է Մարիամ: Աջակողմը, վերէն վար կարգով, տասներկու եւ ձախակողմը երեք անմօրուս մարդիկ եւ անոնց մօտ, զոյգ-զոյգ, — բաց ի՛ վերէն վար հաշուելով՝ երկրորդ կարգէն՝ որ երեք է, — տասներեւեկ անձ, որոնցմէ երեքը անմօրուս անպելս: Ծառին տակ ընկողմնած է մօրուսաւոր մը, աչքերը գոց՝ իբր այն թէ կը խոհայ, գլուխը բարձր՝ հանգչեցուցած աջ թեւին եւ մաշկեակը քաշած մինչեւ գլուխը:

3.— Մարիամի աւետիսը. — Հրեշտակին ձեռքը կայ երկար սլաք մը:

4.— Յիսուսի ծնունդը. — Այս նկարին տակ կայ հետեւեալ բաւական հետաքրքրաշարժ պատկերը: Բաժակածեւ ամանի մը մէջ նըստեր է Յիսուս, որպէս թէ անթարի վրայ նըստած պուտտան եղած ըլլար: Ձախակողմը ծնրազրեր է կին մը, ձեռքը բռնած ազանեգլուխ շիշ մը՝ որուն բերնէն կը վազէ հեղուկ մը, հաւանաբար իւղ: Կնոջ ետին կը տեսնուին երկու այլանդակ զառներ՝ որ կը նային հակառակ ուղղութեամբ: Յիսուսի ձախակողմը նստեր է անմօրուս մարդ մը՝ ձեռքերն երկարած զէպ ի բաժակը: Ասոր ետեւ, առանձին, նոյնպէս նստեր է մօրուսաւոր մը՝ որ, ձեռքը մօրուսին, կը նայի վերեւի պատկերին:

5.— Պայծառակերպութիւն. — Յիսուս, իր երկու կողմերն ունենալով Մովսէս եւ Եղիա: Ձախակողմինը անմօրուսանպելս:

6.— Ղազարու ցարութիւն. — Մարիամ եւ Մարթա իրենց ձեռքերուն վրայ են վերցուցած Յիսուսը: Ղազարոս անմօրուս անպելս:

7.— Դրախուր. — Այնտեղ կը տեսնուին չորս գետերը, ծառ մը՝ որու վրայ թռուներ են չորս թռչուններ: Արզարներու հոգիները հոն ներկայացուած են թռչուններու երեւոյթին տակ:

8.— Իսահակի զոհը:

9.— Յիսուսի քառասնօրեայ գալուստը:

10.— Յիսուսի մկրտութիւնը. — Յիսուս մինչեւ վիզը ջուրին մէջ ընկղմած:

11.— Կանայի իարսնիքը. — Հետաքրքրական: Թագակիր սրնգահար մը հոս, քշոցակիր մը հոն: Ուրիշ մը կանգնած է կարասածեւ ամանի մը առջեւ, ուսկից դուրս կ'ելլեն երեք

բոյսեր: Մեկուսի աթոռի մը վրայ բազմեր է լուսապսակաւոր մը:

12.— Անդամալոյծի բժշկութիւնը եւ Պետրոսի նաւէն դուրս կանչուիլը:

13.— Յիսուսի երուսաղէմ մուտքը:

14.— Ոսնլուայ:

15.— Յիսուս կալանաւորուած Պիղատոսի առջեւ:

16.— Պետրոսի ուրացութիւնը եւ խաչափայտը կրելը:

17.— Խաչելութիւն:

18.— Թաղում:

19.— Գժոխքի աւերումը եւ Ադամի ազատութիւնը:

20.— Յարութիւն. — Յիսուս չ'երեւիր, միայն դերեզմանին մօտ կանգնած է աւետաւոր հրեշտակը:

21.— Համբարձում:

22.— Հոգեգալուստ:

Եւ դեռ ուրիշներ:

Կը ցաւիմ որ միջոց չեմ ունեցեր արձանադրելու բոլոր նկարները: Գտնելու անոնց ամբողջական նկարագրութիւնը եւ քիչ մը աւելի խոր ուսումնասիրելու այդ «Բուրաստան»ը:

Այս բոլոր մանրանկարներուն մէջ աւելորդ պիտի ըլլար անշուշտ փնտոել այն բարձր շունչը՝ որ կը բնորոշէ ժամանակակից արուեստը: Անոնց մէջ կը պակսին զլրաւորաբար լոյսի նբութիւնները, խորքի խորհրդաւորութիւնը, արտայայտութեան ցայտուն ու խօսուն եղանակաւորումները, հոգեբանական վայրկեաններու կենդանի յայտնաբերութիւնը, շարժումներու աշխուժութիւնն ու շնորհալիութիւնը, զիձերու անսօղիւտ ներդաշնակութիւնը, մանրամասնութիւններու տրամաբանական դասաւորումը, յղացումներու զուտ գեղազիտական դրոշմը, անանուն յարացոյցի մը հմայիչ քօղաւորումը: Եւ այս պակասները կը բացատրուին, սակայն, ասորում աչք միջավայրով եւ կեանքի այն պայմաններով՝ որոնք կը բաժնեն անցեալը ներկայէն եւ հանճարները հանճարներէն: Յետոյ, կայ հիմք մը՝ ուր հանճարներն ու արուեստները կը ծածկուին յաճախ, առանց կարենալ՝ բնականոն փթթումով մը եւ աստիճանական զարգացումով մը՝ հասնելու իրենց վախճանական բարձրութեան: Վասն զի ասոր համար անհրաժեշտ է հող եւ արեւ:

Հայ հին դեղարուեստը հրաշալիօրէն կը ներկայացնէ այդ հիմքը: Հակառակ այն օգտապաշտ ձգտումին, որով արուեստագէտը — թող ներուի ինծի այդ բառով որակելու մեր լաւագոյն մանրանկարիչները — կը ջանայ կրօնա-բարոյագիտական շունչ մը տալ իր բոլոր յղացումներուն, այդ նկարներուն մէջ դուք կրնաք նկատել չափով մը նաեւ գեղեցկագիտական եթէ ո՛չ գուտ, ինչպէս ըսինք, գոնէ կռահելի վրձնում մը, գլխաւորաբար գոյներու անվթար պայծառութեան, կենդանութեան, համադրութեան եւ ներդաշնակութեան մէջ: Դժուար չէ նաեւ նշմարել տեսանողական այն ոգին՝ որով կեանքի խորհուրդները՝ հոգ չէ թէ կրօնաշունչ պատկերացումներով մարմին կը հագնին: Կը զգաս թէ այդ մարմիններուն վերեւ ալ երազ մը կը թեւածէ, երազ մը տարտամ, ստոյգ է. բայց ո՛չ նուազ սրտագրաւ: Երազի այդ պատմութեան մէջ է որ մենք կը տեսնենք արուեստի քրիստոնէութիւնն ու հեթանոսութիւնը, մէկին բարոյագիտական զրոշմն ու միւսին գեղագիտական երանգը միախառնուած: Ահա թէ ինչպէ՛ս Աւետարանը հայ արուեստագէտի վրձինին տակ կ'ըլլայ նաեւ «Ամենալի Բուրաստան» մը:

Հարկ է ըսել անցողակի թէ հայ մանրանկարչական արուեստը բոլորովին գերծ չէ մնացեր նոյնպէս Արեւմուտքի միջնադարեան նոյնատիպ արուեստի ազդեցութենէն: Եթէ ճիշտ է թէ Կիլիկիան է եղեր գլխաւոր օրրանը այս արուեստին՝ ինքնին կը հաստատուի նաեւ այս վարկածը: Չունենալով ձեռքի տակ հայ մանրանկարչութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ՝ կը զգուշանանք երկարել սեփական ենթադրութիւններու շարքը: Միայն կը խորհինք թէ շատ քիչ ջանք թափուած է դուրս բերելու թրքահայաստանի վանքերու փոշիներուն տակ թաղուած — եւ այժմ, աւա՛ղ, անոնց աւերակներուն տակ հետախաղաղ կորսուած — մանրանկարչական այն գեղեցիկ դանձերը՝ որոնցմէ մէկն էր մեզ այս տողերը թելադրող Մշոյ Ս. Յովհաննէսի ձեռագիր թանկագին աւետարանը՝ իր «Ամենալի Բուրաստան»ով:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏՐԱՊԻԶՈՆԻ

5 Յունուար 1921, Տրապիզոն
(Հանուած մեր «ՏԱՐՕՆԱՇՈՒՆԶ»
ձեռագիր գործէն):

Ք Ր Ո Ն Ի Կ

ԱԿՆԱՐԿ ՄԸ ԱՅԺՄԵԱՆ ՀԱՅ ՄՏԱԽՈՐ ԿԵԱՆՔԻՆ ԿՐԱՅ

Բ. ԱՐՏԱԱՍՀՄԱՆԻ ՄԷՋ

Արտասահմանեան մեր նորագոյն հրատարակութեանց մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն Սրբմեան Հայրիկի երկերու ամբողջական հաւաքածուն զոր ստուար հատորի մը մէջ ի լոյս ընծայեց Նիւ Եորքի «Հայ Կրթական Հիմնարկութիւնը» Պ. Պատրիկ Կիւլպէնկեանի նիւթական աջակցութեամբ, եւ հանգուցեալ Գեոր Գէորգ Թէրզիպաշեանի Ֆիւզուլիին երկրորդ հատորը որ Պոլիս լոյս տեսաւ:

Սրբմեան հօր դէմք մըն էր, որ իր անձին հմայքով, իր խօսքին, գործերուն, գրքերուն յառաջ բերած խոր ազդեցութեամբ իր ժամանակին տիրած է եւ անկորուստ յիշատակ մը ձգած է իրմէ մերօրեայ պատմութեան մէջ: Մեր այժմեան երիտասարդ սերունդը անոր անունը պատկառանքով կը յիշատակէ, անոր կեանքին ու գործունէութեան մեծ գծերուն վրայ ալ կրնայ որոշ տեղեկութիւն ունենալ՝ շնորհիւ թորգոմ արքեպիսկ. Գուշակեանի գեղեցիկ հատորին, բայց անոր գրական արտադրութեանց մասին ո եւ է գաղափար պիտի չունենար — քանի որ իր գիրքերը բոլորն ալ սպառած են — եթէ ներկայ հրատարակութիւնը չգար այդ պէտքին գոհացում տալ: Այս հրատարակութիւնը գերծ չէ թերութիւններէ ու պակասներէ. վանգոյժն ու Հայգոյժը, որ հեղինակին կարեւորագոյն էջերէն են, չես գիտեր ինչո՞ւ մանրադիտական տառերով տպուած են. կան բաւական տպագրական սխալներ, կը պակսի սկիզբը հակիրճ կենսագրական մը, կը պակսին իւրա-

քանչիւր երկին վրայ ծանօթագրութիւններ, իւրաքանչիւր երկի՝ բաց ի մէկ քանիէն՝ տպագրութեան թուականն իսկ չէ նշանակուած: Բայց ինչպէս որ է՝ մեծարժէք ու բազմօգուտ գործ մըն է որ կատարած է Կրթական Հիմնարկութիւնը հատորի մը մէջ ամփոփելով մեծ Հայու մը գրական ամբողջ արտադրութիւնը եզայն դնելով Հայ երիտասարդութեան տրամադրութեանը տակ: Սրբմեան բառին բուն նշանակութեամբ «գրագէտ» մը չէ. ինքնուս միտք մըն է, որ ըսած է ինչ որ իր ներքին ձայներն իրեն ներշնչած են. բայց Յ. Թումանեան որ անոր հողեկան մեծութիւնն ու անձնաւորութեան գորութիւնը հիացմամբ ընդունելով հանդերձ, անոր գրքերուն մէջ գրական արժէք չէր տեսներ եւ անոր «ինքզինքը բանաստեղծ կարծելը» հեղուութեամբ կը յիշէր, կը սխալէր. Սրբմեան ունի գրական բնածին տաղանդ, բանաստեղծի թոիչ իսկ ունի, բայց արուեստէ գուրկ է, տարօրինապէս անհաւասար է, զմայլելի հատուածներու քով տափակութիւններ, ինքնատիպ գաղափարներու քով հասարակ տեղիքներ կը գտնենք յաճախ իր գործերուն մէջ. սակայն անտարակուսելի է որ անոնց ինչ ինչ էջերը մինչեւ այսօր հաճոյքով կը կարդացուին, կ'ազգեն, կը յուզեն կամ կը հմայեն: Այդ արտակարգ անձնաւորութեան մէջ գրական մարզուն — ինչպէս եւ հանրային գործիչին — վերլուծումը, իր մեծ յատկութիւններով, ու թերութիւններով, աշխատանք մըն է որ առարկայական ու լիակատար կերպով դեռ չէ կատարուած եւ որուն կատարումը այս հրատարակութեան շնորհիւ պիտի դիւրանայ:

Շատանանք առայժմ հոս յիշատակելով ինչ որ այդ մասին այնքան սիրուն կերպով ըսած է Եղիշէ Դուրեան Պատրիարք այդ հատորի յառաջաբանին մէջ. «Հայրիկի գրուածները՝ թէեւ գրական արուեստի հրապոյրը չունին, սակայն չենք կրնար ուրանալ թէ անոնք իրենց պարզ բայց խորունկ արտայայտութիւններուն մէջ կը պահեն բնական ու սրբատառուզ գեղեցկութիւն մը: Մանաւանդ որ մեր ամօթխած ու հայրենաբաղձ բարքերուն նկարագիրը զոր հայրական ջերմ գղափայտութեամբ ու կիրթ փորձառութեամբ կ'աւանդէ մեզի, դասեր են որոնք չեն կրնար իբրեւ զօղանջիւն բախել մեր ականջները, այնքան հնչուն է և թրթռուն Հայրիկի սրտին վրդովեցուցիչ գանգակին պղինձը: Մեր կեանքին գիրքը պիտի կարդանք իրմով, իր մէջ ծրարուած անցեալ մը վերջիչելու համար ի պատիւ մեր ցեղին»:

Պէտք է շնորհաւորել Հայ Կրթական Հիմնարկութիւնը — մասնաւորապէս անոր եռանդուն ու ձեռներէջ ընդհ. քարտուղար Պ. Տիքիճեանը՝ այս հաւաքածուն հրատարակելու գաղափարը յղացած ըլլալուն համար: Երանի՜ թէ այդ նախաձեռնութիւնը կողիացեալ չմնար, եւ ոչ միայն ուրիշ այս կամ այն կազմակերպութիւնը այլ եւ Կրթական Հիմնարկութիւնը ինքն իսկ՝ հետեւէր տրուած այս օրինակին: Բաղմաթիւ են մեր հանգուցեալ վաստակաւոր հեղինակները, ինչպէս եւ մեր նահատակ գրագէտներն ու բանաստեղծները, որոնց գործերը թերթերու մէջ ցրուած կը մնան, կամ մասամբ զրքի ձեւով տպուած՝ սպառած են վաղուց եւ այժմ անգտանելի: Հրատարակչական մեծ Ընկերութեան մը հիմնարկութեան եթէ սպասենք, կը վախնամ որ երկար ստիպուինք սպասել: Մաղթելով հանդերձ որ այդպիսի Ընկերութիւն մը — որ ա՛յնքան կարեւոր պահանջի մը գոհացում տալու սահմանուած պիտի ըլլայ, — օր մը հիմնուի լուրջ ու ամուր պայմաններու մէջ և կատարուելիք գործը լիալիբ, մեթոտիկ ու տեւական ձեւով իրականացնէ, մենք խրախուսելու ենք թիկատինցիի հաւաքածուն կամ Խրիմեանի հաւաքածուն հրատարակողներուն նախաձեռնութիւնը, եւ մղելու ենք ուրիշ խմբակցութիւններ կամ անհատներ հետեւիլ այդ օրինակին: Այս օրերս լոյս կը տեսնէ թո՛վմաս թէրգեանի բանաստեղծութեանց

ամբողջական հաւաքածուն, իր որդւոյն նախաձեռնութեամբ: Կը յուսանք որ Ս. Յակոբեանց միաբանութիւնը պիտի տպագրէ Պետրոս Դուրեանի գործերու ամբողջական հաւաքածուն իբր «Եղիշէ Դուրեան Մատենաշարի» առաջին հրատարակութիւն եւ Հայաստանի կառավարութիւնը պիտի տայ մեզի այնքան ատենէ ի վեր սպասուած Յովհ. Թումանեանի ամբողջ երկերուն լիակատար քննական հաւաքածուն, ինչո՛ւ Կրթական Հիմնարկութիւնը չհրատարակէ Սրուանձտեանցի կամ Խաչատուր Միսաքեանի, Սրտաշէս Յարութիւնեանի կամ Տիրան Չրաքեանի՝ օրինակի համար՝ գործերուն հաւաքածուն (1):

(1) Այս տղերք գրած էի երբ սացայ խումբ մը դաւանակցական գրողներու եւ գործիչներու շրջաբերականը որով կը յայտնեն թէ մտադիր են հրատարակել մեր նահատակ գրողներէն ոմանց գործերու ժողովածուները եւ այդ շարքը որոշած են սկսիլ Ռուբէն Զարգարեանի գործերուն նուիրում քանի մը հատորներով: Այս նախաձեռնութիւնն ալ — ինչքան ալ անոր նախաձեռնարկները սխալ մը գործած ըլլան այդպիսի գուց գրական ծրագրի մը իրագործման շուրջ միմիայն մեկ կուսակցութեան պակասող գրագէտներ համախմբելով (ու անոնց հետ՝ նաեւ այնպիսի անձեր որ աւելի քաղաքական գործիչ են քան գրականութեան մարդ), միեւնոյն այդ սեւակ ձեռնարկի մը շուրջ ու եւ է կուսակցութեան պակասող կամ չեզոք եւ իրապէս գրական արժանիք ու հեղինակութիւն ունեցող մտաւորականներ անուշտ պիտի միանային, — զովեղի է ինքնին եւ քաջալերանքի արժանի: Ռուբէն Զարգարեան որուն առաջին հատորը՝ ինչպէս կը հաղորդեն ինձի՝ ի մօտոյ լոյս կը տեսնէ, հայ բանաստեղծական արձակին ամենէն գմայլեղի վարպետներէն մին է, եւ մեր գրականութեան նշանակելի ծառայութիւն մատուցանել է անոր գրական գործերուն ամբողջական հաւաքածուն հրատարակելը, մանաւանդ որ այդ գործերուն մեկ կարեւոր մասը տեղ չէր գտած իր իսկ հրատարակած «Յայգալոյս» հաւաքածուին մէջ եւ այդ հաւաքածուն ալ վաղուց սպառած է արդէն: Այս ձեռնարկը քաջալերել ու գողներէն կը խրնդուի առնել Մասնախումբին հրատարակ հա-



Թէրզիպաշեան գերապայծառի Ֆիւզուլիին երկրորդ հատորը (Ֆիւզուլիի անդրադարձակամը) 720 էջով ստուար զիրք մըն է, որուն ընթերցումը զիս կը հաստատէ ու կ'ամրացնէ այն սքանչացման մէջ որով խօսեցայ առաջին հատորին վրայ: Այո՛, հոս ալ կը գտնենք նոյն բազմակուտակ շեղումները բուն նիւթէն, ամբողջութեան բազմաբարդութիւնն ու ցրուածութիւնը, բայց այդ թերութիւններն իսկ ուրիշ կերպ կ'երեւան ու թերեւս կը գաղբին թերութիւն ըլլալէ, երբ կ'ըմբռնես հեղինակին բուն դիտաւորութիւնը, որ միմիայն Ֆիւզուլիի գործն ուսումնասիրել է՛, այլ անոր հետ, անոր շուրջ, անոր համեմատութեամբ, ուսումնասիրել ամբողջ մարդկային միստիքականութիւնը իբր հոգեկան մեծ շարժում մը եւ իբր գրական որոշ ու խոր արտայայտութեան ձեւ մը, թէ՛ պարսկական, թէ՛ հնդկական, թէ՛ եւրոպական, թէ՛ արաբական, թէ՛ հայկական եւ թէ՛ եւրոպական միջնադարեան շրջանի միստիքական կամ միստիքաշունչ արտագրութեանց բաղդատական ուսումնասիրութիւնը, յատկանշական կտորներու բազմաթիւ մէջբերումներով (որոնց մեծ մասը Հայ լեզուով առաջին անգամ թարգմանուած է՛լեր են), պատմական, հոգեբանական, աստուածաբանական, գեղեցկագիտական մեկնութիւններով: Մ'արդկային հոգին տիեզերական հոգւոյն հետ հաղորդակցութեան զնոդ մտաւոր մեծագոյն շարժման ու անոր այլազան բարձրագոյն արտայայտութեանց վրայ հանրագիտական հսկայ աշխատութիւն մըն է որուն առիթը, մեկնակէտն է՛ մեծ միստիքական քերթող Ֆիւզուլին: Բարձր մտածման ու զերագոյն գրականութեան սիրողներու համար՝ մտաւոր մեծ վայելքներու անհուն պարտէզներով պաշարուած բերրասենեակ դիւթական ապարանք մըն է այս աշխատութիւնը: Խորագէտ ցանկալի է որ գտնուին մեկենասներ որ կարելի

նա՛մ նուիրաւոմբերէն մեկ կամ քանի մը հաս, իւրաքանչիւր մեկ տղարի կամ քանի քանի ամէն նուիրաւոմբի փոխարէն պիտի տուի հրասարակուած հասրներէն օրինակ մը: Հասցե՛ Dr. L. Krikorian, 126. Rue du Faubourg Saint-Denis, Paris (10e).

դարձընեն հրատարակութիւնը վերջին երկու հատորներուն այս նշանաւոր երկասիրութեան որ մեր հմտական գրականութեան կոթողաձեւ արտագրութիւններէն մին պիտի մնայ:

Պոլսոյ Շարժում շաբաթաթերթը շատ լաւ ըրաւ այդ գործին վրայ ուշադրութիւնը հրաւիրելով թուրք գրագէտներու, եւ անկից ի վեր թուրք մտաւորական միջավայրին մէջ բուն հետաքրքրութիւն մը արթնցաւ դէպ ի այդ մեծարժէք երկասիրութիւնը. թուրք գրողներէ ոմանք անոր երկու հատորներն հատուածներ իրենց համար թուրքերէն թարգմանել տալով, ապշութեամբ եւ հիացմամբ հաստատեցին թէ Արեւելքցի մեծ բանաստեղծին վրայ այդքան խորագնին ու բազմակողմանի աշխատութիւն մը թուրքերէն լեզուով գոյութիւն չունէր (հաստատելով այսպէս ինչ որ ենթադրաբար ըսած է ի ես ինքս առաջին հատորին նուիրած գրախօսականիս մէջ). անոնք զիմեցին նոյն իսկ իրենց կրթական նախարարութեան՝ խնդրելով որ անօգնէ այդ երկասիրութեան ամբողջական թուրքերէն թարգմանութեան մը հրատարակման. այդ խնդրանքը համակրութեամբ ընդունուեցաւ, ու մօտիկ ապագայի մը մէջ երկու հատորներուն թուրքերէն թարգմանութիւնը լոյս պիտի տեսնէ, —ինչ որ աւելի ևս զրզիւ մը պէտք է ըլլայ հայ զրասէր մեծատուններու համար գործին մնացեալ երկու անտիպ հատորներուն տպագրութեան օժանդակելու, որովհետեւ ամօթ մը պիտի ըլլար Հայոց համար որ ողբացեալ հեղինակին այս մեծ աշխատութեան մնացեալ կէսն անտիպ մնար՝ երբ թուրք մտաւորականներ ու կառավարութիւնը կ'աշխատին, զոհողութիւն յանձն կ'առնեն անոր առաջին հատորներուն թուրքերէն թարգմանութիւնը հրատարակելու:

Թէրզիպաշեան Գերապայծառի գործին թուրք մտաւորական շրջանակներուն մէջ յարուցած հետաքրքրութիւնը ունեցաւ ուրիշ շահեկան հետեւանք մը եւս, այն է որ թուրք ծանօթ գրագէտներ — որոնց մօտ Շարժում շաբաթաթերթի խմբագիրը գնաց թուրքահայ մտաւոր յարաբերութեանց հարցն արձարծել — պէտքը ցոյց տուին թուրքերու կողմէ հայ ազգային մշակոյթին ծանօթութեան համար աւելի լուրջ աշխատանքներու

քան ինչ որ եղած է ցարդ, ինչպէս որ Հայոց համար հարկ կայ թուրքերու հին ու նոր գրականութեան մասին աւելի մօտիկ տեղեկութիւն ստանալու համար ընել աւելի մեթոտիկ ու յարատեւ ջանքեր քան ինչ որ փորձուած է ցայսօր (եւ գիտենք որ թուրքաց կողմէն գրեթէ ոչինչ եղած է մինչեւ հիմայ, ու մեր կողմէն, թէրգիպաշեանի գործէն դուրս, քիչ բան): Այդ արժիւ Բէօփրիւիւզատէ Փուատ պէյ, Օսմանեան Համալսարանի թուրք գրականութեան պատմութեան ուսուցիչ, որ արդէն 1922ին Պոլսոյ «Տարիւլ-ֆունուն էտէպիթ Փաքիւլթէսի Մէճմուսը» հանդէսին մէջ շարք մը յօդուածներ հրատարակած էր հայ ու թուրք գրականութեանց իրարու վրայ ունեցած ազդեցութեան մասին, յօդուածներ որոնց հայերէն թարգմանութիւնը երեւցած են ճակատամարտ թերթին մէջ, նոյն նիւթին վրայ վերսկսած է տալ միեւնոյն բովանդակութեամբ յօդուածներ Շարժումին: Փուատ պէյ իբր մեկնակէտ կ'առնէ Հայոց ժողովրդական երգերուն ու միջնադարեան աշուղական կամ աշուղաձեւ բանաստեղծութեանց նուիրուած իմ ֆրանսերէն հատորներս, որոնցմէ զլրատորապէս կը խոստովանի ճանչցած ըլլալ Հայ բանաստեղծութիւնը, եւ կը յայտարարէ անգամ մը եւս թէ այդ հատորներու ընթերցումը գինքն այն եզրակացութեան հասցուցած է որ Հայ բանաստեղծութիւնը պարզապէս հետեւողութիւն մըն է թրքականին (!): Իր յօդուածներուն հիմքը կազմող այդ տիրական գաղափարը սխալ է, սխալ գոր Փուատ պէյ թերեւս չպիտի գործէր, եթէ Հայոց ամբողջ հին ու նոր գրականութեան եւ անոնց բովանդակ մշակոյթին այլազան ձեւերուն արտայայտութեանց ծանօթ եղած եւ նոյն իսկ եթէ գէթ իմ այդ հաւաքածուներս ուշադրութեամբ կարդացած ու անոնցմէ ոմանց ինչ ինչ պատկերներուն կամ բացատրութեանց վրայ կանգ առնելու տեղ անոնց ամբողջին ինքնայատուկ ոգին, մտայնութիւնն ու ոճն ըմբռնել ջանացած ըլլար: Թէ հայ ցեղը ե՞րբ ու ի՞նչքան ատեն եւ ի՞նչ չափով կրած է իր մշակոյթին, լեզուին, բարքերուն մէջ թուրք ցեղերու ազդեցութիւնը եւ թէ այդ ազդեցութիւնը ի՞նչքան տեղ կը բռնէ մեր մշակոյթին մէջ մասին մէջ, թէ ի փոխարէն ի՞նչ եղած է թուրք մտաւոր ու մանաւանդ գեղարուեստա-

կան կեանքին մէջ հայ ցեղին բերած բաժինը, ասիկա շատ բարդ ու մեծապէս շահեկան հարց մըն է, որով պիտի գբաղիմ Անասիտի յաջորդ թիւերէն մէկուն մէջ, Փուատ պէյի յօդուածներու շարքին ամբողջական երեւումէն յետոյ:




Մեր արտասահմանեան գրական նորագոյն ամենէն գեղեցիկ արտադրութիւններէն մին ալ, թորգոմ արքեպսկ. Գուշակեանի ընդարձակ յօդուածաշարքն է իր վարպետին՝ Եղիշէ Դուրեան Սրբազանի կեանքին ու գործին վրայ: Անիկա երեւցաւ Եգիպտոսի Արեւօրաթերթին մէջ, բայց լիակատար ուսումնասիրութիւն մըն է, որ պէտք է երեւայ եւ անշուշտ պիտի երեւայ հատորի ձեւով: Բիչ անգամ մեր մէջ անձնաւորութիւն մը, եւ այնպիսի բարդ ու ճոխ անձնաւորութիւն մը ինչպէս է Դուրեան սրբազանը, ուսումնասիրուած է այնքան բազմակողմանի խորաթափանց ու անկողմնակալ ըմբռնողութեամբ եւ արտայայտուած այնքան նրբութեամբ, ճշդութեամբ ու հրապոյրով, ինչքան յաջողած է ընել թորգոմ սրբազան իր այս գործին մէջ: Խրիմեանի նուիրած իր գիրքը՝ պաշտուծի խանդավառ երգ մըն էր, ուր կուռք կամ խորհրդանշան գարձած մեծ անձնաւորութիւն մը հեռուէն, առանց անոր ամբողջ անձին ու գործին վերլուծման, կը տարփողուէր քան կը բացատրուէր: Այս ուսումնասիրութեան մէջ, հեղինակը ոչ միայն կը փառաբանէ, այլ տարր առ տարր կը վերլուծէ անձնաւորութիւնը գոր կը սիրէ, բայց գոր կը ճանչնայ շատ մօտէն, եւ անոր մեծ յատկութիւններուն հետ կ'ուրուագծէ նաեւ — ի՞նչքան փափկութեամբ բայց եւ պարկեշտօրէն, արդարամտօրէն — անոր այս կամ այն մարդին մէջ թուլութիւնները, որ նորէն իր յատկութեանց չափազանցումէն կամ անպատշաճ գետնի վրայ կիրարկումէն յառաջ կուգան:

Բաց ի իր վերլուծական ճարտարութեան, անձնաւորութեան մը հոգւոյն ու նկարագրին էական ծալքերուն մէջ թափանցելու կարողութենէն, գոր թորգոմ սրբազան ցոյց տուած է այս գործին մէջ, ան հոն ի յայտ բերած է նաեւ արտայայտութեան ճոխութիւն

մը, ճշգրտութիւն մը եւ այլազանութիւն մը, որ գմայլելի են: Ինքը, որ մեր ամենէն օծուն ու ներդաշնակ եկեղեցական բեմբասացն է, այս գործով կը դառնայ նաեւ մեր ամենէն վարպետ գրագէտներէն մին:

Պէտք է հոս յիշատակեմ Սիոնի բացառիկ թիւը որ նուիրուած է Դուրեան Պատրիարքի յորելեանին: Գրական գործ մը չէ ան, բայց բայց քիչ գրական գործ այնքան յուզիչ է ու գեղեցիկ որքան նկարագրութիւնը Ս. Յակոբեանց հինաւուրց վանքին մէջ կատարուած յորելեանին կրօնական ու տօնախմբական հանդիսութեանց: Ատիկա ապրուած գրականութիւն մըն է, եւ ամենէն բարձր ու ազնիւ տեսակէն: Հոն կատարուած է ամենէն սրբտառուչ ու վեհաշուք դէպքերէն մին որ աշխարհիս վրայ տեղի ունեցած ըլլան.— մեծ ուսուցիչ մը՝ պաշարուած իր հասուցած ընտիր աշակերտներով, մեծ հաւատացեալ մը պաշարուած իր ուխտակիցներով, այդ ամբողջ լուսաւոր խումբը պաշարուած բովանդակ ժողովուրդի մը յարգանքովն ու սիրովը, միացած՝ մեծ Տօնի մը մէջ որ Մտքին գերակայութեան տօնն է, Հոգիին փառաբանումը, Իտէալին երկրպագութիւնը, և բազմադարեան դժբախտ ազգի մը իր մտաւոր անկորուստ եւ անխոցելի գորութեան գիտակցութեամբ ինքնասփոփանքն ու ինքնակազդուրումը:

Երուսաղէմէն, ստացանք նաեւ հատոր մը որ պատմական որոշ արժէք ունի եւ յարգելի աշխատութիւն մըն է, Մկրտիչ եպիսկ. Ազաւնունիի Միաբանք եւ այցելուք Հայ Երուսաղէմի գիրքը: 500 է աւելի էջերով հատոր մըն է ուր հեղինակը այբուբենական կարգով յիշատակած է բոլոր այն հայ անձնաւորութիւնները որ այցելած են Երուսաղէմ, կամ հոն ապրած ու գործած են, Կիլիկեան թագաւորներ, հայ ամէն աստիճանի կրօնաւորներ, Ս. Յակոբեանց վանքի միաբաններ, գրագէտներ, քաղաքական գործիչներ, նշանակելի ուխտաւորներ, իւրաքանչիւրին հակիրճ ու խնամեալ կենսագրութեամբ:



Արտասահմանեան հրատարակութեանց մէջ յատուկ ուշադրութեան արժանի է Եր-

ուանդ Մեսիականի Գրական դպրոցներ Ֆրանսայի մէջ գրքոյկը, բանախօսութիւն՝ Նիւ Եորքի Կրթական Հիմնարկութեան գրական երեկոյթներէն մէկուն արտասանուած եւ գորնոյն Հիմնարկութիւնը հրատարակած է: Մեսիական հարուստ խառնուածքով եւ գրական ճոխ հմտութեամբ պատուական գրող մըն է, ազնիւ հոգևով, ջերմ ու բաբախուն զգայնութեամբ, եւ որ դժբաղդաբար՝ կեանքի պահանջներէն հարկադրուած՝ վաճառականութեան մէջ գնաց խրիլ եւ բաւական տարիէ ի վեր շատ աւելի քիչ կ'արտադրէ քան ինչ որ պիտի ընէր անշուշտ եթէ մնար գրականութեան ամբողջովին նուիրուած: Ի՛նչ աղուոր գործ մըն էր իր Ի խնդիր կատարելութեան գիրքը, զոր հրատարակեց երկու տարի առաջ, կեանքի վրայ իմաստասիրական եւ բարոյախօսական վեհոգի տեսութեանց շարք մը, որուն պէս քիչ ունինք մեր գրականութեան մէջ: Ներկայ հատորը կուռ ամփոփում մըն է ֆրանսական ժամանակակից գրականութեան դպրոցներու ուղղութեանց և հակիրճ որակում մը այդ դպրոցներու գլխաւոր վարպետներուն գործին:



Ասոնցմէ գատ, պէտք է յիշատակել Փրօֆ. Կարապետ Սողիկեանի «Յոյգեր ու Խոյգեր» տիտղոսին տակ հրատարակուած անտիպ գրութեանց հաւաքածուն, զոր ի յոյս ընծայեց Պրնէէն-ժընէյի «Հայ Դպրոցը» իր շահեկան եւ օգտակար հրատարակութեանց շարքին մէջ: Սողիկեան բազմերախտ ուսուցիչ մը եղած է Խարբերդի Եփրատ Քօլէճին մէջ, եւ սերունդները զոր կրթած է՝ նպատկառաքով ու գուրգուրանքով կը յիշատակեն անոր անունը: Արհաւիրքի օրերուն, ան իր պաշտօնակիցներուն կողկոճմահ նահատակումը տեսնելէ յետոյ, բանտին մէջ ինքն ալ նահատակի մահով վախճանեցաւ: Իր գրութիւններէն շատերը կորսուած են, Պ. Նշան Պէկեան լաւ ըրած է հրատարակելով ինչ որ անոնցմէ կրցած է պահպանուիլ: Ոտանաւորները անարուեստ են՝ ընդհանրապէս. բայց կան հոն սիրուն ինքնատիպ զաղափարներ, եւ ազնիւ արի սիրտ մը կը տաքցնէ կ'ողբուրէ զանոնք. այդ շարքին ամենէն ուժեղ էջերն անոնք են զոր գրած է Կիլիկեան կոտորածներու շրջա-

նին (1909): Աւելի շահեկան են արձակով շարադրուած կտորները, կեանքի վրայ դիտողութիւններ, որոնք հասուն ուղեղ մը, մաքուր նկարագիր մը ի յայտ կը բերեն եւ հակիրճ յստակ ոճով մը գրուած են:



Յիշենք վերջապէս «Տաթեւ» տարեցոյցը որ գրական ու բանասիրական էջերու արժէքաւոր հաւաքածու մըն է, գրագէտ եկեղեցականի մը՝ Հալէպի առաջնորդ Արտաւազգ Եպիսկոպոսի խնամքովը կազմուած, եւ Պ. Գարագաշի «Պարսկահայ Տարեցոյցը» որ գովելի ջանք մըն է գրական շարժում մը ստեղծելու Պարսկաստանի Հայութեան մէջ եւս, ուրկից այնքան կարող Հայեր ելած են, բայց ուր չես գիտեր ինչո՞ւ գրական ուժեղ գործունէութիւն մը գեո երեւան չէ եկած, մինչ պարսիկ հոյակապ քաղաքակրթութեան եւ հայ ազգին միջեւ ի՞նչ թանկագին հաղորդակցութեան միջոց մը կրնար ըլլալ այնտեղի Հայութիւնը, որ ցարդ չափազանց քիչ բան ըրած է այդ դերը կատարելու համար:



Արտասահմանի հայ գրականութեան հրատարակութեանց մէջ մեծ ու հրճուաբեր յայտնութիւններ եղան՝ նախորդ տարուան ընթացքին, երկու նոր գրողներու, Շ. Շահնուրի եւ Զ. Մ. Որբունիի զոյգ վէպերը, Նահանջը առանց երգի եւ ֆորձը, որ գրեթէ նոյն ատեն երեւցան:

Երկու վէպերն ալ իրենց նիւթը կ'առնեն վերջին շրջանի մեր մեծ աղէտներէն յետոյ օտար երկիրներ գանգուածովին ապաստանիլ եկած գաղթական Հայութեան, մասնաւորապէս երիտասարդ սերունդին, կեանքէն: Այդ երկու գրքերու երեւման առթիւ ըսողներ եղան թէ գաղութահայութիւնը, որ իրաւունք ունի իր գրականութիւնն ունենալու, ահա՛ վերջապէս կը սկսի ունենալ զայն այդ երկու վէպերով: Ասիկա սխալ էր. մեր ժամանակակից գրականութիւնը մեծ մասամբ գաղութահայկական եղած է արդէն. հայրենի հողին վրայ գրուած եւ Հայաստանի ժողովուրդին բնիկ հոլերանութիւնը, կեանքը, բարքերը

արտայայտող գործերը (Աբովեան, Խրիմեան, Սրուանձտեանց, Պոռչեանց, Մուրացյան, Թլկատինցի, Թումանեան, Զարդարեան, Եայլք) փոքրամասնութիւնն են. ստուարագոյն մասը մեր գրական գործիչներուն, մեր կամքէն շատ աւելի զօրաւոր արտաքին հանդամանքներու բերմամբ, ապրած ու արտադրած են վեհետիկ, Պոլիս, Թիֆլիս, Մոսկուա, Իզմիր, Լն., եւ արտայայտած են զլիսաւորապէս օտար կեղրոններու մէջ ապրող Հայ ստուար համայնքներուն բարքերը, տիպարները, հոգեբանութիւնը, Հայաստանի եւ իր ծոցին մէջ ապրող ժողովրդին կեանքին ալ գործեր նուիրելով հանդերձ: Ներկայ երկու վէպերուն տարբերութիւնը Շիրվանզադէի վէպերէն կամ Զօհրապի նորավէպերէն, այն է որ այս վերջինները Պաքուի կամ Թիֆլիսի հայ գաղութներու կեանքը կը պատկերացնեն մինչ առաջինները մեր պատմութեան վերջին շրջանի աղետաշարքին հետեւանքով աւելի հեռաւոր երկիրներ եկած համախմբուած հայ նորագոյն գաղութներու գրական արտայայտութիւնն ըլլալ կը ձգտին. եւ իբր այդ ալ՝ բոլորովին նորութիւն չեն, քանի որ պատերազմէն իսկ առաջ Տիկին Զապէլ Եսայեան Փարիզի մէջ ուսանելու կամ զարգանալու եկած խումբ մը հայ երիտասարդ մտաւորականներու վրայ գրած է իր բաւական չարալեզու եւ ծաղրանկարային ոգով բայց գրական մեծ տաղանդով յօրինած վէպը՝ կեղծ Հանճարներ, ու պատերազմէն ի վեր Համաստեղ, Հրաչ Զարդարեան եւ այլք վէպերով ու վիպակներով, Պետրոս Զարոյեան երկու թատերական գործերով արդէն տուած են Ամերիկայի կամ Ֆրանսայի հայ գաղութներու կեանքէն ներշնչուած գործեր: Իրական նորութիւնը, Շահնուրի եւ Որբունիի վէպերուն մէջ, գրական երկու գօրեղ ու անձնագրող մտազանդներու յայտնութիւնն է: Իրարմէ շատ տարբեր, բայց հաւասարապէս ուշագրաւ են երկուքն ալ՝ իրենց ինքնուրոյն յատկութիւններով, մեր գրականութեան մէջ նոր նօթ մը բերող իրենց կեանքի տեսիլով ու արտայայտման ձեւով:

Ինչ որ հասարակաց է այդ երկուքին, եւ կը կազմէ նաեւ մէկ ուրիշ ու կարեւոր նորութիւնն այդ երկու գործերուն, պատկերացումն ըլլալն է տենդոտ հոգեբանութեանը գաղութի մը որ իր նկարագրով ու պայման-

ներով շատ տարբեր է բոլոր այն գաղութներէն որ մեծ պատերազմէն առաջ գոյութիւն ունէին հայրենիքին մօտիկ կամ անկից հեռու այլ եւ այլ տեղեր: Երէկուան գաղութները — թէպէտ Համիտեան հալածանքներու և ջարդերու հետեւանքով կազմուած, — փոքրամասնութիւն մըն էին, իրենց ետեւ ունենալով ցեղին ստուար զանգուածը՝ հայրենի հողին վրայ հաստատ մնացած եւ որ հոն՝ թէեւ զուրկ ո եւ է քաղաքական ազատութենէ՝ կ'ապրէր ազգային կեանքով մը. այդ երէկուան գաղութներուն եւ հայրենիքի Հայութեան միջեւ յարաբերութիւնները — բաց ի՛ թրքահայերու համար՝ Համիտեան շրջանին ամենէն սեւ օրերուն — իրովին գոյուրիւն ունէր, ուզողը կրնար դառնալ հայրենիք կամ գէթ իր ծննդավայր արեւելեան կամ կովկասեան քաղաքը ուր հո՞ծ Հայութիւն կար. երիտասարդութիւն մը օտար կեդրոններու մէջ կ'ուսանէր՝ յետոյ իր երկիրը դառնալով իր միջավայրին մէջ գործելու համար: Այսօր, մեծ պատերազմին մեր ցեղին բերած անօրինակ հարուածներէն յետոյ, մեր հայրենիքին ստուար մասը թափուր է Հայութենէ, թրքահայութեան մնացորդները որ զանգուածօրէն խուճապային փախուստով եկած են ապաստանիլ այս կամ այն օտար երկիրը, իրենց ետեւ արհաւիրքի եւ սուղերու յիշատակն ունին գրեթէ միայն, ու ոչ մէկ կարելիութիւն իրենց երկիրը դառնալու: Կայ կովկասեան Հայաստանը, ուր ազգային կեանքի նոր եւ բեղմնաւոր շրջան մը սկսած է, բայց անոր հետ գաղութներու յարաբերութիւնները դժուար են, արգելքներով, պատուարներով լի, անոր եւ գաղութներու միջեւ դեռ թանձր մըշուշներ կան: Հաւաքական այս դժբաղդ կացութեան վրայ պէտք է աւելցնել իւրաքանչիւր գաղթական անհատին անհատական դժուրակ ճիգի հարկը՝ իր հացն այս օտար միջավայրին մէջ՝ ուր շատերն եկած ինկած են անպատրաստ ու անզէն՝ ճարելու: Այս նիւթական ու հոգեկան կացութեան ծնունդն են Շահնուրի եւ Որբունիի վէպերը (1):

Որբունի, որ շղուտ եւ թրթուռն խառնուածք մըն է եւ իրեն յատուկ ոճ մը դարբ-

նած է՝ կուռ, հակիրճ, համակ խտացած զգայնութիւն, այս ընդհանուր եղերական պատկերին մէջ զատած է որոշ մանրամասնութիւնը եւ անոր վրայ կեդրոնացուցած է իր վէմը — աղէտին փոթորիկէն Մարտէլլ նետուած գաղթական ընտանիքի մը մարտիրոսութիւնը՝ համեստ ապրուստ մ'իսկ ճարելու անկարելիութեան տոամին մէջ: Նիւթական անարհաւիրութեան արհաւիրքը, թշուառութեան ճնշող, խեղդող, անբանացնող, անբարոյացնող գաղութիւնը, երբեք մեր մէջ չէին նկարագրուած այնպիսի անաւոր գորութեամբ մը, հոտորութենէ զուրկ՝ իրականէն բխած այնպիսի արու եւ խոր շեշտով մը, ինչպէս այս գրքին մէջ: Առաջին իսկ տողերէն՝ հեղինակը ձեռք մտցնելով իր նկարագրելու ուզած դժոխքին մէջ՝ իր ոճին, վիպելու կարողութեան, կեանքն արտայայտելու ինքնատիպ ու հօր կեանակին չափը կուտայ. «Մենք աղքատ էինք: Եւ մեր տունը աղքատութեան ամենաչետին աստիճանին վրայ կը գտնուէր: Դէմքերը նիհարութենէն ցամքած ու աչքերը խորը ինկած էին արձանի ծակ աչքերու պէս: Մէկգմէկու երես չէինք նայեր: Դուրսնիս կախ կը նստէինք: Ամօթը գոր կը զգայինք մեր հոգիներու մէջ՝ նկարագրութենէ զուրս էր, ու երբ մեր նայուածքները պատահամբ իրար հանդիպէին, մեզմէ իւրաքանչիւրը միւսին աչքերուն մէջ, տեսակ մը քէնով ու ատելութիւնով խառն արտայայտութեամբ՝ մեր դժբաղդ կացութեան պատասխանատուն կը փնտռէր:

«Որբ մնացած ու գաղթական այս ընտանիքին անզբանիկ գաւակն էի. ուստի հօրս փոխանորդը: Բաղցէն խթանուած նայուածքները — ինչպէս ձմրան քունին գարթնող օձը — երբեմն կը բարձրանային եւ կ'ուղղուէին դէպ ի ինձ, թաթխուած սրտածմիկ աղաչանքով մը՝ կը ճնշէին սիրտս, ու մոռնալով մեր կացութեան բուն արտաքին պատճառները՝ պատասխանատուութիւնը կուզար կը նստէր վրաս: Այնքան անզուրկ ու անխնայ էին այդ նայուածքները իրենց ողորմելի ամբաստանութեան մէջ իսկ... Երբեմն գիշերները լո՛ւկ մնջիկ նստած կ'ըլլայինք մեր ճաշասրահը, իւրաքանչիւրս ինքզինքին քաշուած, ինքնամփոփ, առանց մէկը միւսին բառ մը ուղղելու: Այդ ծանր կշռող պահերուն իմացակալութեանս աշխատանքը այնքան կը պղստ-

(1) Ինչպէս եւ Պ. Զարոյեանի գեղեցիկ վէպը գոր Անահիտի մէջ սկսած ենք հրատարակել:

բէր ու կը կնճոտէր որ յանկարծ, մտածումներու պոռթկումէ մը ընդնշմարեցով պատասխանատուութիւնս, ինչպէս խաւարին մէջ գործուող ոճիրը՝ նշմարուած կայծակին ակընթարթ մը տեւող լուսաւորումէն, դէմքս թեւերուս մէջ կը ծածկէի, ըլլայ աչքերուս մէջ փայլող արցունքները, ըլլայ յանցաւորի ամօթապարտ դէմքս պահելու համար, ինքզինքս կը նախատէի, կ'անիծէի, կ'ատէի եւ դեռ հակառակ այս մեղմացուցիչ միջոցներուն, այդ դիմադրող պատկերը չզոհանալով իր նուաստացուցիչ արարքէն, հետզհետէ աւելի ու աւելի մեծնալով՝ կատղած հրէշի մը պէս կ'ելլէր կը կանգնէր սենեակին մէջ զբտնուող սեղանին վրայ ու կոկորդը պատռելու աստիճան կը պոռար: Ազատելու համար այս անաւոր տեսիլքներէն՝ մէկ ուտումով կը ցատկէի տեղէս ու կը մտնէի անկողին՝ ուր տակաւին երկար ժամանակ չարչարուելէ ետք, թմրած մարմինով կը կորսնցնէի ցորեկուան կեանքի խժոժութիւններու գիտակցութիւնը գիշերուան քունին մէջ, որ յաճախ կը վիտար երջանիկ երազներով որոնց ես միամտորէն կը ժպտէի...»:

Փոքրիկ ընտանիք մըն են, հայրերնին արիւնոտ փոթորիկին մէջ կորած. երկու դեռատի տղաք եւ աղջիկ մը իրենց մօր հետ՝ միսմինակ օտար հողի վրայ, կեանքի պայքարին մէջ անօգնական ու աննեցուկ մտլորած. մեր երէկուան հաւաքական յոյսերն ու խորտակումները, մեր ժողովրդին ու հայրենիքին արդի կացութիւնը, գաղութներու ընդհանուր պատկերը՝ տեղ չեն բռներ այդ վէպին մէջ, — կը զգացուին միայն իբր աներեւոյթ ու անտեսական խորք մը այդ միակ ընտանիքի մը չարչարանքին պատմութեան, որ ամբողջ վէպը կը կազմէ: Սիրոյ դրուագներ, մելոտոմական դէպքեր, հակամարտ հոսանքներու բաղխում, նկարագիրներու հակադրութիւն՝ չենք գտներ հոն: Պարզ, չոր պատկերացումն է չորս խեղճ էակներու որ աղքատութեան մէջ կը փտտին, կը մաքառին անոր դէմ եւ չեն յաջողիր: Ինչքան ազդեցիկ է սակայն այլազան ու միշտ կենդանի նկարագրութիւնն այդ անգոր պայքարին: Որբունի լաւ վիպող է. եւ խորքին մէջ՝ բանաստեղծան ունի նուրբ գիտողութեան կարողութիւն, իրերն ու մարդիկը ցայտուն նկարումով ցոյց տալու շնորհք, դէպքերն ու ժեղ ու հակիրճ

ձեւով պարզելու ձիրք: սիրուն համեղ հեղինակութիւն մը՝ դունագեղ, հոժ, տրոփուն քնարերգութեան մը հետ, որ վիպումին արագութիւնը երբեք չի ծանրացնէր այլ զայն կը դարձնէ աւելի կենդանի, տպաւորիչ ու յանկուցիչ:

Այս բոլոր թանկագին յատկութիւններով, Որբունիի վէպը գլուխ-գործոց մը կրնար ըլլալ, եթէ հեղինակը հոգեբանական երկու ծանր սխալ գործած չըլլար որ զայն կ'եղծանեն ու վերջին մասին մէջ մանաւանդ յառաջ կը բերեն հեղինակին ուզածին ճիշտ հակառակ տպաւորութիւնը: Վէպին գլխաւոր հերոսը, այդ չքաւոր այրի կնոջ անդրանիկ գաւազը, որ հայրիկի դեր պէտք է կատարէ այդ անտէր ընտանիքին, ապիկար մըն է, որ միշտ ջանքեր մը կ'ընէ իր աշխատանքով իրեններուն նեցուկ հանդիսանալու, բայց միշտ այ կը ձախողի, մինչեւ որ կը խրի վերջնական քստմնելի անկումի մը մէջ: Թշուառութեան դէմ պայքարին մէջ է որ լաւագոյն կերպով կը յայտնուի մարդուն բարոյական ուժը, անոր գերագոյն առաքինութիւնը. ինչ գեղեցիկ է մարդը որ մաքուր կը մնայ ծայրագոյն աղքատութեան մէջ եւ որ իր անվհատ ճիգով կը յաղթէ վերջապէս անոր: Ինչո՞ւ Որբունի նախընտրած չըլլար այդպիսի տիպար մը, որուն պէս փառք Աստուծոյ՝ մեր ցեղը շատ տուած է եւ այսօր իսկ մեր գաղութներուն մէջ կուտայ մեծ թիւով, — որովհետեւ եթէ մոլորողներ, փշրուողներ, սուղողներ, կորչողներ կան՝ աւա՛ղ՝ իրօք, շատ աւելի բազմաթիւ են մեր այժմեան գաղութներուն մէջ այն երիտասարդները որ իրենց աշխատանքով նոր կեանք մը ստեղծած, գիրք մը շինած, ապագայ մը ապահոված են: Ըստ իս՝ այդ էր որ պէտք էր ի վեր հանել վէպի մը մէջ, ուր աղքատութեան ամբողջ գաղութութիւնը նորէն կարելի էր ցոյց տալ, բայց անոր հակադրելով անայլայլ ազնուութիւն ու անվհատ քաջութիւն ունեցող մարդուն յաղթական նկարագիրը: Կամ՝ եթէ Որբունի կ'ուզէր ցոյց տալ տիպար մը որ շահեկան ու յուզիչ է որովհետեւ անկարող է իր ուժերէն վեր պայքարի մը՝ իրեն անձանօթ, խորթ ու օտար միջավայրի մը մէջ, կրնար գէթ իր հերոսին տալ երազողի, բանաստեղծի հոգի մը, ինչ որ պիտի չքմեղացնէր անոր ապիկարութիւնը թշուառութեան դէմ պայքարին

մէջ: Վէպին հերոսը տեղ մը Պոստիէրի տոգեր կը յիշէ, ուրիշ տեղ մը իր գրքերը (Փեթրոնիուս, Տիքընս, Տարուին, Լէոն Կոթիէ, եւն.) ծախելու դժնդակ հարկին մէջ գտնուիլը կը պատմէ, ինչ որ այդ տղուն մէջ մտաւորական պատանիի անցեալ մը ենթադրել կուտայ. բայց հեղինակը բնաւ շեշտած չէ այդ գիծը, այդ տիպարին հոգեբանութեան հիմնական գիծը չէ դարձուցած զայն: Գրական ձիրք ունեցող, արուեստագէտի հոգիով օժտուած, գեղեցկութիւն ստեղծելու համար ծնած պատանի մը, որ բանուորի տաժանելի կեանքին կը դատապարտուի եւ չի տոկար, չի յաջողիր, կ'իյնայ. կը փճանայ, — գեղեցիկ է, անառարկելի, սրտայոյզ, եւ անոր պարտութեան իսկ մէջ՝ թշուառութիւնն է որ զգուելի է եւ ոչ ինք: Այդպիսի էակներու համար, բնական է, գեղեցիկ նոյն իսկ ու սրտաշարժ՝ որ չկարենան դրամ վաստկիլ. անոնք ուրիշ հարստութիւն ունին, որ ամենէն թանկագինն է հարըստութիւններուն: Բայց այս վէպին հերոսն ատիկա չէ. ան բան մը չէ, քուրջ մըն է. եւ ատոր համար վերջ ի վերջոյ իր ձախողումներուն մշտական կրկնութիւնը գինք աւելի հակակրելի կը դարձընէ քան իրեն դէմ մոլեգնող թշուառութիւնը: Իսկ երկրորդ ու մեծագոյն սխալը, հոն է երբ Որբունի այդ գոհը կը դարձընէ դահիճ մը եւ ապիրատ մը: Մայրը, չարչարանքէն մաշած ու հատած, կը մեռնի յետին թշուառութեան մէջ. զայն թաղելու համար իսկ դրամ չկայ. անդրանիկ որդին իր գրքերուն մնացորդը կը տանի կը ծախել, 175 Փրանք կը ճարէ ատով, բայց փոխանակ տուն դառնալու՝ փողոցի կնիկներու հետ կապելայի մը մէջ կ'երթայ խմել ու գինովնալ. դրամը ամբողջ հոտ կը հալի, կնիկները քթին խնդալով գինք կը ձգեն կ'երթան, խելացնոր, կատղած, կը խորհի (գիշեր է, ուշ ատեն) դէմը ելած ունեւոր անցորդ մը սպաննել՝ դրամը կողոպտելու համար. ատոր ալ չի յաջողիր, վասն գի ճիշտ այդ բոպէին ուրիշ տեղէ եկած գնդակ մը այդ անցորդը գետին կը տապալէ. բայց զայն կողոպտելու տեղ՝ ոտքով հարուած մը կուտայ անոր դիակին ու կ'երթայ փողոցի մը վրայէն անցնող կամուրջի մը տակ կծկտիլ անտուն թափառականներու մէջտեղը: Հոն կիսանուազ գետին փոռած աղջիկ մը կը գտնէ, զոր կը բռնաբարէ, կը յափշտակէ անոր ծոցէն ինկած

դրամապանակը, որուն մէջ (ի՛նչ հակասութիւն գիշերը դուրսը մնացած այդ ողորմելի աղջկան մօտ լեցուն դրամապանակի մը գոյութիւնը...) արժէքաւոր դրամաթղթեր կը գտնէ, եւ ատոնցմով՝ մայրն ու տունը բոլորովին մոռցած՝ հետեւեալ առտուն կ'ելլէ կը նետուի շոգեկառք մը եւ Փարիզ կ'երթայ՝ երեւակայելով որ հոն բաղդը իրեն աւելի բարեացակամ պիտի ըլլայ...:

Այս հրէշային վախճանին յանգեցուցած է Որբունի իր հերոսը, հաւանօրէն թշուառութեան անբարոյացուցիչ ազդեցութիւնը պատկերացնելու եւ այդ գերագոյն անկման մէջ ինկողն իբր զոհ եւ թշուառութիւնն իբր դահիճ ներկայացնելու համար: Բայց ընթերցողին զգուանքը այլ եւս ինկողին է որ կ'ողողուի միայն. այդ աստիճանի անկման կարող մէկը արժանի չէ արդէն ապրելու: Բուն գոհը, այդ գործին մէջ, հեղինակին զմայլելի տաղանդն է, որ հոգեբանական այդ կրկնակ մեծ սխալներուն պատճառով, չէ յաջողած՝ հակառակ վէպին մէջ ծայրէ ծայր՝ մանաւանդ առաջին մասերուն մէջ՝ յայտնուող առաջնակարգ յատկութիւններու՝ իրականացնել այն սարսուղացիչ, հզօր ու ազնիւ վէպը որ կարելի էր եւ որուն քովէն անցած է, սքանչելի հատուածներ միայն տալով անկից՝ անտրամաբանական ամբողջութեան մը մէջ, որ տգեղ վերջաւորութեան մը կը յանդի:

Լեզուն՝ այս վէպին մէջ՝ մաքուր է, կոկիկ, ճշգրիտ, մերթ փոքրիկ սայթաքումներով, որ սակաւաթիւ են եւ յաջորդ գործերու մէջ անշուշտ բոլորովին կ'անհետանան:

Որբունի իր վէպը անուանած է ֆորմը, որ ենթատիտղոսն է ընդհանուր վերնագրի մը՝ Հալածուածները, ուրեմն առաջին հատորն է շարքի մը զոր ծրագրած է եւ որուն ընդհանուր տիտղոսը ենթադրել կուտայ թէ աղէտէն չորս հոգեբունց ցրուած թրքահայութեան բեկորներուն տոհմն է որ պիտի զըլխաւորապէս իր այլ եւ այլ երեսներով պատկերացնէ:

Այս երիտասարդ հեղինակը, որ իր առաջին գործին ինչ ինչ էջերուն մէջ վարպետի յատկութիւններ երեւան բերած է, որ օժտուած է սուր ու փափուկ զմայլելի զգայնութեամբ մը եւ ունի արդէն իր սեփական ինքնագրոշմ ոճը, պիտի տայ անշուշտ մեղի

աւելի հասուն եւ կատարեալ գործեր, ան կոչուած է հայ վիպական գրականութիւնը ճոխացնել մնայուն գործերով:



Շահնուրի հատորը, որ կը կոչուի նահանջը առանց երգի, նոյնպէս առաջին հատորն է շարքի մը որուն տիտղոսն է «Պատկերազարդ Պատմութիւն Հայոց»: Նիւթը նոյն է, պատերազմի փոթորիկէն Յրանսա քշուած հայ երիտասարդներու ողբսականը, տեսնուած նոյնպէս լեղի, ջղային, անձկալից նայուածքով մը: Որբունի իր վէպը գետեղեր է Մարսէլ, Շահնուր՝ Փարիզ: Մեծ տարբերութիւն մը, այն է որ Որբունի առած է այդ անունն նիւթէն մէկ տարր մը (անել աղքատութիւնը, ընտանիք մը որ կը փտտի թշուառութեան դէմ ամուլ պայքարի մը մէջ) եւ զայդ միայն արտայայտել ջանացած է սեղմ ու հոծ, սահմանափակուած գործի մը մէջ: Շահնուր ոչ միայն այս առաջին հատորով ուզած է յետպատերազմեան գաղթականութեան, մասնաւորապէս օտար երկինքներու տակ յանկարծակի խառնի խուռն (ու շատերը մինակ, անոք ու անգէն) նետուած երիտասարդութեան մէկ նմուշին սիրային տոամը պատմել, այլ և կեդրոնական անձնաւորութեան շուրջ, որուն հոգեբանութիւնը մանրակրկիտ կերպով վերլուծած է այն այլազան արկածներուն մէջ որոնց ան կը բաղխի, ուրուագծուած է շարք մը տիպարներ Պոլսէն Փարիզ ապաստանած հայ պատանիներու, սիրուն, վառվռուն, դժբաղդ, դեկակորոյս տղոց «պոհեմ» մը, որ հակիրճ բայց կենդանի գծերով ցոյց տրուած է, եւ որոնց մէջ «Լօխում»ը ա՛յնքան համակրելի է եւ արզահատելի, եւ ամէն բանէ դժգոհ, ոչ մէկ բանի հաւնող, մեծխօսիկ քննադատ Սուրէնը, որ երկու ճիշտ դիտողութեան հետ տասը արտաոցութիւն կը ժայթքէ Մոսկուսեան պատգամներ արծակելու ձեռով մը, ա՛յնքան կենդանի ու զուարճալի տիպար մըն է: Վէպին այդ մասը, սակայն, երկրորդական փլանի վրայ մնացած է, —հաւանօրէն ան յաջորդ հատորներուն մէջ գրաւէ առաջին տեղը,—եւ Պետրոսին ու Նէնէթին պատմութիւնն է որ տիրական բաժինը կը կազմէ գործին: Հօրը, խորունկ, յուզիչ սիրավէպ մըն է զոր ճշմարիտ արուեստագէ-

տի վրձինով Շահնուր նկարած է: Պետրոս Պոլսեցի երիտասարդ մըն է, խանդավառ, միամիտ, դադափարապաշտ հոգի — բարդ եւ առոյգ ու զգայնօտ, գրեթէ հեշտասէր խառնուածքով, — տաք սրտով ու վառ զգայարանքներով պարկեշտ ու ազնիւ տղայ մը, որ սիրող է գեղեցկութեան ու արուեստի: Ինչ մը գծագրութիւն գիտէ, կը մտնէ ֆրանսական լուսանկարչատուն մը, եւ հոն իր ապրուստը կը յաջողի համեստօրէն ապահովել: Կը հանդիպի այնտեղ երիտասարդ հրապուրիչ Յրանսուհիի մը, որ հոմանուհին է լուսանկարչատան տիրոջը՝ տարւոք Պ. Լէսքիւրին: Աւելնոտ Հայը կը սիրահարուի Տիկին ժաննին —Նէնէթին — որ զինք ապրեցնող «փաթոն»ին քով չգտած սրտի հրճուանքը այդ կրակոտ երիտասարդին մօտ կը գտնէ: Բայց օր մը Պետրոս, լուսանկարչատան մէջ մինակ մնացած, ներքին խորշերու թաքստոցները քրքրելով՝ յայտնութիւնը կ'ունենայ Լէսքիւրի գաղտնի արհեստին, որ է պոռնկադրական զգուելի լուսանկարներ յօրինել եւ ատոնց ծածուկ մեծագին վաճառմամբ ոճրապարտ վաստակ մը իրականացնել: Գաղափարը որ իր սիրած Նէնէթը գործակիցը, մեղսակիցն է այդ աղտոտ ու չարագործ արհեստին, կը զղուեցնէ, կը տառապեցնէ զինքը: Մոլեգին տեսարաններ երկու սիրահարներուն միջեւ, յետոյ Լէսքիւրի եւ Պետրոսին միջեւ, ու Պետրոս կը ձգէ իր սիրած կինը, որ հիմայ պըժգանք կ'ազդէ իրեն, կը ձղէ խանութը ու կը մեկնի, ուրիշ ո եւ է տեղ գործ ճարել ջանալու, ուրիշ տեղ առողջ կեանք ու մաքուր սէր փնտռելու:

Այդ միջոցին, պարզուկ աղքատիկ բանաւորուհի մը, Լիզ, որ կը սիրէ զինքը, եւ զոր ինք կ'արհամարհէր, կուգայ փոքրիկ տեղ մը բռնել իր ցաւատանջ սրտին մէջ. բայց երկար չի տեւեր, անհամ է այդ մխիթարչը: Պետրոսի սիրտը անբուժելիօրէն գրաւուած է Նէնէթով: Նէնէթ Լէսքիւրի հետ պտոյտի մը միջոցին՝ օթօմօպիլի արկած մը կ'ունենայ, Լէսքիւր հոն կը մեռնի եւ Նէնէթ, թեւը կոտրած, շաբաթներով հիւանդանոց մը կը պառկի: Այն ատեն, խեղանդամ ու մինակ մնացած Նէնէթը կուգայ գտնել Պետրոսը, որ բաւական դիմադրելէ յետոյ՝ նորէն կ'իյնայ անոր գիրկը, —որովհետեւ երբեք զաղրած չէ զայն սիրելէ,— կ'երթայ անոր հետ գաւառական

քաղաք մը, ուր, Նէնէթին խնայողութիւններով, կը հաստատեն լուսանկարչատուն մը: Իրենց հետ են ծերուկ Կոստանը, Լէսքիւրի լուսանկարչատան անձնուէր ու «շիրին» ծառան, եւ Պիպին, մանչուկ մը զոր Նէնէթ ունեցած է նախկին սիրականէ մը եւ որ զաւառը զրկուած՝ մայրական խնամքէ հեռու՝ պզտիկ հրէշ մը դարձած է չարութեան, երկու տիպարներն ալ շատ վարպետ կերպով գծուած:

Նէնէթ, խորին սիրով կապուած Պետրոսին, հիմայ մաքրուած է աղտեղի անցեալէն, իր մէջ ինչ որ կայ բնիկ ազնուութիւն՝ կը գտուի հետզհետէ: Պետրոս աւելի քան երբեք կը սիրէ զայն: Կը թուի թէ հիմայ երջանիկ պիտի ըլլան: Բոպէ մը Նէնէթ կը կարծէ թէ յղի է եւ թէ Պետրոսէն զաւակ մը պիտի ունենայ: Պետրոս խելայեղ՝ է երանութեամբ: Բայց յղութեան յոյսը անհիմ կը յայտնուի: Պետրոս յանկարծ կ'երթայ Փարիզ իր ընկեր չրաչին հարսնիքին ներկայ գտնուելու— ինչ սրտառուչ հոյակապ էջ այդ Փարիզի հսկայ խժտուքին մէջ անշուք անկիւն մը, հայ գաղթական երիտասարդներու «պոհեմ»ական շրջանակին մէջ կատարուող այդ հարսնիքին նկարագրութիւնը— բայց թօնէնէն, ուր Պետրոս ու Նէնէթ հաստատուած են, այդ քանի մը օր բացակայութեան միջոցին՝ Պետրոս կը ստանայ նամակ մը Նէնէթէն, ուր այս վերջինը, կարծելով որ Պետրոս իրեն չէ ներած իր անցեալը, թէ չի սիրեր զինք ինչպէս ինք զայն կը սիրէ, թէ կրնայ օր մը ձանձրանալ իրմէ ու հեռանալ, թէ ինքն իսկ արդէն անոր կեանքին մէջ բեռ մը, անոր լիովին երջանիկ ըլլալուն արդեւք մըն է, կ'ըսէ անոր՝ սրտաճմլիկ ու զմայլելի տողերու մէջ՝ իր որոշումը ընդմիջտ անկից բաժնուելու, իր Պիպիին հետ անձանօթ տեղ մը երթալ քաշուելու եւ այլ եւս ինքզինքն իր զաւակին նուիրելու: Քիչ յետոյ Պետրոս ձեռք կ'անցընէ նաեւ նամակ մը Պիպիին հօրմէն, Նէնէթի նախկին սիրական՝ «ի» անուն անձէ մը, որ կը պարունակէ մեղադրանքներու տարափ մը Նէնէթին ուղղուած, զայն ամբաստանող իբր գէշ ընկերունի եւ իբր գէշ մայր... Պետրոս հիմայ է որ կ'ըմբռնէ թէ ինչքան խոր է եղեր Նէնէթին սէրն իրեն համար եւ թէ անոր մէջ ինչ զորովի գանձեր կան եղեր զոր չէ տեսեր ցայն վայր, թէ իրեն համար ինչ լիալիր երջան-

կութեան մը կարելիութիւնը կայ եղեր անոր հետ կենակցութեան մէջ եւ չէ հասկցեր, կը փութայ շոգեկառքն առնել ու սլանալ դէպի թօնէն (ինչ աղուոր ու խորունկ են այդ եղերական ճամբորդութեան միջոցին իր խորհրդածութիւնները սիրոյ, կեանքի, մարդկային ճակատագրի վրայ): Բայց հասնելով հոն՝ Նէնէթը կը գտնէ մահամերձ, անկողնի մէջ: Պատմուածքէն կը գուշակուի որ Նէնէթ, անկարող մեկնելու, ինքզինքը սպաննել որոշեր է...: Ան կը մեռնի իր սիրելւոյն գրեկը, երեւակայելով թէ այս անգամ իրապէս յղի է, թէ զաւակ պիտի ունենայ իր «Փիէն»էն, ու անոր անշնչացած սպիտակ մարմնոյն ոտքը, Պետրոս կը մնայ խորտակուած, շուարած, նորէն մինակ ու անօք՝ կեանքի մէջ...

Ու այս ջղազայար մրրկայոյզ վէպին ամբողջ տենդափոփուր արագահոս ընթացքին մէջ, մերթ ընդ մերթ, իբր «ուրիշ» անցեալի մը, հարագատ անցեալին ցաւագին ողեկոչման ճիշդ, կը լսուի — աղեխարշ լայթ . մոթիֆ— հեռուէն, թերեւս ընդմիջտ լքուած ծննդավայր Պոլիսին խորէն ճուաջող հայ մայրիկ մը, Պետրոսին պարզուկ բարի մայրիկը, որ վէպին ամենէն պղտոր, մոռյլ ու բուռն բոպչներուն, յանկարծ իր անուշ մաքուր ձայնը կը բարձրացնէ՝ որդւոյն ուղղուած միամիտ, գորովագեղ, սրտառուչ նամակներու մէջ՝ «Անուշի՛ կ ջօճուխս իմին... Չե՞ս ըսեր, առջի օր կատունիս հորը ինկաւ. ա՛լ քաշած նեղութիւնս տեղ մը չկայ... չէվիրմէի անուշը աղուոր տուփի մը մէջ զրի եւ հայրիկդ առջի օր փօստա տարաւ. եթէ այս անգամ ալ կորսուի, ա՛լ խելքի գալիք բան է. իրա՛ւ որ շատ պիտի ցաւիմ: Աղէ՛ կ նայէ, մէջէն բաղնիքի քէսէ մը պիտի ելլէ, քեզի համար կարեցի, մասնաւոր տոկուն կերպասէ... իմին փաշա մանչս իմին...»:

Ասիկա կմախքն է վէպին. պէտք է կարգալ ծայրէ ծայր՝ տեսնելու համար թէ հեղինակը զայն ինչպիսի բարախուն միտերով, եռուն արիւնով, թրթռուն ջիղերով կենդանացուցած ու շարժման մէջ դրած է:

Շահնուր բազմապատիկ յատկութիւններով օժտուած տոհմիկ գրագէտ մըն է. ունի ինքնուրոյն դիտողութեան կարողութիւն, խոր զգայնութիւն՝ որ յաճախ նոյն իսկ բուն կը դառնայ, հոգեբանական բարդ վիճակներ թա-

փանցելու եւ արտայայտելու ձիրք, տիպար-
ներ դժեւու, բնանկարներ, բարքերու պատ-
կերներ տրոփուէն կեանքով մը վերարտադրե-
լու շնորհք, ունի սրամտութիւն, քնարելի գու-
թիւն, նկարչական տեսիլ, բիւրազան ու յան-
կուցիչ քմայք մը, եւ ոճ մը բազմաձեւ,
իր բարդութեան մէջ միաձոյլ, ճկուն, գու-
նագեղ, անակնկալներով լեցուն, մեծապէս
ինքնատիպ, խորապէս ու բնականօրէն ար-
դիական:

Տեսէք՝ օրինակի համար սա հատուածը,
որ վերջին էջն է գրքին.

«Դանդաղօրէն, դանդաղօրէն, մութէն ան-
ջատուեցաւ մեծ խաչը պատուհանին, եւ ար-
շալոյսը սկսաւ լազուարթ, Թերեւս կապտո-
բակ, թերեւս վարդադոյն:

«Հեռաւոր, չարաշուք հաջողներ, աքաղա-
ղի խուլ կանչեր, մսկոտ սօսափիւնը պար-
տէզներու, թախծոտ սոյլեր հարաւի:

«Առաւօտեան սիւքով, արշալոյսով, վար-
դով լի՝ բաց պատուհանին վարագոյրը սկսաւ
ուռիլ, մեկնելու պատրաստ առագաստի մը
պէս, փշրուելու պատրաստ ալիքի մը պէս,
որպէս երազ մը անանուն:

«Բիջ մը ջուր՝ խունկով օրհնուած, ճիւղ
մը անծանօթ տերեւ՝ աղօթքներով չորցուած,
եւ այլ եւս մեղրամոմէ զէմքին վրայ անձրե-
ւող լոյս մը՝ դողդաղացող, չարաշուք, դամբա-
նային:

«Կիսաստուերին մէջ իր սպիտակութեամ-
բը կը նշմարուի մայրիկին «քէսէ»ն, որուն
մէջ հիմայ առատ խուրձ մը կայ Նէնէթին
ոսկի մագերէն:

«Փիէն կը մնար մահճակալին եզերքը,
թմրած, պտրպպ, անգոյ, կարծես կը վազէր
անոր ետեւէն որ ժամեր առաջ մեկնեցաւ
նոյն անթափանց պահարանով:

«Ներքին խժալուր աղմուկներուն մէջ, ա-
կանջներուն անվերջանալի վզոցէն տար-
ուած, մէկէն կարծեց թէ մօտաւոր բակէ մը
ջուրթակ մը բարձրացաւ, հին շատ հին մեղե-
ղի մը բոլորին ծանօթ, որ մինչեւ հոս կ'ելլէր
անհաւասար ալիքներով, տատանելով, յամե-
նալով յարկերուն մէջտեղ, որ կ'ուզէր աւելի
երկրորդինը յուզել քան չորրորդ յարկինը, որ
ա'լ պարտասած երբեմն կը կառչէր ջուրի խո-
ղովակներուն, բայց որ կ'ելլէր, բայց որ կ'ել-
լէր մինչեւ հոս, այդ հին, շատ հին մեղեղին,
բոլորին ծանօթ...»:

Այս մեծ յատկութեանց քով, կան սա-
կայն այդ առաջին գործին մէջ քանի մը թե-
րութիւններ, զոր կարելի չէ նկատել: Նախ,
հոգեբանական սխալ մը. Պետրոս, իմանալով
Լէսքիւրի եւ Նէնէթի գաղտնի պոռնկագրա-
կան արհեստը, կը զայրանայ Նէնէթին դէմ
որ զինքը խարեր է, ամէն ինչ չէ խոստովա-
ներ, զինքը մաքուր ու անկեղծ սիրով սիրելի
կեղծեր է՝ մինչդեռ՝ ըստ իրեն՝ աղբի ծաղիկ
մըն է եղեր, որ հաճոյք միայն փնտոեր է իր
մէջ: Հասկանալի է զգուանքի, յուսախաբու-
թեան, տխրութեան զգացում մը, բայց զայ-
րոյթը արդար չէ, ճիշտ չէ, եւ ես անախորժ
տպաւորութիւն կրեցի այն կոպիտ անար-
գանքներէն որով Պետրոս կը կոխտէ Նէնէ-
թը այդ զայրոյթին մղումով: Նէնէթ, ապրե-
լու համար կապուած Լէսքիւր հրէշին, գոհ
մըն է ինքն ալ. ան շատ լաւ կրնար անկեղ-
ծօրէն սիրած ըլլալ Պետրոսը եւ զայն սիրե-
լուն իսկ համար՝ համարձակած ըլլալ իր
կեանքին պժգալի ներքինը չբանալ անոր —
եւ վէպին շարունակութեանը մէջ սրդէն կը
յայտնուի թէ այդպէս է: Պետրոս կը խոստո-
վանի որ նիւթական միջոցներ չունէր Նէնէ-
թը ապրեցնելու. անոր չէր իսկ կրնար առա-
ջարկել ձգել Լէսքիւրը եւ իրեն հետ ապրիլ-
ի՞նչ իրաւունքով ուրեմն իր զայրոյթը կ'նշ
մը զէմ որ դժբաղդ է, եւ որ Պետրոսին սի-
րոյն մէջ է որ իրական սիրտի մը կը գտնէ:
Բնաւ չեմ սիրեր նաև վէպին այն հատուածները
ուր Շահնուր Նէնէթի մը ու Լէսքիւրի մը դէմ
կատրած իր հերոսին բերնով ամբողջ ազգ մը
կը նախատէ, եւ ի՞նչ ազգ, Ֆրանսական ազ-
գը, որուն մշակոյթին մեր ազգն ա'յնքան խո-
րապէս պարտական է, որուն գրականութիւնը
միակ առաջնորդն է եղած նոյն ինքն Շահ-
նուրին՝ իր գեղեցկագիտական ճամբան գրտ-
նելու, իր ոճը դարբնելու համար (յայտն ա-
պէս Շահնուր մինչեւ ծուծը տողորուած է
Ֆրանսական մշակոյթով, ու տարամերժօրէն):
Կը զարմանամ ի՞նչպէս կրցեր է գրել սապէս
տողեր. «Նախապէս բողանոցի մը նմանցու-
ցած էր իրենց խանութը, զայթակղած ու
հարհուրած՝ կիներու այդ արտասովոր հա-
մարձակութենէն, լպրշութենէն, ներկէն. հա-
գուստներէն: Իրեն խորթ թուեցաւ Փարիզու-
հիներու մօտ ամօթխածութեան այդ պակա-
սը. բայց յետոյ սկսաւ կամաց կամաց չար-
ժուրիլ եւ առաջին օրերու այն հետաքրքրու-

Թիւնը որով կը հետեւէր հազուատներու եւ ներքնաշապիկներու անկումին, նուազեցաւ: Եւ խորհելով որ հոս բոզ չկայ, քանի որ բոլոր կիները իրարու կը նմանին, առանց խորունկը փնտռելու, իրենց լուսանկարչատունը նմանցուցի բաղնիքի, եւն. »:

« — Յրանսացի չպիտի ըլլայիր եթէ բոզ չըլլայիր (Պետրոսն է այս հրէշային խօսքը Նէնէթին ըսողը, որուն վրայ Լէսքիւր ապտակ մը կը զարնէ Պետրոսին, ինչ որ բնական է):

« — Ձեր այս կիները բոլորն ալ կը զընուին պարզապէս, այո՛, կը գնուին, երբ որ չեն ծախուիր... »:

« — Ի՛նչ խենդ եմ. կարծես թէ առաջին անգամն է որ այսպիսի պատմութիւն մը կ'իմանամ: Կատարեալ Յրանսացի է, ի՛նչ պիտի ըլլայ: »

« ... Ան եղաւ միայն կին, ֆրանսացի՛ կին... եւն. »:

Փարիզեան պուլվարներու, սրճարաններու եւ ինչ ինչ խանութներու կամ աշխատանոցներու այս կամ այն տիպարները միայն ճանչնալով, կարծել ճանչցած ըլլալ այսպիսի մեծ ազգ մը իր նկարագրի հիմնական գծերուն մէջ, անասելի միամտութիւն մըն է: Կը յիշեմ ատենով լսած ըլլալ Աղբիւր - Տարագի խմբագիր Տիգրան Նազարեանը՝ որ հայ ընտանիքի մը մէջ՝ Փարիզ, կ'ըսէր վճռաբար՝ «Ամէն ֆրանսացի կին մի Նանա է...»: Նոյն իսկ բարկացած Պետրոսի մը բերնին մէջ՝ այս տեսակ անպատկառ խօսքեր եպերելի են եւ ծիծաղելի: Ու մեր երիտասարդ գրողները պէտք չէ գործեն՝ ուրիշ ո եւ է ազգի դէմ՝ այս յանցանքը զոր չորս ու կէս գէշ տեսակի չայ կամ Յոյն ճանչնալէ յետոյ Լօթիներն ու Ֆարբէրները զործեցին մեզի դէմ:

Կ'ըմբռնեմ յուսախաբութիւնը զոր կ'ունենան Արեւելքէն եկած երիտասարդներ որ, իրենց պատանեկան օրերուն ֆրանս. զբականութեան վեհօգի հրաշակերտներուն կամ պատմութեան մեծ դրուազներուն մէջէն ազնուական, ասպետական, գաղափարապաշտ ազգ մը ճանչցած, կուգան յանկարծ Յրանսայի մայրաքաղաքին մէջ իյնալ տիպարներու մէջտեղ որ հեռու են իրենց կազմած մտատիպքին համապատասխանէլէ, որոնք բարդ են, կեղծ, շահախնդիր, ազտի մէջ թաթխուած՝ ինչպէս Լէսքիւրները: Ինչո՞ւ սակայն չնկատել իսկոյն որ ատոնք թափթփուքներն են

մեծ ազգի մը, եւ թէ այդպիսիներէ միայն եթէ կազմուած ըլլար ֆրանսական, կամ անգլիական կամ իտալական ազգը, ատոնք մեծ ազգեր դարձած չէին ըլլար: Ֆրանսական ազգին հարագատ ներկայացուցիչներուն հետ մօտիկ շփում ունեցողներն են որ զիտեն թէ Լէսքիւրներէ չէ որ ան կը կազմուի. պէտք չէ մոռնալ նաեւ որ մենք ալ Լէսքիւրներու համարժէքները ունինք մեր Արեւելքին մէջ. ու ֆրանսական ազգին հարագատ ներկայացուցիչները ճանչնալու համար հարկ չկայ նոյն իսկ բարձր դասուն մէջ մտնել, մտաւոր ընտրանիին մօտենալ, ամենէն խոնարհ դասակարգերուն մէջ անոնցմէ կը գտնենք ու բազմաթիւ (Շահնուր արդէն աւելի եւս մեղադրելի է իր հերոսին այդ արտաոց վճիռներն արձակել թոյլ տուած ըլլալուն՝ անոր համար որ նոյն իսկ իր վէպին մէջ Լէսքիւրին կողքին կայ Կոստանը, բարեսիրտ պարզուկ անձնուէր Յրանսացին, ժողովրդի մարդը, ա՛յնքան համակրելի, եւ կայ նաեւ նոյն ինքն Նէնէթը՝ որ այդ աղբիւսին մէջ ուր ինկած է՝ պահած է բնիկ ազնուութիւն մը, որ յետոյ կը ճառագայթէ, բոլորովին թօթափելով կեանքին իրեն պարտադրած ազտեղութիւնը): Տարբեր միջավայրերու, տարբեր նկարագիրներու յանկարծական բաղխումի տոամ մը կայ հոտ, որ խոր է, ճիշտ է. բայց այդ անհատական պարագային մէջ սահմանափակելու էր հեղինակը իր հերոսին տպաւորութեանց ու խորհրդածութեանց արտայայտութիւնը, փոխանակ երկու ցեղի այդ ձեւով անհարկի համեմատութիւններ ընել թոյլ տալու իր Պետրոսին:

Ուրիշ թերութիւն մը, պատմուածքին մերթ աւելորդ մանրամասնութիւններով խճողումն է. տեսարաններ որ մէկ հատուածի մը մէջ կրնային խտանալ՝ մերթ մէկ քանի էջերու մէջ երկարածուած են: Ոճն ու լեզուն ալ անհաւասար են. կան տեղ տեղ լեզուի խորթութիւններ, ֆրանսերէնէ բառացի թարգմանուած (ու գէշ թարգմանուած) ֆրագներ, աւելորդ նորաբանութիւններ. իսկ ոճը, որ զմայլելի է շատ յաճախ, ու մերթ հոյակապ՝ իր ինքնեկ յորդութեան, բնական ու հզօր ցայտքին, շողշողուն ու թրթռուն ինքնատուութեան մէջ, տղայական կամ հասարակ, նոյն իսկ գոհհիկ կը դառնայ երբեմն ինչ ինչ հատուածներու մէջ, հատուածներ որոնց

մէջ թերեւս հեղինակն ուզած է գերադրականօրէն «արդիական» ըլլալ, բայց որոնք յանգած են շղայնացուցիչ թեթեւութեան, եւ որոնց մէջ հեղինակը գրական աղուոր բարձունքներէ սահելով սրճարանի կէս-գինով պատանիներու կատակաբանութեանց մէջ կ'իյնայ, (Չա'րկ, Կովկաս, թէեւ գիտեմ թէ՛ Չա'րկ Կովկաս, թէեւ գիտեմ թէ... Դարձաւ, դարձաւ, դարձաւ... Ծխնելոյզներու վրայ կեցած հրաշէջ զինուորներու պէս վայրկեանները տեղ-քայլ ըրին անդադար... ա՛խ ըլլայի, ըլլայի դա դա դա դա դա, ան մէկ բանը ըլլայի, սպասումիս եւ յոյսիս հետ այն գիշեր, սպասումիս եւ յոյսիս... եւ ինք դարձաւ, դարձաւ...) եւն., եւն.:

Շատ չեմ սիրեր նաեւ այն կտորները ուր սիրային ցանկութեանց արտայայտութիւնը տալ կամ իր վէպին տարփատենչ հերոսներուն գիրկընդխառնմանց նկարագրութիւնն ընել ուզելով՝ Շահնուր կը հասնի սահմաններուն հեշտախառնոր գրականութեան մը, որ դեռ գրականութիւն է՝ եթէ կ'ուզէք, բայց ոչ ամենէն առողջ ու բարձր տեսակէն (օրինակ՝ առաջին գլխուն առաջին մասը, «Մըսըր պուղտայ») ին տեսարանը, եւն., եւն.): Այդ բոլորը — ինչպէս կեանքի ամէն մէկ տեսիլը — կարելի է եւ պէտք է արտայայտել գրականութեան մէջ, բայց կայ չափ մը զոր բոլոր մեծ գրագէտները գիտցած են պահել. — ինչ ինչ նշանաւոր բայց ոչ օրինակելի, մասնաւորապէս Հայոց պէս դեռ ծայրագոյն քաղաքակրթութեան մը բարիքներուն եւ չարիքներուն չհասած ու մեծ դժբաղդութիւններով հարուածուած ու տկարացած, բարոյական ուժի, բարքերու մաքրութեան մեծ պէտք ունեցող ժողովուրդի մը համար ոչ օրինակելի — բացառութիւններէ զատ:

Այս թերութիւնները արատներ են որ չեն եղծաներ զործին ամբողջութեան սքանչելի գեղեցկութիւնը եւ որ պիտի անհետանան անշուշտ Շահնուրի յաջորդ զործերուն մէջ: Այս նորեկէն շատ մեծ բաներ կարելի է սպասել, եւ այս առաջին գիրքն իսկ մեր մէջ երեւցած ամենէն արտակարգօրէն հօգօր ու ինքնատիպ զործերէն մին է:

Նկատողութիւն մը զոր կարելի է ընել Որբունիի ինչպէս Շահնուրի վէպերուն միան-

գամայն, այն է որ մեր մեծ աղէտը — կամ աւելի ճիշտ՝ աղետաշարքը — թէեւ սկզբնապատճառն ըլլայ այս վէպերուն նիւթին իսկ գոյանալուն, չի տիրեր այդ վէպերուն մէջ. կը զգացուի միայն՝ Շահնուրի վէպին մէջ, հայ երիտասարդ «պօճէմ»ի խումբին խօսակցութեանց եւ զլխաւոր հերոսին մենախօսութիւններուն մէկ քանիին մէջէն, Որբունիի վէպին մէջ ան գրեթէ բնաւ չ'երեւար: Որբունիի վէպը եւ Շահնուրի վէպին սիրային դրուագը որ անոր մեծագոյն մասը կը գրաւէ, կրնային նոյնութեամբ պատահիլ պատերազմէն ալ առաջ, երբ թրքահայոց մեծամասնութիւնը իր երկրին մէջ էր եւ ապագայի յոյսեր ունէր: Աղէտը ներկայ է սակայն երկու վէպերու հերոսներուն հոգեբանութեան մէջ, եւ ներկայ է ժխտական արդիւնքով. «հոս... վերջնականապէս կը թուլնայ թաթը տղուն (Պետրոսին) պատկանած ազգին» կը գրէ Շահնուր իր վէպին սկիզբները՝ Պետրոսին Պոլսէն փախչելու միջոցին, եւ ատիկա ահաւոր տող մըն է, սխալ տեսութեան մը վրայ հիմնուած, անհուն դառնութեան ու վնասութեան զգացումի մը արդիւնք: Որբունիի հերոսը, խեղճ թոյլ խլեակ մըն է, կեանքի դժուարութեանց հակազդելու անկարող, պայքարի անատակ, իր թշուառութիւնը բարոյական անկումով լըրճող: Շահնուրի հերոսը աւելի առնականութիւն ունի, բայց շղային է, դիւրաբորբօք, անարդար ու անգութ՝ ուրիշ գոհի մը հանդէպ, որ ողորմելի չէ քիւրտէն ապտակ կ'ուտէ ու անմիջապէս չի պատասխաներ, այլ շաբաթ մը յետոյ անոր հանդիպելուն անոր ձեռք մը կը քաշէ, մինչ խեղճ Նէնէթին երեսը կը թքնէ (ի՛նչքան անտանելի է այդ տեսարանը), ոչ փոխաբերաբար այլ իրապէս կը թքնէ եւ յետոյ թաշկինակով կը սրբէ անոր քիթին քով մնացած թուքի կտորը, եւն., եւն.: Ջրդուելի տեսարան՝ մանրամասնօրէն հանդարտութեամբ նկարագրուած (ու մտածել որ մեր դրացի Պարսիկներն են որ ըսած են. «Կնոջ երբեք պէտք չէ գարնել, նոյն իսկ վարդերով»):

Ինծի կը թուի թէ երկուքն ուրիշ խմորով հերոսներ պիտի ապրեցնէին իրենց վէպին մէջ եթէ մեր մեծ աղէտին տեսիլն ուղղակի եւ ամէն վայրկեան վարէր իրենց միտքը, եթէ զգային որ անոր դրած առաջին պարտքը հայ երիտասարդութեան ուսերուն՝

ցեղին ապագային վրայ չտարակուսիլն է եւ
 ըէկուան ուժերու կորուստը համարժէք ու
 նոյն իսկ բարձրագոյն ուժերու դարբնումով
 լեցնելու ճգնիլն է, եւ եթէ մանաւանդ իրենց
 մտքին առջև ունենային միշտ՝ թէ տարտղնած
 Հայութեան մը հետ — որուն մէջ հետզհետէ
 աճող ու ծաղկող այնքան կարեւոր ուժեր
 կան, մենք ունինք նաեւ այսօր հայրենի հողի
 վրայ հաւաքուած Հայ ժողովուրդ մը, որ՝ ինչ
 ալ ըլլայ ըէժիմը՝ իր տունը կը վերաշինէ
 տաժանելի ու օրհնեալ աշխատանքով մը, եւ
 թէ հոն է մեր ազգին ապահով, ամուր, զեղե-
 ցիկ ապագան, որուն չհաւատալը մեծագոյնն
 է աղէտներուն: Յետոյ, արտասահման ցըր-
 ուած երիտասարդութեան մէջ շատերը, խիստ
 շատերը հեռու են Որբունիի հերոսին պէս
 ապիկար կամ Շահնուրի հերոսին պէս
 բազդին բերմամբ իր բուռն ու տաք զգայ-
 նութիւնը անհարագատ միջավայրի մը մէջ
 վատնող ու ձախողեցնող տիպար ըլլալէ.
 Ինչքան աղուոր կորովներ, ինչ տաղանդի
 հպարտացուցիչ փթթումներ, մեծագոյն հրա-
 պարակներուն մէջ հայ նկարագրի, մտքի եւ
 աշխատասիրութեան ինչ կուռ յաջողութիւն-
 ներ, ոչինչէն ստեղծուած ինչ փայլուն կա-
 ցութիւններ կը պարզուին այսօր մեր աչքե-
 րուն՝ հայ գաղութներու մէջ. եւ եթէ կորչող-
 ներ, բարոյական անկման կամ ֆիզիքական
 փճացման մէջ խրոչներ, կամ իրենց ազգէն
 ուժացող, օտարացման մէջ հալող տկարներ
 կան, ինչքան բազմաթիւ են անոնք որ շքե-
 դօրէն կը յամառին Հայ մնալ, օգտուելով օ-
 տար բարձրագոյն միջավայրներէ, ինքզինք-
 նին զարգացնելով ու ճոխացնելով, դառնալով
 Հայեր աւելի նուրբ, աւելի զօրեղ, ըլլալով
 նոր ու լաւագոյն ուժեր իրենց ազգին ու հայ-
 րենիքին համար ու կենդանի փրփականալ ի-
 րենց ցեղին վարկին համար: Ատոնք չեն ե-
 րեւար բնաւ այս երկու վէպերուն մէջ: Բայց
 տրուած ըլլալով այն զեղեցիկ ու առողջ տա-
 ղանդը որով լեցուն են այս երկու սքանչելի
 նորեկները, անոնց յաջորդ վէպերուն մէջ ես
 կը յուսամ որ մեր այժմեան տարադիր երի-
 տասարդութեան եւ մեր ամբողջ ազգին ներ-
 կայացուցած պատկերը՝ իր ճերմակովն ու
 սևովը՝ աւելի ճշգրիտ ու լիակատար պիտի
 ցոլանայ, յանդէլու համար զեղարուեստական
 գրականութեան հզօր ու կատարեալ գործե-
 րու որ նոյն ատեն՝ առանց ո եւ է քարոզչա-

կան, հրապարակագրական հանգամանք ու-
 նենալու, դրական, շինիչ, սրտուպնդիչ ոգի
 մը ունենան, զեղեցկագիտական հզօր միջոց-
 ներով ազգապահպան ու ազգանորոգ դեր մը
 կատարեն:




Արտասահմանեան հայ մտաւոր կեանքին
 մէջ վերջին ատեններս ի յայտ եկած դեռ
 ուրիշ քանի մը կարեւոր կամ շահեկան երե-
 ւոյթներու մասին խօսիլը կը վերապահեմ
 յաջորդ քրոնիկիս, եւ ներկայ քրոնիկը կը
 փակեմ յարգանքի ողջոյնով մը զոր ամենքս
 պարտական ենք ուղղել մեզմէ ընդմիջտ
 բաժնուող վեհօգի երէցի մը, Յովհաննէս
 Սեթեանի, որուն մահուան լուրը վերջին բո-
 պէին կ'իմանամ խոր ցաւով:

Սեթեան իբր ուսուցիչ եւ իբր բանաս-
 տեղծ ակնածելի ու բազմբախտ զէմք մըն էր:
 Բաջ հայագէտ, հմուտ մեր նախնեաց գրա-
 կանութեան, տիեզերական մատենագրու-
 թեան էական գործերուն մօտէն ծանօթ եւ
 զանոնք խորապէս ըմբռնելու կարող, ան իբր
 հայերէնի, ֆրանսերէնի ու գրականութեան
 ուսուցիչ Պոլսոյ ու Եգիպտոսի իր երկարամ-
 եայ գործունէութեան մէջ՝ զեղասիրութեան
 եւ ազգասիրութեան թանկագին զաստիարակ
 մը եղած է մէկէ աւելի սերունդներու համար:
 Գերագնիւ հօգի, գորովալից, ջերմ ու մաքուր
 սիրտ, ան խորապէս սիրուած էր իր բոլոր
 աշակերտներէն:

Իբր բանաստեղծ, ան իր ինքնայատուկ
 ու զեղեցիկ տեղն ունի հայկական ողման-
 թիզմի լաւագոյն քերթողներուն բոլին մէջ:
 Խանդավառ աշակերտ Հիւկոյի, սիրով, զթու-
 թեամբ ու հաւատքով տոգորուն հօգի, էա-
 կանապէս քնարերգակ խառնուածք, ան Հայ
 ժամանակակից բանաստեղծութիւնը ճոխա-
 ցուց շարք մը վեհ ու լուսաւոր կամ քնքուշ
 ու խանդաղատագին նուագներով կամ քաղցր
 մեղամաղձութեամբ մը լի խոկումներով: Իր
 լեզուն, ինչպէս քնարի իր մեծ եղբայրներուն՝
 Պէշիկթաշլեանի, Թէրզեանի ու Տէմիրճիպաշ-
 եանի մօտ, գրաբառախառն աշխարհաբարն ե-
 դաւ, եւ իր ոտանաւորներուն մէջ, ինչպէս
 Թէրզեան ինքն իսկ, զայն գրեթէ նոյնու-
 թեամբ պահեց մինչեւ վերջը. իր արձակ քեր-

Թողաշունչ էջերուն մէջ, որոնցմէ ոմանք իրապէս գեղեցիկ են, ան ընդգրկեց արդի աշխարհաբարը, թէեւ հոտ ալ կը նախընտրէր իր բառացանկին մէջ լայն տեղ տալ հնաբոյր ու խրթին բառերու: Եթէ իր արուեստը միշտ կատարելութեամբ չհաւասար

նունը անկորուստ պիտի պահեն մեր մէջ իբրեւ անունը մեր ազգային բանաստեղծութեան սիրելի վարպետներէն մէկուն:



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԹԵԱՆ

րեցաւ իր ներշնչման բարձրութեան, ունինք սակայն իրմէ էջեր որ կը միացնեն շունչի զօրութիւն ու լայնութիւն, մտածման ինքնատպութիւն, զգացման անկեղծութիւն ու փափկութիւն, ոտանաւորի հոսուն դաշնակութիւն, ոճի անձնադրոշմ շնորհ, եւ ատոնք Յովհաննէս Սեթեանի ա-

Այս հակիրճ տողերուն մէջ ուր կը սզամ պատկառելի քերթողին անհետացումը, կը ցաւիմ չկրնալուս աւելի ծանրանալ իր գործերուն վրայ եւ անոր ընտիր էջերուն ինքնուրոյն գեղեցկութիւնն աւելի մանրամասնեալ վերլուծմամբ ի վեր հանել: Բայց արդէն ինչո՞ւ այդ աշխատանքը վերստին կատարել, երբ Տիրան Չրաքեան պատերազմէն երկու տարի առաջ Սեթեանի յոբելեանական հանդէսին իր արտասանած ճառին մէջ ըրած է զայն հոյակապօրէն: Օր մը երբ վերստին տպագրուի Սեթեանի հատընտիր էջերու հաւաքածուն զոր իր բարեկամներն ու աշակերտները 1912ին անոր յոբելեանի նախօրեակին, Մալէգեանի խանդաղատազին յառաջաբանով մը՝ հրատարակած են Գահիրէի մէջ, այդ ճառը պէտք է անշուշտ ատոր գլուխը դրուի: Այդ հատորէն Անախիտի ներկայ թիւին մէջ կ'արտատպեմ երկու էջ որ իրենց հակրճութեան մէջ Սեթեանի անձնական նօթը լիովին կը պարունակեն, ցաւելով որ՝ Անախիտի այս թիւին տպագրութիւնը վերջանալու մօտ ըլլալով՝ աւելի լայն տեղ չեմ կրնար յատկացնել արտատպելու համար իր գեղեցիկ ընդարձակ քերթուածներէն մին ինչպէս Խնդութիւն եւ խորհողը, Հսկայ երազն, Միայնութեան մէջ ձայներ, Անցեալին յիշատակներ, Անոնց որ ա'լ չկան:

Ա. ԶՊՊԱՆԵԱՆ

Ի Վ Ե՛Ր, Ի Վ Ե՛Ր

Գլխոյս վերեւ սըլացիր, պայծառաթեւ ո՛վ թիթեռնիկ,
 Խոյացիր անդր ի բարձունս, ո՛վ դուն արծուի վարազաթեւ,
 Գործելով ոլորապտոյտ շրջանակներ ընդարձակ
 Որոնց ցանգ կը հետեւիմ եւ չեմ թողուր ընդ երկար.
 Բարձրացիր, երկնաբերձիկ կաղնի հսկայ հինաւուրց,
 Որուն զագաթը կ'որոնեմ ու չեմ կրնար բընաւ գըտնել.
 Հովե՛ր, ի վեր սըլացէք թեւերնուդ վրայ քարշ վարելով
 Մոլորած մի տերեւ որ դէպ աստղեր կը խոյանայ.
 Ամպե՛ր բարձրաբընակ, բամբակ մարմին ձեր լուսաւէտ
 Այերաց մէջ թող յօրինէ անթիւ ձեւեր եւ անանուն՝
 Հըսկաներու պատերազմներ, նիզակ, վահան, կառք, թընդանօթ,
 Ամենի վագրերու խումբ, վիշապք առկախ եւ վոհմակ շանց,
 Բերանաբաց մողէզ անեղ, կամ հերարձակ կանանց բանակ,
 Բիւրաւոր կերպարաններ որ զբօսցունեն միաքս եւ աչերս:
 Երեկոյին ծո՛ւլս, ծառացիր եւ կըցուելով յերկնակամարն,
 Կապէ՛ թելն իմ տեսողութեանս քու բացական նըպատակիդ,
 Թող նայիմ յար ի յերկին, յերկին ցանգ լայն եւ վըսեմ,
 Եւ մոռնամ գէթ մէկ վայրկեան աշխարհն եւ իր փոքրրկութիւնք:



ՆՈՃԻՆԵՐՈՒ ԱՆՏԱՌԸ

Հորիզոնին վրայ ընդարձակ անտառ
 Տարածուի մըթին եւ տըխրազդեցիկ.
 Նոճեստանն է այն երկնից տակ պայծառ,
 Մեռելոց քաղաք մեծ, սարսուազդեցիկ:
 Եւ շընչեն ուժգին հովեր ամարան
 Փոշոյ հոծ ամպեր յարուցանելով,
 Որ պատեն կոծեն այդ մութ բնակարան.
 Որպէս մառախուղք մըրըկեն սեւ սեւ ծով:
 Հողմոց հեծմանց մէջ, շողից տակ երկնից,
 Բնութեան ձայներուն մէջտեղ հրաշագան,
 Անշարժ, անտարբեր, տըխուր, թախծալից,
 Հանգչին մեռելներն անդորր յաւիտեան:
 Եւ ինչպէս մարտէն յետոյ խոնջ զինուոր,
 Քար մը բարձ առած, հանգի՛ստ դըժընդակ,
 Իր վերարկուին տակ, լուռ, սըգաւոր,
 Պառկի աստեղաց լուրջ նայուածքին տակ,
 Դարուց սերընդոց բանակն անկենդան,
 Յետ դառն այս մարտին զոր կեանք անուանեն,
 Այդ անաշուին տակ, վերմակ սկայական,
 Հանգչի անաւոր իր խոնջութենէն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԹԵԱՆ

ՄԵՐ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՅՄԱՆԻ ՄԷՋ

Պ. Արմենակ Սագրզեանի La Miniature Persane գործին նուիրուեցան եւրոպական կարեւորագոյն թերթերուն մէջ հեղինակաւոր քննադատներու կողմէ գնահատական դրուատալից ընդարձակ յօդուածներ որոնցմէ միոյն, որ երեւցած էր Լոնտոնի Թայմզին մէջ, ամբողջական թարգմանութիւնը հրատարակեցինք: Պէտք է յիշատակենք նաեւ յօդուածները որ երեւցան անգլիական Journal of the Royal Asiatic Societyին մէջ Ուիլքինսընի, գերմանական Deutsche Literatur Zeitungին մէջ Պաշտօնի, Փարիզեան Journal des Débatsին մէջ Փօլ Ֆիէռէնսի, Syria ամսագրին մէջ Կասթոն Միժոնի յօդուածները են.:

«Բաղմաթիւ տարիներու այս աշխատանքը, կը գրէ Պաշտօնի, յանգած է այս կարեւոր հատորին որ մեր գիմացը կը դնէ բաղմաթիւ նոր իրողութիւններ ու տեսակէտներ: Սկիզբէն իսկ, Սագրզեան կը ներկայանայ հոյակապ գիւտով մը: Երլտրզի մատենադարանին մէջ, ան գտեր է Շահ-Գուլիի «Մուրաբբայ»ի մը մէջ Պիտիէյի առակներու պատկերազարդումներ, որ առաջին ակնարկէն կը յայտնուին իբր պարսկական արտադրութիւններ բայց որ մինչեւ ցարգ ծանօթ գործերէն եւ ոչ մէկուն հետ կապ ունին. Սագրզեան կը ջանայ ապացուցանել թէ այդ պատկերները Ժ. Գարէն են եւ թէ անոնց արտադրութեան վայրն է Խորասանը: Որովհետեւ ուր է թուական չէ նշանակուած, ան ջանացած է ոճին քննութենէն իսկ հանել իր ապացուցումը: Չինական մեծ ազդեցութիւնը, որուն վրայ հզօրապէս կը սնդէ, անվիճելի է...»

«Ասոնք ինդիւրներ են (թուրքեստանեան դպրոցի հարց, Ժ. Գարուն Պուխարայի նկարչութեան հարց) որ առնչութիւն ունին հիմնական սկզբունքներու հետ... Հեղինակն անոնցմով զբաղած է մանրամասնութեանց ամենասերտ ծանօթութեամբ մը, ինչպէս որ ամբողջ գործը արդէն կը յայտնէ նիւթին խորունկ տիրացում մը: Ան իւրաքանչիւր արուեստագէտի կեանքը ուսումնասիրած է անջատաբար՝ անոր գործին հետ միաժամանակ: Ան կը վերլուծէ արտադրութիւնները որ իւրաքանչիւր արուեստագէտի վերագրուած են, զատելով այնպիսիները որ իսկապէս անոր չեն պատկանիր: Ամէն մէկ նկարչի աստիճանական զարգացումը ցոյց կուտայ անոր վաւերական գործերուն վրայ հիմնուելով ու կը յանդի յաճախ Մարթինի ստացած արդիւնքներէն տարբեր արդիւնքներու...»

«Ըսենք՝ վերջացնելու համար՝ հեղինակին մեծ արժանիքներէն մէկը. ան իւրաքանչիւր արուեստագէտի մասնաւոր ոճին ճիշտ տեղը կը նշանակէ ընդհանուր ոճին զարգացման հետ համեմատութեամբ եւ կ'որոշէ աստիճանը որ անոր կը պատշաճի: Նոյն իսկ Պեհլաւի հանճարեղ նորամայժի փառքը վերածուած կ'երեւայ հոտ: Բայց ատիկա բան մըն է որուն համար գեղարուեստից պատմաբանը՝ կղզիացեալ ջահերու մասին իր տարակուսանքին մէջ՝ աւմենէն քիչ պիտի ցաւի. մօտէն քննելով այդպիսիներու գործը, միշտ կը գտնենք որ անոնք ալ իրենց ժամանակաշրջանին կը կապուին եւ իրենց նախորդներուն վրայ կը կրթնին:»

Կասթոն Միժոն կը գրէ. «Այս գործը մեծապէս կարեւոր է՝ իր պարունակած

տեղեկութեանց ճոխութեամբ, իր յստակութեամբ, իր մեթոտով, իր յայտնաբերած շատ ճշգրիտ պատմական ծանօթութիւններով ու նաեւ իր ճաշակով. որովհետեւ գեղարուեստի գործերը հոն ուսումնասիրուած են զգայնութեամբ, իրենց հրապոյրին ու գեղեցկութեան համար գնահատուած են եւ ոչ թէ իբր անկենդան տուրքիմաններ զոր անտարբեր ձեռքեր մատենագարաններու սեղաններու վրայ թըղթատած են՝ անոնց մէջ իրենց գրքական ծանօթութիւնները լրացնել եկող նիւթեր միայն փնտուելով: Մահմետական ձեռագիր մատենանի զարդանկարչական եւ մասնաւոր մանրանկարչական պատկերազարդման այդ արուեստին ամբողջ բնաշրջութիւնն ու զարգացումները այդտեղ պարզուած են այնքան լիակատար կերպով ինչքան մեր ուսումնասիրութեանց արդի վիճակը թոյլ կուտայ: Պ. Սազըգեան կը թուի ամէն ինչ կարգացած ըլլալ: Թերևս ամէն ինչ չէ տեսած (հոս յօդուածագիրը կը թուէ այն եւրոպական քանի մը մեծ հաւաքածոները որ այդ գործին մէջ չեն յիշատակուած) բայց գոնէ իր սեսողութեամբ ստացած ծանօթութեանց սահմանին մէջ, այնքան յատկանշական տիպեր եւ օրինակներ ընտրած է, զանոնք ուսումնասիրած է այնքան խղճամիտ կերպով, իր վիճաբանութիւնը միշտ բարեկիրթ (երբ կը պատասխանէ Պ. Մարթինին) այնքան ուղղամիտ է, յստակ, համոզկեր որ կը հարկադրէ ընթերցողը իրեն համախոհ դառնալ...

«Պատուական գիրք որ այս նիւթով հետաքրքրուողին համար անհրաժեշտ է այլ եւս իբրեւ պարսկական ձեռագիր մատենաներու եւ մանրանկարներու ուսումնասիրութեան այժմեան նշանակէտը»:

Փօլ Ֆիերէնս կը գրէ իր ընդարձակ թերթին մէջ զոր ամբողջութեամբ յատկացուցած է այս գործին. «... (Պարսկական մանրանկարչութեան) այս գիւթական կալուածին մէջ՝ մարդ կը կորսուէր անշուշտ եթէ հոն չմտնէր Արմենակ Սազըգեանի պէս հմուտ եւ իրազեկ առաջնորդի մը ընկերակցութեամբ: Առաջին անգամ

ըլլալով այս հեղինակը օգտուած է Պոլսոյ կայսերական մուսաֆֆաներէն եւ ձեռագիրներէն էվբաֆի թանգարանին որուն հիմնադիրներէն մին եղած է ինքը, յորմեհետէ մատչելի դարձան Հին Սարալին եւ Երլտըզի կայսերական մատենագրանին մէջ պահուած գեղարուեստական անբաղդատելի հարստութիւնները, կարելի էր խորհիլ այդ նոր տարբերու ուսումնասիրութենէն եւ արդէն իսկ ծանօթ կտորներու հետ անոնց համեմատութենէն պարսկական մանրանկարի ամբողջական պատմութիւն մը դուրս բերել: Արմենակ Սազըգեան ատոր աշխատած է: Եւ որովհետեւ չէ բաւականացած ձեռագիրներու պատկերազարդման ուսումնասիրութեամբը միայն, այլ եւ նոյնպէս բազմաթիւ անշատ գործեր մեկնաբանած, դասաւորած, վերարտադրած է, կարելի է ըսել թէ՛ բաց ի որմնանկարներէն՝ բովանդակ պարսկական նկարչութեան պատմութիւնն է որ գրած է, մեթոտաւորապէս, առանց ուրիշ յաւակնութիւն ցուցադրելու բայց եթէ «հոգն իր մացառներէն մաքրելու» բաղձանքը: Մէկէ աւելի անգամներ, իր շատ որոշ պարզաբանման ընթացքին, մեր հեղինակը ինքզինքը ստիպուած կը տեսնէ Պ. Պ. Պլոշէի եւ Մարթինի պէս յայտնի արեւելագէտներու տեսութիւնները վէճի ենթարկելու: Ասոնց առաջինը յաճախ իր հաւանութիւնը տուած է Արմենակ Սազըգեանի եղբայրացութեանց. երկրորդը իր գծկամակութիւնը որոշապէս յայտնած է: Մենք այդ մեծարժէք հնաբաններն իրարմէ բաժնող վէճերուն մէջ պիտի չմտնենք, ու պարզապէս La Miniature Persaneի պատմաբանին պիտի դիմենք ունենալու համար առաջնորդող թելը եւ ընդհանուր ծանօթութիւնները բնաշրջութեանը վրայ արուեստի մը որ այնքան ճապուկ է որքան ինքնատիպ, որ գլխաւորապէս կրած է Չինաստանի ազդեցութիւնը եւ որ առնչութիւն ունի միանգամայն մեծ նկարչութեան ու զարդանկարչական գրչութեան հետ» (1):

(1) «Արձանագրութեանց եւ Գեղեցիկ Դրպ»



Պ. Լ. Կիւմիւլէրաւանի *Les faux-poids de la Balance* վէպին առթիւ Ֆրանսական մամուլին մէջ երեւցան բազմաթիւ յօդուածներ որոնց կարեւորագոյններէն մէկ քանիին թարգմանութիւնը կուտանք ստորեւ.—

Gringoire. — Ահաւասիկ երիտասարդ գրագէտի մը առաջին վէպը, որուն գրական մեծ արժէքը, համարձակախօսութիւնը եւ անողոք դիտողութիւնը արդարացի յաջողութիւն մը միայն քաղելու սահմանուած են: Պատմելու համար երկու պատանիներու բարեկամութեան մը բոլոր հանգրըուանները, Պ. Լ. Կ. Կէրտան էակներն ու դէպքերը լուսաւորած է լոյսով մը որ մերթ յանդուգն է բայց որ կը նպաստէ այս գրքին մարդկայնութիւնը գորացնելու: Անիկա լաւ շարադրուած է ու պատմուածքին հեղգ անփութութիւնը արեւելքի պատմողներու եղանակին հետ խնամութիւն ունի:

L'Homme Libre. — Պ. Լ. Կ. Կէրտանի այս առաջին գործը ունի որակ մը եւ ուժ մը որ նախատեսել կուտայ տոհմիկ գրագէտ մը:

Հեղինակը, ծագումով Հայ, Արեւելքին համար պահած է սիրահարի կարօտ մը. երգեցիկ լեզուով մը գիտցած է անոր հոգին ու գաղտնիքը ոգել: Այլ սակայն Ֆրանսական աշխարհն է որ զայն իր մէջ կը պահէ, կը շղթայակապէ եւ իբր արեւմտեան շրջապատներ կը ծառայէ բարդ

րութեանց Ակադեմիան» իր *Mars 71* նիսիւն մեզ Ֆուլս մրցանակը (4000 Ֆր.) յասկացուց Արմենակ Սագրեանին՝ իր *La Miniature Persane* գրքին համար: «Երկու տարի անգամ մը տուող այդ մրցանակը կը յասկացուի վարձատրելու հեղինակը սպագրուած լաւագոյն գործին՝ գծագրութեան արուեստներու պատմութեան վրայ մինչեւ ժ.Պ. դարու վերջը:» Ծ. Խ.

անճշաւորութեանցն իր վէպին որուն մէջ կը պարզուի սիրոյ ներքին տառամը որուն ներուժութիւնն ու վախճանը ընթերցողներուն գութը պիտի շարժեն:

Ան մերկ ցոյց տուած է սիրան իր հերոսներուն, ուղեկորոյս Ռուս մը եւ Ֆրանսացի մը: Անոնց զգացումներուն, անոնց զգայնութեանց ամենէն խորը խուզարկած է, հոգեկան ակտերու մանազէտի պէս թափանցած է անոնց էութեան անձանօթին մէջ, երեւան բերած է խոցուած մարդկութեան մը տկարութիւնները: Անոնց մտատանջութիւնները, անձկութիւնները, անոնց մարմինն այրող շարժարանքները, իտէալի անոնց հետախուզութիւնը, անոնց երկրաւոր անմաքրութիւնը եւ անոնց ազօթքներն առ Աստուած, այս բոլորը կը ժայթքէ թեւաւոր արձակի մը քնարերգութեան մէջ:

ԼիւՍիէն ՓէՌիէն

L'Ami du Peuple. — Այս վէպը գրելիչ գործ մըն է, թէպէտ անհաւասար: Երկարութիւններ, գրքական յիշատակներ, բայց ասոնց քով՝ յաջող գլուխներ եւ յուզիչ տեսարաններ, լաւ դիտուած ու լաւ արտայայտուած կեանք: Ահաւասիկ մին այդ գլուխներէն, որ կը խոստանան — երբ գրագէտին անճշաւորութիւնը թօթափէ ինչ ինչ գրական ազդեցութիւններ՝ — ամբողջ շարք մը արժէքաւոր գործեր (այստեղ արտատպուած է Բ. գլխուն մէկ մասը):

Paris-Soir. — Առաջին վէպը հեղինակի մը որ կը յուսանք թէ հոս կանգ պիտի չառնէ: Երկու հերոսներ այդ գրքին մէջ, Ֆրանսացի մը, Ռուս մը, իրենց պատանի հասակէն իրարու կապուած եւ զոր կեանքը կը գատէ, նորէն կը միացնէ, յետոյ նորէն կը գատէ՝ առանց որ երբեք բուրովին մեռնի շատ մաքուր եւ շատ ուժեղ բարեկամութեան մը գեղեցիկ ծաղիկը: Պ. Լ. Կ. Կէրտան յաջողած է նկարել այդ երկու այնքան սարբեր եւ այնքան բարդ էակները, եւ իր գիրքը պատմու-

Թիւնն է ներքին տուամի մը որ կը սլար-
զուի մտատանջութեանց ու անձկութեանց
մէջէն երկու սրտերու որոնք սիրահարուած
են խտէալի մը զոր միշտ կը հետասնդեն
եւ որուն երբեք չեն հասնիր:

Պատուական սկզբնաւորութիւն որ թոյլ
կուտայ հեղինակին վրայ լաւագոյն յոյ-
սերը դնել:

Le Carnet de la Semaine. — Ռուսա-
կան հոգւոյն ուսումնասիրութիւն մը. մտա-
տանջութիւն: Վէպ մը մեծապէս գրաւիչ
որ որոշապէս մեր դիմաց կը դնէ խոփիչ
դէմքը Իվանին, «ահաւորապէս թոյլ» հե-
րոսին:

Պ. Կիւմիւշկէրտան ստացած է նաեւ
ծանօթ գրական անձնաւորութիւններէ
համակներ որոնց մէկ քանիին թարգմա-
նութիւնը կուտանք:

Ձեր ծանրախոհ ու խորունկ գիրքը
ճշմարտութեան շեշտ մը ունի որ զիս
յուզեց: Տպաւորութիւններով, նօթագրու-
թիւններով «հարուստ» գիրք մըն է, մարդ-
կայնութեամբ համակ առցուած եւ որ
ի յայտ կը բերէ գիտելու կարողութիւն
մը ճշմարիտ արուեստագէտի մը ձեռքով
արտայայտուած: Կը շնորհաւորեմ ձեզ բո-
լոր սրտով: ՀԱՆՐԻ ՏԻԻՎԷՐՆՈՒԱ

Ձեր գիրքը կծու է ու յուզիչ. լեզուն
սլարգ է ու կենդանի. երկու մարդոց տիպա-
րին հակադրութիւնը շատ յաջող է, մինչև
իսկ ձեր անկեղծ վերլուծման անգթու-
թեանը մէջ: Կը յուսամ որ գրականու-
թեան մէջ ձեր սկզբնաւորութիւնը պիտի
գտնէ այն ընդունելութիւնը որուն ար-
ժանի է:

ՏԻԿԻՆ ԿԱՊՐԻԷԼ ՌԵՎԱԼ

Մեծապէս շնորհակալ եմ ձեր շահե-
կան վէպին համար որ հաճելի յետ-միջօ-
րէ մը անցընել տուաւ ինծի: Բոլոր շնորհա-
ւորութիւններս ձեր ոճին յստակութեան
ու ժուժկալութեան համար:

ՕԿԻՒՍԹ ԿՈՎԷՆ

Սիրելի բարեկամս, շատ ուրախ եմ
տեսնելով որ ձեր գիրքը այդքան լաւ ըն-
դունելութիւն կը գտնէ: Թոյլ տուէք ին-
ծի կրկնել ինչ որ արդէն անձնապէս ըսած
եմ ձեզի, թէ ատիկա զիս բնաւ չի զար-
մացներ. ընդհակառակն: Ձեր վէպը յու-
զիչ է, մարդկային, եւ ան ձեզ կը դասէ
արդէն լաւագոյն գրագէտներու շարքին
մէջ:

ՖՐԱՆՍԻ ՏԸ ՔՌՈՒԱՍԷ

Ստացայ ձեր ուշագրաւ առաջին գիր-
քը որ ի յայտ կը բերէ գեղեցիկ յատկու-
թիւններ, բարոյականի հաւատք, անկեղ-
ծութիւն, մտածման ազնուութիւն, միացած
քիչ մը գրական անփորձութեան:

ԹԷՕ ՎԱՌԼԷ

Շնորհակալ եմ որ ինծի զրկեր էք ձեր
գիրքը: Բնականաբար է՛ն առաջ կարգացի
այն էջերը ուր ձեր ճամբորդները Մար-
սէյէն Պոլիս կ'երթան եւ մեծ հաճոյք
զգացի այնքան կենդանի ու արտայայտիչ
կերպով աչքիս առջեւէն վերանցնելը տես-
նելով Սթամպուլի համայնապատկերին ու
Բիւզանդիոնի յիշատակին: Այդ բոլորը
շատ լաւ արտայայտուած են, բայց գրքին
մնացեալ մասն ալ նուազ շահեկան չթուե-
ցաւ ինծի: Բոլոր շնորհաւորութիւններս
ձեր գրքին համար ուր շատ տաղանդ կայ:
ՇԱՌԼ ՏԻԼ

Մէկ շունչով կարգացի ձեր յուզիչ
գիրքը: Գլխաւոր անձնաւորութիւնները
ինչպէս եւ երկրորդականները՝ յաճախ մէկ
քանի գծով վրձինուած՝ ձեր մէջ ի յայտ
կը բերեն վիպասանի մը ճշմարիտ ձիրքե-
րը: Ու թերեւս ձեր մշտական մտատան-
ջութիւնները, ազնիւ խտէալի մը ձեր կա-
րօտաբաղձութիւնները, համոզումն են ա-
ռաքելութեան մը որուն հասած էք քիչ մը
ուշ, բայց երբեք շատ ուշ, այն է ձեր
ըրջապատին կտակել լայնօրէն ապրուած
կեանքի մը ձեր դժնդակ փորձառութիւն-
ները: Հակառակ ձեր շարագրութեան քմա-

հաճ գծին, ամէն ինչ ձեր վէպին մէջ միաձուլ գանգուած մը կը կազմէ, և ձեր պատմութեան քննարկը, իրապաշտ ու բնական, իրենց անկեղծութեամբ ու իրենց պարունակած կեանքով դուրս կը յորդին ուրիշ ինքնակենսագրութեանց սովորական շրջանակներէն: Անաստուած ու յեղափոխական, ես ճիշտ հակառակն եմ այդ վէպի հեղինակին: Եւ եթէ ձեր ստեղծած ուժեղ գիմաստներնեքով գիտցաք զի շահագրգռել, ամեն ինչ ըսելու ձեր քաջութեամբն է եւ գիտակցութեամբը զոր ունիք մեզ պաշարող տիեզերական ցաւին: Ըստ իս գրագէտ չէ այն որ չի տանջուիր մարդկային տառապանքներու այդ տիեզերականութենէն, նոյն իսկ եթէ անձնապէս այդ գրագէտը երջանիկ է, ինչպէս եղաւ Թոլսթոյ: Հակառակ ձեր ակտամիստութեան (morbidesse) որ ձեր առաջին երիտասարդութեան վրիպած կոչումէ մը կը ծնի, ձեր գիրքը առողջ է, բարոյացուցիչ: Գիտցած էք հոգեբանութիւնը նկարել առողջ մասին օրհասական պուրժուազիային որ սահմանուած է պատմականապէս անհետանալու ժողովուրդի խաւին առջեւ որ հետզհետէ ասպարէզին կը տիրանայ:

Ի՞նչ յուզիչ է ի վանի վախճանը, անոր գիմաստները Տոսթոյեվսքիի տիպարներու մեծութիւնն ունի: Զեր ի վանը հոյակապ է:

ԱՐՄԷՆ ՕՀԱՆԵԱՆ

Les Artistes d’Aujourd’hui, կիսամտեայ պատկերազարդ հանգէսը կը գրէ:

Լ. Կ. Կէրտան ի լոյս ընծայած է գիրք մը շատ ամուր, *Les faux poids de la Balance*: Գրուած յստակ ու ներդաշնակ լեզուով մը, որ իւրաքանչիւր նկարագրի պահանջներուն սքանչելիօրէն կը հետեւի, ճարտարութեամբ կառուցուած եւ ընթերցողին շահագրգռութիւնը միշտ վառ պահելու կարող, Պ. Կէրտանի գիրքը լեցուն է կեանքէն տակ տաք առնուած նօթերով, հոգեբանական շատ մը խնդիրներու վրայ խորագէտ ակնարկներով և անկեղծութեան ու ըմբռնողութեան գեղեցիկ շունչով մը

ոգեւորուած է: Լայն ու հետաքրքիր միտք, Պ. Կէրտան առտնձնաշնորհութիւնն ունի միանգամայն արեւելեան հինաւուրց քաղաքակրթութեան եւ լատին աւանդութեան պատկանելու, եւ իր արուեստագէտի խառնուածքին մէջ այդ այնքան ներհակ երկու հոսանքներուն խառնուրդը զինքը կը կացուցանէ հեղինակ մը ինքնատիպ, շատ ալլազան ու շատ շահեկան:



Ռուբէն Մամուլեանի Նիւ Եորքի փարամունթ թատրոնին համար կազմած ֆիլմը, Ծափահարութիւն ամերիկեան վէպէն քաղուած, հսկայ յաջողութիւն մը ունեցած է: Նիւ Եորքի եւ ամբողջ Ամերիկայի թերթերը այդ առթիւ յատկացուցած են խանդավառ յօդուածներ հանճարեղ հայ բեմադրիչին վերանորոգիչ արուեստը գնահատող: Յիշենք հոս քանի մը հատուածներ այդ յօդուածներէն:

Evening Post կը գրէ. «... Ծափահարութիւնը հրաշալի է ամէն տեսակետով. ան շաղխուած է այնպիսի տրամաթիզմով որ կը յուզէ եւ կը յափշտակէ հանդիսականը...: Մենք հազիւ թէ պատրաստուած ենք գնահատելու Ռ. Մամուլեանի հատուն ու փայլուն շարժապատկերը: Թատրոնական բեմադրիչը, մէկ կարճ ամառուան միջոցին, Լոնկ Այլանտ Սթիւտիօի մէջ իր առաջին իսկ պատկերի բեմադրութեամբ գործնականապէս ի յայտ բերաւ ու իրականացուց, խօսուն շարժապատկերի վերաբերմամբ, աւելի շատ նոր գաղափարներ քան Հոլիվուտի բեմադրիչներու մեծամասնութիւնը երեք տարուան մէջ...: Անհասկանալի է թէ ինչպէս շարժապատկերի փորձառու բեմադրիչները մինչեւ այսօր ուշադրութիւն չէին դարձուցած այնպիսի հրաշալի երեւոյթներու ինչպէս երկնաբերձ տուններու ստուերները եւ Պըրուքլինի կամուրջի վերեւ կապուած հեռագրական թելերու զօղանջումը: Եւ իսկապէս Մամուլեանը այդ տեսարանների

ըրջանակի մէջ ցուցադրեց ամենագեղեցիկ, աննման, պարզ ու բնական սիրոյ տեսարանը որ երբեւ իցէ ցուցադրուած ըլլայ շարժապատկերի մէջ...: Ծափահարութիւնը ոչ շարժանկար է եւ ոչ թատերական խաղ. ան խօսուէ շարժապատկեր է, եւ իբր այդ ունի որոշ եւ անհունապէս իրական թեքնիք: Այս ֆիլմը ունի այնպիսի յատկութիւններ զոր ոչ բեմը ոչ լուռ շարժապատկերը կարող է ի կատար ածել:»

Պրուքլինի *Eagle* թերթը կը գրէ. «Պատկերի նիւթին մէջ ոչ մէկ նշանաւոր բան կայ... նման պատմութիւններ բեմադրուած են շարժապատկերի մէջ հարիւրէ աւելի անգամներ. բայց անոնք երբեք չեն ցուցադրուած այնպէս գեղեցիկ ու այնպիսի վարպետութեամբ խաղի ու բեմադրութեան տեսակէտէն՝ ինչպէս այս նոր խօսուէ շարժապատկերի մէջ: Այս պատկերի զարմանալի գերակատարը՝ նշանաւոր Հէլէն Մորկանն է, բայց պատկերի մէջ ամենէն զարմանալին՝ Ռ. Մամուլեանի վարպետ բեմադրութիւնն է, եւ կրկնակի զարմանալի, որովհետեւ Ծափահարութիւնը Մամուլեանի առաջին շարժապատկերն է: Նրման եւ ոչ մէկ պատկերի մէջ (նոյն իսկ յայտնի Կեանքի պարի մէջ) գուր չէիք կրնար տեսնել այսպիսի վարպետ վերարտադրութիւն պիւրիսթ թատրոնի միջոցառում...:»

New York Telegram.— «Շարժապատկերի մէջ Մամուլեանը ցուցադրեց պատկերացման եւ խմբաւորման նոյն հանճարեղութիւնը զոր ան արդէն ցոյց տուած էր իր բեմադրած Փոփիի մէջ: Մամուլեանը իր «քամերա»ն տեսարանէ տեսարան փոխադրելու տոնն՝ քամերայի հետ միասին կը յառաջացնէ նաեւ խօսակցութիւնը, եւ այսպէսով կը ստացուի ամբողջապէս իսկական խօսուէ շարժապատկեր...»: »

«... Ծափահարութիւն շարժապատկերը կը սպասուէր յայտնի անհամբերութեամբ, այն պատճառով որ զայն արտադրող Փարամունթ Բնկերութիւնը, անոր ներկայացումէն քանի մը ամիս առաջ սկսաւ գովաբանել զայն: Լասչին հաղորդեց ընկե-

րութեան պաշտօնեաներու եւ Մամուլեանի աշխատակիցներու համոզումը, թէ այդ պատկերը կը յեղաշրջէ շարժանկարի արդի բնոյթը: Այդ առաջին լուրերը մենք պարտինք Ռուբէն Մամուլեանին, իբր հանճարի, մոգի եւ կախարդի: Յամենայն դէպս, շատ քիչ շարժապատկերներ բացուած են այդպիսի միահամուռ ու ծայրագոյն ծովեստներով եւ աւելի քիչ պատկերներ երկար կեանք ունեցած են այդքան մեծ ու կանխակալ գովեստներու հեղեղէն յետոյ: Ծափահարութիւնը արգարացուց իր հասցէին շուրջուած գովեստները եւ Մամուլեանը բազմեցուց «ճերմակ յոյսերու» (միակ յոյսերու) գահին վրայ: ... (Անցեալ տարի, «Թեւեր Եւրոպայի վրայ») խաղի բեմադրութեամբ՝ նրա հրաշալի ղեկավարութեան արդիւնքը այնքան ազդու էր, որ առաջին գիշերուան հանդիսականները սուքի ելան միահամուռ եւ բուռն ծափերով ողջունեցին զայն: Մամուլեան ուստահայ է եւ իր բեմական կրթութիւնը ստացած է Մոսկուայի գեղարուեստական թատրոնի սիլիւսիօի մէջ Վախթանգեանի ղեկավարութեան տակ... ան ունի շատ նուրբ զգացողութիւն ու նոր տպաւորութիւններ իւրացնելու մեծ կարողութիւն... ի հարկէ այլապէս նա չէր կարող տալ այն ինչ որ տուաւ Փոփիի մէջ եւ ոչ ալ կարող էր տալ՝ առանց շարժապատկերի ու եւ է փորձառութեան եւ առաջին անգամուն իսկ՝ այսպիսի գեղեցիկ ու ազդեցիկ գործ ինչպիսին է Ծափահարութիւնը: Նրա բեմադրութեան գլխաւոր յատկանիշն այն է անկասկած որ ան իր «քամերա»ն անգաղար շարժման մէջ կը պահէ ամենամեծ յաջողութեամբ եւ համր պատկերի ու ճայնաւոր եփներու փոխադարձ յարաբերութեան պարագաներուն՝ աւելի եւս մեծ յաջողութեամբ, ամենաարագ կերպով կ'իրագործէ պատկերներու փոխանցումը: Երբ անոր «քամերա»ն առարկայէն կը հեռանայ, ճայնը նոյն համեմատութեամբ կը հեռանայ չափին և ուժին մէջ...: Ծափահարութիւնը անկասկած յեղաշրջում յառաջ

կը բերէ խօսուէն շարժապատկերի բեմա-
դրութեան մեթոտի մէջ: Քիսկ Վիտորի
Ալեյուիա պատկերը, որ յաւանուութիւն ունի
յեղաշըջել շարժանկարի մեթոտը, Ծափա-
հարութիւն Ֆիլմին հետ բաղգատելով՝ շատ
կուպիտ արտադրութիւն է, երբեք չի հաս-
նիր նպատակին ու գաճարճի կը համանի: Հո-
ւիվուտի ինքնահաւան պարոնները կ'ապշին
անկասկած տեսնելով թէ ի՞նչքան խելք,
գիտութիւն եւ խնամք դրուած է այս
պատկերի մէջ եւ վստահ կարող էք ըլլալ
որ անոնք իրենց հիացումը կ'արտայայտեն
անով որ կը սկսին համանիլ անոր: Եթէ
Մամուլեան այսպիսի արդիւնք ունեցաւ
այս չնչին նիւթով եւ իր առաջին իսկ
փորձէն, կարելի երեւակայել թէ ի՞նչ
զարմանալի արդիւնք կ'ունենան անոր
ապագայ բեմադրութիւնները եթէ իր
տրամադրութեան տակ ունենայ աւելի
ընտրեալ եւ համապատասխան նիւթ...:
Արդէն միւրթարականն այն է որ Մամուլ-
եան իր ամբողջ ժամանակը պիտի հնուիրէ
միմիայն շարժապատկերին: Կիս թատրոնը
որու կ'աշխատակցի իր նիւ եորք եկած ա-
ռաջին օրէն, արդէն պայմանագրութիւն
ստորագրած է անոր հետ յառաջիկայ տա-
րեշըջանի համար եւ կը յուսանք որ այդ
պայմանագրութիւնը կը վերանորոգուի
գեռ երկար տարիներ:»

* * *

Օրիորդ Հայկանուշ Թորոսեան, շնոր-
հալի երգչուհին որ քանի մը տարի առաջ
Փարիզի Քոնսերվատուարի ընթացքն ա-
ւարտեց առաջին մրցանակ ստանալով և որ
նուագահանդէսներու եւ հանրային հա-
ւաքմանց մէջ իր ճարտար ու փափկար-
ուեստ երգեցողութեամբ փայլուն յաջո-
ղութիւններ ունեցած է, վերջերս Թուռ
էյֆէլի Ռատիօ-կայանի երաժշտական հա-
մերգներու վարչութեան հրահրուեցաւ
հայերէն երգեր երգելու: Օրիորդ Թորոս-
եան երգեց Կոմիտաս վարդապետի հաւա-
քած ու դաշնակած հայ ժողովրդական եր-
գերու շարք մը. իր երգեցողութեանն ա-
ռաջ Քրանսացի դերասան մը կ'արտասանէր
երգին խօսքերուն Քրանսերէն թարգմա-
նութիւնը: Հայ ժողովրդական քնարին
զմայլելի արտադրութիւնները եւ Օրիորդ
Թորոսեանի երգեցողութեան յուզիչ ու
փափուկ արուեստը այնքան մեծ ընդունե-
լութիւն գտան, որ Ռատիօի վարչութիւնը
այդ հայկական երգերու ունկնդրութիւնը
երեք չորս անգամ կրկնել տուաւ. յետոյ
Օրիորդ Թորոսեան նոյն տեղը երգեց նաեւ
շարք մը տաղանդաւոր երիտասարդ երգա-
հան Պ. Արայ Պարթեւեանի հեղինակած
նոր երգերէն, որ նոյնպէս համակրանքով
գնահատուեցան ու կրկնուեցան:

ԼՐԱՏՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

Ալազանի նոր վեպը՝ «Ճանապարհին».— Լոյս տեսաւ Հայաստանի Կեդրոնական Խորհուրդի քարտուղար Ալազանի վեպը՝ «Ճանապարհին» խորագրով: Վրաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիայի Հայկական սեկցիան, Փետր. 18ին, Թիֆլիսում, Տպագրիչների Ակումբում կազմակերպեց գրական դաս այդ վեպի ձասին:

«Առողջ Կենցաղ».— Երեւանում լոյս տեսաւ «Առողջ կենցաղ» անունով պատկերազարդ Հանդէս որի նպատակն է բարձրացնել արտադրական բանւորութեան եւ գիւղի աշխատուորութեան կուլտուրառողջապահական գիտելիքները, ինչպէս եւ նոր սերունդի ֆիզիքական եւ ձայնի կարողութիւնները: Նա Հին ձեռնող կեանքին հակադրելու է նորն ու առողջը: «Առողջ կենցաղ»ը հանդիսանալու է Հայաստանի կուլտուրական յեղափոխութեան կարեւորագոյն գործօններից մէկը: Թերթի հասցէն՝ Երեւան, Սպանդարեան փողոց թիւ 27, «Առողջ կենցաղ»ի խմբագրութեան:

Շիրվանզադէ.— Հայաստանի Պետհրատը լոյս է ընծայել Շիրվանզադէի երկերի լիակատար ժողովածուն:

Գաբրիել Սունդուկեանի «Պեպօն» քուրֆերեն.— Դերասան Մկրտիչ Ջանանը Գ. Սունդուկեանի «Պեպօն» թարգմանել է թուրքերէն լեզուով, որը առաջին անգամ խղացել է Երեւանի պետական թատրոնում Քաղլուսվարի թրքական խմբի կողմից:

Մ. Գաբրիելեանի «Սասիբա» պիեսը.— Մ. Գաբրիելեանը գրել է «Սատիրա» պիեսը, որ ներկայացւեց Տպագրիչների Ակումբում: Պիեսում ցուցադրւած են Բանկօօպի արհեստական պոչերը, խորհրդային հիմնարկներում բոյն դրած բիւրովրատ տիպերը. եւսլն:

Հայկիօն 1929—30 քւիւն.— Հայկիօն այս շրջանում իր ծրագրի մէջ ձայնել է հետեւեալ նկարները.—

1. «Ազդանեան ջրվեժի մօտ».— Հակակրօնական ֆիլմ է, որ ցուցադրւեց Հայաստանի կինօթատրոններում:

2. «Առաջին նառագայթներ».— Պիոներական կեանքն է ցույցնում:

3. «Անուշ».— Նիւթը վերցւած է Յովհաննէս Թումանեանի համանուն պօէմայից: Սցենարիոյի մշակման ժամանակ պատկերի մէջ է ծրուցւում 60ական թուականների Լոռայ գիւղացիութիւնն իր կենցաղային նիստ ու կացով: Այդ նպատակով օգտագործւելու են Յով. Թումանեանի միւս երկերը, «Լոռեցի Սաքօն», «Բախտը» եւն.: Երաժշտական նւագակցութիւնն «Անուշ»ի պատկերների համար յանձնւած է երաժշտագէտ Սպիրիտոն Մելիքեանին, իսկ որպէս նկարիչ հրաւիրւած է Մ. Սարեանը, որը պէտք է պատրաստի դեկորացիաները եւ կոստիւմները բնորոշ հայկական ոճով:

4. «Ոստայն».— Արշալոյս Տէր-Յովնանեանի սյեռարիօն: Նկարը պատկերելու է մանր բուրժուական միջավայրի ազդեցութեան տակ կոմունիստանտեսավարի այլասերիւր եւ դրան հակալիռ գործարանային բանւորների ակտիւ ճանակցութիւնը սոցիալիստական մրցակցութեան մէջ:

5.— «Կիկոս».— Նիւթը վերցւած է համանուն վեպից: Նիւթը՝ քաղաքացիական պատերազմը Հայաստանում եւ հայկական գիւղի դրութիւնը Դաշնակցականների օրով: Պատկերը մշակուած է տրագիկոմիկական բնոյթով: Գլխաւոր դերի կատարումը յանձնւում է դերասան Խաչանեանին:

6. «Շորք եւ Շորճարը բիւրովրատի քաբերում».— Կոմիկական ժպտւէն, որը պատկերե-

լու է խորհրդային ապարատի դուռը եւ պետապում եւ քաղաքականում նստած ու ճեր գիւղական քաղաքականութիւնն ազաւաղող բիւրօկրատներին վերաբերող ճոճեաններ:

7. «Քաղաքագէտներ Մեխիկայից».—Նկարի ճէջ ծաղրում է Դաշնակցականների պետական սիստեմը, ճասնաւորապէս զուռնայի տակ պարող նրանց «ղեծոկրատական պարլամէնտը»: Սցենարիօն՝ Ե. Չուբարի:

Վերջանում են նաեւ Հետեւեալ սցենարիօները.

«Ձանգեգուր».— Այստեղ դաշնակցական ճի խմբապետի քաջագործութիւններն են ցոլանալու: Սցենարիօ՝ Ակսել Բակունցի:

«Աւետիսի բախսը».— Սցենարիօ՝ Գ. Չախիրեանի: Նիւթը վերցւած է կոլ-տնտեսութեան շինարարութիւնից:

«Փոխարինող».— Լենինականի տեքստիլ գործարանում կոճերիւնների սոցճրցակցութեան ճէջ ունեցած ճասնակցութիւնն է պատկերելու:

Բանւորական տուն».— Սցենարիօն՝ Ս. Մանուկեանի: Կինօ-Սատիրա, որի ճէջ ցոյց են տըրւում բանւորական տների շինարարութեան թերուութիւնները երեւանում:

«Արշալոյս».— Յոլացնում է իր ճէջ շրջործկոճի նախագահի պաշտօնում գեղջկուհիի առաջ քաշելը:

«Քաջ Նազար».— Սցենարիօն՝ Ա. Տէր-Յովնանեանի: Քաղաքական պաճփլեա Դաշնակցականների դէճ:

Բաց ի սրանցից Հայկիւնոյի 1929—30 թւի ճրագիրը նախատեսում է բաց թողնել նաեւ կուլտուրական ֆիլմեր՝ «Անճեղ ոճրագործներ», «Պոլիգրաֆ - արդիւնաբերութիւն» (գիրքը ճասանների ճէջ), «Ձորագետ», «Մասաները իաւարի դէճ» (անգրագիտութեան վերացում), «Հայաստանի լեռնային արդիւնաբերութիւնը», «Հայաստանի ջրային Հարըստութիւնները, եւայլն:

Երեւանի պետական կօնսերվատօրիայում. — Կոնսերվատօրիայի սիճֆօնիկ օրքէստրը ղեկավարում է դիրիճէօր Բուգաղեանը, իսկ երաճշտագէտ Կարօ Ձաքարեանի ղեկավարութեաճը պատրաստում է քառաճայն երգեցիկ խումբ՝ 80 Հոգուց, որը շուտով Հանդէս կը գայ իր Հաճերգներով:

Միխայիլ Նալբանդեանի ցուցահանդէսը. — Հայաստանի Պետական թանգարանում Միքայէլ

Նալբանդեանի ճննդեան 100աճեակի սօթիւ բացւեց ցուցահանդէս, ուր ցուցադրած են Նալբանդեանի նաճակները, լուսանկարները, իրերը, գրքերը, ճաճուլում լոյս տեսաճ յօղւաճները, եւայլն:

Շիրվանզագէի յօրէլեանը Լենինականում եւ թիֆլիսում. — Լենինականի պետական թատրօնում տօնւեց վիպասան-դրաճատուրղ Շիրվանզագէի գրական գործունէութեան 50աճեայ յօրէլեանը:

Վաստակաւոր դերասանուհի Արուս Ոսկանեանի եւ բանաստեղճ Աւետիք Իսահակեանի ուղեկցութեաճը բեճ զուրս եկաւ Շիրվանզագէն եւ ողջօյնի ճաւերից յետօյ նա խօսողներին պատասխանեց ոգեւորեալ ճառով:

Շիրվանզագէի գրական գործունէութեան 50աճեայ յօրէլեանը թիֆլիսում տօնւեց Փետր. 27ին, Ռուսթավելու Հաճերգային դաՀլիճում: Վրաստանի Լուստողոճ Դ. Կանդելակէն Հակիրճ ճառով բնօրօջեց Շիրվանզագէին օրպէս Անդրկովկասեան ժողովուրդների կուլտուրական կապի ցայտուն սիճվուր: Նա կէս դար իր գրականութեաճը, ասաց Կանդելակէն, խարազանել է բուրճուական նեխում կեանքն իր բնօրօջ կողճերով: Ապա Հաճբուրեց Շիրվանզագէի Հեա:

Շիրվանզագէի գրական ստեղճագործութեան ընդարճակ եւ բաղճակողճանի վերլուծութիւնը տւեց Արտաշէս Կարինեանը: Այնուհետեւ ողջօյնի խօսքերով Հանդէս եկան, Վրաստանի Գրողների Ֆեղերացիլայի կողճից Գ. Ռօբակիճէն, Պետահաճաւարանի գիտական աշխատաւորների կողճից Պրօֆ. Նուցուբիճէն, Գեղարեւստի գորճիչների Անդրկովկասեան Կոճիտէի ներկայացուցիչ Արաշէլին (յայտանեց, որ Կոճիտէն ճեճարել է Շիրվանզագէին Ան. դըրկովկասեան վաստակաւոր գեղարեւստագէտի տիտղոսով), Վրաց ակաղեճիկ դրաճայի կողճից դերասան Վասաճէն, Վրաստանի Գրողների Ֆեղերացիլայի Հայկական սեկցիլայի կողճից Մարգար, Հայ ակաղեճիկ պետդրաճայի կողճից դերասան Արճէնեան, դերասանուհի Մասուրեան (իր կողճից), թուրք գրողների կողճից՝ Աղիզով, թուրք ակաղեճիկ պետդրաճայի կողճից՝ Բաղերովը, իսկ վրացի բանաստեղճ Գրելաշվիլին կարղաց յօրէլեարի «Նաճուս» վէպից իր թարղճանաճ Հատւաճը:

Վերջում Հանդէս եկաւ Շիրվանզագէն:

— Թէեւ ես ֆիղիքապէս տկար եճ, — ասաց նա, — բայց Հողեպէս դեռ երիտասարղ եճ եւ տես-

նելով իմ հայրենի երկրի սոցիալիստական շինարարութիւնը, է՛լ աւելի եմ ոգեւորուում եւ պարտաւորութիւն եմ զգում շարունակել իմ գործը:

Կոմիսասի եւ Ալ. Սպենդիարեանի գործերի հրատարակութիւնը.— Երեւանի Պետհրատին կից Մուղ սեկտորը տպագրում է Կոմիտասի ձայնագրած անտիպ ժողովրդական երգերի ժողովածուն. տպագրութեան է՛լ յանձնելու նաեւ երաժշտագետ Ալ. Սպենդիարեանի անտիպ աշխատութիւնները:

Անիի ցուցահանդեսը.— Երեւանի հայ պետ. թանգարանը Էրժիտաժի եւ նիւթական կուլտուրայի պատմութեան Ակադեմիայի հետ ձիասին, Լեւինգրատում կազմակերպում է Անիի ցուցահանդէսը: Բաց ի թանգարանի տրամադրած էքսպոնատներէց, որոնք կազմում են զգալի տոկոսը Անիի իրերի, ցուցադրելու է նաեւ Էրժիտաժում գտնուող Անիի ժողովածուն: Վերջիններից արժէքաւոր են ծանաւանդ որմանկարների երեք բեկորները: Բաց ի այն խոշոր նշանակութիւնից, որպիսին ներկայացնում են Անիի նիւթերը, նրանց ցուցադրուածը Էրժիտաժում գտնուող նոյն կուլտուրայի իրերի համադրութեամբ (կաէ ամաններ պարսկական Բէա եւ Վերաբին քաղաքատեղիներում կատարած պեղումներից, 12րդ դար, ինչպէս եւ նոյնանման Եգիպտական, Սպանո-Մավրիտանական բետորեան արւեստի իրերի) ներկայացնում է յատուկ շահեկանութիւն եւ հնարաւորութիւն է տալիս պարզաբանելու Անիի կուլտուրայի հետ կապւած ձի շարք գիտական պրոբլէմներ:

Ցուցահանդէսը կազմակերպելու գործում մասնակցութիւն ունին ակադեմիկ Մարրը եւ պրոֆ. Օրբէլին:

«Փարսագանը».— Թիֆլիսի Պետհրատը լոյս ընծայեց Մ. Դարբինեանի նոր գիրքը — «Փարսագան»:

«Պարսկահայ նուագոյն առուղներ».— Լոյս տեսաւ գրականագէտ-բանասէր Արամ Երեմեանի «Պարսկահայ նորագոյն առուղներ» նոր գիրքը, որ պարունակում է իր ձեջ հետեւեալ առուղները.— Միակին Մաթէոս, առուղ Ալլահվերդի, Մարտիրոս Մանուկեան եւ Միսկին Ստեփան: Գիրքը, որ բաղկացած է 120 էջից, զարդարուած է առուղ Ալլահվերդու նկարով եւ ձեռագրի նմուշով: Գիրքն ունի նաեւ ձի բառարան՝ օտար եւ անհասկանալի բառերի համար: Ստանալու համար դիմել՝ «Handes

Amsorya» VI ½ Mechitharistengasse Vienne (Autriche): Գինն է 2 ֆրանք:

«Օսար Մարդը».— Լոյս տեսաւ Երեւանի Պետհրատի կողմից շնորհակալ պրոդեստ գրող Գեղամ Սարեանի «Օտար Մարդը» վէպիկը:

Փանոս Թերլիմեզեանի ցուցահանդեսը.— Թիֆլիսի Հայարտան դահլիճում բացեց նկարիչ Փանոս Թերլեմեզեանի նկարների ցուցահանդէսը, ուր ցուցադրւած են պէյզաժ, պորտրէտ, ժանր, նատիւր մորտ, եւ այլն: Նկարներից աչքի են ընկնում՝ «Պատերազմի արհաւիրքներ», «Գործիս հէքեաթային անտառանման ժայռեր», «Միջնադարեան պէյզաժ», «Շվէդացի արձանագործը», «Նիպարայի ընթացքը», եւ այլն:

«Երգեր Խորհրդային».— Լոյս տեսաւ «Երգեր Խորհրդային» նորագոյն պօէզիայի ընտիր նմուշների ժողովածուն, որ կազմում է «Պրոլետար»ի յաւելուածը: Նիւթեր ունին՝ Յակոբ Յակոբեան, Եղիշէ Չարենց, Ազատ Վշտունի, Ալազան, Մկրտիչ Արմէն, Ադ. Վարդանեան, Աբով, Ն. Չարեան եւ ուրիշները:

Արագու «Աչքը վախեցած Հանեսը».— Վրաստանի Պրոլետ-Գրողների Ասոցիացայի հայկական սեկցիան Կաշեգործների Ակումբում, ձարտի 23ին, կազմակերպեց գրական դատ ուղեկից գրող Արագու «Աչքը վախեցած Հանէս»ի շուրջը:

Հայ առուղների երեկոյթներ.— Յայտնի երգիչ Շարա-Տալեանը կազմակերպում է ձի շարք երեկոյթներ նւիրւած հայ առուղներին (Սպեաթ-Նովա, առուղ Ջիւանի, Շիրին, եւ այլն): Մինչեւ օրս երեկոյթ-համերգներ կազմակերպել է Երեւանում, Թիֆլիսում, Բագում եւ ամէն տեղ գտել է ջերմ ընդունելութիւն: Այժմ Շարա-Տալեանի անւամբ էլ Լեւինականում սկսել է տալ իր երեկոները: Դրանով երգիչը վաւ է պահում ժողովրդի ձեջ առուղական երգը:

Նար-Իոսի «Սպանւած Աղաւնի»ն.— Վրաստանի Խորհր. Գրողների Ֆեդերացիայի հայկական սեկցիան Մարտի 20ին, Տպագրիչների ակումբում կազմակերպեց գրական դատ Նար-Իոսի «Սպանւած Աղաւնի» վէպի շուրջը, որ ձեծ հետաքրքրութիւն առաջ բերեց:

Մարտիրոս Մազմանեանի «Նանի»ն.— Վրաստանի Պետհրատը հրատարակեց երիտասարդ երա-

Ժիշտ Մարտիրոս Մազմանեանի «Նանի» ձեներգը, դաշնամուրի նւագակցութեամբ, Հայերէն եւ թուրքերէն տէքստով:

«Հոկտեմբեր».— Լոյս տեսաւ Վրաստանի պրովետ-գրողների Հայկ. սէկցիայի «Հոկտեմբեր» գրական-գեղարուեստական յոդովածուն (3 գիրք), ուր արժէքաւոր նիւթեր ունին Յակոբ Յակոբեան, Արազի, Մ. Դարբինեան, Հովսիփիճէ Պօղոսեան, Մ. Պետրոսեան, Պայազատ, Ռուբէն Աղաբաբ եւ ուրիշներ:

Մեր դերասան դերասանուհիները. — Երեւանում են գտնուում ձեր յայտնի դերասան-դերասանուհիներէից՝ Արուս Ոսկանեան, Յասմիկ, Օլգա Գուլազեան, Յովհաննէս Աբէլեան, Միքայէլ Մանուէլեան, Յովհաննէս Ստեփանեան, Գրիգոր Աւետեան, Մկրտիչ Զաննան, Հրաչեայ Ներսիսեան, Աւետ Աւետիսեան, Խաչանեան եւ ուրիշներ:

Թիֆլիսում. — Տէր-Դաւթեան, Վարդուհի, Մայսուրեան, Ալիխանեան, Արմէնեան Արմէն, Արմէնեան Դուրեան, Բերոյեան, Մամիկոնեան, Աղայեան (այժմ քաջաւած է բեմից) եւ ուրիշներ:

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐԸ

Երեւանում ապրում են Հետեւեալ արժէքաւոր գրողները. — Ստեփան Զօրեան, Դերենիկ Դեմիրճեան, Միք. Մանուէլեան, Վահան Միրաքեան, Ալազան, Ազատ Վշտունի, Ե. Զարենց, Ակսել Բակունց, Մկրտիչ Արմէն, Անուշաւան Վարդանեան, Նայիրի Զարեան, Գէորգ Աբով, Սարգիս Մելիքսեթեան, Անուշ, Արաքս, Յովհ. Մալխասեան, Կոստ. Մելիք-Շահնազարեան, Լեւ-Կամսար, եւ այլն:

Թիֆլիսում են գտնուում. — Արազի, Աղասի Վարդանեան, Մատթ Պետրոսեան, Մարգար Աւետիսեան, Մերոն Թորգոմեան, Նար Դոս, Յակոբ Յակոբեան, Շիրվանզադէ, Վէսպէր, Մատ. Դարբինեան, Գ. Մելոնեան եւ այլն:

Լեհիմնականում.— Գեղամ Սարեան, Ատրպետ: Դիլիջանում.— Վ. Նորենց:

ՄԵՐ ԵՐԱԺՇՏԱԳԷՏՆԵՐԸ

Մեր երաժշտագէտները ցրւած են զանազան քաղաքներում. ընդհանուր պատկերն է Հետեւեալը.—

Երեւանում են ապրում Ռոմանոս Մելիքեան, Անուշաւան Տէր-Ղեւոնդեան, Սպիրիտոն Մելիքեան, Ովաննա Տէր-Գրիգորեան, Կարօ Զաքարեան եւ Միքայէլ Միրզոյեան:

Թիֆլիսում են կեդրոնացել Արմէն Տիրգրանեան, Սարգիս Բարխուդարեան, Արշակ Աղամեան, Ազատ Մանուկեան եւ Վ. Տալեան:

Բագու.— Անտոն Մայիլեան:

Գանձակ.— Գուրգէն Միրզոյեան:

Լեհիմնագրաս.— Քրիտտ. Քուշնարեան եւ Յարօ Ստեփանեան:


Մոսկուա.— Մուշեղ Աղայեան եւ Ա. Խաչատրեան:

ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ

Երեւանում աշխատում են Հետեւեալ ճարտարագէտները.—

Ակադեմիկոս Թաճանեան, Ն. Բունիաթեան, Ա. Հարոնեան Ա., Ավանէսեան Ա., Ասոյեան Մ., Հալաթեան Կ., Յակոբեան Ռ., Մազմանեան Մ., Մելիք-Մարտիրոսեան Ա., Մարգարեան Ով., Սաֆարեան Ս., Քոչար Գ. եւ ուրիշներ:

Թ.Ղ.Ա.Կ.Ի.Յ



Վ Ր Ի Պ Ա Կ

Անահիտ քիւ 5.— Պ. Կ. Յ. Բաճաջեանի յօդուածին ձեջ, էջ 121, Ա. սիւնակ, տող 12, «Եւրոպական»ը կարդալ՝ հայերէն: Իսկ Բ. սիւնակ, տող 20, «խոց ձի երնէ»էն ետք աւելցուր՝ որ զվիսն ուսէ, եւ մեծ ետքա լինի: Նոյնպէս, նոյն սիւնակ, տող 3, «ուտող»ը կարդալ՝ ուՏՈՒՈՂ:

Անահիտ, նոյն քիւ.— Թլիւրանցիի Տաղ ի վերայ դատաստանի.— Պ. Քիւրտեանի ունեցած ձեռագիրը 1681ին գրուած է եւ ոչ թէ 1881ին: Տող 9, գունճ, ուղղել՝ գունճ:

USUՑԱՆՔ

ՏԵՂԵԿԱՏՈՒ. — Պարբերաթերթ *Մ. Ռափա-*
յէլեան նախկին Աշակերտաց Միութեան: Բաժանոր-
դագրութիւն տարեկան 25 ֆր.: Հասցէ՝ M. A. Al-
tounian, 49, Rue Rochecouart, Paris (9):

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԵՆՈՍԻ ԵՒ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՇԱՒ-
ՂԻՆ ՄԷՋ ԿԱՃ *Le Passe-Temps d'un Sédent-*
taire, գրեց՝ Փրոֆ. Յ. Ճիւրեան, տպր. «Լիբրանան»
Պէյրուք 1930. զին՝ 50 ս. գ.:

ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ. — Բանաստեղծական
խորհրդածութիւններ, Գիրք Ա. 1929, Աղեքսան-
դրիա: Գին 10 է. գ. կաճ կէս տոլար:

ՏԵՍԻԼՔԻԴ ԱՌՋԵԻ, գրեց Ռ. Փարլաքեան,
Նիւ Եորք, 1930:

ԳԱՋ ԵՒ ՍԷՐ, պատճական վէպ, գրեց Գոթո-
նայի Լասյօ, թարգմանեցին Աւետիս ԷժտաՆար եւ
Հ. Մ. Պոտուրեան, Հատոր Ա., Բ., Գ. և Դ. Պուքրէշ
տպ. Մասիս, 1929. զիճեղ՝ Գէորդ Կիւզէլեանի,
Calea Mosilor, 242, Bucarest, Roumanie.
Իւրաքանչիւր Հատորի զինն է 42 լէյ:

Petite Bibliothèque Arménienne, pub-
liée sous la direction de M. F. Macler.
Les Devs Arméniens — Parsifal - Icono-
graphie daniélique, par Frédéric Macler.
Paris, Librairie Ernest Leroux, 28, Rue
Bonaparte, 1929, զին 30 ֆրանք:

ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ՔԱՐՈՂՆԵՐ, Հաճաղրեց Ղե-
ւոնդ եպօկ. Դուրեան, տպագրութիւն Կ. Յ. Ներ-
սէս, Փարիզ, 1929. զին 4 շիլին:

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԲՈՒԺԱՆՔ» ԹԻԻ 1. — Տօքթ,
Լ. Գրիգորեան: Թէ ինչ պատճեց թրեփոնէճը, կաճ
ի՞նչ է սիֆիլիսը, ի՞նչպէս պաշտպանուիլ, ի՞նչ-
պէս դարձանուիլ: Յառաջաբան Տօքթ. Վ. Թորոզմ-
եանէ: Փարիզ, 1927, զին՝ Ֆրանսա 6 ֆրանք,
արտասահման 35 սէնթ:

— Մատենաշար «Բուժանք» թիւ 2. — Տօքթ.
Վիքթոր Փոշէ. Նրջանկութեան ուղին, կաճ ճարճ-
նական եւ հոգեկան առողջութեան գաղանիքը. աճ-
փոփեց Տօքթ. Լ. Գրիգորեան. Փարիզ 1929, զին՝
10 ֆրանք, 2 շիլին, 50 սէնթ: Գիճեղ՝ Dr. L.
Krikorian, 126, Rue Faubourg Saint-Denis
Paris.

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ. — «Լալուարի Որսը»,
պօէճ: Պետհրատ, 1929, Նրեւան: Գին՝ 1 ռուբլի:

ՔԱՄԻԼ (Բաճեղիւղարդ կինը) տաճ Հինգ
արարուած, Հեղինակ Ալեքսանտր Տիւճա Որդի:
Թարգմանաբար պատրաստեց Տիգրան Քէջեան.
տպարան «Պայքար»ի, Պոսթոն, 1930. զին՝ 50
սէնթ:

ՀՐԱՏ. ՍԻՀՈՒՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ, ԹԻԻ 1. —
Տրովադայի Հրդեհը, կատակախաղ ճէկ արար Աւ-
կուստ Թուրշիի. թարգմանեց եւ թատերգութեան
վերածեց Յակոբ Յ. Պուճիգանեան. տպարան Կ, Տօ-
նիկեան, փօսթարկ թ. 718. Պէյրուք. զին՝ 3 ֆր.:

ՀԱՅ ՍԿԱՌԻՏ, պաշտօնաթերթ Հ. Ս. Ը. Մ.ի.
Խճագրութեան Հասցէն՝ Hai-Scout, U. G. Ar-
ménienne, 1, Rue Saulnier, Paris (9e).
դրածական առաքումներն ուղղել Միութեան գան-
ձապետին, Mr. H. Zahredjian, 53, Faubourg
Montmartre, Paris (9e): Իւրաքանչիւր թիւը 2
ֆրանք. տարեկան բաժնեգին 2 տոլար (Ֆրանսա,
Սուրիա, Յունաստան, Պուլկարիա, 35 ֆրանք):

ԿՈՐԻԻՆ. ՎԱՐՔ ՄԱՇԹՈՑԻ. — Բնագիր ուղ-
ղեալ եւ լուսաբանեալ ի Գառնիկ Ֆրնագլեանէ. — Ե-
րուսաղէճ, տպարան Սրբոց Յակոբեանց. 1930. զին
ճէկ տոլար կաճ չորս շիլին:

ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ԶԻ ՍԻՐԵՐ՝ ՏՂԱՔԸ, Հանրի
Ռօորտայի. թարգմանեց Պ. Գէորգեան. Հրատար-
կութիւն եւ տպագրութիւն ՀԱՅ ԴՊՐՈՑԻ, Պընեէն
եւ Ժընէվ 1930. զին 1.25 դուիցերիական ֆրանք.
Հասցէ՝ Ecole Arménienne, Bégnins, Vaud
(Suisse):

ՆԱՅԻՐԵԱՆ ԵՐԳԵՐ, բանաստեղծութիւններ,
Հեղինակ Արամ Ճէվիզ. տպ. «Ալիս», Մարսէյ
1930. զին 5 ֆրանք:

N. YORGA, Brève histoire de la Pe-
tite Arménie, l'Arménie Cilicienne, Con-
férences (faites à la Sorbonne). Ouvrage
orné de planches. Paris 1930. Librairie
S. Gamber, 7, Rue Danton. Paris.

LE GÉRANT : ATOG GUÉVREK

IMPRIMERIE TURABIAN
227, BOULEVARD RASPAIL
PARIS

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՔ

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Պ. Զատիկ Խանգատեան (Փարիզ) նուիրեց չորս օրինակ Անահիս, զոր յատկացուցինք հետեւեալ խմբակցութեանց. — Պատանիներու Միութեան գրադարան, Բաքա, Սուէտիոյ Հայոց գրադարանին, Արապ-Փոնարի Մարմամարզական Միութեան գրադարանին, Տէր - Զօրի Պատանիներու Միութեան գրադարանին:

Պ. Վ. Պարոնեան (Շիքալօ) նուիրեց մէկ տարեկան Անահիս, Հալէպի Հայոց Ազգային վարժարանին:

Պ. Օննիկ Նորհաս (Շիքալօ) նուիրեց մէկ տարեկան Անահիս, Mrs. H. K. Wingateի (Florida), Պ. Ճէք Կիւլտալեան (Շիքալօ) իր հօր՝ Տ. Վահան քհնյ. Կիւլտալեանի:

Պ. Նշան Համբարձումեան (Փարիզ) նուիրեց մէկ տարեկան Անահիս՝ Պ. Միհրան Շահինեանին (Պոլիս):

Լուսանկարիչ Ալպան (Փարիզ) նուիրեց մէկ տարեկան Անահիս Տիկին Զարքեանին (Փարիզ):

Մարտէյլ. Յ. Ուլուհոճեան
Լիօն, Մ. Տէր-Ահարոնեան
Վիէն, Յովհաննէս Մկրտիչեան
Հալէպ, Նշան Տէր-Պետրոսեան, Տօքթ. Օ.

Ապաճեան և Պողարեան գրատուն
Պէյրութ, Հայկ Ուղուրլեան և Վահան
Ուզունեան գրատուն
Եգիպտոս եւ Սուտան, ընդհ. գործակալ, Օ.
Մահտեսեան

Գահիրէ, Մասիս Զուրիկեան
Աղեքսանդրիա, Մելգոն Գասպարեան
Պոլիս, Ս. Յակոբեան գրատուն
Պրիւսէլ, Յ. Թօփուզեան
Անվերս, Օր. Մելիքէ Գօլմանճեան
Միլան, Ռ. Ճանիկեան

Յունաստան, Յ. Դարբինեան
Ֆիլիպպէ, Մկրտիչ Կարապետեան
Պուրկազ, Թորոս Աւետիսեան
Նիւ Եօրք, Մ. Պարոնեան, Ս. Շմաւոնեան,
Հ. Մամասեան

Պոսթըն, Կ. Մուշեղեան, Օրիորդ Ալիս Օտեան

Լօրէնս, Ա. Մ. Ահարոնեան
Լին, Պ. Գասպարեան
Տիթրօյթ, Լեւոն Պէշկեթիւրեան
Սան-Ֆրանչիսքօ, Կ. Հ. Մալխասեան
Թրոյ, Ա. Դշոյեան

Հեվլըհիլ և Պրատֆօրտ, Գ. Զուլճեան
Րիչմընտ, Ա. Յ. Ժամկոչեան
Ուօշինկթըն, Ժաք Պալտատեան
Ֆիլատէլֆիա, Դ. Ճէլալեան

Փրովիտէնս, Յարութիւն Ուլուհոճեան
Ուտըր, Կարապետ Յովակիմեան
Լօս Անճէլէս, Խոսրով Էլմասեան
Սոֆիա, Տ. Մարտիրոսեան

Պաղատ, Գէորգ Մ. Գասպարեան
Պուքրէշ, Յ. Ճգնաւորեան
Քոնսթանճա, Յ. Տիրատուրեան
Շիքալօ, Օննիկ Նորհաս
Ֆրէզնօ, Վահէ Հայկ
Ալէքսանտրէթ, Մարտիրոս Տէր - Ստեփանեան

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Դ Է Մ Ք Ե Ր

Ք. Հատոր
(Պատկերազարդ)

Պետրոս Աղամեան. — Յ. Յ. Պարոնեան. — Խաչատուր Աբովեան (Հարիւրամեակին առթիւ). — Երուանդ Մանուէլեան. — Մատթիա Գարազաշեան. — Վահան Թէքէեան. — Ատոմ Եարճանեան. — Դանիէլ Վարուժան. — Համաստեղ և գիւղը Հայ գրականութեան մէջ. — Էտկար Շահին. — Յովսէփ Փուշման:

Հրատարակութիւն
Հայ կրթական Հիմնարկութեան
Գին՝ մէկ տողար
(Ֆրանսա և Սուրիա 20 ֆրանք)